

34

2-14

Գ. Ա. ԼԱԼԱՅԱՆ
Ս. Ս. ՄԱՄՅԱՆ

ԴԻՏԱԿՈՐՅԱԼ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ФИЛОСОФИИ И ПРАВА

К. А. ЛАЛАЯН, С. С. МАМЯН

УМЫШЛЕННЫЕ
УБИЙСТВА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՓԲՈՒՓՔՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՐԻ ԻՆՏԻՏՈՒՏ

34
L-14

Կ. Ա. ԼԱԼԱՅԱՆ, Ս. Ս. ՄԱՄՅԱՆ

ԳԻՏԱՎՈՐՅԱԼ
ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

410



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Քրեական օրենսդրության վերաձուլման և դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրության հիման վրա աշխատության մեջ լուսարակվում են ցիտավորյալ սպանությունների համար քրեական պատասխանատվության հիմնական հարցերը:

Հատուկ բանին է հասկացվում պաշարի այն միջոցների ուսումնասիրմանը, որոնք ազդեցվում են անձի բազմակողմանի պաշտպանությունը հանցավոր ստեղծություններից: Աշխատության մեջ քննարկվում են հանցագործությունների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները: Հանցագործությունների կանխման ու նախազգուշացման ուղղությամբ արվում են մի շարք առաջարկություններ:

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Աշխատության հիմնական նպատակն է դատաբանական և միլիցիայի օրգանների գործունեության ուսումնասիրության և այդ նյութերի տեսական բնօրհանրագման հիման վրա ոչ միայն լուսարանել աղիական նշանակություն ունեցող քրեա-իրավական բնույթի մի շարք հարցեր, այլև օգնել այդ օրգաններին հաջող կազմակերպելու պայքար նման կարգի հանցագործությունների դեմ:

Աշխատությունը կարող է օգտակար լինել նաև օրենսդրության հետագա կատարելագործման, ինչպես և ՀՍՄՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած՝ անձի պաշտպանության վերաբերյալ քրեա-իրավական նորմերը երիտ հասկանալու համար, մանավանդ, որ հայերեն լեզվով նման բնույթի ոչ մի աշխատություն չունենի:

Կարծում ենք, որ քրեական իրավունքի բնօրհանուր մասի մի շարք հարցերի կրկնությամբ՝ մտքդու կյանքի պաշտպանությանը նվիրված քրեա-իրավական նորմերի գիտական մեկնարկում, դրանց կիրառման վերլուծումը և դատական պրակտիկայում այդ կազմակերպությամբ ծագած հարցերին, ենթավորություն սահմաններում, պատասխանելը և կարող է օգտակար լինել սոցիալիստական օրինակնության պանպունման և ամրապնդման գործում:

Փանի որ անձի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ բազմաթիվ հարցերի լուսարանում անհնարին է աշխատության ծավալի սահմաններում, ուստի գրում եմ-

նորյան Լեն առնվում միայն դիտավորյալ սպանությունների համար Բրեսկան պատասխանատվության հանցակազմի օբյեկտի, սուբյեկտի, օբյեկտիվ, ու սուբյեկտիվ կողմերի հասկացությունները, այդ հանցագործությունների դեմ մզվող պայքարի վիճակի, դրանց առաջացման պատճառների ու կատարմանը նպաստող գործոնների, ինչպես նաև հանցագործության նախագրույացման, կանխման և դրանց հետ կապված այլ հարցեր:

ՆԵՂՆՈՒՆՆԵՐ

Գ Լ Ո Ւ Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՆՑԱԿՈՐՄՈՒԹՅԱՆ
ԸՆԿՂՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆՆԵՆԵՐԸ

1. ԻՆՉ է ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հազիվ թե գանձի անձի դեմ ուղղված հանցագործությունների ուսումնասիրությանը զբաղվող գեթ մեկ քրեագետ, որը սահմանած չի նի սպանության հասկացությունը:

Առաջին հայացքից թվում է, թե առանց այն էլ հասկանալի է սպանության էությունը, հետևապես, անհրաժեշտություն էլ չկա այն սահմանելու: Սակայն այդ պարզ թվացող և առօրյա խոսակցության մեջ գործածվող սպանության հասկացությունը երբեք էլ չի բացահայտում տվյալ հանցագործության իրավաբանական բովանդակությունը:

Սովետական քրեագիտությունը սպանությունն ըմբռնում է ալիբի նեղ իմաստով, քան այն ըմբռնվում է այդ հասկացության սովորական գործածության դեպքում:

Խոսքն այն մասին է, որ մարդիկ, սովորաբար սպանության մասին գատում են ո՛չ թե ենկնյով սուբյեկտին զրա մեջ մեղադրելու համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունից, այլ այն հետևանքից, աչսինքն՝ սուժողի մահվան փաստից, որն իրենք տեսնում, ընկալում են: Մինչդեռ հետևանքը, տվյալ դեպքում, սուժողի մահը, ինքը ցույց չի տալիս իր ծագումը՝ այն պետք է պարզել բաղմակողմանի:

• բնկեալով և լրիվ քննութեան միջոցով: Քրեական պատասխանատւութեան համար անհրաժեշտ սոցալկի հատկանիշներէ ի բացահայտումը, հատկանիշներ, որոնք պետք է վիճանն ավելայ հանցագործութեան անկաշտութեան մասին, քննութեան կարևոր խնդիրներէրց մեկն է:

Որո՞նք են այդ հատկանիշները:

Տուրաբանչուր մահճան դեպք քննելիս (Էթն դրա անհրաժեշտութեանը կա), առաջին հարցը, որը դնում է քննելն իր առջն, դա հետևյալն է. աստուղի մահը բռնութեան, թե՛ որով և այլ պատճառի հետևանք է (հիվանդութեան, ծնրութեան և այլն), հետևապէս, սպանութեան կարևոր հատկանիշներէրց մեկը բռնութեան անկաշտութեանն է:

Բայց մահը, իրրն այդպիսին, կարող է ինքնասպանութեան, դրախտ պատահարի, կամ բնութեան այլ ուժերի հետևանք լինել, հետևապէս, սպանութեան դեպքում կարևոր է նաև մի երկրորդ հատկանիշի գոյութեանը, այն է՝ որ բռնութեանը պետք է կողմնակի անձի գործադրութեան հետևանք լինի:

Նշված հատկանիշները, սակայն, բազմաբար չեն արարքը սպանութեան դրախտ համար: Կողմնակի անձի բռնի գործողութեանը և դրանից առաջացած աստուղի մահը կարող են լինել անհրաժեշտ պաշտպանութեան, ծայրահեղ անհրաժեշտութեան, կամ անձի քրեական պատասխանատւութեանը բացառող այլ հանգամանքների հետևանք: Հետևապէս, կողմնակի անձի բռնի գործողութեանը պետք է լինի նաև հակասօրինական:

Վերջապէս, բռնի գործողութեան մեջ պետք է արտահայտվի նրա կատարողի մեղքը՝ ղիտավորութեան կամ անգոյութեանն ձևով:

Այսպիսով, ի մի բերելով սպանութեան բնորոշ հատկանիշները, այն կարելի է սահմանել հետևյալ կերպ. սպանութեանը, դա որևէ մեկին հակասօրինաբար, ղիտավորյալ կամ անգոյել կերպով կլանքից գրկելն է:

Սպանութեան հատկացութեան նման սահմանում է սորված Մոսկվայի պետական համալսարանի կողմից 1964 թ. Հրատարակած «Սովետական քրեական իրավունքի հատուկ մաս» գասագրքում: Սպանութեանն այդպէս է սահմանում նաև սովետական քրեակոնքների մեծամասնութեանը¹:

Բայց որոշ քրեագիտներ այդ սահմանումը համարում են թերի և փորձում ավելացնել նոր հատկանիշներ, մի բան, որը մեր կարծիքով, այնքան էլ չիշտ չէ:

Այսպէս, Ն. Բ. Չագորդիկովը վերը բերված սահմանմանը ավելացնում է նաև «... երբ մահ պատճառելը քրեական պատասխանատւութեան հիմքն է»² որտաշտութեանը: Սակայն ի՞նչ է տալիս այդ Պարզպէս ուիշչ: ղիտավորութեանը կամ անգոյութեանը որևէ մեկին հակասօրինաբար կլանքից գրկելն արդին իսկ պատճելի արարք է, և հիմք է հանդիսանում նրա կատարողին քրեական պատասխանատւութեան կենթարկելու, հետևաբար, Չագորդիկովի առաջարկած սպանութեան սահմանումը, որոշ ստուով, կրկնողութեանն է:

Ն. Բ. Չագորդիկովի այդ սահմանումը նույնութեանը տեղ էր գտել նաև Ս. Վ. Բորողիի 1963 թ. «Սպանութեան յրակումն բոտ սովետական քրեական իրավունքի» մեկագրութեան մեջ, սակայն հետագայում, ինչպէս ինքն է գրում, «...հետագա ուսումնասիրութեաննների ընթացքում» համող-

¹ Տե՛ս «Советское уголовное право, часть Особенная», МГУ, 1964, стр. 133.

² Տե՛ս А. А. Пионтковский и В. Д. Меньшанин, Курс советского уголовного права, часть Особенная, т. 1, М., 1955, стр. 518; В. Д. Меньшанин, З. А. Вышинская, Советское уголовное право, часть Особенная, М., 1950, стр. 295; В. Н. Куралянский, Советский закон на страже интересов личности, М., 1954, стр. 631; Б. С. Утегский, Уголовное право, М., 1950, стр. 181; Ш. С. Рашковский, Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1959, стр. 9; Г. А. Менделеев, Уголовная ответственность за убийство и телесные повреждения, М., 1962, стр. 5; М. К. Аниязи, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 15 и др.

³ Н. И. Загородников, Преступления против жизни по советскому уголовному праву, М., 1961, стр. 24.

վում է, որ «սպանություն այդ սահմանում... ճշգրիտ չէ»⁴։
Հրաժարվելով դրանից, Բորոզինը այս անգամ քննարկ-
վող հանցագործությունը սահմանում է այսպես. «Սպանու-
թյունը քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված,
ուրիշ մարդու կյանքի զեմ ոտնձգող և նրան մահ պատճա-
ռող, մեղավոր գործողություն է»⁵։

Ի դեպ, Բորոզինը սխալ է համարում քրեագետների մե-
ծատեսությունն կողմից տրված սպանության այն սահմա-
նումը, որը նույնությամբ ընդունում ենք նաև մենք, բայց
ինչպես երևում է իր սահմանումից, նա ոչ թե շտիկ է այդ
«խխլը» (եթե այդպիսին գոյություն ունի), այլ, պարզա-
պես, ոչ մի նոր բան չի ավելացրել Այն նորը, եթե կարելի է
նոր համարել, որն առաջարկում է Բորոզինը, «քրեական
օրենսգրքի հատուկ մասով նախատեսված» և «ուրիշ մար-
դու» արտահայտություններն են։ Գրանցից առաջինը, ուղ-
ղակի փոխարինում է «հակաօրինականություն» բառին, այն
խմսատով, որ եթե կատարված արարքը քրեական օրենսգրք-
ում նախատեսված չլինենք, այն հակաօրինական չէր էլ լինի։
Հակաօրինականությունը՝ արարքի հասարակական
վտանգավորության իրավաբանական արտահայտությունն է։
Իսկ եթե արարքը ավելյալ հասարակության կողմից վտանգա-
վոր է ճանաչված, պարզ է, որ այդ հասարակության կող-
մից ընդունված օրենքում էլ այն պետք է նախատեսված լի-
նի։ Երկրորդը՝ «ուրիշ մարդու» արտահայտությունը, Բորո-
զինը մտցնում է սահմանման մեջ, սպանությունը ինքնու-
պատճառությունից տարբերելու նպատակով։ Նույնն է նաև Ն.
Ի. Զազորոզինիկի մոտ⁶, սակայն ո՛չ այդ և ո՛չ էլ մյուսը
հասցրել ուժում և ո՛չ էլ մեծամասնություն կողմից ըն-
դունվող սպանության սահմանումը ըստ էության բարձրաց-

նում մի նոր աստիճանի։ Առանց «ուրիշ մարդու» արտա-
հայտության էլ, պարզ է, որ սպանության զեմացում ուրիշն է
ուրիշին սպանում, այլ ոչ թե ատուժը՝ ինքն իրեն։ Այս վեր-
ջինն արգեն ինքնասպանություն է, որը սովետական քրեա-
կան իրավունքով չի պատժվում։ Եվ ինչպես նկատում է Մ.
Անիլանցը, նման տեսակետը առաջացնում է այնպիսի տպա-
վորություն, որ կարծես թե սովետական իրավունքը տար-
բերում է ինքնասպանության երկու ձև՝ հանցավոր և ոչ
հանցավոր⁷։

Սովետական քրեագետներից մեկ ուրիշը՝ է. Պորեզայ-
ուն առաջարկում է սպանության սահմանման մեջ «հակա-
օրինականությունը» փոխարինել «քրեորեն հակաօրինական»
բառերով⁸։

Սակայն նման առաջարկը, կարծում ենք, սխալ է այն
խմսատով, որ սպանությունը չի կարող հակաօրինական լի-
նել միայն քրեական իրավունքի տեսակետից։

Այսպիսով, պաշտպանելով քրեագետների մեծամասնու-
թյան կողմից ընդունված սահմանումը և ելնելով դրանից,
լավատը չէ սահմանել զիտավորյալ սպանության հասկացու-
թյունը։

Այն կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. որևէ մեկին
հակաօրինաբար, ուղղակի կամ անուղղակի դիտավորյալը
կյանքից զրկելը կաշվում է դիտավորյալ սպանություն։

2. ՀԱՆՑԱԳՈՐԿՈՒԹՅԱՆ ՕՐՑՆԵԿՏ

Կատարելով զիտավորյալ սպանություն, անձն անմիջա-
պես ոտնձգում է ատուժի կյանքի զեմ, սակայն դրանով իսկ,
նա ոտնահարում է նաև սոցիալիստական հասարակարգում
սահմանված և կանոնարկված այն հասարակական հարա-
բերությունները, որի անմիջական կրողներն են իրենք՝ մե-
ղադրյալն ու ատուժը։

⁴ С. В. Бородин, Квалификация убийства по действующему зако-
нодательству, М., 1966, стр. 5.

⁵ Նույն տեղում, էջ 6։

⁶ Տե՛ս Н. И. Загородникова, Преступления против жизни по
советскому уголовному праву, М., 1961, стр. 24.

⁷ Տե՛ս М. К. Аминов, Ответственность за преступления против
жизни..., М., 1964, стр. 16.

⁸ Տե՛ս Յ. Ф. Побегалло, Умышленные убийства и борьба с ними,
ВГУ, 1965, стр. 10.

Այն ինչի դեմ անմիջապես ուղղված է ոտնձգությունը, բրեհական իրավունքում ընդունված է անվանել հանցագործության անմիջական օրյկետ: Բայց բանի որ հանցագործությունները, ընդհանրապես, ուղղակի կամ անուղղակի վնասում են նաև սոցիալիստական հասարակական հարաբերություններին, ապա այս նկատառումով, տարրերվում է հանցագործության քննիմանուր օրյկետ հասկացությունը:

Սովետական բրեհական իրավունքը, հանցագործության անմիջական և ընդհանուր օրյկետները բացի, տարրերում է նաև հանցագործության հատուկ կամ խմբային օրյկետ հասկացությունը:

Հանցագործության օրյկետի բովանդակումը ընդհանուրի, հատուկի և անմիջականի, բխում է հանցագործությունները մեկը մյուսից տարրերելու, նրանց հասարակական վտանգավորության աստիճանը ճիշտ բնութենելու, դրան համապատասխան պատժառանակ ընտրելու և պատժաչափ սահմանելու անհրաժեշտությունից: Հետևապես, հանցագործության օրյկետի նման դասակարգումը ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն ունեցող հարց է:

Սովետական բրեհականներից բոլորը չեն, որ ընդունում են հանցագործության օրյկետի այդ դասակարգումը: Նրանցից ոմանք գտնում են, որ հանցագործության անմիջական օրյկետը չենց հասարակական հարաբերություններ են, իսկ հասարակական հարաբերությունների մյուս տարրերը, որոնք անմիջապես տոնահարվում են՝ հանցագործության տարիկաներն են: Հարցն այլ կերպ դնելու ղեպչում, ըստ նրանց, կիսախափ թրամարանության «տես» և «տեսակ» կատեգորիաների հարաբերակցությունը⁹:

Ա. Ա. Պիտևոկովիկին, ընդհակառակը, գտնում է, որ հասարակական հարաբերությունները հանցագործության

անմիջական օրյկետից դուրս են և, որպեսզի ալելի խորը բնութենել հանցագործության հասարակական-բազմաբանական իսկական նշանակությունը, պետք է բացահայտել այն: Իսկ դրա համար, ըստ Պիտևոկովիկու, այն պետք է բնենել մատերիալիստական գիականիկայի՝ «երևույթ» և «էություն» կատեգորիաների հարաբերակցության հարցի տեսանկյունից¹⁰:

Չմտնելով մանրամասնությունների մեջ՝ նշենք միայն, որ հանցագործության, ինչպես նաև դիտավորյալ սպանության օրյկետի հասկացությունը բովանդակով ընդհանուրի, հատուկի և անմիջականի, մենք երբեք էլ անշարժ սահմանները չենք դնում դրանց միջև, քանի որ նրանք գոյություն չունեն մեկն առանց մյուսի: Միծաղելի կլինեք կարծել, թե անձը կարող է գոյություն ունենալ առանց կյանքի, կամ հասարակական հարաբերությունների ստեղծկաները՝ այդ նույն անձնավորությունները չեն:

Դիտավորյալ սպանության անմիջական օրյկետի և, ընդհանրապես, ամեն մի հանցագործության անմիջական օրյկետի բովանդակությունն այն հասարակական հարաբերություններն են, որոնք սահմանվել և կանոնարկվել են սոցիալիստական հասարակարգում և, որոնք ոտնահարվում են անմիջապես կամ դրա այս կամ այն կողմի, կամ որևէ տարրի նկատմամբ ոտնձգություն կատարելու պատճառով: Այնպես որ, շնայած ասեք, սպանության ղեպչում անմիջապես ընկալվում է նրա անմիջական օրյկետը՝ մարդու կյանքը: Եսակայն այդ, էություն (հասարակական հարաբերություններ) արտաքենում ղրեհորվող ձևն է (երևույթը): Կատարվել է դիտավորյալ սպանությունը, այսինքն՝ ղրեհորվել է երկույթը, երևան է դալիս և նրա էությունը, հետևապես, երկույթի էությունը պետք է փնտրել երևույթի մեջ, այլ ոչ թե նրանից դուրս:

Այս է մատերիալիստական գիականիկայի պահանջը:

⁹ Տե՛ս Գ. Ա. Крузер, К вопросу о понятии объекта преступления в советском уголовном праве, «Вестник МГУ», 1955, № 1, стр. 123; «Советское уголовное право, часть Общая», ЛГУ, 1960, стр. 245; М. Н. Феодорова, Понятие объекта преступления по советскому уголовному праву, «Ученые записки Пермского государственного университета им. Горького», т. XI, вып. 4, кн. 2, 1957, стр. 190.

¹⁰ Տե՛ս А. А. Пиотровский, Учение о преступлении по советскому уголовному праву, М., 1961, стр. 141—142.

Քայց հայտնի է, որ երևույթն ու լուծվուճը գտնվելով միասնության մեջ, միասնամանակ շին համընկնում, շին նույնանում, հետևապես, հանցագործության անմիջական օրչնկաը չի նույնանում իր ընդհանուր օրչնկաի՝ հասարակական հարաբերությունների հետ: Այն նրա մի տարրն է, այլ ոչ թե հասարակական հարաբերությունները ամբողջությամբ վերցրած:

Այսպիսով, որևէ մեկը կատարելով դիտավորյալ սպանություն, անմիջապես ոտնձգում է աստուղի կյանքի դեմ, բայց քանի որ մարդը անբաժանելի է հասարակական հարաբերություններից, ուրեմն, սովյալ հանցագործությամբ ոտնձարվում են և այդ հարաբերությունները:

Եթե սպանության անմիջական օրչնկան այդ հանցագործությունից աստուղ անձի կյանքն է, այսպ կարևոր նշունակություն ունի այն հարցը, թե որ պահից պետք է մարդու կյանքը համարել սկսված:

Հարցը նոր չէ: Գնուես կենդեցական ժողովներում ընդունվող օրենքների կամ կանոնների զարաշրջանում գործող իրավագետները, մոր արգանդում գտնվող սաղմի կամ պտղի ոչնչացումը համարում էին սպանություն, պատճառաբանելով, թե սաղմը նույնպես ունի ռմարդկային հոգի: Երանք, նույնիսկ, փորձում էին գտնել այն սահմանը, որտեղից սկսւած, սաղմը իբր, պետք է ձևոր բերի այդ «հոգին»: Նույն շրջակի որոշ իրավագետներ էլ հակառակն էին պնդում: Ըստ այս վերլինների, մարդու կյանքը սկսվում է այն պահից, երբ հասունացած պտուղը անջատվելով մոր արգանդից, ինքնուրույն, արտարգանդային կյանք է սկսում: Ընդ որում, ինքնուրույնության արտարին նշանը համարում էին ստաչին շնչառությունը, թոքերի աշխատանքը:

Հետագայում, բուժական քրեագետները մարդու կյանքի սկիզբը համարում էին նրա ծնվելու պրոցեսը¹¹, հե-

¹¹ Մարդու կյանքի սկիզբն վերաբերող պատմական տեղեկությունները բերված են Յոսեֆիու աշխատությունից: Տե՛ս Ի. Գ. Փոմիպուս, Կուրս уголовного права, часть Особенная, С.-Петербург, 1893, стр. 19—20.

տևապես, այդ պահին, ծնվողին կյանքից զրկվել, նրանք դիտում էին իբր սպանություն:

Քննարկվող հարցի վերաբերյալ իրենց կարծիքներն են հայտնել նաև սովետական քրեագետները: Նրանցից ոմանք մարդու կյանքը սկսված են համարում երեխայի առաջին շնչառության կամ պորտալարի անջատման պահից (Շարգորովսկի, Կոլտով և ուրիշներ)¹², ոմանք էլ այն համարում են երեխայի ծնվելու պրոցեսը (Պիոտկովսկի, Զագորովսկի, Անիպանց և ուրիշներ)¹³:

Կյանքի սկիզբին վերաբերող այս վերլին տեսակետը պաշտպանում ենք նաև մենք:

Մանկատպանության մասին չի կարելի դատել, ելնելով միայն երեխայի ներքին շնչառական օրգաններում եղած օդի «սկսվելու» կամ բացակայության փաստից: Ինչպես նշում է Ն. Ի. Զագորովսկիովը, երեխան ծնվելուց հետո, որոշ ժամանակ կարող է շնչել կամ կարող է որոշ ժամանակ պորտալարով կապված մնալ մոր հետ, իսկ կյանքի սկիզբն ստաչին շնչառության կամ պորտալարի անջատման պահը համարելով, նշանակում է, մինչև այդ երևույթների տեղի ունենալը, երեխային կյանքից զրկվել չպետք է դիտել մանկատպանություն¹⁴:

Եթե ծնվելու պահից սկսվում է մարդու կյանքը, այսպ այն վերջանում է բիոլոգիական մահով: Գրանից հետո սովյալ մարդու անձն այլևս չի կարող լինել բննարկվող հան-

¹² Տե՛ս Մ. Դ. Շարգորովսկի, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 59; и «Ответственность за преступления против личности», Л., 1953, стр. 15, Մ. Ա. Կոլոսով, Жизнь человека до рождения, М., 1946, стр. 5; Մ. Մ. Գրոմովսկի, Преступления против личности, М., 1924, стр. 4 և др.

¹³ Տե՛ս Ա. Ա. Լուտկովսկի, В. Դ. Меньшанин, Курс советского уголовного права, часть Особенная, т. 1, М., 1955, стр. 520; Н. Ի. Загорюдинов, Преступления против жизни..., М., 1961, стр. 33; Մ. Կ. Անիպանց, Ответственность за преступления против жизни..., М., 1966, стр. 19; Б. С. Углевский, Уголовное право, М., 1950, стр. 182 և др.

¹⁴ Տե՛ս Н. Ի. Загорюдинов, Преступления против жизни..., М., 1961, стр. 33.

ցազորութեան օրյեկտը: Չնայած դիտավորյալ սպանութեաննեի դեպքում, ըստ մեզ, կարող են և բացատրւիլուններ լինել:

Այսպես, եթէ Ա-ն Բ-ին սպանելու դիտավորւթյամբ, վերջինիս ընած ժամանակ, կրակում է նրա վրա, բայց հետագայում պարզվում է, որ Բ-ն մինչև այդ, արդեն մահացած էր (զուր օրյեկտ), չի վերանում ավյալ արարքի և նրա կատարողի, սակնք Ա-ի, հասարակական վտանգավորութիւնը: Այդ այն պատճառով, որ Ա-ն դիտակցել և նախատեսել էր իր հանցավոր գործողութեան վտանգավոր հետևանքները, ցանկացել էր այդ և, ըստ նրան, նրանք անխտաափնիւրդն պետք է առաջնային: Հանցագործութեան սուրյեկտը, արվյալ զեպքում, իր մտադրութիւնը հասցրել է մինչև վերջ, նա կատարել է իրենից կախված այն բոլոր գործողութիւնները, որոնք անհրաժեշտ էին հանցավոր արդուներին հասնելու համար, սակայն նրա կամքից անկախ հանգամանքների ուժով բացակայել են ենթադրվող պայմանները:

Այս նկատառումներով, կարծում ենք, նման դեպքերը պետք է որակել իրրև սպանութեան փորձ, իսկ այն հանգամանքը, որ մինչև ոտնձգութեանը օտուժողը կենդանի չէր, կարող է նշանակութիւն ունենալ միայն պատժատեսակի և պատժալակի բնարութեան հարցում:

3. ՀԱՆՅԱԳՐԾՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Քրեական օրենսդրութեամբ նախատեսված հանցագործութիւնները կրացաւվելին, հետևապես, չէին ինի նաև այդպիսիները նախատեսող քրեա-իրավական նորմերը, եթէ մարդու հանցավոր դիտավորութիւնն ընդհանրապես, որևէ ձևով կամ եղանակով, շղջուողվեր արտաքին աշխարհում՝ ժամանակի և տարածութեան մեջ:

Գործողութեամբ կամ անգործութեամբ, օրենքով պահանջվող որևէ օրյեկտի ոտնահարումը, հենց այդ դիտավորութեան զրսնորումն է արտաքինում, որի պատճառով տեղի է ունենում իրազարծութիւններին և երևույթներին հետևողա-

կան զարգացում, առաջացնելով այս կամ այն հանցավոր հետևանք:


Ելնելով այս շարադրանքից, կարելի է սահմանել, որ հանցագործութեան օրյեկտիվ կողմը ժամանակի և տարածութեան մեջ՝ սուրյեկտի հանրունէ վտանգավոր գործողութեան կամ անգործութեան դրսևորումն է, որ իր զանախիւրութեան պրցնետում փոխոխորյուն է մտցնում օրենքով պահանջվող այս կամ այն օրյեկտում, առաջացնելով հանցավոր հետևանք, եթէ արարքը, իրրև հետևանքի պատճառ, իր զատնախիւրյան պրցնետում չի ընդհատվում մեկ այլ արտաքին ուժով:

Այսպիսով, հանցագործութեան օրյեկտիվ կողմը ընդգրկում է հետևյալ տարրերը. 1. հանրունէ վտանգավոր գործողութիւն կամ անգործութիւն, 2. հանցավոր հետևանք, 3. հանցավոր գործունեութեան և հանցավոր հետևանքի միջև եղած պատճառական կապ և 4. հանցագործութեան կատարման իրադրութիւնը՝ տեղը, ժամանակը, եղանակը:

Գիտավորյալ սպանութիւնը կարող է կատարվել սուրյեկտի ակտիվ կամ պասսիվ գործունեութեամբ: Գործունեութեան ձևերը բազմազան են՝ խեղդամահ անել, դանակահարել, զնդակահարել, թունաւորել և այլն: Ապանութիւնը կարող է նաև հոգեբանական գործունեութեան հետևանք լինել: Հոգեկան ուժը ներգործութիւնը հոգեկան խոր սպրումներ առաջացնելով մարդու մոտ, կարող է մահվան հասցնել կամ հանցագործութեան սուրյեկտը կարող է հոգեկան հիվանդին զրրել ինքնասպանութեան կատարելու:

Ինչպես արդեն նշել ենք, սպանութեան հետևանքով ոչ միայն մարդն է զրկվում կյանքից, այլև նրա հարազատները բարոյական և նյութական վնաս են կրում, բայց ընտարվող հանցագործութեան բաղկացուցիչ տարրը մարդու մահն է միայն, այսինքն՝ ոտնձգութեան անմիջական օրյեկտին հասցրված վնասը: Այս վերջինը՝ մարդու մահը, այն հանցավոր հետևանքն է, որի ակտիւրյալը էլ պայմանաւորված է ավյալ հանցագործութեան ավանդված լինելու վատսր:

410



Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի հանցավոր գործունեության և առաջացած հետևանքի միջև եղած պատճառական կապի հարցը:

Այդ պրոբլեմին վերաբերող բազմաթիվ մանրամասնություններ տեսանք և գործնական նշանակություն ունեցող կարևոր հարցեր են, որոնք լուսարարվում են իրավապետականության մեջ¹⁵ հիշելով պատճառականության մասին մարքս-լենինյան փիլիսոփայության կարևոր գրույթներին:

Չմտնելով մարքսամասնությունների մեջ, նշենք, որ մարքսի հանցավոր արարքի և առաջացած հետևանքի միջև պատճառական կապի սահմանում կարևոր նշանակություն ունի հատկապես դիտավորյալ սպանությունների վերաբերյալ գործերը քննելիս:

Հենց այդ հանգամանք մեզ պարտավորեցնում է, այնուամենայնիվ, անվիչ մանրամասն մեկնարանելու նշված բարդ պրոբլեմը, շնավակնելով, սակայն, վերջնականապես լուծել այն:

Քրեական իրավունքն ուսումնասիրում է պատճառահետևանքային կապի որոշակի արտահայտչանք, խոսքը մարդու հանրայնորեն վտանգավոր գործունեության և առաջացած վտանգավոր հետևանքի միջև եղած պատճառական կապի հասկացություն մասին է: Ընդ որում, նշված հարցն

¹⁵ Տե՛ս А. А. Герцензон, Уголовное право, часть Общая, М., 1959; А. А. Пионтковский, Вопросы общей части уголовного права в практике судебно-прокурорских органов, М., 1954; В. Т. Чухаадзе, Советское военно-уголовное право, М., 1948; М. Д. Шаргородский, Вопросы Общей части уголовного права, М., 1955; В. Д. Меньшавели и Э. А. Вышинская, Советское уголовное право, М., 1950; А. А. Пионтковский, Учение о преступлении, М., 1961; А. Н. Трайнин, Общее учение о составе преступления, М., 1957; М. И. Ковалев и П. Т. Васильев, Причинная связь в советском уголовном праве, М., 1958; П. И. Гришаев, Объективная сторона преступления, М., 1961; Я. М. Брайнин, Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве, М., 1963; Т. В. Церетели, Причинная связь в уголовном праве, М., 1963; В. Н. Кудрявцев, Объективная сторона преступления, М., 1960 и др.

ուսումնասիրելիս, այստեղ կարևոր նշանակություն ունեն երևույթների «արհեստական մեկուսացման» և «գլխավոր պատճառը կրկորդական կապից ու հարաբերություններից սահմանազատելու» դիպեկտիկական մատերիալիզմի սկզբունքները: «Առանձին երևույթները բմրոնելու համար,—գրում է Ֆ. Էնգելսը,—մենք պետք է զրանք ստանձնացնենք համբողջատր կապակցությունից և բնություն առնենք մեկուսի, իսկ այդ դեպքում հերթափոխվող շարժումները մեր աչքն հանդես են գալիս մեկը որպես պատճառ, մյուսը որպես գործողություն»¹⁶:

Քրեականության մեջ միայն պատճառ և միայն հետևանք հանդիսացող երևույթների մեկուսացած վիճակ գոյություն չունի:

Յուրաքանչյուր դիտավորյալ սպանության դեպքում սուկա են բազմաթիվ կապեր ու հարաբերություններ: Հազիվ ին մոխիթարական լինեք գառավորի, քննիչի կամ հետաքրքրություն կատարող անձի վիճակը, եթե նրանից պահանջվեք պարզելու նաև իրեն հետաքրքրող հետևանքի այն ամենահեռավոր պատճառը, որի կապը տվյալ հետևանքի հետ շատ աննշան է:

Այս միտքը հիմնավորելու համար օրինակ բերենք դասական պրակտիկայից: 1957 թ. հուլիսի 20-ին, Կոտայքի շրջանի Ողջարեթ գյուղի բնակիչ Տ-ն իր անբարոյական արարքները թաքցնելու նպատակով, «նազան» սխտեմի ատրանակից կրակում և սպանում է համադրուցի Գ-ին:

Գործի հանգամանքները հետևյալն են. Տ-ն օգտվելով Գ-ի թևեկարար վարքից, կենակցում է նրա հետ: Հետագայում, երբ պարզվում է, որ Գ-ն Նդի է, Տ-ն իր կնոջից և համադրուղացիներից նման արարքը թաքցնելու նպատակով, որոշում է Գ-ին զրկել կյանքից: Եվ ահա, հարևան գյուղի բնակիչ Մ-ից ձեռք բերելով «նազան» սխտեմի ատրանակ, մի քանի օր հետո «Ալյուսաշան» կոլեկտիվ արտավայրում իրականացնում է իր հանցավոր մտադրությունը:

Օրինակում, իհարկե, բազմաթիվ կապերի առկայու-

¹⁶ Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1957, էջ 237:

Յլունն ակնհայտ է: Քացի Տ-ի գործողությունն և Գ-ի մահվան միջև եղած պատճառական կապից, նշված հետևանքի հետ կապվում են նաև Տ-ի ծնողների ու նրա աշխատանքային ընկերների գործողությունները այն իմաստով, որ նրանք չեն կարողացել Տ-ի մոտ դատարարակել բարոյական անհրաժեշտ հասկումները: Հենց իր՝ ատուղի գործողությունները, որը նախնայով Տ-ին և իմանալով նրա կին ու երեխաներ ունենալու հանգամանքը, այնուամենայնիվ, կապերի մեջ է մտել նրա հետ: Մ-ի վարքագիծը, որն առանց թույլտվության ատրճանակ է պահել և հետագայում այն վաճառել Տ-ին: Միլիցիայի օրգանների թույլ աշխատանքը, որ չեն կարողացել ժամանակին հայտնաբերել սպորտին ղենը կրողներին և այլն:

Հանցակազմի օբյեկտիվ կոզմի հարցը լուծելիս, պարզ է, որ դատարենլական մարմինները պետք է անտեսեն նըշված բաղմամբիվ կապերը, որովհետև էական նշանակություն ունեցողը մեղադրյալի գործողությունն է, և զբո ու հետևանքի միջև եղած պատճառական կապի հարցը:

Անուշտ, անձինք բրեական պատասխանատվության ենթարկելու, նրա արարքը որակելու, կամ պատժատեսակ ու պատժաչափ ընտրելու համար ոչ մի նշանակություն չունեն ո՛չ միլիցիայի օրգանների աշխատանքների ունեավարար լինելը, և ո՛չ էլ ինչ-որ մեկին սպորտին ղենը կրելը: Գրանք կարող են միայն կրիմինոլոգիական նշանակություն ունենալ:

Այժմ գլխավոր և երկրորդական պատճառների մասին՝ Այս հարցին, սովետական քրեական իրավունքում իր ժամանակին ուշադրություն է դարձրել պրոֆ Ա. Ն. Տրայնինը: Ճիշտ է, սովետական քրեագետներից Տ. Մերկելին և գերմանացի Ի. Ակկուսը հափադրվում են նրան, սակայն, մեծ կարծիքով, Ա. Ն. Տրայնինի տեսակետը այդ հարցում (ոչ ամբողջությամբ վերցրած) ավելի համոզեցուցիչ է:

Ըստ Ա. Տրայնինի, սկարզու գործողությունը, որը հանրորեն վտանգավոր հետևանքի գլխավոր պատճառն է, այլ հարասար պայմանների զեպում, պետք է տուգանքի ավել-

լի մեծ քրեական պատասխանատվություն, քան այն մարդու գործողությունը, որը երկրորդական զեբ է խաղացել»¹⁷:

Քե՛ գլխավոր և թե՛ երկրորդական պատճառները օբյեկտիվ երևույթներ են և դատարանը միայն պարզում, զնահատում է այն ճիշտ կամ սխալ, բայց ո՛չ ստեղծում է և ո՛չ էլ փոփոխում: Այս տեսակետից պրոֆ. Տրայնինը, անշուշտ, սխալ է, երբ պատճառի տարբեր աստիճանների որոշումը կախումն մեջ է դնում դատարանի սուբյեկտիվ հայեցողությանից, սակայն նրա այն տեսակետը, որ երևույթների միջև եղած պատճառական կապը պարզելիս, պետք է երկրորդական պատճառ տարբերել գլխավորից՝ ճիշտ է և կարելի:

Այսպես, Կոտայքի չրջանի Հրազդան գյուղի կոլտնտեսությունյան պահեստայետ Լ-ն, իր պահպանության տակ զբուրվող սերմացուից հափշտակում և վաճառում է համազուգացի Մ-ին: Լ-ն իմանալով սերմացուի թունավորված լինելու մասին, չի հայտնում գնորդին, վերջինս էլ ոչինչ չկատկածելով, դրանից թխած հացը տալիս է երեխաներին, որի պատճառով երեխաներից երեքը մահանում են: Գտատ-բժշկական վորճարնությունում է հիմնավորվում է, որ երեխաների մահը առաջացել է սնդիկային (գրանոզա) թունավորումից:

Տվյալ զեպում, գլխավոր և երկրորդական պատճառների անտեսումը կհանգեցներ նրան, որ տարբերություն չէր դրվի պահեստայետի և երեխաների ծնողների գործողությունների միջև: Մինչդեռ, բերված օրինակից պարզ երևում է, որ երեխաների մահվան գլխավոր պատճառը ոչ թե նրանց ծնողների, այլ պահեստայետի գործողությունն էր, իսկ մյուս կապերն արդեն երկրորդական են: Հանցավոր հետևանք առաջացնող գլխավոր պատճառի և բոլոր մյուս պայմանների համասար արժեքավորումը խորթ են սովետական քրեական իրավունքին:

Հանցավոր հետևանքին նախորդող բոլոր պայմանների միատեսակ զնահատումը կապված են «Conditio sine qua

¹⁷ А. Н. Трайнин, Общее учение о составе преступления, М., 1957, стр. 170—171.

ПОП» («պայման, առանց որի չկա») տեսությունը բուրժուական մեկնարանման հետ: Ըստ այդ մեկնարանության յուրաքանչյուր գործողություն կամ ներույթ, որոնք նախորդել են հանցավոր հետևանքին, հավասարապես նրա գլխավոր և անհրաժեշտ պատճառներն են: Եթե այդ ընդունենք որպես հշմարտություն, ապա վերը նկարագրված արարքի համար պետք է քրեական պատասխանատվության ենթարկվին ոչ միայն պահեստավորը, այլև երեխաների ծնողներն ու այն անհիմք, որոնք խառնաճարձ էին ավելի սերմացուն: Որովհետև, եթե նրանք չախտաճարձին, պահեստավորը շվաճառեր, ծնողները շտապին իրենց երեխաներին, վերջիններիս մահն էլ տեղի չէր ունենում:

«Conditio sine qua non» տեսությունը ընդունվում է նաև սովետական քրեագետների մի մասի կողմից, սակայն մեկ այլ մեկնարանությամբ՝ մարդու հանցավոր գործունեության և առաջացած հանրորեն վտանգավոր հետևանքի միջև պատճառական կապը առկա է, եթե այդ գործունեությունը ավյալ հետևանքի առաջացման անհրաժեշտ պայմանն է կղել¹⁶:

Պատճառահետևանքային կապի նման մեկնարանում առարկվում է սովետական քրեագետների մյուս մասի կողմից: Մասն, արդեն մարդու գործողության և վտանգավոր հետևանքի միջև պատճառական կապի առկայությունը բնորոշում են, եթե հանցավոր արդյունքը ավյալ գործողության անհրաժեշտ, այլ ոչ թե պատահական հետևանք է¹⁷:

¹⁶ Տե՛ս Գ. Բ. Զերգելի, Причинная связь в уголовном праве, М., 1963, стр. 236, А. Н. Трайнин, Общее учение о составе преступления, М., 1957, стр. 161, М. Ефимов, Причинная связь в уголовном праве, «Советская юстиция», 1966, № 15, стр. 7 և др.

¹⁷ Տե՛ս А. А. Пионтковский, Учение о преступлении, М., 1961, стр. 212—240; М. Д. Шаргородский, Некоторые вопросы причинной связи в теории права, «Советское государство и право», 1956, № 7; В. Н. Кудрявцева, Объективная сторона преступления, М., 1960, стр. 208; М. И. Якубович, В. Ф. Кириченко, Советское уголовное право, М., 1958, стр. 62 և др.

Մեր կարծիքով, քրեական իրավունքում պատճառական կապի նման ըմբռնումը դատական պրակտիկայում առաջ կրերեր վնասակար հետևանքներ: Այդ տեսակետի էությունը կայանում է նրանում, որ հանցագործություն կատարած անձին քրեական պատասխանատվության պետք է ենթարկել միայն նրա գործունեության անհրաժեշտ հետևանքի համար, իսկ պատահական հետևանքի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից:

Պարզապես սկզբունքային տարբերություն չկա այս և միավանանակ գոյություն ունեցած այն տեսակետի միջև, ըստ որի անձին սպանության մեջ մեղադրելու համար պետք է, որ նրա կողմից հասցված վնասվածքը «անպայման մատուցու լինի», իսկ եթե մահացու չէ, բայց, այնուամենայնիվ, ստույգ մահացել է, ուրեմն մեղադրալը քրեական պատասխանատվության չի ենթարկվում սպանության համար:

Մարդու հանցավոր գործունեությունը կարող է պատահական հետևանքներ առաջացնել կամ շատաչացնել, նայած այն պայմաններին, որոնք առկայությամբ կատարվում է ավյալ գործողությունը: Փորձենք նույն պայմաններում կրկնել նույն գործողությունը, արդյունքը կլինի նույնը. փոխելով պայմանները, կփոխվի նաև նույն գործողությամբ առաջացած արդյունքը, այսինքն՝ նայած օրինակով պայմաններին՝ անհրաժեշտությունն ու պատահականությունը փոխում են իրենց տեղերը: Միևնույն անհրաժեշտ պատճառական կապը կարող է գրեթե ամբողջով տարբեր տեսակի պատահականությունների միջոցով: Երբ փոխվում են օրինաչափության վրա ներգործող պայմանները՝ անհրաժեշտությունը կարող է փոխվել պատահականության, և հակառակը: Այսպիսով, անձի հանցավոր գործունեության պատահական հետևանքը չի կարող ավյալ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ:

Անհրաժեշտ ու պատահական կապերը մարդկանց կամբից անկախ, օրինակելիորեն գոյություն ունեցող կապեր են, բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը ճանաչվի են: Մարդիկ կարող են ճանաչել այն, հետևապես և, ինչ ուր բնանախատեսել,

Նույն դեմք է դրանք օգտագործել իրենց հանցավոր նպատակների համար:

Այստեղից, պատճառական կապերի օրյեկտիվության փաստով չի ժխտվում սուբյեկտիվ գործունի դերը, երբ խտրը վերաբերում է մարդու գիտակցված գործունեությանը:

Մարդը ճանաչելով երևույթների այդ օրինաչափությունը, օգտագործելով դրա ակտիվ բնույթը, կարող է ներգործել պատճառա-հետևանքային կապի զարգացման վրա, իրեն անհրաժեշտ արդյունքներին հասնելու համար:

Այսպիսով, մարդու հանրորեն-վտանգավոր գործադրության և վտանգավոր հետևանքների միջև պատճառական կապի առկայությունը բացահայտելով, դեռևս չի լուծվում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Ինչպես իրավաբաններն գրում է Յա. Մ. Բրայնինը, անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու, կարող եղանակություն ունի ո՛չ թե ամեն մի պատճառական կապ, այլ միայն այն պատճառական կապը, որը գոյություն ունի անձի մեղավոր գործունեության և առաջացած վտանգավոր հետևանքների միջև²⁰: Սա հենց անհրաժեշտություն և պատճառականություն կատեգորիաների ուսումնասիրության քրեական իրավունքի առանձնահատկությունն է, այն իմաստով, որ այսպեղ, անհրաժեշտությունն ու պատճառականությունը վերաբերվում են մարդկանց հանրորեն վտանգավոր, գիտակցված գործունեության այնպիսի որոշակի կապերի ու դրանց պատճառով իրականություն մեջ օբյեկտիվորեն դրսևորվող վնասակար հետևանքներին, որոնք արդյունքները անխզելիորեն կապված են մեղքի հետ:

Ամփոփենք շարադրվածը.

1. Պատճառա-հետևանքային կապի ուսումնասիրելիս պետք է զեկավարվել «երևույթների արհեստական մեկուսացման» գիտելոտիկական մատերիալիզմի սկզբունքով: Քրեական իրավունքում անձի օբյեկտիվ պատասխանատվության հարցը լուծելիս, պետք է մեկուսացնել մարդու հանցավոր

արարքը (պատճառ) և նրա առաջացած հետևանքը այն մյուս կապերից, որոնք նշանակություն չունեն հանցակազմի օբյեկտիվ կողմի համար: Դատա-բնեշական օբյեկտները երկրորդական կապերը պարզում են այնքանով, որբանով դրանք անհրաժեշտ են անձի մեղքի աստիճանն ու պատիժը որոշելու համար: Այստեղից, խիստ անհրաժեշտ է սահմանադատել հանցավոր հետևանք առաջացնող զլխավոր պատճառը երկրորդական կապերից:

2. Նայած պայմանների՝ միևնույն երևույթը կարող է առաջանալ տարբեր պատճառներից, և ընդհակառակը, միևնույն երևույթը կարող է տարբեր հետևանքների պատճառ դառնալ: Քրեական իրավունքում այդ նշանակում է՝ մարդու հանրորեն վտանգավոր գործունեությունը անխտաբեմխորեն առաջացնում է տվյալ մարդու կողմից նախատեսված հետևանքը, եթե օբյեկտիվ պայմանները նպատավոր են դրա համար: Եվ հակառակը, նայած պայմանների՝ նույն գործողությունը կարող է առաջացնել այլ հետևանք, որը պատճառական է սուբյեկտի համար, կամ շտապացնել, ինչպես օրինակ՝ հանցափորձի դեպքում: Դատա-բնեշական օբյեկտների խնդիրն է պարզել, թե կոնկրետ պայմաններում մարդու այդ գործունեությունն էլ տվյալ հետևանքի պատճառը, այդ գործունեության մեջ մեղք կա արդյո՞ք, ըստ դրա էլ լուծել նրա քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

3. Մարդու գործունեությունը գիտակցված է, հետապնդում է որևէ նպատակ, իսկ այդ իրագործելու համար նա զեկավարվում է պատճառա-հետևանքային կապի իր իմացություններով:

Քրեական իրավունքում այս նշանակում է՝ անձը գիտալորյալ հանցագործություն, այդ կնվում՝ գիտավորյալ սպա-նություն կատարելիս, կարող է բնորոշ գործողության այնպիսի եղանակ և այնպիսի միջոցներ, որոնք կարող են սպահովել ցանկալի արդյունքը²¹:

²⁰ Տե՛ս Я. М. Брайнин, Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве, М., 1963, стр. 211.

²¹ Տե՛ս Я. М. Брайнин, Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве, М., 1963, стр. 200—201.

Գիտավորչայ սպանությունների գործերով պատճառական կապի հարցը լուծելիս պետք է պարզել և հիմնավորել, որ մեղադրողի գործողությունը (անգործությունը) աուտողի մասնում անհրաժեշտ պայմանն է եղել:

Գիտավորչայ սպանությունների գործերով պատճառական կապի առկայության կամ բացակայության հարցը լուծելիս, կարևոր նշանակություն ունեն նաև սպանության անդի, ժամանակի, կատարման եղանակների ու միջոցների պարզարանումն ու հետազոտումը:

Քվարկված գործոնների պարզարանումը անհրաժեշտ է նաև, որոշակի զեպերում անձին բրնական պատասխանատվության ենթարկելու, սվայ առարքը ճիշտ որակելու, նույնիսկ պատժաշափ նշանակելու համար: Օրինակ՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված գիտավորչայ սպանությունը անելի խիստ է պատժվում, քան այդ արարքն առանց այդ եղանակի: Տեղի, ժամանակի և միջոցների հետազոտումն ունի նաև կրիմինոլոգիական նշանակություն, օրինակ՝ սանքը, եթև գիտավորչայ սպանությունների ճշշող մասը կատարվել են հասարակական վայրերում, ապա զրանով կարելի է ինչ-որ շափով զնահատական տալ միխիցիայի աշխատանքներին:

Օրենսդրքը, գիտավորչայ սպանությունների զեպերում, արարքի հասարակական վտանգավորության աստիճանը առավել բարձրացնող եղանակներ է համարում առանձնակի դաժանությունն ու շատերի կյանքի համար վտանգավոր եղանակը: Ընդհանրապես չկա հանցագործություն, որը կատարվի առանց որևէ եղանակի, սակայն զրանցից ոչ բոլորն ունեն հանցակազմի տարրի նշանակություն: Վերք նշված երկու եղանակները, գիտավորչայ սպանությունների բաղկացուցիչ մասն են արզեն, նրանք տարրերը և որպես այդպիսին, այդ եղանակներով կատարված գիտավորչայ սպանությունները զարձնում են ավելի որակչայ, անկախ նրանցից, թև զրանք ինչ շարժառիթներով են կատարվել (խոսող, վրեժ և այլն):

Հանցագործության եղանակ ասելով, հասկացվում է հանցագործի կողմից կիրառվող մեթոդը, նարանքները, նետևողականությունը, շարժումը²²: Այս տեսակետից հանցագործության միջոցները պետք է տարբերել այդ նարանքներից, մեթոդից, որը եղանակ ենք անվանում:

Միջոցները, իրրև գործիքներ, գոյություն ունեն մինչև եղանակի կիրառումը:

Հանցագործության միջոցներ կարող են լինել բնության մեջ գտնվող, մարդու կողմից վերափոխված, կամ ամեն մի իր, առարկա (քար, փայտ, երկաթ, կացին, դանակ և այլն):

Իրրև հանցագործության միջոց կարող է ծառայել նաև մարդը, բայց մեկ ուրիշ գործունեության համար: Մարդն ինքն իր գործունեության համար գործիք լինել չի կարող:

Մարդու կողմից կատարված հանցագործության եղանակը, այդ մարդու գործունեության մասն է, նրա գրևորույթ և գոյություն չունի նրանից դուրս, իսկ տխնիկական միջոցը գործունեության մաս չէ և, իրրև առարկա գոյություն ունի նարանքն այդ արարքը: Եթև, նույնիսկ հանցագործության միջոցը մարդու ձևերն է բնկնում այդ գործողությունը կատարելու պրնցնում, միևնույնն է, մինչ այլ, ինչ-որ մի սեղ այն գոյություն ուներ, տրված էր արզեն:

Պարզել այն հարցը, թև գիտավորչայ սպանությունների ժամանակ գործածված տխնիկական միջոցները ո՞ր պահին են բնկել կատարողների ձևերը և ինչպիսի՞ տեսողով կամ եթև վերափոխված էր, ապա ո՞ւմ կողմից՝ կարևոր նշանակություն ունի ինչպես հանցագործի գիտավորչայ բնույթը, այնպես էլ հանցագործի հասարակական վտանգավորության աստիճանի բնորոշումը՝ համար:

Այլ բան է, երբ երկկողմանի կուլում, կողմերից մեկը մյուսին սպանում է պատահականորեն ձևն բնկած բարով կամ փայտով, մեկ այլ բան, երբ նա սպանությունը կատարում է իր կողմից պատարաստած զաշույնով: Եթև առաջին օրինակը վկայում է հանցագործի գիտավորչայ մազման

²² Տե՛ս В. Н. Кудряков, Объективная сторона преступления, М., 1960, стр. 71.

Հանկարծակիության մասին, այդ երկրորդը՝ էթն չի հիմնավորում որևէ մեկին սպանելու նախնական դիտավորությունը, զոնե վիճալում է հանցագործի հասարակական վտանգավորության աստիճանի առավելության մասին: Այստեղ, իհարկե, երկու դեպքերում էլ բացառությունները հնարավոր են, բայց հենց բանն էլ այն է, որ դրանք բացառություններ են: Ասածներիս էշմարտությունը հիմնավորվում է նաև դասական արևարկիայի նյութերից բաղված ավյաներով: Աստանասիրությունից երևում է, որ 1945—1965 թթ. բնկած ժամանակաշրջանում, ՀՍՍՀ տերիտորիայում կատարված դիտավորյալ սպանությունների մոտ 80%-ը կատարվել են ժակոդ-կտրոլ գործիքներով ու հրազենով, որոնք մինչև հանցագործության կատարումը, գտնվել են նրանց սուբյեկտների ստո:

4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԹՅԵԿՏԸ

Հանցագործության սուբյեկտը այն անձն է, ով կատարել է հասարակախորեն վտանգավոր գործողություն կամ անգործություն ու կարող է բրնական պատասխանատվության ենթարկվել զրա համար:

Գործող օրենքի համաձայն, հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ հանցագործություն կատարած որոշակի տարիք ունեցող, ամեն մի մեղսունակ, ֆիզիկական անձ: Այս նշանակում է. 1. հանցագործության, այդ թվում դիտավորյալ սպանության, սուբյեկտ չի կարող լինել իրավաբանական անձը, այդպիսին կարող է լինել նրա ներկայացուցիչը, առանձին մարդիկ, 2. հանցագործության սուբյեկտ, այդ թվում՝ դիտավորյալ սպանության, կարող է լինել ոչ ամեն մի ֆիզիկական անձ, այլ նա, ով, ինչպես հանցագործության կատարման պահին, այնպես էլ դատարանում զատավճիտ կայացնելիս, կարողանում է հաշիվ տալ իրեն իր գործողությունների համար, կամ ղեկավարել այդ գործողությունները, այսինքն՝ մեղսունակ է և 3. նա, ով հանցագործությունը կատարելու պահին հասել է օրենքով սահմանված

որոշակի տարիքի: Դիտավորյալ սպանությունների համար բրնական պատասխանատվության ենթակա միևինում հասակ է սահմանված 14 տարեկանը:

Դիտավորյալ սպանությունների սուբյեկտները չեն բնորոշվում միայն նշված հատկանիշներով: Մի շարք դեպքերում օրենքը նշում է նաև սուբյեկտի այլ հատկանիշներ, այն է՝ նախկինում դիտավորյալ սպանության կատարած անձ (կրկնահանցագործ), կամ առանձնապես վտանգավոր սեքի-գիվխտ, իսկ մանկասպանության սուբյեկտ կարող է լինել նորածնի մայրը:

Հանցագործության սուբյեկտի վերաբերյալ մեր ասածները քրեադեաների կողմից ճանաչված, համբըհանուր գրույթներ են, հետևապես անհրաժեշտ չենք համարում մեկնարանել այդ հատկանիշները առանձին-առանձին: Սակայն պետք է նշել, որ սպանության գործերով մեղադրյալի հասակի և հոգեկան վիճակի լուսարանումը խիստ կարևոր է այն պատճառով, որ 1. քրեական պատասխանատվության անհրաժեշտ հասակը և մեղսունակությունը հանցագործության սուբյեկտը դիտորոշող հատկանիշներ են, 2. լորոշել անձի մեղսունակության հարցը, նշանակում է՝ որոշ դեպքերում լրացահայտել նաև ավյալ սպանության իսկական պատճան ու շարժառիթը: Օրինակ՝ սպանությունը կատարվել է անմեղսունակ վիճակում, բայց չի պարզվել այդ, մինչդեռ ավյալ դեպքում սպանության պատճան հենց կատարողի հոգեկան հիվանդությունն է, 3. սպանության գործերով, շատ դեպքերում, այդ մարքերի լուծումից է կախված մեղադրյալների նկատմամբ պատժատեսակ և պատժաչափ սահմանելու հարցը:

Քրեական օրենսդրությունը, որպես բացառիկ պատժամիջոց, թուլլատրում է մահապատժի-գնդակահարության կիրառում մի շարք ծանր հանցագործությունների, այդ թվում՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանությունների դեպքերում (հոդ. 22):

Քրեական օրենսգրքի 22 հոդվածի 2-րդ մասի համաձայն, մահապատժի չեն կարող ենթարկվել մինչև հանցագոր-

ծություն կատարելը տասնութ տարեկանի շահած անձինք: Այսպիսով, սպանության գործերով, սուրբնկաթի տարիքի ճշտումը նույնիսկ անհրաժեշտություն է: Սպանության սուրբնկաթի տարիքի պարզումը կարևոր է այն սեռականից, որ դրա հետ է կապված նաև բրեհական դատավարական օրենսդրության մի շարք նորմերի կիրառման հարցը (պաշտպանի ներկայությամբ սպահովում, հարցաքննություն մասնավարժի մասնակցությունը և այլն): Բացի դրանից, հետախույզով անձի անմեղսունակությունը, պատժառեականի և պատժաշարի փոխարեն, նրա նկատմամբ դատարանի կողմից կիրառվում է բժշկական քննչիքի հարկադրական միջոցները նվճելու պահանջ: Այդ հարցերի լուծումը կարևոր է բրեհական գործերով դրանց հետ կապված ձգձգումներինց զերծ մնալու համար:

5. ՀԱՆՑԱԿՐՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒՐՅՆԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Մարդուն որևէ հանցագործության զրգող ուժը, ավելի պահին նրա մոտ արհապետող հանրության վտանգավոր շարժառիթն է: Չկա հանցավոր արարք (առհասարակ գործունեություն) առանց շարժառիթի, և թեև սուրբնկաթ չի զրկված զիտակցելու կամ իր գործունեությունը ղեկավարելու ունակություններինց, այսինքն՝ մեղսունակ է:

Տիրապետող շարժառիթը՝ վճիռ կայացնելու պահին նախապատվություն ստացած շարժառիթն է, այսինքն այն, օրը վճիռի ակտին նախորդած շարժառիթների պայթարում հաղթանակող է դուրս եկել:

Այսպիսով, շարժառիթը մարդու հոգեկան աշխարհում կատարվող մի բարդ, հուզական և կամային պրոցես է: Այդ պրոցեսում հաղթանակած շարժառիթով է պայմանավորված ինքը մարդու կամքի հետագա ուղղությունը: Երբ հանրուն վտանգավոր շարժառիթը հաղթում է պարտքի դիտակցմանը, ընդունվում է նաև հանցագործություն կատարելու վճիռը,

այսինքն այն, որին «բրեհագետները անվանում են դիտակցություն»²²:

Այսպիսով, հանրուն վտանգավոր շարժառիթը ծնում է հանցագործություն կատարելու դիտակցություն: Բայց հանցագործություն կատարելու դիտակցությունը զեռես կունկրիտ արարք չէ: Այն դառնում է այդպիսին, երբ դրսևորվում է արտաքին աշխարհում, այսինքն՝ իրագործվում է ավելի շարժառիթով զրկած հանցավոր նպատակը:

Հանցավոր արարքի նպատակը ժայն փաստական արդյունքներն են, որոնց մեղադրյալը ցանկանում է հասնել հանցագործություն կատարելու կատարելու միջոցով²³: Բայց, շնայած նպատակը որոշ իմաստով զանվում է հանցավոր արարքի վերջում, այսինքն՝ զրա կատարմամբ է, որ պետք է հասնել զրված նպատակին, սակայն այն զրվելուց հետո ինքը՝ նպատակը զառնում է հանցավոր արարքը կարգավորող, առաջդիշ ուժ: Տվյալ արարքի ընթացքը ենթարկվում է աղվյալ նպատակին, այսինքն՝ հանցավոր արարքը հանգես է զայն իրեն նպատակահամար, բայց ոչ հասարակության, այլ իր՝ հանցագործի շահերի տեսակետից, նպատակազրված գործողություն:

Այսպիսով, մարդկային գործունեության, ավելի զեպում, հանցավոր արարքի մեխանիզմը՝ մի ամբողջական և բարդ պրոցես է: Գրանում զրսևորվող, կարծես թե ինքնուրույն տարբեր, իրականում զանվում են փոխպայմանավորվածության և փոխկախվածության մեջ:

Հանցագործության սուրբնկաթի դիտակցությունն ու մեղսունակությունը (մեղքի մյուս ձևը), շարժառիթն ու նպատակը, ինչպես նաև հուզական կողմը ամբողջովին վերցրած, հանցագործության սուրբնկաթի կողմն է, կամ, ինչպես Յուրյայնին է սահմանում, սուրբնկաթի կողմը՝ հանցագործու-

²² Ե. С. Утецкий, Вина в советском уголовном праве, М., 1950, стр. 146.

²³ Я. М. Браиник, Уголовная ответственность и ее основание в советском уголовном праве, М., 1963, стр. 235.

Քյան հետ կապված մարդու ամբողջ հոգեբանական գործունեությունն է²²:

Չենք կարող համաձայնվել որոշ քրեագետների հետ, որոնք թե՛ քրեական իրավունքի գասագրեբում և թե՛ առանձին մենագրություններում կամ ամսագրային հոդվածներում, հանցակազմի սուբյեկտիվ կողմի մասին խոսելու, այն նույնացնում են մեղքի հետ²³; Օրինակ՝ «մեղքը,—հանցակազմի սուբյեկտիվ կողմը», կամ «հանցակազմի սուբյեկտիվ կողմը, հանցագործություն կատարելու պրոցեսում այդ արարքի սուբյեկտի գրեհորսմ մեղքն է...» և այլ նման ձևակերպումներ կարելի է գտնել քրեական իրավունքի գրեթե բոլոր գասագրերում:

Մեղքը, հանցակազմի սուբյեկտիվ կողմի տարրն է, հիմնականը, բայց ոչ միակը: Ինչպես վերը նշեցինք, այն բարդ, մտավոր, զգացմունքային և կամային պրոցեսների շղթայի օղակներից մեկն է: Հետևապես, որ մեղքը դիտավորության կամ անզգուշության ձևով անձի հոգեկան վերաբերմունքն է իր կատարած հանրորեն վտանգավոր գործունեության և զբա հետևանքների նկատմամբ, դրանով փաստորեն սահմանում ենք հանցակազմի սուբյեկտիվ կողմի միայն մի տարրի հասկացությունը, այլ ոչ թե սուբյեկտիվ կողմն ամբողջությամբ վերցրած:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմը բովանդակում է հանցագործության սուբյեկտի մեղքը (դիտավորություն, անզգուշություն), գործունեության շարժառիթը և նպատակը, ինչպես նաև հանցանքը կատարելու պրոցեսում անձի հուզական վիճակը:

Գիտավորյալ սպանությունների ընթացքում նշված տարրերի ճիշտ բացահայտումն ու խոր ուսումնասիրությունը հատկապես կարևոր են հետևյալ նկատառումներով.

²² Ցե՛ս Я. М. Брагин, Уголовная ответственность и ее основа-ние... М., 1963, стр. 227.

²³ Ցե՛ս «Советское уголовное право, часть Общая», М., 1952, стр. 214; «Советское уголовное право, часть Общая», ЛГУ, 1960, стр. 310; А. А. Пионтковский, Учение о преступлении... М., 1961, стр. 301 и др.

1. Սպանություն կատարող անձի հոգեկան վիճակը կարծում ենք ավելի բարդ է: Մարդը սպանում է մարդուն՝ իր ընկերոջը, նույնիսկ հարազատին, ինչու՞ և Գիտակցում էր արդո՞ք այդ, ինչպե՞ս էր վերաբերվում դրան գործողությունից առաջ և հետո, այդ հանկարծակի ծագած դիտավորության արդյունք էր, թե՛, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում, «խորամանկորեն իրազգործված խարդախ պլան»²⁴: Պատասխանել այս հարցերին, նշանակում է՝ ճշտորեն բացահայտել սովյալ սպանության անմիջական պատճառը, պարզել ոչ միայն հանցագործության, այլև հանցագործի հասարակական վտանգավորության աստիճանը, ապահովել պատժի բնույթի և աստիճանի ճիշտ լուծման նախադրյալները:

2. Մի շարք սպանությունների և սպանության հետ զուգորդված այլ հանցագործություններ, ինչպես նաև սպանությունների առանձին տեսակներ, միմյանցից տարբերվում են, բացառապես, իրենց սուբյեկտիվ կողմերով:

3. Գիտավորյալ սպանությունները, նայած շարժառիթների և զրգով նպատակին, որակվում են տարբեր հոգվածներիով, կամ նույն հոգվածի տարբեր մասերով: Օրինակ՝ խուլիգանական գրոմներով և շահ ստանալու նպատակով կատարված դիտավորյալ սպանությունները որակվում են ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդվածով, բայց նույն հոգվածի տարբեր կետերով՝ խանդի հոդի վրա, վրեժից զրգված սպանությունները առանց ծանրացուցիչ հանգամանքների, և նույն օրենսգրքի 100 հոդվածով և այլն:

Ասացինք, որ մեղքն ունի երկու ձև՝ դիտավորություն և անզգուշություն, սակայն մենք կիսուսներ միայն դիտավորության մասին, այն հայտնի պատճառով, որ մեր հետադատության «օբյեկտը» դիտավորյալ սպանությունների են, այլ ոչ թե սպանությունների ընդհանրապես:

Հատ սովետական քրեական իրավունքի, դիտավորությունը հանցագործություն կատարող անձի՝ իր գործողության (անգործության) հանրորեն վտանգավոր բնույթի գե-

²⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, Երևան, էջ 677:

տակցումն ու այդ գործունեության հանրորեն վտանգավոր հետեանքների նախատեսումն է: Այս, դիտավորության գիտակցական (ինտելեկտուալ) կողմն է, բայց դիտավորությունն ունի նաև կամային կողմ, որը հանրորեն վտանգավոր հետեանքների նկատմամբ սուբյեկտի ունեցած գրական կամ բացասական վերաբերմունքն է:

Հանրորեն վտանգավոր գործունեության բնույթի գիտակցումը, առաջին հերթին, վերաբերում է փաստական հանգամանքներին, սովյալ զեպրում, սպանության օբյեկտին և օբյեկտիվ կողմին: Անձը պետք է գիտակցի, որ ուրիշին վրկում է կյանքից, կատարում այնպիսի գործողություն, որն անխուսափելիորեն պետք է առաջացնի ուրիշի մահը, սյսպիսին՝ անձը պետք է նախատեսի նաև իր գործողության և հետեանքի միջև եղած պատճառական կապը, թեկուզ բնդհանուր գծերով:

Հետազոտող հանցագործությունը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Ուղղակի դիտավորության ժամանակ սպանություն կատարողը գիտակցում է իր արարքի հանրորեն վտանգավոր բնույթը և նախատեսում սուստղի մահվան անխուսափելիությունը: Բայց ուղղակի դիտավորություն կարող է լինել նաև այն զեպրերում, երբ սպանություն կատարողը նախատեսում է սուստղի մահվան հավանականությունը կամ ճնարավոր լինելը: Այս մտային մեկը կիսունըք բիշ հետո, այսժմ նշենք, որ ուղղակի դիտավորության զեպրում կամային մոմենտը մեղադրյալի ցանկությունն է, այսինքն այն, որ նա ցանկանում է սուստղի մահը:

Ուղղակի և անուղղակի դիտավորությունների տարբերությունը կապված է կամային մոմենտի հետ: Այստեղ նույնպես, ինչպես ուղղակի դիտավորության ժամանակ, մեղադրյալը գիտակցում է իր գործունեության առարակայնորեն վտանգավոր բնույթը և նախատեսում սուստղի մահը, սակայն ի տարբերություն առաջինի, չի ցանկանում այդ հետեանքի առաջանալը, միայն գիտակցորեն թույլ է տալիս այն:

Մեր կարծիքով, անուղղակի դիտավորության գիտակցական (ինտելեկտուալ) մոմենտը բառ էուլթյան չի տարբերվում ուղղակի դիտավորության գիտակցական մոմենտից: Եթե ուղղակի դիտավորության ժամանակ նախատեսվում է սուստղի մահվան անխուսափելիությունը, բայց նույնպես և հավանականությունը, ապա անուղղակի դիտավորության ժամանակ նախատեսում է միայն սուստղի մահվան հավանականությունը կամ հնարավորությունը, այստեղ բացառվում է անխուսափելիության նախատեսումը:

Սակայն պետք է նշենք, որ դիտավորության այդ երկու մեկը տարբերելը գործնականում այնքան էլ հեշտ չէ և բոլոր զեպրերում հանգեցնում է լուրջ սխալների, եթե այն լուսվում է առանց հաշիի առնելու գործի բույր հանգամանքները, շարժառիթներն ու նպատակը: Այս տեսակետից, կարծես թերի է պրոֆ. Տրայնիսի այն միտքը, թե «անուղղակի դիտավորությունը ենթադրում է այն հետեանքը, որը շցանկանալով, գիտակցաբար թույլ է տվել մեղադրյալը: Այդ անուղղակի է, այսինքն՝ կարող է առաջանալ, բայց կարող է և շառաջանալ»²⁸: Հենց այդ «կարող է առաջանալ, բայց կարող է և շառաջանալ»-ը բառ մեզ, պետք է հիմնավորվի գործի բույր հանգամանքներով, ալլապես մեղադրյալի ցանկանալը կամ շցանկանալը մեում են անհիմն:

Երբ մեղադրյալը գիտակցել է այդ բույրը, թեկուզ բնդհանուր գծերով, այնուամենայնիվ, կատարել է հանցագործությունը՝ հույսը զենելով իր շցանկանալու վրա, կարծում ենք այստեղ անուղղակի դիտավորության մասին խուսք լինել չի կարող: Առավել ևս, հետեանքի առաջացման շցանկանալը անհամատեղի է դրա անխուսափելիության գիտակցումը: Պրոֆ. Բ. Ուտեկու կարծիքով անուղղակի դիտավորությունը հնարավոր է նաև հանցավոր հետեանքի առաջացման անխուսափելիությունը գիտակցելու ժամանակ:

²⁸ А. Н. Трайник, Общее учение о составе преступления, М., 1957, стр. 200—201.

«Հնարավոր են զեպքեր,—գրում է պրոֆ. Բ. Ուտերսկին,—երբ մեղավորը գիտակցում է ոչ ցանկալի հետևանքներ (ընդգծումը մերն է—Ա. Լ.) անխուսափելիությունը (անհրաժեշտությունը)։ Հրկիզողը կարող է գիտակցել, որ հրկիզվող բնակարանում գտնվում է հաշմանդամ, որը անբնորոշակ է շարժվելու, որ հրկիզման ժամանակ տանը ոչ-որ չկա, որ հաշմանդամը ոչ մի տեղ չի կարող գնալ, հետևապես և նա անխուսափելիորեն կզոհվի հրդեհի»²⁸։

Նման պնդումը մեր կարծիքով սխալ է Անխուսափելիության գիտակցումն արդեն ուղղակի գիտավորություն է։ Գիտակցել անխուսափելիությունը, նշանակում է՝ արտացոլել այն, ինչ անպայման պետք է լինի, այլ ոչ թե այն, ինչ կարող է լինել և կարող է լինի։ Անհրաժեշտության զեբը նրառում է, որ այն, ինչ անհրաժեշտ է այդ տեսակետից, ոչ միայն տեղի է ունեցել, այլև պետք է տեղի ունենա։ Գիտակցել անհրաժեշտությունը իր հիմքով հանդերձ՝ այսինքն՝ գիտակցել, որ Ա-ն պետք է մահանա, որովհետև այս-այս պատճառներով չի կարող հեռանալ հրկիզվող բնակարանից։ Գիտակցել նաև, որ Ա-ի մահը տեղի չի ունենա, էթե տվյալ գործողությունը չկատարվի, բայց, այնուամենայնիվ, կատարել, նշանակում է՝ ցանկանալ հենց անհրաժեշտը, տվյալ զեպքում Ա-ի մահը։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ուղղակի գիտավորությունն բովանդակությունը ոչ միայն արարքի վտանգավոր բնույթի և հանցավոր հետևանքների գիտակցումն ու զրա ցանկանալն է, այլև այն պայմանների ու հանգամանքների գիտակցումը, որոնցում տվյալ հետևանքների առաջանալը անխուսափելի է։ Անուղղակի գիտավորության զեպքում

նույնպես չի ժխտվում գիտակցության մոմենտը, այսինքն՝ մեղադրյալը լցանկանալով տուժողի մահը, բայց գիտակցարար կատարում է այդ գործը, սակայն այստեղ, մեղադրյալի գիտակցությամբ բեկավոր պայմաններն այնպիսին են, որ ըստ նրա, տուժողի մահը կարող է առաջանալ կամ չառաջանալ, այսինքն տվյալ պայմաններում նա չի գիտակցում տուժողի մահվան անխուսափելիությունը։

Պետք է նշել նաև այն, որ գիտավորյալ սպանությունների ոչ բոլոր զեպքերում կարելի է զննել անուղղակի գիտավորության հարցը։ Օրինակ՝ ղժվար է պատմությանցին լրեծից զրոգված, շահ ստանալու նպատակով, կամ այլ հանցագործություն թարցնելու նպատակով և այլն կատարված սպանությունները անուղղակի գիտավորությամբ։ Այսպիսի զեպքերում «անուղղակիությունը» կամ ինչպես ասում են «մահը լցանկանալը» հայտնի պատճառներով բացատրվում են։ Բացի զրանից, անուղղակի գիտավորության հարցը գիտավորյալ սպանությունների զեպքերում մեշտեղ բերելը, մեր կարծիքով, անմտություն է, էթե մեղադրյալի մոտ բացակայել են այլ հանցավոր կամ ոչ հանցավոր նպատակները։ Օրինակ՝ ասնք մեղադրյալը ուղղակի գիտավորություն է ունեցել կատարելու որևէ հանցագործություն, սակայն գիտակցել է, որ կարող է մահանալ Ա-ն կամ Բ-ն, բայց գիտակցարար թույլ է տվել, կամ անտարբեր է եղել նրանց մահվան նկատմամբ։

Տեսական և զործնական մեծ նշանակություն ունի ուղղակի և անուղղակի գիտավորությունների սահմանազատումը։ Այդ կապակցությամբ միտանական կարծիք չկա բրեհական իրավունքում։ Բրեհականների մի խումբ գտնում են, որ մահափոքը հնարավոր է թե՛ անուղղակի և թե՛ ուղղակի գիտավորությամբ²⁹, մյուսների կարծիքով՝ բնդակառակը։

²⁸ Б. С. Утевский, Вина в советском уголовном праве, М., 1950, стр. 255. Նույն տեսակետն են պաշտպանում նաև քրեագետներ Մ. Բասկո և Վ. Տիխոնովը (տե՛ս М. М. Исаев, Вопросы уголовного права и уголовного процесса в судебной практике Верховного Суда СССР, М., 1948, стр. 62—63; К. Ф. Тихонов, К вопросу о разграничении форм виновности в советском уголовном праве, «Правоведение», 1963, № 3, стр. 82—86)։

²⁹ См. В. Я. Лившиц, К вопросу о понятии эвентуального умысла. «Советское государство и право», 1947, № 7, стр. 43; А. А. Жаманченко, в кн. «Уголовный кодекс. Общая часть», М., 1924, стр. 33; И. И. Горелик, Ответственность за поставление в опасность по советскому уголовному праву, Минск, 1964, стр. 27—32.

այն կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ³¹։ վերևում ասացինք, որ անուղղակի դիտավորության զեպրում մեղադրյալը չի ցանկանում տուժողի մահը, հետևապես, չբանկանալով այդ, չի կարող փորձել նրան հասնելու։ Այս պատճառարանությամբ, որը բերվում է նաև սողատակում թվարկված հեղինակների կողմից, մենք նույնպես պաշտպանում ենք վերջին տեսակներ, այսինքն այն, որ մահափորձը կարող է լինել միայն ուղղակի դիտավորությամբ։ Անուղղակի դիտավորության զեպրում պատասխանատվություն է ստացանում միայն փաստացի հետևանքի համար։

Այսպիսով, դիտավորության մասին մինչև այժմ մեր ասածները կտրելի է ամփոփել հետևյալ կերպ. դիտավորյալ սպանությունները կատարվում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ։ Ուղղակի դիտավորությունը անուղղակի դիտավորությունից սահմանազատելիս, այնտեղ է ելնել սպանության հանցագաղթի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները հաստատող կամ ժխտող բոլոր հանգամանքներից, ստանց զրանց բացահայտման և մանրամասն հետազոտման, կարելի է սխալ եզրակացություն հանգել՝ դիտավորության այս կամ այն ձևի մասին։ Մահափորձը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ։ Անուղղակի դիտավորությունը, մահվան բացակայության զեպրում, բրեական պատասխանատվություն է առաջացնում փաստորեն եղած հետևանքի համար։

³¹ *Տե՛ս* Н. Д. Дурманов, Стадии совершения преступления по советскому уголовному праву, М., 1955, стр. 122—126; «Советское уголовное право, часть Общая», М., 1952, стр. 280; И. С. Ташкевич, Подготовка и покушение по советскому уголовному праву, М., 1958, стр. 198—201; И. И. Загородников, Несколко возникших вопросов квалификации умысленных убийств, «Советская юстиция», 1962, № 3, стр. 5; С. В. Бородин, Квалификация убийств по советскому уголовному праву, М., 1963, стр. 159—163; А. А. Пионтовский, Учение о преступлении, М., 1961, стр. 516; М. К. Аниязиц, Ответственность за преступление против жизни по действующему законодательству союзных республик, М., 1964, стр. 33—34 и др.

Գ Լ Ո Ւ Ե Ե Բ Կ Ր Ո Ր Գ

ՄԱՆԲԱՅՈՒՑԻՑ ԸՆՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԳՆԱՆՈՒՐ ԸՄՐՅՆՐ

Ըստիական ՍՍՀ Քրեական օրենսգրքի 99 հոդվածը մեղքը ծանրացնող հանգամանքներ է համարում. 1. մեղադրյալին հանցագործության մղող ստանձին զրգումները (շահը, այլ հանցագործություն կատարելու կամ զրա կատարումը հեշտացնելու նպատակը, բռնաբարության հետ զուգորդված սպանությունը և խուլիզամական զրգումները), 2. տուժողի բռնը հատկանիշները (հզի կնոջը, պաշտոնական կամ հասարակական պարտքը կատարող անձին սպանելը), 3. հանցագործության կատարման եղանակը (ստանձին զրգմանությունը կամ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանելը), 4. սոսհահաբղող օբյեկտի քանակը (երկու կամ մի քանի անձանց սպանելը) և վերջապես 5. մեղադրյալի բռնը հատկանիշները (ստանձնապես վտանգավոր սեջիթիվիտի կամ նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից սպանություն կատարելը)։

Այս հանգամանքներում կատարված սպանությունները զեպրում, մեղավորների նկատմամբ թույլատրվում է կիրառել նաև բացառիկ պատժամիջոց՝ մահապատիժ զնդակահարության միջոցով։

Պետական հարկադրանքի այս բացառիկ միջոցն արդեն վկայում է սովետական պետության և հասարակության՝ սպանության նկատմամբ որևեցած ամենարացածական կարծիքի մասին: Մյուս կողմից, այդպիսի պատժամիջոց էր ղրույվյամբ պարտադրում է օրենսդրական օրգաններին, մեղքը ծանրացնող հանցամասերները սահմանել ամենայն ճշգրտությամբ և որոշակիությամբ, մի բան, որը զեքծ կպահանջի արարքի օրակման և նրա ծանրությանը համապատասխան պատժամիջոցի ու պատժաշափի կիրառման հարցում օրենսկանության հնարավոր խախտումներին:

Հայկական ՍՍՀ Քրեական օրենսգրքը, ի տարբերություն անցյալում գործող օրենսգրքի, այս հարցում որոշ արժանիքներ ունի:

Մի բանի հողվածներ փոխառվելով հնից, նոր օրենսգրքում ձևակերպվել են ավելի ճշգրիտ ու որոշակի: Այսպես, համաձայն նախկին օրենսգրքի 162 հողվածի «ա» կետի սպանությունը առավել ծանր հանցանք էր համարվում, եթե այն կատարվել էր շահից, խանդից և այլ ստոր նպատակներից զրոյված: Քե որոնք էր նա այդպիսի զրոյվածները, օրենսգրքում չէր նշված, այն թողնվում էր դատարաններին հայեցողությանը: Նման անորոշությունը չէր կարող բացառել սխալ օրակումներին և օրենսկանության խախտումներին զեպները:

Նոր օրենսգրքի 99 հողվածում որոշակի նշված են այդ հանցամասերները, այն է՝ շահի և խուլիզանական զրոյվածները, այլ հանցագործություն թարցնելու կամ դրա կատարումը ճշտանցնելու նպատակով: Համաձայնակ բացակայում են այնպիսի հանցամասերներ, ինչպիսին են՝ խանդը, մրեքը, սպանվածի անօգնական վիճակից օգույվելը և այլն:

Եթե նախկին օրենսգրքի 162 հողվածի համաձայն, սպանությունը առավել վտանգավոր էր համարվում դիտադրյալ սպանության կամ մարմնական վնասվածք հասցնելու համար անցյալում պատասխանատվության ենթարկված և զատարանի սահմանած պատիժը կրած անձի կողմից կատարելու զեպներում, այպ ըստ նոր օրենսգրքի 99 հողվածի, նախ

հանված է «մարմնական վնասվածք հասցնելու» բառերը և երկրորդ՝ պարտադիր չէ, որ անձը նախկինում կատարած սպանության համար արդեն պատասխանատվության ենթարկված, կամ դատարանի կողմից սահմանած պատիժը կրած լինի: Բավական է պարզել, որ սպանության համար մեղադրվող անձը, նախկինում նույնպես կատարել է սպանություն՝ չնայած նրա համար չի դատապարտվել, պայմանով, եթե չի անցել նախկին արարքի համար պատասխանատվության ենթարկվելու վաղեմիության ժամկետը:

Նախկին օրենսգրքի նույն հողվածի քա կետով անձը պատասխանատվության էր կանչվում առավել վտանգավոր սպանության համար, եթե նա այդպիսին կատարել էր «մի այլ ծանր հանցագործություն դուրսացնելու կամ ծածկելու նպատակով»: Այս նշանակում էր, որ սպանություն կատարող անձը պետք է մեղադրվեր հասարակ սպանության համար, եթե այդպիսին կատարել էր ոչ թե ծանր, այլ որևէ նվազ հանցագործություն դուրսացնելու կամ ծածկելու համար: Բացի դրանից, դատարաններին մտահոգում էր նաև մի հարց, թե ո՞ր հանցագործությունները տվյալ զեպում պետք է համարել ծանր և ո՞րը՝ նվազ: Նոր օրենսգրքով սպանությունը համարվում է առավել վտանգավոր, եթե մեղադրյալը զրանով իսկ ճեատալիզել է որևէ հանցագործություն թարցնելու կամ դրա կատարումը ճշտանցնելու նպատակով: Եթե նրանից, թարցվող հանցագործությունները ծանր են, թե նվազ:

Ինչպես թվարկված, նույնպես և մյուս ծանրացուցիչ հանցամասերների մասին մենք պետք է խոսենք ավելի մանրամասն, սակայն այստեղ հարկ կա նշելու, որ նոր օրենսգրքը մի շարք ծանրացուցիչ հանցամասերներ փոխառելով հնից, ճշգրտելով և որոշակի ձևակերպելով զրանք, միաժամանակ սպանությունը համարում է առավել վտանգավոր, եթե այն կատարված է այնպիսի հանցամասերներում, որոնք սահմանված չէին նախկին օրենսգրքով (տուժողի կողմից իր պատժանական կամ հասարակական պարտքը կատարելու կապակցությամբ տեղի ունեցած սպանությունը, երկու կամ

անելը, հանցավորի համար ակնհայտ կենց սպանությունը և այլն):

օրենսդրերի համապատասխան հոգ-
ծանրացուցիչ հանգամանքների պատ-
կեմտական տախտակում:

ներացնող հանգամանքները կարող են
ան օրյեկտին, կամ օրյեկտիվ կողմին,
բյեկտիվ կողմին:

անց քննարկմանը:

**ՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՈՒՅԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ**

վնասված վոր սպանությունների շար-
քարկանց կյանքի զնմ ուղղված ուրն-
ունեն որոշ յուրահատկություններ:
րի համար ակնհայտ հղի վիճակում
ամ մի քանի անձանց և պաշտոնական
պարտքը կատարելու կապակցությամբ
յունները:

ամար ակնհայտ հղի վիճակում գտնը-
նը նախատեսված է ՀՍՉԸ Քր. օր.-ի
տով: Սպանությունների այդ տեսակը
ում է ամուսինների, օտոմղի կամ նրա
րի կողմից, խանդի հղի վրա կամ այլ
ններով:

ղովածի նշված կետով մեղադրյալին
անձարկելու համար բավական չէ
խատի հիմնավորումը, պետք է պար-
սպանություն կատարելը մեղադրյալը

րը որակելու, հետագայում պատժա-
րի նշանակման հարցերում առանձին
առաջանում, երբ սպանությունը կա-
մի անձի կողմից, որը օրյեկտիվորեն

ՀԱՄԱՐՄԱՍԿԱՆ ԱՆՍՏԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿ

ՀՍՉԸ, Գրեական օրենսգրքի
(1927թ. խմբագրություն) 162
հոդ.

Քրտավորում, սպանու. թյու. օրը

ՀՍՉԸ, Գրեական օրենսգրքի
գրքը, 99 հոդված.

Քրտավորում, վն.

1) Նախը, թանկից (կեն չունի 194 հոդ. հաս-
կանի ներքո) և այլ սուր զրգու. մեղքից կենդիւ.

2) Գնատարում, սպանու. թյուն կամ մարմնակոն
վնասվածի նախը, համար անխոյանք ցր-
տու. հետադարձությամբ, կ'ընթացի և գրտա-
թանկ սահմանում գրտաթիւ կյանք անձն կող-
մից:

1. Շանջ կեղծիւ.
2. Մու. կրտակոն
ցրտ. մեղքիւ.

3. Ասանկանքն զու. անվար. սկզբից կամ
կամ անկեղծիւ. Գնատարում, սպանու. թյուն
կամ սրտ անձն կողմից (տար. սու. րտակե
պաշտ. սան. թյուն սահմանի անցումով, կամ
սու. կողմից կողմից կողմից կողմից կողմ
կամ 3-օրյ վնասվածից սպանու. թյուն սուր
սպանում հանկուտակի հոգեկան թիւն
հոգեկան վնասված կատարված սպանու. թյուն
նից):

4) Ետ մարդանց կյանքի համար վնասվածի
կամ սպանվածի համար առանձնապես սուր
ցուցի կրտակում:

7. Ասանկն, գտանու. թյուն կամ 2-օրյ կյան-
քի համար վնասված իր կրտակումով:

5) Իր ուլ. ման. անցարթու. թյուն և դրա թանկու
կամ ծանրիւ. նպատակով:

7. Այլ հանցարթու. թյուն վնասված, կամ ցրտ
կատարված հետադարձու. նպատակով, այլ
կողմից կողմից և կեղ թանցարթու. թյուն
(տր. կ):

6) Իր օրյեկտի. սան. ցրտ. անցարթու. թյուն և
նից սու. անձն ու կեղ. իր անձնի կողմից մա-
թիւ.

Հանգամանք

8) Մասնական անհանգամանք վնասված սպանումով:

գոյության ունեցող հանգամանքների շնորհիվ չէր կարող չի-
մանալ տուժողի հղիության մասին (սպանություն կատարու-
ող տուժողի ամուսինն է կամ շատ մոտ սաղականը և այլն)։
Այդ հարցերի լուծումը բարդանում է, երբ սպանությու-
նը կատարվում է կողմնակի անձանց կողմից կամ տուժողի
հետ մոտ հարաբերությունների մեջ գտնվող սննի, որը, սա-
կայն, այս կամ այն պատճառով կարող էր և չիմանալ տու-
ժողի հղիության մասին։

Այսպես, Ա-ն վրձից զրգված սպանում է Գ-ին։ Գիա-
հերձումից պարզվում է, որ Գ-ն հղի վիճակում է։ Փոթի
բնությամբ ձեռք բերված սվյաներով (ղիակի արտաքին
գնեումը, տուժողի հարազատների, հարևանների, նրան ճա-
նաչողների ցուցմունքները, մեղադրյալի անհերքելի փաս-
տարկումները և այլ հանգամանքներ) պարզվում է, որ իրոք
Ա-ն չէր կարող իմանալ Գ-ի հղիության մասին, հետևապես,
Ա-ին ՀՍՄՀ Քր. օր.-ի 99 հոդվածի 5-րդ կետով մեղադրանք
ստաշադրելը կլինի կոպիտ սխալ։ Ա-ին սվյալ զեպրում
տեսք է պատասխանատվության ենթարկեն համաձայն ՀՍՄՀ
Քր. օրենսգրքի 100 հոդվածի (դիտավորյալ սպանություն,
առանց ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքների)։
Նույն մոտեցումը չի կարող լինել զատական պրակտիկայից
բերվող հետևյալ օրինակի զեպրում։ Հ-ն բնակվելով իր մեծ
կցոր բնակարանում, և կասկածելով, որ եղբոր կինը դա-
վաճանում է ամուսնուն, կացնի հարվածով սպանում է
նրան։

Տուժողը սպանության պահին եղել է հղիության վերջին
ամսում, իսկ Հ-ն բնակվելով տուժողի տանը, չէր կարող չի-
մանալ այդ մասին։ Մի հանգամանք, որը հիմնավորվում է
նաև դործով ձեռք բերված սպացույցներով և իր՝ հանցագոր-
ծի խոստովանությամբ։ Մինչդեռ վերևում նշված բարդու-
թյունները այսպիսի զեպրում չէ, որ առաջանում են։
Պրակտիկայում հայտնի են հանցագործություններ (չնայած
հազվադեպ), երբ մեղադրյալը հղի կնոջն ուղղակի դիտավո-
րությամբ սպանելու հարցում բնկնում է փաստական սխալի
մեջ։ Օրինակ՝ Ս-ն սեռական կապի մեջ գտնվելով Գ-ի հետ,

վերջինիս արտաքին տեսքի փոփոխությունները (որովայնի մեծությունը, դեմքի պիգմենտացիան և այլն) համարելով հիմնական նշան, և երեխայի ծնվելու հետ կապված հետագա անախորժություններից խուսափելու համար՝ սպանում է նրան: Գործի ավարտելով (դատաբժշկական փորձագետի կզրակացություն և այլն) պարզվում է, որ Գ-ի որովայնի մեծությունը ոչ թե հղիության, այլ նոր սկսվող չրոզոսթիան (ВОДЯНКА) հետևանք է, որը զեն չէր խմացել նաև ինքը՝ տուժողը:

Այսպիսով, բերված օրինակում, Ս-ն փաստորեն ոտըն-ծաղել է մեկ անձի կյանքի դեմ: Բայց բրեսկան իրավունքում սահմանված հայտնի կանոնների համաձայն, փաստական բխար իրավարանական տարրեր նշանակություն ունեցող օրյկետների նկատմամբ՝ չի մեղմացնում անձի մեղքը, այլ նալած մեղադրյալի դիտավորությանը, կրեմն խտացնում է այն: Հարց է առաջանում. ինչպիս որակել Ս-ի արարքը: Ես փաստորեն սպանել է ոչ հղի վիճակում գտնվող կնոջ և բացակայում են 99 հոգվածում թվարկված մյուս ծանրացուցիչ հանգամանքները, արդյոք, արարքը պետք է համարել հասարակ սպանություն, թե՛, քանի որ Ս-ն դիտավորություն է ունեցել հղի կնոջ սպանել, այն պետք է որակել 99 հոգվածի 5-րդ կետով, որդիս առավել վտանգավոր սպանություն: Ո՛րն է ճիշտ: Ահա դատական պրակտիկայում առաջացող բարդ հարցերից մեկը:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի շարժառիթի և նպատակի մասին մենք արդեն խոսել ենք նախորդ դիտում, ասկայն անհրաժեշտ է նշել, որ անձին հանցագործության զբղջողը այս կամ այն որոշակի շարժառիթն ու կոնկրետ նպատակներին հանելու ձգտումն է: Հենց դրանով է բնորոշվում հանցագործության սուբյեկտի դիտավորության ուղղվածությունն ու բովանդակությունը: Վերք բերված օրինակում Ս-ն դիտավորություն է ունեցել հետո մնալ այնպիսի անա-

խորժություններից, որոնք կառաջանային իր հետ կապերի մեջ մտած Գ-ից երեխա ծնվելու պատճառով (հասարակական կարծիք, բնտանիքի քայքայում և այլն) հետևապես, սպանելով Գ-ին, նա զրանց խուսափելու նպատակ է հետապնդել. նախատեսել է հենց Գ-ի ու նրա արգանդում աճող իր երեխայի մահը: Ս-ն հասել է իր նպատակին, սակայն նրա ենթադրած երեխայի բացակայության փաստը չի իրենցում, ըստ մեզ, նրա կատարածի հասարակական վտանգավորության աստիճանը: Այս նտանակետից, Ս-ի արարքը ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոգվածի 5-րդ կետով որակելը ճիշտ համարելով, կարծում ենք, սխալված չենք լինի:

Փաստական պրակտիկայից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, սակայն արդեն պարզ է, որ մեղադրյալի արարքը Քր. օր.-ի 99 հոգվածի 5-րդ կետով որակելու հիմնական շտիանիչը, մեղադրյալի համար տուժողի հիմնական սպանությանն է: Այդպիսի սպանության շարժառիթներն ու նպատակները կարող են լինել խաղաղ, վրեժը, հետագայում պլաննետ շվճարելը և այլն:

Թ. երկու կամ մի քանի անձանց դիտավորյալ կերպով կյանքից զրկելը նախատեսված է ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոգվածի 4-րդ կետով:

Սպանության այս տեսակը բնութագրվում է սուբյեկտի դիտավորության միանունությամբ և սովորաբար միմյանց հետ կապվում են ժամանակով ու տեղով:

Այսինքն, մեղադրյալը դիտավորություն է ունենում սպանելու երկու կամ մի քանի անձ, բնոց որում, նշանակություն չունի աչք դիտավորությունը նախապես է առաջացել սուբյեկտի մոտ, թե նույն պահին, որին անմիջապես հաջորդել է սպանությունը: Հնարավոր է, որ բնտրված զոհերի, կամ նրանցից մեկի մահը տեղի չունենա, այսինքն, որևէ հանցամասերի շեղումիվ խախտվի պատճառական կապի այն շղթան, որի առկայությունը յապմանավորված էր մահը՝ որպես հանցավոր գործոնի արժանություն հետևանք:

Եթե մեղադրյալը գործել է երկու կամ մի քանի անձանց սպանելու դիտավորությամբ և առկա է հանցավոր հետևան-

2 Իրավարանական տարրեր նշանակություն ունեցող օրյկետներ ասելով, ավյալ զեպցում նկատի ունենք հղի և ոչ հղի կանայց:

քը, այն դեպքում է որպես պարտաված հանցագործություն, իսկ եթե քաջակամ է այդպիսի հետևանքը՝ դիտվում է որպես սպանության փորձ: Հնարավոր է նաև երկուսի միասնությունը՝ սպանություն և սպանության փորձ: Նշված բոլոր դեպքերում արարքը պետք է որակվի 99 հոդվածի 4-րդ կետով, սպանության փորձի դեպքում՝ դիտվելու ցույց տալով նաև հանցափորձը բնութագրող հոդվածը: Այսպես, 1963 թ. օգոստոսի 29-ին, Արտաշատի շրջանի Մրզախուշ գյուղի բնակիչ Ա.-ն կոտնեպանության դատարան, որտորական երկփուլանի հրացանից կրակում է նույն գյուղի բնակիչ Խ.-ի վրա: Ա.-ն համոզվելով, որ Խ.-ն մահացած է, մտանում է դաշտի մյուս մասում աշխատող իր կնոջ ու բնուն և մոտ տարածությունից երկու նահամ կրակում նրանց վրա: Երեք ատոմոն էլ մնում են կենդանի՝ նրանցից՝ Խ.-ն ստանում է ծանր, մեղադրյալի կիրք՝ նվազ ծանր, իսկ բնին՝ առողջությունը ժամանակավորապես քայքայող վնասվածքներ: Գործով ձևոք բերված սպացույցներով հիմնավորվում է, որ Ա.-ն կասկածելով թե կիրք սերտ կապերի մեջ է Խ.-ի հետ և, որ այդ գործում կնոջ քույրը կատարում է միջնորդի դեր, որում է վերջ տալ նրանց կյանքին: Չնայած մեղադրյալը չի կարողացել հասնել իր ցանկացած նպատակին, սակայն ՀՍՄՀ Գերագույն Գատարանի քրեական գործերով դատական կոնգրեսն, ճիշտ համարելով նախաբնությունը բնթվացում 15—99 հոդվածի 4-րդ կետով Ա.-ին առաջադրված մեղադրանքը, պատժաչափ է սահմանում համաձայն այդ հոդվածի:

Երկու կամ մի քանի անձանց սպանությունը պետք է տարբերել կրկնակի սպանությունից: Ինչպես առաջին, այնպես և երկրորդ դեպքում մահ է պատժանում երկու կամ ավելի անձանց, բայց առաջինի դեպքում մեղադրյալը մեղադրվում է միաժամանակ երկու կամ ավելի անձ սպանելու, մինչդեռ երկրորդի դեպքում քաջակամ է այդպիսի գիտավորությունը Այս վերջինը բնութագրվում է նրանով, որ կատարված սպանություններից յուրաքանչյուրը ինքնուրույն հանցագործություն է, որոնցից ամեն մեկը, չնայած

կատարվում է մեկի կողմից, բայց տարբեր ժամանակ և տարբեր տեղերում:

Օրենսդիրը, երկու կամ մի քանի անձանց սպանությունը, ժանրացուցիչ հանգամանքներում կատարված մյուս սպանություններից տարբերելու շարժանիչ է ընդունել առընկերության օրջեկաների քանակը, այլ ոչ թե գործողության բնույթը, կատարման եղանակները և այլն: Այս տեսակետից չենք կարող համաձայնվել այն հեղինակների հետ, որոնք այդ համարում են հանցակազմի օրջեկտիվ կողմին վերաբերող ժանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն:

Նախորդ զլխում խոսելով հանցագործության օրջեկախ մտտին, առաջինը, որ հանցավոր արարքով կարող են անմիջապես ոտնահարվել, ինչպես հասարակական հարաբերությունները, այնպես էլ նրանց առանձին տարբերը, օրինակ, սաներ՝ հասարակական հարաբերությունների սուրյեկաներ՝ սանի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում: Երկու կամ մի քանի անձանց սպանության հասարակական վտանգավորությունը բարձր է հենց նրա համար, որ այստեղ հանցավոր ոտնձգությանը կանախից զրկվում են հասարակական հարաբերությունները կողմ երկու և ավելի սուրյեկտ, այլ ոչ թե մեկ: Այսինքն՝ ոտնահարվում են երկու և ավելի օրջեկաներ, որից ելնելով և սպանությանը առավել վտանգավոր է համարվում օրենսդրի կողմից: Բավական է որպեսզի հանցավոր գործողության կամ անգործության հետևանքով մահ պատժանովի մեկ անձի և, եթե շկան օրենսգրքի 99 հոդվածում թվարկված մյուս ժանրացուցիչ հանգամանքները, սպաարարքը կղաղարի որակի սպանություն լինելուց ու կրակվի օրենսգրքի 100,101 կամ 102 հոդվածներով, նայած գործի հանգամանքներին:

³ Տե՛ա Ձ. Փ. Побегадло, Уголовно-правовая борьба с умышленными убийствами, Автореферат канл. дисс., Воронеж, 1964, стр. 11; Н. И. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 171.

9. Տուժողի կողմից իր պաշտոնական կամ հասարակական պարտքը կատարելու կապակցությամբ կատարված սպանությունը (Քր. օր.-ի 99 հոդվածի 3-րդ կետ) առավել վտանգավոր է այն իմաստով, որ սուսնձգությունը տեղի է ունենում հանորդին օգտակար աշխատանք կատարողի նկատմամբ և, որ աշխատանքի նման օգտակարությունը դժգոհություն է առաջացնում մեղադրյալի նստ, շղայնացում է նրան:

Ապանության այս տեսակի տակ պետք է հսկվանայ պաշտոնատար անձանց, իշխանության ներկայացուցիչների, հասարակական աշխատողի, ինչպես և ամեն մի աշխատողի և ամեն մի քաղաքացու այնպիսի սպանությունը, որը տեղի է ունեցել տուժողի կողմից իր պաշտոնական-հասարակական պարտականությունը կամ պարտքը կատարելու ժամանակ, կամ եթե չի կատարվել այդ ժամանակ, սակայն կապված է նշված պարտքի կամ պարտականության կատարման հետ: Հակառակ դեպքում, սուբյեկտի կատարած սպանությունը, եթե շկան 99 հոդվածում թվարկված ծանրացուցիչ հանցամասնքները, կորակվի բրեական օրենսդրի՝ սպանություն նախատեսող մեկ այլ հոդվածով (նայած գործի հանգամանքներին):

Առանձին քրեագետներ այն կարծիքն են հայտնել, որ սովյալ դեպքում հանցագործության անմիջական օբյեկտ կարող է լինել այն անձանց կյանքը, որոնց վրա գրված են հատուկ պարտականություններ, լիազորված են այդպիսին կատարելու համար կամ գրուժինիկներ են՝:

Մեզ թվում է, որ նման կարծիքը չի համապատասխանում օրենսդրության ոգուն և նեղացնում է սովետական հասարակարգում նրա անդամի վրա բեկած ամենաբարձրագույն պարտականությունների շրջանակները: Քննարկվող սպանության օբյեկտ կարող են համարվել, ըստ մեզ, ինչպես այն անձինք, որոնք հատկապես լիազորված են նման պարտա-

կանություններ կատարելու, այնպես և նրանց կյանքը, ովքեր այդ կատարում են հասարակության մեջ գործող բարոյական նորմերի ուժով:

Սոցիալիստական համակեցության կանոնների, կոմունիստական բարոյականության նորմերի պահպանումը սովետական յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է և նա, ով պահպանում է այդ կանոնները, անկասկած կատարում է իր հասարակական պարտքը: Եթե գործով ձեռք բերված սպանությունով հիմնավորվում է, որ անձը սպանվել է հենց այդ պարտքի կատարման ժամանակ կամ այդ առիթով, ապա մեղադրյալի արարքը Քր. օր.-ի 99 հոդվածի 3-րդ կետով որակվել է այդ հոդվածի սանկցիայով նրա համար պատիժ սահմանելը, կարծում ենք, ոչ միայն ճիշտ է, այլև անհրաժեշտություն:

Պաշտոնական կամ հասարակական պարտքը կատարելու ժամանակ տեղի ունեցած սպանությունը պետք է տարբերել ինչպես տեղաբնակական ակտի ժամանակ կատարված սպանությունից, այնպես և միլիցիայի աշխատակցին կամ գրուժինիկին իրենց պաշտոնական կամ հասարակական պարտականությունները կատարելու կապակցությամբ սպանությունից: Այս հանցագործությունները մեր ուսումնասիրության առարկան չեն, սակայն պետք է նշել, որ տեղաբնակական ակտի ժամանակ, պետական-հասարակական գործչին կամ իշխանության ներկայացուցիչին սպանելը հետապնդում է Սովետական իշխանությունը քայքայելու կամ թուլացնելու նպատակ, որը բացառվում է տուժողի հասարակական կամ պաշտոնական պարտքի կատարման կապակցությամբ տեղի ունեցած սպանության դեպքերում:

Այս վերջինի ժամանակ հաճախ շարժառիթը վրեժն է, այս կամ այն քաղաքացու կամ պաշտոնատար անձի գործունեության առթիվ ունեցած անբավականությունը, իր շահերին կաշոռ արարքները սրգեկելու ցանկությունը:

Ինչ վերաբերում է միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական գրուժինիկի՝ իրենց պաշտոնական կամ հասարակական գործունեության կապակցությամբ սպանությանը,

4 Տե՛ս «Уголовный кодекс РСФСР 1960 г.», Комментарий, изд. ЛГУ, 1962, стр. 211.

սպա այն պետք է դիտվի վարչակարգի զեմ ուղղված հանցադործություն և որակվի ՀՍՄՀ Քրեական օրենսգրքի 209 հոդվածով:

Տուժողի հասարակական-պաշտոնական պարտքի կատարման կապակցությամբ սպանությունը կարող է տեղի ունենալ նշված պարտքի կատարման ժամանակ, կամ դրանից հետո: Սրբեմն արարքը կարող է կատարվել ոչ անմիջապես պարտականությունների կատարողի, այլ նրա հարապատկերից կամ մեծավորներից որևէ մեկի նկատմամբ: Սակայն կատարված սպանությունը Քր. օր.-ի 99 հոդվածի 3-րդ կետով որակելիս, ոչ մի նշանակություն չունի, իր պարտականությունը կատարողն է սպանվել, թե նրա հարապատր, եթե վերջինիս սպանությունը նույնպես որոշակի գործունեություն արգելելու նպատակ է հետապնդել:

3. ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԿԱՂՄԻ ՕՐՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՆՐԱՅՈՒՑԻԶ ՀԱՆԳՄԱՆՔՆԵՐ

Անձի կյանքի զեմ ուղղված հանցադործության հասարակական վտանգավորության աստիճանը որոշվում է օրենքում նշված որոշ եղանակներով (սպանություն կատարողի առանձին զաժանությունը և այնպիսի գործություն (անչործություն) զրևերում, որը սպանվողից բացի վտանգավոր է նաև շատերի կյանքի համար:

Ա. Առանձին զաժանությամբ կատարված սպանությունը բնութագրվում է գործուղության (անզորություն) զրևերման այնպիսի եղանակով և հատկանիշներով, որոնք վկայում են մեղադրյալի անողորությունը: Կատարման եղանակի տակ պետք է հսկայանալ այն, որ մեղադրյալը անձին մահ պատճառելուց բացի հետապնդում է և անաչանք պատճառելու նպատակ:

«Տանջանք» - վերաբերում է այնպիսի վիճակին, որ հասցվում է դեռևս չմահացած անձին: այսինքն, մահը չարորդում է նրան պատճառած տանջանքին, մինչդեռ հնարա-

վոր են և հայտնի են դեպքեր, երբ այդ երկուսը հանգես են պայտ միաժամանակ, կամ մեղադրյալի անողորությունը զրևերում է տուժողի մահից հետո (դիակի կտրուում, աչլանդակում և այլն): Այսպիսի դեպքերում տանջանքը բարձր չի բնութագրում կատարված անչորությունը վերցրած, նա չի բովանդակում այն վերաբերմունքը, որը ցուցաբերել է մեղադրյալը իր գործողության հետանրով: Իրավացիորեն ներ օրենսգրքում հրաժարվում է նախկինում գործող օրենսգրքում տեղ գտած «տանջալից եղանակ» հասկացությունից, այն փոխարինելով «տառանձին զաժանություն» հասկացությամբ, որը բովանդակում է նաև առաջինը:

Նվ իրոք, աուժողին բազմաթիվ վերքեր հասցնելու, գանդաղ ներգործող թույն օգտագործելու, հրկիզելու կամ օրգանիզմը բաշքալող այլ միջոցներով սպանություն կատարելը վկայում է մեղադրյալի անողորություն մասին, որը զրևերում է տուժողի մահից առաջ կամ մահվան պրցեսսում: Մինչդեռ այնպիսի գործողությունները, ինչպիսին են՝ սպանելուց հետո դիակի անզամահատումը, աչլանդակումը, կամ անարդումը և այլն, չնայած նույնպես մեղադրյալի անողորության մասին են վկայում, սակայն զրևերում են տուժողի մահից հետո և չեն կարող նրան տանջանք պատճառել: Բայց ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքերում, մեղադրյալը հանգես է քերում զաժանություն, որը և ավելի է մեծացնում նրա կատարածի հասարակական վտանգավորությունը:

Պետք է նշել, որ մեղադրյալի զաժանությունը, որպես սպանությունը որակավորող հանգամանք, բնութագրվում է ոչ միայն սպանության կատարման եղանակով, այլև առանձին զաժանություն զրևերելով մեղադրյալի զիտավորությունը հաստատող այլ հանգամանքներով:

Այսինքն, եթե Ա-ն որոշորակա հրացանից կրակում և սպանում է Բ-ին, որի զեմը բազմաթիվ կտորակներին ներգործությունից այլանդակվում է, սպա այդ դեռևս չի վկայում Ա-ի զաժանություն մասին: Առանձին զաժանությամբ կատարված զիտավորյալ սպանությունը եմբարդում է տու-

վերջինիս մահը, Հ-ն նրա մարմնի տարբեր մասերին (ըստ դատա-բժշկական փորձագետի եզրակացության՝ կրծքավանդակին, ձախ կտրին և ձախ ազդրին) զանազով հասցնում է շորս վնասվածք: Երբ տուժողը ընկնում է, Հ-ն այս անգամ սկսում է հարվածել նորեղումով: Քննիչի կողմից Հ-ի արարքը որակվում է որպես խուլիգանական զրբումներով և առանձին դատաւորյամբ կատարված պայանություն (ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդ. 2-րդ և 6-րդ կետերով): Դատարանի կողմից վնասվում է 99 հոդ. 6-րդ կետով առաջագրված մեղադրանքը (առանձին դատաւորյուն) և թողնելում միայն նույն հոդվածի 2-րդ կետը (խուլիգանական զրբումներ), պատճառարանելով, որ «մի ակնբարձրում մարմնի մերկույն մասին շորս վնասվածք հասցնելը չի դիտվում որպես առանձին դատաւորյամբ կատարված սպանություն»:

Նախ՝ ոչ մի նշանակություն չունի վնասվածքները մարմնի միևնույն կամ տարբեր մասերին հասցնելու հանգամանքը, բավական է այդպիսին հասցված են սպանելուց բացի՝ տանջանք պատճառելու նպատակով: Եվ երկրորդ, ընդհանրապես, զործողության մեջ մտնող ամեն մի շարժում, լինի մեկը, երկուսը, թե ավելին, կատարվում է որոշակի ժամանակի ընթացքում: Այդ ժամանակը (նայած կոնկրետ գործին) կարող է լավվել ակնթարթով, բրպետվ, կամ ժամանակի մեկ այլ միավորով և, չնայած զրան, թե մեկի և թե մյուսի անկախ, դիտավորյալ կերպով ուրիշին կյանքից զրկելը կարող է դիտվել առանձին դատաւորյամբ կատարված սպանություն կամ շղիտվել այդպիսին՝ նայած գործի հանգամանքներին և մեղադրյալի ունեցած դիտավորյունի:

Հանցագործության սուբյեկտի դիտավորյունը անտեսելում է նաև ՍՍՀՄ Գեորգուլու դատարանի քրեական գործերի դատական կոլեգիայի, Ֆ-ի գործով կայացված որոշման մեջ: Այնտեղ ասված է, որ վնասվածքների քանակը չի կարող վկայել մեղադրյալի դատաւորյունը այն ղեպքում, երբ

յուրբանջյուր վնասվածք, ըստ իր բնույթի և ծանրության աստիճանի, համարվում է մահացու»:

Դիտավորյալ սպանության ղեպքում, բացի մահ պատճառող վնասվածքից, մյուս բոլոր վնասվածքները մահացու են թե ոչ, կրկնում ենք, և թե տուժողին կյանքից զրկելուց բացի, հիմնվորվում է մեղադրյալի դատաւորյունը գործի հանգամանքներով և նրա ունեցած դիտավորյունի, այսպարարքը պետ է որակել հոգովածի՝ այդ եղանակը նախատեսող կետով:

Չնարավոր է, որ սպանությունը համարվի դատաւորյամբ կատարված, նույնիսկ մեղադրյալի ժող այդպիսի դիտավորյունի բացակայության պայմաններում: Օրինակ՝ երկնանքի առջև նրանց ծողղներից մեկն ու մեկին սպանելը առանց դատաւորյան, որոշակի հանգամանքներում կարող է դիտվել առանձին դատաւորյամբ կատարված սպանություն: Այսպիսի ղեպքերում որոշիչ՝ այն իրադրությունն է, որում կատարվում է սպանությունը:

Այսպիսով, առանձին դատաւորյամբ կատարված դիտավորյալ սպանություն պետ է համարել հակաօրինարութիւն կյանքից զրկելը, որ բացի դրանից, հետապնդել է սովորիկ տաճաբն պատճառելու, դիակը խաղանգելու, անարգելու, մանից ստաշ շարշարելու, ուրիշների մառ ստոսացնելու նպատակ, անկախ հասցված վնասվածքների քանակից: Բնույթից, ծաւերոյան աստիճանից և նրանց միջև ընկած ժամանակի տեղորայրուցից:

Ք. Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանությունը (ՀՍՍՀ Քր. օր.-ի՝ 99 հոդ. 6-րդ կետ) բնութագրվում է ձեռք իր կատարման եղանակով: Այսպիսի եղանակները բավաբար են՝ հրկիրում, պայթեցում, շենքի քանդում և այլն: Իրավացիորեն՝ օրինադիրը համարյուն է այդ եղանակները թվարկելուց, որովհետեւ, նախ՝ հնարավոր չէր լինի տալ բոլոր եղանակների սպառել ցանկը

9 Տե՛ս. Постановление Пленума Верховного Суда СССР от 4 июня 1960 г. «О судебной практике по делам об умышленном убийстве».

և երկրորդ՝ կասճմանափակվելին այդ հարցում օրենքի կիրառման շրջանակները: Այսինքն, հնարավոր չէր լինի ամեն մի եղանակ, որը վտանգավոր է շրջապատի համար կամ կարող էր այդպիսին լինել, սպանություն զեպրում համարել ժանրացուցիչ հանգամանք, եթե այդ չի հիշատակված օրենքում:

Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության տակ նկատի է առնվում այն, երբ որևէ մեկին սպանելու գիտավորությամբ, կամ առանց դրան, մեղադրյալը կատարում է այնպիսի գործողություն, որով վտանգի տակ է դնում նաև ուրիշ անձանց կյանքը:

Ասանձին հեղինակներ սպանությունը որակյալ են համարում, երբ նրա կատարողը ընտրում է այնպիսի եղանակ, որով միաժամանակ վտանգի տակ է դնում նաև ուրիշների կյանքը¹⁰, ծիծեռնակներ, որ այդպիսի զեպրերում մեղադրյալը միշտ, որոշակի մեկին սպանելու ուղղակի գիտավորություն պետք է ունենա, այս խուլիգանական գրգռմանը [առանց որևէ մեկին սպանելու գիտավորության] մասաչի մեջ, կայարաններում, կինոթատրոններում կամ այլ մարդաշատ վայրերում զենքից անկանոն կրակելը, որի հետևանքով մարդ է սպանվում, շպետք է գիտենք որպես շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանություն: Սպանությունը, այլվայրում, առավել վտանգավոր դարձնող հանգամանքն ոչ թե մեղադրյալի որոշակի անձ սպանելու գիտավորությունն է, այլ շատերի կյանքի համար կատարվող վտանգավոր եղանակը¹¹:

¹⁰ *Se'u M. D. Шаргородский*, Ответственность за преступления против личности, 1953, стр. 26; «Преступления против жизни и здоровья», 1948, стр. 103; «Советское уголовное право, часть Особенная», М., 1962, стр. 131; «Советское уголовное право, часть Особенная», МГУ, 1957, стр. 171.

¹¹ *Se'u* «Советское уголовное право, часть Особенная», ЛГУ, 1959, стр. 149—150; *М. М. Насая, А. А. Пиантовский*, Вопросы уголовного права и уголовного процесса в судебной практике Верховного Суда СССР, М., 1947, стр. 40; *Н. И. Загородников*, Преступления против жизни..., М., 1961, стр. 171.

Այդ կարգի սպանությունը պետք է տարբերել նույն եղանակով կատարված այնպիսի սպանությունից, որով մեղադրյալը հետապնդել է հակասովետական նպատակներ (դիվերսիա):

Ինչպես հայտնի է, դիվերսիան օրյեկտիվ կողմից բնութագրվում է սոցիալիստական զույթի ավերմամբ կամ վնասմամբ, որն իրականացվում է բազմապիսի առավել վտանգավոր եղանակներով ու միջոցներով: Այն կարող է տեղի ունենալ հրդեհի, պայթեցման, ինչպես և ջրահեղձման միջոցով, զուգորդված մարդկային զուհերով: Գիվերսիան արտահայտվում է նաև մարդկանց մասսայական թունավորման, նրանց մեջ համաճարակ տարածելու միջոցով:

Թվարկված եղանակները կարող են որակավորող հանգամանքներ համարվել նաև գիտավորյալ սպանության զեպում, սակայն դրանք միջուկային տարրերում են հանցագործի ունեցած նպատակով: Այսինքն, եթե անձը թվարկած օրև եղանակով կատարել է սպանություն, առանց սովետական պետությունը թուլացնելու նպատակներ հետապնդելու, արարքը որակվում է Ք. օր.—ի 99 հոդ. 6-րդ կետով, որպես շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանություն:

Որպեսզի սպանությունը համարվի առավել վտանգավոր, անհրաժեշտ է, որ զրուերված եղանակի վտանգավորությունը ակնհայտ լինի իրեն՝ մեղադրյալին և, որ այդ վտանգավորությունը կունկրետ իրադրության մեջ լինի ռեալ: Օրինակ՝ գիշերը, ամառի տարածության մեջ անձը իր մոտ զբուրվող ատրճառակից մի թանի անգամ կրակում է առանց սրևել նպատակի: Գնդակներից մեկը կպչում է կուլտետեստության դաշտերը պահպանող պահակին, որից և նա մահանում է:

Գիշերվա այդ ժամերին նշված տեղը չի կարելի համարել մարդաշատ վայր և շատերի կյանքի համար իր գործողության վտանգավորությունը մեղադրյալը չէր կարող գիտակցել, ուստի նրա արարքը, նախ զործի հանգամանքներից, կարող է համարվել որպես անզույշ սպանություն:

Շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանության դեպքում, հաճախ սպանվողից բացի, մեկը կամ մի քանիսը վիրավորվում և ստանում են տարբեր ստախճանի մարմնական վնասվածքներ: Պրակտիկայում սովորաբար դրանք որակում են համակցության կանոններից ելնելով, որն բնտ մեղ ճիշտ չէ և պետք է որակվի շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կատարված սպանություն, որովհետև մյուսների վնասվածքները ոչ թե առանձին հանցագործության հետևանք են, այլ սպանությունը բրակավորող հատկանիշներ:

4. ԿՑԱՆՔԻ ԳԵՄ ՈՒՂՂԱՄ ԸՆԴՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒՐՅՆՆԿՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՍՆԵՐԱՑՈՒՑԻՑ ԸՆԴԳԱՄԱՆՔՆԵՐԻ

Օրենսդիրը դիտավորյալ սպանությունը համարում է որակյալ, եթե այն կատարվել է առանձնապես վտանգավոր ղեցիղիվիստի կամ նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից:

Հարցն այսպես դնելով, օրենսդիրը տարբերում է «սեցիղիվիստ» և «հանցագործության կրկնակիություն» հասկացությունները: Սեցիղիվիստ անունը, — գրում է Մ. Բ. Ուզունյանը, — յաթմներեն «սեցիղիվիստ» բառից է, որը նշանակում է վերադարձ, որն էրևոյթի կրկնում, այն բանից հետո, երբ թվում է, թե նա անհետացել է, սակայն բրեական իրավունքում այն ոչ թե թարգմանվում, այլ գործածվում է այնպես, ինչպես կա, գրանով իսկ սահմանելով սեցիղիվիստի և կրկնահանցագործի հասկացությունները, դրանց հետ կապելով իրավական տարբեր հետևանքներ¹²:

Ա. Գործող բրեական օրենսդրությամբ տրված է միայն առանձնապես վտանգավոր սեցիղիվիստի բնորոշումը, որի սովորությունը հենց տրամաբանորեն հաստատում է բարդ, ծանր ու հատուկ սեցիղիվ հասկացությունների գոյության փաստը: Ծանր, հատուկ և բարդ սեցիղիվներն են, որ տար-

¹² ՍՍՍՖ Մ. Բ. Ուզունյան, Սեցիղիվը սովետական քրեական իրավունքում, Երևան, 1964, էջ 10:

բեր կապակցություններում կարմում են գործող օրենսդրությանը նախատեսված առանձնապես, վտանգավոր սեցիղիվ հասկացությունը:

Իրավարանական գրականության մեջ, սեցիղիվների էջված տարատեսակներին հաճախ «լեզու սեցիղիվ» են անվանում, ելնելով նրանից, որ սեցիղիվի սովորությունը ընդհանրապես պայմանավորված է անձի նախկին գատվածության հետ (եթե այն վերացված չէ օրենքով սահմանված կարգով):

Բայց այդ չի նշանակում, թե նախկինում գատուարտված բոլոր անձինք կարող են համարվել առանձնապես վտանգավոր սեցիղիվիստներ:

ՍՍՀՄ Գերագույն դատարանի Պլենումը, իր 1963 թ. հուլիսի 3-ի՝ «Անձին առանձնապես վտանգավոր սեցիղիվիստ ճանաչելու գատուական պրակտիկայի մասին» որոշմամբ գատուարտելով հարցի լուծման ժամանակ ձևական մտանցում ցուցարներողներին, նշում է, որ առանձնապես վտանգավոր սեցիղիվիստ կարող են ճանաչվել միայն հատարակության համար խիստ վտանգագործություն ներկայացնող և համարորեն ուղղման ճանապարհին կանգնել շցանկացող շարմիս հանցագործները¹³:

Պլենումի այդ որոշմամբ պարզաբանվեց նաև այն, որ անձը չի կարող բրեական պատասխանատվության ենթարկվել առանձնապես վտանգավոր սեցիղիվիստի նկատմամբ պատասխանատվություն սահմանող հողվածով, եթե մինչ այդ, նա գատարանի կողմից չի ճանաչվել առանձնապես վտանգավոր սեցիղիվիստ:

Այս բերջանուր սկզբունքների համաձայն լուծվում է նաև կրկին անգամ դիտավորյալ սպանություն կատարած անձի պատասխանատվության հարցը, բացառությամբ սահարածեշտ պաշտպանության սահմանների անցումով, կամ սովորողի կողմից գործադրված բռնության, կամ ծանր վիրարանքի աղբղեության սովորաբար հանկարծակի հղղկյան խիստ հուղման վիճակում կատարված սպանություն-

¹³ ՏՆ՝ «Советская Юстиция», 1963, № 17, стр. 25.

ների: Հարցի այսպիսի լուծումը բխում է հենց օրենքի տեքստից, այդ ուղիով էլ գնում նաև դատական պրակտիկան: Միևնույն քրեազեմտից ումանը գտնում են, որ առանձնապես վտանգավոր ղեկավարները նույնպես անձի կողմից, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կամ արարքը մեղմացնող, վերևում թվարկված հանգամանքում կատարված սպանությունները նույնպես պետք է համարել որակյալ¹⁴: Այսպիսի տեսակետի բնղուծումը և նրա պրակտիկ կիրառումը, բայց մեզ, արհեստականորեն կմեծացնել անպիսի հանցագործությունների թիվը, որոնք նախատեսված են Քր. օր.-ի 99 հոդ. 8-րդ կետով: Բացի դրանից, արարքի գնահատումը չէր համապատասխանի անձի կատարածի ծանրության աստիճանին, որովհետև անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով և հանկարծակի հուզման վիճակում կատարված սպանությունները իրենց հատուկ հատկանիշներով ավելի նվազ հասարակական վտանգավորություն են ներկայացնում, քան ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունները: Դեռ ավելին, նշված արարքների կատարման մեջ պակաս մեղք չունեն հենց իրենք՝ տուժողները:

Այստեղ, մի դեպքում՝ մեղադրյալը (անկախ նրանից նա առանձնապես վտանգավոր ղեկավարի մեղք է թե ոչ) տուժողի կողմից թույլատրված հանրերի վտանգավոր արարքը կանխելու կամ վերացնելու ժամանակ անցնում է օրենքով նախատեսված պաշտպանության սահմաններից, իսկ մյուս դեպքում՝ տուժողի գործողությունները, իսկ մյուս դեպքում՝ հուզման ժամանակ, մեղադրյալը, շնայած չի կորցնում իր կատարածը գնահատելու բնղուծակությունները, սակայն բավականաչափ զրկվում է իր գործողությունները ղեկավարելու հնարավորություններից:

¹⁴ Տե՛ս՝ Մ. Դ. Шаргородский, Ответственность за преступления против личности, Л., 1953, стр. 26—27, А. А. Пионтковский, В. Դ. Меньшасин, Курс советского уголовного права, часть Особенная, т. 1, М., 1955, стр. 547; Р. Теодан, Некоторые вопросы уголовного законодательства Украинской ССР, Киев, 1962, стр. 62.

Մինչև ՍՄՀՄ Գերագույն դատարանի Պլենումի 1963 թ. հուլիսի 3-ի որոշման հրապարակումը, դիտավորյալ սպանությունների հարցի լուծման վերաբերյալ դատական պրակտիկայում միասնություն չկար:

Որոշ դատարաններ անձին առանձնապես վտանգավոր ղեկավարի մեղքով հանաչելով, միաժամանակ նրա կատարածը որակում էին որպես վտանգավոր ղեկավարի կողմից կատարված սպանություն: Առանձին դատարաններ էլ, շնայած առանձնապես վտանգավոր ղեկավարի մեղքով համարում էին հենց կրկին սպանություն կատարելու փաստը, բայց միաժամանակ այդ նույն արարքը չէին որակում առանձնապես վտանգավոր ղեկավարի կողմից կատարված սպանություն: Պլենումի վերահիշյալ որոշումը միասնություն մտցնելով դատական պրակտիկայում, նշեց, որ անձի արարքը կարելի է որակել ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքի 102 հոդ. այս կետով (ՉՍՄՀ Քր. օր.-ի 99 հոդ. 8-րդ կետ—Կ. Լ.), միայն այն դեպքերում, երբ դիտավորյալ սպանություն կատարած անձն արդեն իսկ դատարանի կողմից ճանաչված է առանձնապես վտանգավոր ղեկավարի ղեկավարի¹⁵:

Այսպիսով, սպանություն առանձնապես վտանգավոր ղեկավարի մեղքով կողմից կատարված պետք է համարել, երբ նախքան դրա կատարումը, մեղադրյալն արդեն իսկ այդպիսին է ճանաչվել դատարանի կողմից:

Բ. Սպանությունը որակյալ է համարվում նաև այն դեպքերում, երբ այն կատարվել է նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից:

Դիտավորյալ սպանության կրկնակիությունը համարելով ծանրացուցիչ հանգամանք, օրենքը չի պահանջում, որպեսզի դրա կատարողը, նախկին սպանության համար դատապարտված և դատարանի կողմից սահմանված պատիժը կրած լինի:

Նախկինում գործող օրենսդրության համաձայն, էթն մեղադրյալը առաջին սպանության համար որևէ պատճառով

¹⁵ Տե՛ս՝ «Советская юстиция», 1963, № 17, стр. 25, 27.

չէր ենթարկվել բրնձահան պատասխանատվության, կամ դատապարտվել էր, բայց չէր կրել սահմանված պատիժը՝ նրա կողմից կրկին կատարած սպանությունը որակելու չէր համարվում: Եման շարժարարացված «Կրկնակիություն» հասկացությունն սահմանափակումը, սակայն իր արդարացունս էր գտել առանձին բրնձագետների աշխատություններում¹⁶:

Անձի վտանգավորությունը մեծ է հենց այն պատճառով, որ նա կրկին անգամ է կատարում նույն հանցավոր արարքը և նման հարցը չի կարող այլ կերպ դիտվել միայն այն պատճառով, որ նա նախկին սպանության համար չի դատապարտվել կամ չի կրել դատարանով սահմանված պատիժը: Կրկնակի սպանություն կատարելու փաստը վկայում է հատկապես հանցագործության վտանգավորությունը և բնութագրում հանցագործին¹⁷:

Յժն մեղադրյալի կողմից կատարված դիտավորյալ սպանությանը նախորդել է անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, կամ առնողի կողմից զործարկված բռնության և ծանր վիրավորանքի արդեցություն տույն առաջացած հանկարծակի հոգեկան խիստ հուզման վիճակով կատարած սպանությունը, սպա այն ՀՄՄՀ Քր. օր.-ի 93 հոդ. 8-րդ կետի պահանջներին համաձայն, որակյալ համարվել չի կարող:

Չնայած օրենքում չի նշված, սակայն կարծում ենք, սխալ չէր լինի դիտավորյալ սպանության որակելու 99 հոդ. 4-րդ մասի 8-րդ կետով, այն դեպքերում, երբ զրան նախորդել է բանդիտիզմի կամ դիվերսիայի, տեռորիստական ակտի ծածկանակ, կամ միջոցառված աշխատակցի, կամ էլ ժողովրդական դրոսիներինի նկատմամբ կատարված սպանություններ:

¹⁶ Տե՛ս Ա. Ա. Գրոժնիկով, Советское уголовное право, М., 1928, стр. 345; М. М. Уродзинский, Преступления против личности, М., 1924, стр. 9; «Уголовный кодекс» Комментарий, М., 1927, стр. 203; Б. С. Утецкий, Уголовное право, М., 1950, стр. 184; Ш. С. Рашкowska, Преступления против жизни, здоровья и достоинства личности, П., 1959, стр. 16—17.

¹⁷ Տե՛ս «Советская юстиция», 1963, № 17, стр. 27.

րից մեկն ու մեկը, անկախ նրանից, այդպիսի սպանություններն իրենց ժամանակին անձի դեմ ուղղված հանցագործությունները բովանդակող հոդվածներով են որակվել, թե համարվել են մեկ այլ հանցակազմի անբաժանելի մասը¹⁸:

Դիտավորյալ սպանության կրկնակիության հարցը, այնպիսի դեպքերում, երբ անձի նախկին զատվածությունը մարվել է վաղեմության, ամենատիպի կամ ներման ակտի ուժով, զատական պրակտիկայում և քրեական իրավունքի տեսության մեջ առանձին հեղինակների կողմից տարբեր ձևով է լուծվում: Ոմանք նախկին զատվածության մարումը, կամ ամենատիպի, կամ թե ներման միջոցով վերացումը չեն դիտում սպանության կրկնակիությունը բացառող հանգամանք¹⁹: Իսկ բրնձագետների մեկ ուրիշ խումբ գտնում է, որ հարցի նման մեկնաբանումը հանգեցնում է մարման ինտիմիտետի, ամենատիպի և ներման ակտերի նսնմացմանը²⁰:

¹⁸ Մ. Կ. Անիսյանը գտնում է, որ սպանությունը պետք է կրկնակի համարվի այն դեպքերում, երբ նոր սպանությանը նախորդել է զինվորական պետի դիտավորյալ ջրուց ապու ճեղքանքով կատարված սպանությունը: Տե՛ս М. К. Анисим, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 68.

Այս հարցի առթիվ Ն. Բ. Զաօրոդնիկովը ելում է, որ, դիտավորյալ սպանությունը որակել է համարվում ոչ միայն կրկին անգամ համանուն հանցագործության կատարելու դեպքում, այլև երբ դիտավորյալ սպանությանը նախորդել է տեռորիստական ակտի, դիվերսիայի, կամ բանդիտիզմի ծածկանակ կատարված սպանությունը: Տե՛ս Н. И. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 146—147.

¹⁹ Տե՛ս В. Соловьев, О некоторых вопросах применения общей части УК РСФСР, «Советская юстиция», 1961, № 8, стр. 10; А. А. Гершензон, Об основах уголовного законодательства Союза ССР и союзных республик, М., 1959, стр. 58—59; С. Воровин, Применение нового уголовного кодекса РСФСР по делам об убийствах, «Социалистическая законность» 1961, № 9, стр. 23; И. Кукарский, Некоторые ошибки судебно-следственных органов по делам об изнасиловании, «Советская юстиция», 1963, № 1, стр. 12; А. Мишурин, «Социалистическая законность», 1962, № 10, стр. 5.

²⁰ Տե՛ս Ш. С. Рашкowska, Преступления против жизни, здоровья и достоинства личности, М., 1959, стр. 17; М. И. Ковалев,

Նախկինում հանցանք կատարած անձին ստուգելու հարցում լավագույն դորժոններ են ժամանակը և այդ ընթացքում նրա գրեթե ամբողջությամբ ժամանակի ընթացքում է անձը ժխտում կամ հաստատում հանրության համար իր վտանգավոր լինելը և այդ անում է ոչ այլ կերպ, քան անբասիր վարքի և աշխատանքի արժեքներն վերաբերվելու շտրճիվ, կամ ընդհակառակը:

Եթե ընդունենք, որ առաջինների տեսակետն է ճիշտ, ապա պետք է ընդունենք նաև դատավճռության հավերժականությունը: Մինչդեռ սովետական քրեական օրենսդրությանն ու իրավագիտությանը խորթ են ցմահ պատիժն ու իրավունքի ցմահ սահմանափակման ինստիտուտը:

Հարց կարող է առաջանալ, թե մի՞թե կարելի է միևնույն վերաբերմունքը ցույց առնել իր կյանքում առաջին անգամ սպանություն կատարողին և նրան, ով դատավճռություն մարելուց կամ ներվելուց հետո, նորից է սպանություն կատարում: Զէ ո՞ր անձի դատավճռությունը վերացնելով, շեք վերացնում անցյալում նրա կատարած սպանության փաստը: Կանկածից վեր է, որ այդպիսի դեպքերում պատճառաբանի և ուղղիչ աշխատանքային զաղույթի տեսակի ընտրության հարցում տարբերություններ պետք է լինեն²¹:

Գատարանները կարող են նաև անձին բնութագրող մյուս հատկանիշների հետ միասին հաշիվ առնել մարված կամ վերացված դատավճռությունը: Բայց զրանք, անձին կրկնահանցադրած համարելու հիմք հանդիսանալ չեն կարող, քանի որ դատավճռության վերացմամբ, վերանում են նաև

²¹ Տե՛ս Մ. Ի. Ուզնյան, *Թեցիվոր սովետական քրեական իրավունքում*, Երևան, 1964, էջ 41:

Е. А. Фролов, М. А. Ефимов, Основы уголовного законодательства Союза ССР и союзных республик. Практический комментарий, Свердловск, 1960, стр. 145—146, 186; Н. И. Загороднико, Преступления против жизни..., М., 1961, стр. 147; П. Луканов, Правильна ли такая практика Верховного Суда РСФСР?, «Социалистическая законность», 1960, № 9, стр. 35; С. Степичев, Ответственность за хищение личного имущества граждан, «Социалистическая законность», 1961, № 5, стр. 48.

զրանց հետ կապված քրեական-իրավական բուրբ հետևանքները:

Այսպիսով, անձը համարվում է կրկնահանցադրած մեկից ավելի դիտավորյալ սպանություն կատարելու ղեկավար, անկախ երանից առաջին սպանության համար եա դատավարտվել է, քե ոչ (բացառությամբ անհրաժեշտ պաշտպանության սահմանների սեցմամով, կամ առուողի կողմից գուծուրված բռնության, կամ ծանր վիրավորանքի արգելադրյաև տակ առաջացած հանկարծակի հողեկան խիտ հուզված վիեհում կատարված սպանությանից), պայմանով, երբ նախկին սպանության համար դատվածությունը չի վերապվել կամ չի մարվել օրենքով սահմանված կարգով:

5. ՀԱՆԾԱԿԱԼՍՄԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԾԱՆՐԱՅՈՒՑԻՉ ՀԱՆԳԱՄԱՐԱՔՆԵՐ

ՀՍՍՀ Քրեական օրենսգրքի 99 հոդվածի 1, 2 և 7-րդ կետերի համաձայն սպանությունը համարվում է որակյալ, եթե այն կատարվել է շահից ելնելով, խուլիզանական դրրդումներով, այլ հանցադրժություն թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, այլև եթե զուգորդվել է բռնաբարությանը:

Ա. Շահագրիտական դրոմներով կատարված սպանությունը հետապնդում է նյութական օգուտ կամ զույքի նկատմամբ իրավունք ձեք բերելու նպատակ: Մեղադրյալը սպանելով տուժողին, հետապնդում է նրա ժառանգությունը, բուակարանին, զույքին տիրանալու, կամ ժառանգորդից մեկին սպանելով՝ ժառանգության մեծ մասը ստանալու, այիմեևս վերաբերուց ազատվելու և այլ նպատակներ: Արարքի որակման համար, առուողի զույքին տիրանալը, կամ այդ զույքի նկատմամբ իրավունք ձեք բերելու հանդամանքերը որն է նշանակություն չունեն, բավական է, որ մեղադրյալը աուծողին կյանքից զրկի է հենց այդ նպատակներով, որին հետագայում կարող էր հասնել, կամ չհասնել:

եթև սպանություն կատարող սուրբնկար ղեկավարվել է միաժամանակ տարրեր շարժառիթներով, որոնցից մեկը շահագրասկան է, ապա արարքի որակումը ՀՍՍՀ Փ. ք. օր. -ի 59 հոդ. 1-ին կետով, կարծում ենք, սխալ չէր լինի, եթև նույնիսկ մրցող շարժառիթը չէր համընկնում այդ հանցակազմի հատկանիշներին:

Այս սկզբունքը, սակայն, չի կարելի կիրառել ավագակային հարձակման հետևանքով կատարված սպանությունը բրակելիս: Ավագակային հարձակման հանցակազմի օբյեկտիվ կողմը չի բովանդակում սուսուոյի մահը, ուստի այն այնքա է որակել համակցություն կանոնների համաձայն՝ ավագակություն (146 հ.) և շահից ելնելով կատարված սպանություն (99 հ. 1-ին կետ):

Համակցության սկզբունքի կիրառումը տվյալ արարքների նկատմամբ, սահանջում է բացահայտել այն շահանիշը, որով սահմանադատվում է շահագրասկան սպանությունը և վերջինով զուգորդված ավագակությունից:

Այս բարդ և կարևոր նշանակություն ունեցող հարցը վիճարկել են բազմաթիվ բրնագետներ: Ըրիվ միասնություն չկա նաև դատական պրնակակազմում:

Ոմանք այդ երկու հանցակազմների սահմանադատման շահանիշ համարում են հարձակման բացահայտ բնույթը, եթև չկա հարձակման բացահայտությունը, չկա նաև ավագակություն, այլ կատարված սպանությունը նյութական կամ որևէ շահ ստանալու նպատակ է հետապնդել²¹:

Ոմանք էլ, նշված շահանիշից բացի, ավելացնում են մեկ ուրիշը՝ «զույրի անցման մոտենալը»: Գտնելով, որ ավագակային հարձակում գործելու դեպքում՝ յուրը մեղադրյալին է անցնում սպանության պրոցեսում, իսկ շահագրաս-

²¹ «Уголовное право, Особенная часть», М., 1939, стр. 161; «Уголовный кодекс РСФСР», Комментарий, НКЮ СССР, 1946, стр. 187; З. А. Вышинская, Преступления против личности, М., 1939, стр. 9—10.

կան սպանության դեպքում՝ այդ անցումը տեղի է ունենում հետագայում²²:

Քրնագետների մեկ ուրիշ խումբ, սլաշտպանելով այս տեսակետը, հարձակումը հետարավոր են համարում սպանությունը զուգորդված ավագակության և շահից զղղված սպանություն դեպքերում²³:

Սպանության հետ զուգորդված ավագակությունը և շահից ելնելով կատարված սպանությունը կարող են գրանցվել բազմազան եղանակներով ու ձևերով: Գրանց կատող ընդհանուր մեղադրյալի կողմից սուսուոյի զույրին տիրականություն կամ դրա նկատմամբ իրավունք ձևաք բերելու, կամ որևէ շահ ստանալու նպատակն էլ: Բայց մի դեպքում այդ նպատակը կարող է իրականացվել ավագակային հարձակման, մյուս դեպքում՝ առանց հարձակման և, այդ երկուսն էլ կարող են որակվել, կամ որպես սպանության զուգորդված ավագակություն, կամ շահագրասկան սպանություն, նույաժ կոնկրետ գործի հանգամանքներին (հարձակման բնույթը, հանցագործության կատարման եղանակը, զույրի անցման մոտենալը, մեղադրյալի դիտավորությունը և այլն): Հետևապես, այդ երկու հանցակազմների սահմանադատման համար մի բնոցհանուր շահանիշ զույրություն չունի:

²² Տե՛ս «Советское уголовное право, Особенная часть», МГУ, 1957, стр. 166—167; М. Д. Шаргородский, Ответственность за преступления против личности, ЛГУ, 1953, стр. 18—19; «Преступления против жизни и здоровья», М., 1948, стр. 175; «Сборник постановлений Президиума и определений Судебной коллегии по уголовным делам Верховного суда РСФСР 1957—1959 гг.», Госюриздат, 1960, стр. 157—158; Н. И. Загородников, Преступления против жизни... 1961, М., стр. 124; М. К. Амица, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 87—88.

²³ А. А. Пионтковский, В. Д. Меньшагин, Курс советского уголовного права, Особенная часть, т. 1, М., 1955, стр. 537—540; М. Н. Якубович, В. Ф. Кириенко, Советское уголовное право, М., 1958, стр. 304; М. П. Михайлов, Уголовная ответственность за кражу личного имущества и разбой, М., 1958, стр. 126—127; А. Н. Трайнин, Состав преступлений по советскому уголовному праву, М., 1951, стр. 265.

եթև պարզվում է, որ կոնկրետ զործով մեղադրյալի կողմից հարձակում չի եղել, բայց նա թունավորել է, աստիճանաբար որևէ միջոցով մասշին է հասցրել, ուղղակի սպանել է՝ հետագայում տուժողի գույրին, բնակարանին, նրանում գտնվող իրերին տիրանալու, զբանջ նկատմամբ իրավունքներ ձեռք բերելու, կամ որևէ շահ (ծառանցություն, թոշակ, օգուտավորման նպատակ) ստանալու, այդմենտ շլեճարելու, օգուտավորման նպատակով և այլ նպատակներով, սպա պարտքը տալուց խուսափելու և այլ նպատակներով, սպա պարտ է, որ այսպիսի զեպքերում շահագրգռական սպանությունը չի կարող որակվել ավազակության համակցությունում: Բայց եթև հանցագործը դիտավորություն չունենալով թրևէ մեկին սպանել, սակայն այս կամ այն գույրը, իբր ձեռք բերելու նպատակով հարձակում է գործում և իր ավազակությունը թաքցնելու կամ զրա կատարումը հեշտացնելու նպատակով սպանում է տուժողին, սպա մեղ Թվում է, որ սովյալ զեպքում արարքը պետք է որակել ոչ թև համակցությամբ, այլ ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդվածի 7-րդ կետով, որպես այլ հանցագործություն թաքցնելու կամ զրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանություն: Իսկ երբ շահագրգռական սպանությունը և ավազակությունը զրևերովում են որպես ինքնուրույն հանցագործություններ, կարծում ենք, համակցությամբ որակելը սխալ է՛ր լինի:

Ի վերջո, շահագրգռական սպանության վերաբերյալ գործերը բնեկետ, պետք է պարզել նաև այն հարցը, թև սպանվածի զույրին տիրանալու մտադրությունը երբ է առաջացել մեղադրյալի մտո: Ապանելուց առաջ, թև՝ զրանից հետո Որովհետև հնարավոր են զեպքեր, երբ հանցագործը որևէ այլ շարժառիթով մեկին սպանելուց հետո, հանկարծ որոշում է սպանվածի մոտից վերցնել նաև նրան պատկանող այս կամ այն թանկարժեք իբր: Հետևապես, այստեղ շահ ստանալու շարժառիթը չէ, որ նրան զրում է սպանություն կատարելու, այլ զա հաջորդում է որևէ ուրիշ շարժառիթի (վրեժ, խանդ և այլն): Այսպիսի զեպքերում հանցագործի արարքը չի կարող որակվել ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդ. 1-ին կետով: Դրա որակումը հնարավոր է նույն հոդվածի մեկ ուրիշ կետով, եթև կան

զրանցով նախատեսված ծանրացուցիչ հանգամանքները, կամ սպանությունը նախատեսող մեկ այլ հոդվածով, եթև բացառվում են այդպիսի հանգամանքները:

Բ. Խույիցանական դրումներով կատարվող սպանությունները (Քր. օր.-ի 99 հոդ. 2-րդ կետ) բնութագրվում են նրա կատարողի կողմից դրանբովող հանգղնությունբ, բացառիկ անպատկառությունբ, հասարակության նկատմամբ տածվող արժամարանբով և այլն:

Հանգղնություն ասելով պետք է հասկանալ մեղադրյալի այնպիսի արարքները, որոնք անդի են ունենում ասանձին լույրբությունբ ու կոպտությունբ, կամ թև զուգորղված են ասանձին մարղկանց ծեծելու հետ, կատարվում են երեխաների, կանանց, մեծահասակների նկատմամբ կամ ներկայությունբ և շնայած քաղաքայինների օրինական պահանջներին, համատորեն չեն զաղաբքցվում:

Բացառիկ անպատկառությունը բնութագրվում է այնպիսի գործողություններով, որոնք կոպիտ կերպով անարգում են հասարակական բարոյականությունը: Իսկ հասարակության նկատմամբ դրևարղող արհամարհանը համակեցություն ատրրական կանոնների և սովետական հասարակության անղամների միջև եղած փոհարաբերություններին խախտումն է: Ընդ որում, այդ արժամարճանը բացահայտ է զրոնում, երբ այն անվիճելիորեն ակնհայտ է ինչպես հանցագործին, այնպես էլ ուրիշ անձանց համար: Հետևապես, դրումավորյալ սպանությունների զեպքերում խույիցանական զրումը ոչ միայն հանգղնությունն է, այլև բացառիկ անպատկառությունն ու հասարակության նկատմամբ ակնհայտորեն զրևերղվող արժամարճանը:

Խույիցանական զրումներով գործող անձը ձգտում է իր վարքաղիբը բացահայտորեն հակաղրել հասարակական կարղին, հասարակությունբ շահերին, արժամարհնելով շրտպատք, մարղկանց: Նա զրևորում է ցինիղմ, կոպտություն, վայրաղություն, անղկարարություն, զիմում է ուժի, վրեժխողիբ լինում նրանից, ող թևկուղ աննշան վիրավորանք է

հասցեում իրեն, կամ գիտադոսթյուն անում իր խուլիզանական արարքի համար:

Այսպես, 1964 թ. հունվարի 16-ին, Ա. Մկրտչյանը կատարում է խուլիզանություն և անպատվում Լուսավանի արտֆոնխիկական ուսումնարանի դիրեկտոր Մ-ին: Կանգնում է խուլիզանության գաղ. Բ-ն գիտադոսթյուն է անում Մկրտչյանին և պահանջում վերջ տալ խուլիզանությանը: Եվ ահա Մկրտչյանը իր մոտ գանձվող պատուակիրով հարավածում է Բ-ի ճակատին, մետաում նրա գլխուղեղ, որից են վերջինս մահանում է: ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան իրավադատին Մկրտչյանին Քր. օր.-ի 99 հոդ. 2-րդ կետով հաստատում է առաջադրված մեղադրանքը և նրա նկատմամբ սահմանում արժանի պատիժ:

Առանձին աշխատողների մոտ այն տեսակետն է արմատավորված, որ սպանությունը խուլիզանական զրգումներով կատարված պետք է համարել, երբ այդպիսի գիտադոսթյունով մեղադրյալի մոտ առաջացել է նախապես, այլ ոչ թե սուստոյի հետ պատահական հանդիպման մոմենտին: Այսպես, Ա-ի սպանության գործով ՀՍՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան նշում է. «Վերջնականապես չի պարզվում՝ սպանությունը դեպի վայրում պատահական հանդիպման ժամանակ առաջացած վիճարանությունների հետևանք է, թե այն կատարվել է նախապես արմատավորված և խուլիզանական զրգումներից նշելով: Խուլիզանական զրգումներով և կողմնակա կատարված սպանությունները տարբերելու համար, ինչ խոսք, գործի հանդամաների և հանցագործության շարժառիթների լրիվ բացահայտումն իրատ կարևոր նշանակություն ունի: Բայց ճիշտապես արմատավորված և խուլիզանական զրգումներով սպանություն» նախադասությունն արդեն, խոսում է սխալ տեսակետի գոյության մասին: Կարծես թե սկզբում մարդու մոտ ստեղծվում են սպանելու նախնական արմատավորումներ, իսկ հետո շարժառիթը: Մինչդեռ շարժառիթն է դիտարկություն առաջացնում և այս անսակեմից, շարժառիթը ինչ որ շափով ընկած է գիտադոսթյուններից առաջ: Վերջա-

պես, խուլիզանական զրգումներից նշելով որն է մեկին սպանելու գիտադոսթյունը կարող է առաջանալ հենց նույն պահին, այլ ոչ թե ճիշտապես: Մարտյանն ու Ղ-ն փողոցում սպանական հանդիպելով միմյանց, վիճարանում են, որի ընթացքում Մարտյանը դանակահարում է Ղ-ին ու սպանում նրան: Նույն այդ կոլեգիան, հաշվի չի առնում այս դեպքում պատահական հանդիպման մոմենտը և Մարտյանի արարքը պատասխանում է որպես խուլիզանական զրգումներով կատարված սպանություն: Կարծում ենք, որ ճիշտ է վարվում: Պետք է ենթադրել, որ երկու միատեսակ զործերով հարցի տարրեր լուծումը բխում է այնպիսի բարդ պրոբլեմի անորոշությունից, որը խուլիզանական զրգումներով և սուլտական ձեռնարկների ժամանակ կատարված սպանությունների սահմանագրաման հարցն է:

Օրենսդիր այդ վերջինը համարում է առանց ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքների կատարված գիտադոսթյուն սպանություն, որի համար սահմանվում է համեմատաբար մեղմ պատժատեսակ ու պատժաչափ, քան Քր. օր. 99 հոդվածում թվարկված ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանությունների դեպքում:

Նետևաբար, սպանության այդ երկու տեսակների սահմանադատումը ձևով է բերում կարևոր նշանակություն: Չնայած դրան, անձի կյանքի զեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գրված գրեթե բոլոր աշխատություններում, գրողներում, նույնիսկ քրեական իրավունքի դասադրերում այդ հարցը տակավին չի շոշափվել:

Մի կողմից նշված բացը, մյուս կողմից՝ նախաքննության ընթացքում սպանությունների իսկական շարժառիթների չարաբերում հանգեցնում են նրան, որ դատարանները հաճախ կռվի ժամանակ կատարված սպանությունները որսկում են որպես խուլիզանական զրգումներով կատարված սպանություն²⁰ կամ ընդհակառակը:

²⁰ «Бюллетень Верховного Суда СССР», 1960, № 4, стр. 47.

Ինչպես խուլիգանական զրդումների զրսերուման, նույնպես և կռիվ ժամանակ խախտվում են մարդկանց վարքագծի նորմաներն ու օրենքի պահանջները, սոցիալիստական համակեցության կանոնները, արհամարհվում են մարդիկ, շրջապատը: Սակայն բանը նրանում է, որ խուլիգանական զրդումներով սպանության զեպերում. սուժողը հանգես է զսլխոս որպես վերը նշված կանոնների պաշտպան, իսկ կռիվ ժամանակ կատարված սպանության զեպերում. խախտումը տեղի է ունենում երկուսի կողմից, որը և ավարտվում է կողմերից մեկն ու մեկի սպանությամբ, կամ առանց զրան:

Խուլիգանական զրդումներով կատարված սպանության զեպում, հանցագործը ինքը սկսելով կռիվն և դիտակցելով, որ կարող է հանկարծ դիմադրության հանդիպել, դիմում է ամեն մի միջոցի, ընդհուպ սպանության, որը կարծես թե խուլիգանական զրծողությունների զագաթնակետն է՝ նրա ավարտը:

Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ նման հանցագործությունները հաճախ կատարվում են առանձին զաժանություններ: Խուլիգանը ուրիշին կյանքից զրկելուց բացի, միաժամանակ իր զրծողություններով ձգտում է զզարմացնել ուրիշներին, օճեսնակա առաջացնել սպանության կատարման հենց եղանակով²⁶, որին հասնելու համար դիմում է ստոր միջոցների, ծաղրում սուժողին, անարգում նրա դիպր և այլն:

Ի զեպ, խուլիգանական շարժառիթներով կատարված սպանությունները, թեկուզ և զաժանության կամ այլ ծանրացուցիչ հանգամանքների բացակայության, մնում են աչգախին, տնկախ նրանից, թե մեղազրյալը նախկինում ինչպիսի զբարբերությունների մեջ է զեղել սուժողի հետ: Սակայն երբեմն այլ ուղիով և զնում զատական պրկտիկան, որն ըստ մեզ, պետք է համարել սխալ: Այսպես, Կիրովական բաղաբի բնակչուհի Ք-ն ինտիմ կպպերի մեջ է մտնում համաբաղաբացի Կ-ի հետ, բայց հետագայում ամուսնանում

է բաղաբացի Ա-ի հետ: Որոշ ժամանակ անց, երբ Ա-ն իսնում է Կ-ի և Ք-ի նախկին կպպերի մասին, վիճարտում է Կ-ի հետ ու պահանջում, որ նա այլևս չհանդիպի Ք-ին: Անցնում են օրք, ամիսներ: 1953 թ. փետրվարի 10-ին, Կ-ն իր ընկերները Ռ-ի և Յ-ի հետ միասին ժղանում և զնացող ավտորումում հանդիպելով Ա-ին, ծաղրում է նրան և ակնարկում կնոջ անբարոյականության մասին: Կ-ն իր ընկերների հետ միասին թույլ են տալիս լկտի հայհոյանքներ: Ավտորումում զանվող 20-ից ավելի բաղաբացիներ, զզվելով լպիրը հայհոյանքներից, զզուսցնում են նրանց: Տուժող Ա-ն նույնպես պահանջում է վերը տալ այդ խուլիգանական արարքին, սակայն Կ-ն զանակահարում է Ա-ին և շրավարավելով պրանով, ոտքով հարվածում է նրան և ցած զցում կանգնած ավտորումից: Ա-ն նույն օրը մահանում է հիվանդանոցում: Զխոսելով այն մասին, որ տվյալ զեպում առկա է նաև հանցագործի զաժանությունը, որը նույնիսկ հաշվի չի առնվել զատարանի կողմից, միաժամանակ վերացվել է խուլիգանական զրդումներով կատարված սպանության համար առաջադրված մեղաբանքը և Կ-ի արարքը վերարտակվել է 2002 Քր. օր-ի 100 և 222 հոդ. համակցությունում: Գերազուցել զատարանը նման վերաբրմունքը պատճառարանել է հետևյալ կերպ. «Կ-ն իր անձնական ու թշնամական նկատառումներով, զանակի հարվածով սպանելու դիտավորություն է ունեցել հենց Ա-ին և ոչ այլ անձնավության, միևնույն խուլիգանական զրդումներից կատարված սպանությունը չի ենթարդում անձնական փոխհարաբերությունների հետևանքով կոնկրետ անձի զեմ ուղղված հանցագործություն, այլ կատարված սպանությունը զուգորդվել է խուլիգանությունը: Այսպիսի տեսակետը, ըստ մեզ, ոչ այլ ինչ է, եթե ոչ նախկինում զոյություն ունեցած խուլիգանության հասակացության ու ճիշտ մըբանման արդյունք: Մի ժամանակ զատական պրկտիկայում իշխում էր այն տեսակետը, որ խուլիգանության զեպում մեղազրյալը ոչ մի անձնական հարաբերության մեջ լպետք է լինի սուժողի հետ խուլիգանությունը կատարելից առաջ, այլուպես արարքը

²⁶ Տե՛ս Ի. Ի. Загородников, Преступления против жизни по советскому уголовному праву, М., 1961, стр. 129.

խուլիզանություն չէ: Դատական պրակտիկան վաղուց է հրաժարվել խուլիզանության նման բմբռնումից: Հասարակական կարգը խախտող և հասարակության նկատմամբ արհամարհանք արտահայտող գործողությունները խուլիզանություն պե՛տք է համարել նաև այն դեպքերում, երբ այդպիսիք կատարվում են ժանտիմերի, հարևանի, նույնիսկ ընտանիքի անդամների կամ այլ մերձավորների նկատմամբ:

Մեր տեսակետը հիմնավորվում է համար բերե՛ք օրինակ՝ ՈՍՅՕՀ Գերագույն դատարանի դատական պրակտիկայից և համեմատենք վերոնմ բերված օրինակի հետ: Քաղաքացի Ե.-ն ծանոթանում է կամերիստուհի Կ-ի հետ, որից հետո Ե.-ն հասնում է այն բանին, որ Կ-ն խոստանում է ամուսնանալ նրա հետ: Այդ օրվանից Ե.-ն սկսում է հետապնդել Կ-ին, խանգարել նրա աշխատանքները, նույնիսկ հաճախ վիրավորում է, ձեռնում, տալիս սպառնալիքներ և այլն: Կ-ն ի վերջո, ձանձրանալով այդ բոլորից, մերժում է ամուսնանալու համար արված Ե-ի առաջարկը, որոշելով վերջ տալ Ե-ի հետապնդումներին: Վերջինս վիրավորված դրանից, աշխատանքի վայրում կատարում է խուլիզանություն և, երբ աշխատակիցները պահանջում են վերջ տալ լիտիություն-ներին, Ե.-ն հակառակ դրան, դանակով հարվածում է Կ-ին և սպանում նրան: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս Ե-ն սպանությունը կատարել է «անձնական նկատառումներով» և զեղով Կ-ի աշխատանքի վայրը, գիտավորություն է ունեցել «կոնկրետ» անձի սպանելու, այլ ոչ թե մեկ ուրիշի:

Ամուսնույն մարդային կատարանք Ե-ի արարքն իրավա-ցիտորեն որակում է որպես խուլիզանական գործունեություն կատարված սպանություն: Սակայն ՈՍՅՕՀ Գերագույն դատարանի բրե՛ական գործերով դատական կոնզիսն սխալ ձևով Ե-ի արարքը վերաորակում է ՈՍՅՕՀ Քր. օր.-ի 103 հոդվածով²³, ՈՍՅՕՀ Գերագույն դատարանի նախագահությունը բե՛կանում է այդպիսի սխալ որոշումը և ուժի մեջ թողնում մարդային դատարանի վճիռը, նշելով, որ անձնական նկա-

տառումներով կատարված սպանությունը չի բացառում խուլիզանական գրգռմանը, է՛քն այն կատարվել է տուժողի նկատմամբ այդպիսի շարժադրվե՛նքով²⁴:

Պետք է նշել նաև մի կարևոր հանգամանք, որ է՛քն խուլիզանական գործողությունը չի առաջացնում կե՛քնուրույն հանցակազմ և, է՛քն նրանք անմիջապես կապված են տուժողին կյանքից զրկելու գործողությունների հետ, պե՛տք է որակել որպես խուլիզանական գրգռմաներով կատարված սպանու-թյուն:

Օրենսդիրը հողվածում սխուլիզանական գրգռմանը կե-տք մտցնելով, խուլիզանական հանցակազմը միացրել է սպանության հանցակազմին: Սակայն այս չի նշանակում, թե խուլիզանության և սպանության համակցության հետադուր-թյունը միախալում է Ինչպես, ճշտորեն նկատում է Մ. Կ. Անիպյանը, է՛քն սուրյնկաի գործողություններում առկա է խուլիզանական գրգռմաներով սպանությունն ու խուլիզանու-թյանն, սեղա համակցությունը, ապա այն պե՛տք է որակել հա-մակցության կանոնների համաձայն: Օրինակ՝ է՛քն հանցա-գործները խուլիզանություն կատարելով մի տեղում և տեղա-փոխվելով մի այլ տեղ, նորից կատարում են խուլիզանու-թյուն և միաժամանակ որևէ մեկին զրկում կյանքից, ապա կատարում են երկու իրանուրույն հանցագործություն՝ խուլի-զանություն և խուլիզանական գրգռմաներով սպանություն²⁵:

Գ. Նախկինում գործող օրենսդրության մր սպանությունը համարվում էր որակյալ, է՛քն կատարվել էր մի որևէ ծանր հանցանք թաքցնելու կամ դրա կատարումը զյուրացնելու նպատակով:

Այդ նշանակում էր, որ սպանությունը այդպիսին կարող էր համարվել, է՛քն այն կատարվել էր միայն ծանր հանցանք թաքցնելու կամ դրա կատարումը հնչառացնելու նպատակով:

²³ Օրենսդիր բերված է Մ. Կ. Անիպյանի աշխատությունից՝ Տե՛ս Մ. Կ. Անիպյան, Ответственность за преступления против жизни... М., 1964, стр. 93.

²⁴ Մ. Կ. Անիպյան, Ответственность за преступления против жизни... М., 1964, стр. 94.

²⁵ Համապատասխանում է ՀՍՍՀ Քր. օր.-ի 100 հոդվածին:

ՀՍՍՀ Քրեական նոր օրենսգրքի համաձայն, սպանությունը համարվում է որակյալ, անկախ Քաղցրող հանցագործության ծանրությունից: Այսինքն՝ միևնույն է, այդ հանցագործությունը ծանր է թե ոչ, եթե սպանությունը կատարվում է այդպիսիք թաքցնելու կամ դրանց կատարումը հեշտացնելու նպատակով, այս սպանությունը համարվում է որակյալ: Ընդ որում, պարտադիր չէ, որպեսզի այդ շարժառիթներով սպանություն կատարողը հասնի իր նպատակին, այսինքն՝ որևէ հանցագործություն թաքցնել, կամ դրա կատարումը հեշտացնել: Օրինակ՝ եթե Ա.-ն սպանում է պահեստի պահակ Բ.-ին, այնտեղից կատարված գողությունը թաքցնելու, կամ առանց արգելիչի գողություն կատարելու համար, սակայն սպանելուց հետո որևէ պատճառով չի կատարում այդ, կամ թեկուզ կամուզին հրաժարվում է դրանից, միևնույն է, արարքը պետք է որակվի որպես այլ հանցանք թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանություն:

Սպանությունից հետո նախատեսող հանցագործության շկատարելը, կամ կամուզին հրաժարվելը կարող է հաշվի առնվել պատժատեսակի և պատժաչափի սահմանման ժամանակ:

Հնարավոր է, որ այլ հանցանք կատարողը կամ թաքցրելուց և նույն նպատակներով սպանություն կատարողը լինեն տարբեր անձնավորություններ: Օրինակ, Ա.-ն սպանում է Բ.-ին այն բանի համար, որ վերջինս զիջեր Ա.-ի եղբոր կամ հարգատի, կամ ընկերոջ կողմից կատարված գողության մասին: Այստեղից բխում է նաև այն, որ սպանվողը կարող է լինել կամ թաքցրող հանցագործությունից տուժած անձը, նրա հարազատը, ծանոթը, կամ էլ մեկ ուրիշը: Այսինքն՝ նա, ում հայտնի էր նախկինում կատարված հանցանքը և ում նկատմամբ մեղադրյալի մոտ առաջացել են կասկածներ:

Այս բոլոր դեպքերում, սպանության կատարման շարժառիթները, կարծում ենք, մնում են նույնը և չեն կարող փոփոխություն մտցնել որակավորման հարցում:

Որևէ հանցագործություն կատարած անձը, կարող է

սպանել այդ մասին իմացողին, գատարնչական օրգաններին հայտնելու դեպքում: Դրանով իսկ հետապնդելով ոչ միայն լրիժ լուծելու, ինչպես Ս. Վ. Բորոդինն է ասում³⁰, այլև քրեականության ընթացքը շեղելու, պատասխանատվությունից խուսափելու նպատակ, ենթադրելով թե հայտնողին սպանելով, չընշացնում է և իր հանցանքն հաստատող ամեն մի ապացույց: Հետևապես, հայտնողին սպանելով, մեղադրյալը ձեռք է առնում է թաքցնել իր կատարած նախկին հանցանքը, որը, մեր կարծիքով, նույնպես համապատասխանում է ՀՍՍՀ Քր. օր. թ. 99 հոդ. 7-րդ կետի հատկանիշներին:

Համեմատաբար ավելի բարդ է՝ այլ հանցանք թաքցնելու կամ նրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանության դեպքում հանցագործության համալրուկայն հարցը: Պրակտիկայում երբեմն գտնում են, որ այդպիսի սպանությունը պետք է որակել միայն Քր. օր. 99 հոդ. 7-րդ կետով, իսկ երբեմն էլ, ընդհակառակը, հանցագործությունը որակում են համակցությամբ:

Քրեագետների ճնշող մասը պաշտպանում է վերջին տեսակետը³¹, որն ըստ մեզ ավելի ճիշտ է: Նախկին հանցագործությունը և այդ թաքցնելու նպատակով կատարված սպանությունն ինքնուրույն հանցագործություններ են, չնայած վերջինի կատարումը պայմանավորված է առաջինի գոյությամբ:

Հանցագործության համակցության ընդհանուր կանոններով պետք է ղեկավարվել նաև այնպիսի դեպքերում, երբ հանցանք թաքցնելու նպատակով սպանություն կատարողը և թաքցրող հանցագործության սուբյեկտը՝ նույն անձը չէ: Օրինակ՝ գողությունը կատարել է Ա.-ն, իսկ այն թաքցնելու նպատակով սպանությունը կատարել է Ս.-ի ընկերը՝ Բ.-ն (կամ հարազատներից որևէ մեկը): Այսպիսի դեպքերում պետք է

³⁰ С. В. Бородин, Квалификация убийств, стр. 61, 64.
³¹ ԵՎ. Н. Н. Загородников, Преступления против жизни... М., 1961, стр. 135; Ш. С. Рашковская, Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1959, стр. 16; М. К. Ананияц, Ответственность за преступления против жизни... М., 1964, стр. 110 и др.

զեկավարվել նաև ՀՍՍՀ Քր. օր.-ի 17 և 18 հոդվածներով, այսինքն՝ պետք է հաշվի առնել հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանն ու Բնույթը:

Գ. Քննարարության հետ զուգորդված սպանությունը որակյալ է համարվում ըստ հանցագործության օրենհատվ կողմի հատկանիշներին, սակայն օրենսդիրը սրա և այլ հանցանքի թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանության հանցակազմերը միացնելով, նկատի է ունենել այն, որ վերջին հաշվով, այս զեկարում ես սպանությունը կատարվում է այլ հանցանք (բռնաբարությունը) թաքցնելու նպատակով: Մեկզգորյալ այդպիսի նրպատակը վկայում է նրա ուղղակի դեռավորության մասին: Այսինքն բռնաբարելով մեկին, հանցագործն իր կատարածը թաքցնելու և պատասխանատվությունից խուսափելու համար տուժողին զրկում է կյանքից:

Գատական պրակտիկայից հայտնի են զեկարեր, երբ սպանությունը կատարվել է 16 տարեկան անշափահասի, կամ արբունքի շհասած անձի նկատմամբ անտասկաբարս գործողություններ, կամ տղամարդու հետ սեռական հարաբերություն (արվամություն) ունենալուց հետո: Պետք է արդյո՞ք նշված սպանությունները որակել ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդ. 7-րդ կետով, թե ոչ: Ջնատած օրենսդիր խոսում է բռնաբարությանը զուգորդված սպանությունների մասին, յակ բռնաբարությունը տղամարդու ըռնի կենակցումն է կնոջ հետ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ նշված արարքները նույնպես պետք է որակել այդ հոդվածով, նկատի ունենալով, որ սպանությունը կատարվել է անտակաբարո գործողությունները կամ արվամությունը թաքցնելու նպատակով, կիրառելով նաև համակցության սկզբունքը:

Վերջապես, գատական պրակտիկայում հարց է առաջանում նաև բռնաբարությանը զուգորդված սպանությունները համակցությանը կամ միայն սպանությունը նախատեսող հոդվածի համապատասխան կետով որակելու վերաբերյալ: Մեկը թվում է, որ օրենսդիրը «բռնաբարությանը զուգորդված

սպանություն» կետը օրենքի մեջ մտցնելով, բացառել է հենց գրանք համակցությանը որակելու հարցը, այն դիտելով որպես մի ինքնուրույն հանցակազմ: Տվյալ դեպքում սպանությունը գրանդվում է որպես բռնաբարության ծանր հետեվանք: Օրենքի նորմայի զուտ տրամաբանական մեկնաբանումը նույնիսկ հաստատում է մեր կարծիքի ճշտությունը: Բռնաբարությունը ՀՍՍՀ Քր. օր.-ի 112 հոդվածով որակելու համար, բավական է, որ այն զուգորդված լինի միայն կամ սպանության սպառնալիքին, կամ ծանր մարմնական վնասվածք հասցնելու սպառնալիքին: Միևնույն, անձի արարքը Քր. օր.-ի 99 հոդ. 7-րդ կետով որակելու համար, անհրաժեշտ է, որ մեղադրյալը բռնաբարության պրոցեսում կամ զրանից հետո, դեռավորության կամ անզգուրությանը տուժողին զրկած լինի կյանքից: ՀՍՍՀ Քր. օր.-ի 99 հոդվածի 7-րդ կետը բովանդակում է թե բռնաբարությունը և թե զրակապակցությանը կատարված սպանությունը, հետևապես, արարքը որակելիս, մեկ այլ հոդվածի վկայակոչումը կորցնում է իր անհրաժեշտությունը:

Սանրացուցիչ հանգամանքներում կատարված դեռավորյալ սպանության առանձին տեսակների համառոտակի բնութագրումից հետո, անհրաժեշտ է պատասխանել նաև մի հարցի, թե ի՞նչ նշանակություն ունի արարքի՝ նույն հոդվածի այս կամ այն կետով որակումը, եթե այդ հոդվածի սանկցիայով, բլոր կետերով նախատեսված հանցակազմերի համար սահմանված է միևնույն պատժատեսակին, ու պատժաչափը: Եվ իրքը, սպանության հարազատների, մեքնավորների ամենից առաջ հետաքրքրում է ոչ թե կատարված արարքը հոդվածի օրեկ կետով որակելու հարցը, այլ այն, թե կատարանը ինչպիսի պատթծ կասմանի իրենց հարազատին սպանողի նկատմամբ: Որոշ առումով նույնիսկ, տուժողի հարազատը կարծես վրեժ է լուծում մեղադրյալից, արդարադատությունն իրականացնող օրգանի միջոցով և նայած սահմանվող պատժատեսակին ու պատժաչափին, նա քրավարություն» կամ զթզո՞ւ է մնում:

ՆՔն պատժական քաղաքականությունը իրականացնելիս հասարակության անունից գործող սոցիալիստական պետությունը հետապնդում է մի կողմից՝ հանցագործություններ կատարողներին պատժելու, նրանց կատարածի ծանրությանը համապատասխան պատիժներ սահմանելու նպատակ, ապա մյուս կողմից՝ որը ըստ մեզ զլխավորն է, հետապնդում է յուրաքանչյուր հանցագործության պատճառը բացահայտելու, դրանք լրիվ վերացնելու, հետևապես և ժողովրդի ամեն տեսակի բարիքները պաշտպանելու նպատակ: Այս տեսակետից, յուրաքանչյուր հանցագործության տեսակի, յուրաքանչյուր հանցամասքի, որում կատարվում է տվյալ հանցագործությունը կամ հանցագործությունների կատարման շարժառիթների, եղանակների ճշգրիտ հաշվառումը, հանցագործությունների վերացման համար մղվող պայքարի անհրաժեշտ պայմաններից մեկն է:

Քե ինչո՞ւ ծանրացուցիչ հանցամասքներում կատարվող դիտավորյալ սպանություններն որևէ տեսակը ավելի շատ է տարածված հանրապետությունում կամ նրա շրջաններից որևէ մեկում և այդ պատճառով ո՞ր տեսակի դեմ է, որ պայքարը ավելի պետք է սրվի, անհրաժեշտ է որպեսզի սպանության յուրաքանչյուր տեսակ սահմանազատվի, որակիլի հողվածի այդ տեսակը նախատեսող կետով և տարիլ ճշգրիտ հաշվառում:

Մյուս կողմից, հանցագործությունների, այդ թվում և սպանությունների տեսակների սխալ որակումը: Համարյա միշտ գործերի քննության ժամկետների ձգձգման և դատավարական նորմերի խախտման առիթ են տալիս իսկ այդպիսի ձգձգումներն ու խախտումները նրբամտ ծառայում են մեղադրյալի, այլ ոչ թե գործի օգտին և կրկնորդ՝ խճճվածություն են ստեղծում համապատասխան օրգանի կողմից տարվող հաշվառման գործում:

Այսպիսով, բրեհական օրենսգրքի տվյալ հողվածի տարբեր կետերի սահմանադատումը և այդ կետերին համապատասխան արարքի որակումն ունեն ինչպես տեսակն, այնպես էլ գործնական լուրջ նշանակություն:

Գ Լ ՈՒ Ե Ե Ր Ր Ո Ր Գ

ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅՆ ԾԱՆՐԱՅՈՒՑԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ

Սպանության այս տեսակը նախատեսված է ՀՍՄՀ քրեական օրենսգրքի 100 հոդվածով և միութենական մյուս հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածներով: Այդ հողվածի համաձայն անձը սպանվում է սպառազրկմամբ հինգից մինչև տասը տարի ստանալով այնպիսի սպանության համար, որը կատարվել է ստանց նույն օրենսգրքի 99 հոդվածում նշված ծանրացուցիչ հանցամասքների:

Հողվածի դիտարկելիս խոսվում է միայն ծանրացուցիչ հանցամասքների բացակայության մասին, սակայն որսամաքնական է, որ սպանության այդ տեսակը բացառում է նաև մեղմացուցիչ հանցամասքները, այսինքն՝ այնպիսիք, որոնք նախատեսված են ՀՍՄՀ քր. օրենսգրքի 101 և 102 հոդվածներով:

Օրենսդիրը իրավացիորեն հասարակ սպանության՝ տեսակների սպառիչ ցանկ չի տալիս և չի էլ նշում, թե որոնք են դրանք: Բայց քր. օր-ի 99 հողվածում որոշակի նշելով

1 Իրավաբանական գրականության մեջ ընդունված է ստանց ծանրացուցիչ հանցամասքների կատարված դիտավորյալ սպանությունները անհավան հասարակ սպանություն, Այուսնտե, հասարակ սպանություն ասելով նկատի ունենք, ստանց ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանցամասքների կատարված դիտավորյալ սպանությունները:

սպանության ժամանակ անձի մեղքը ծանրացնող հանգս-
մանքները և դուրս թողնելով այնպիսի, ինչպիսիք են երկ-
կողմանի կռվի ժամանակ, վրեժից էլնելով, խանդի հողի
վրա և այլն, կատարված սպանությունները, զստա-քննչական
օրգաններին հնարավորություն է տալիս դրանք որակել շՄՁ
Քր. օր-ի 100 հոդվածով: Բացի դրանից, դիտավորյալ սպա-
նությունները շՄՁ Քր. օր-ի 100 հոդվածով որակելու հա-
մար, պետք է նրանցում բացառվեն կատարողի անզտու-
թյունը, հոգեկան խիտտ հուզված վիճակի և անհրաժեշտ
պաշտպանության սահմանների անցման մոմենտները:

Այսպիսով, դիտավորյալ սպանությունը համարվում է
հասարակ, եթե չկան Քր. օրենսգրքի 99 [ժանրացուցիչ հան-
դամանքներում կատարված սպանություն], 101 [հոգեկան
խիտտ հուզված վիճակում կատարված սպանություն], 102
[անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կա-
տարված սպանություն], 103 [անզտույն սպանություն] հոդ-
վածներին և 105 հոդ. 2-րդ մասի հասկանիչները:

Հասարակ սպանության տեսակները բազմաթիվ են:
Դրանցից մենք կիտանք այնպիսիների մասին, որոնք ավելի
շատ են տարածված մեր հանրապետությունում: Ուսումնա-
սիրված բրեհական գործերից երևում է, որ այդ կարգի դիտա-
վորյալ սպանությունների ճնշող մասը կատարվում է երկ-
կողմանի կռվի ժամանակ, խանդի հողի վրա և վրեժից զրբ-
ված:

1. Ի՞նչ պետք է հասկանալ երկկողմանի կռվի առելով:
Գա, երկու կամ ավելի անձանց ֆիզիկական ընդհարումն է,
որոնք գործում են առանց նախնական պայմանավորվածու-
թյան կամ, երբեմն էլ նախապես պայմանավորված կարգով,
նպատակ ունենալով անօրինական միջոցներով լուծելու ի-
րենց միջև ծագած կոնֆլիկտը: Եթե այդ այդպես է, ապա
մասնակիցներից և ոչ մեկի մոտ որևէ մեկին սպանելու նախ-
նական դիտավորություն չի լինում, այդպիսին ծագում է
հենց կռվի պրոցեսում, իսկ շատ հաճախ նրանք գործում են
ախորշ դիտավորությամբ: Հարվածելով ասուղիներ, սուր-
չկալը դիտակցում է, որ կռվի հետևանքը վատագավոր է,

սակայն, թե ինչպիսին կլինի այդ՝ մահ, մարմնական
ծանր, թե թեթև վնասվածք, նա դրա նկատմամբ անտարբեր
է: Այսպիսի դեպքերում, սուբյեկտը բրեհական պատասխա-
նատվություն է ենթարկվում առաջացած հետևանքի համար,
պայմանով, որ նրա գործողություն և հետևանքի միջև առկա
լինի պատճառական կապը:

Եթե կռվի ժամանակ սուբյեկտը դիտավորություն է ու-
նեցել միայն մարմնական վնասվածք հասցնելու ասուղիներ,
սակայն այլ պատճառներով (ժամանակին բուժ. օգնություն
ցույց չտալը, օրգանիզմի այլ հիվանդագին երևույթների առ-
կաությունը և այլն) վերջինս մահացել է, ապա սուբյեկտի
արարքը համապատասխանում է Քր. օր-ի 105 հոդ. 2-րդ մա-
սի հասկանիչներին:

Բայց բավական է պարզել, որ մեղադրյալը նախատեսել
է մահ առաջնապես հնարավորությունը և ընայած այդ հետե-
վանքի նկատմամբ եղել է անտարբեր (անուղղակի դիտավո-
րություն), նրա գործողությունը կորակվի որպես դիտավո-
րյալ սպանություն:

Երկկողմանի կռվի մասնակիցներից որևէ մեկի մահը
պետք է ֆիզիկական ընդհարման պատճառով բուն գործու-
ղության հետևանք լինի: Այդ գործողության ծանրությունը
օրևէ նշանակություն չունի արարքի որակման համար, բա-
վական է, որ այն հասցված լինի կռվողներից մեկին ու մեկի
կողմից, հակառակ կողմի մասնակիցներից որևէ մեկին: Եթե
սպանությունը կատարվել է կողմնակի անձի կողմից, որը
չի մասնակցել ընդհարմանը, ապա հնարավոր է և այլ ստոր
գրգումներ, կարծեսցալ ասուղիներ պաշտպանելու դիտավո-
րություն և այլն, նայած գործի հանգամանքներին:

Երկկողմանի կռվի պետք է տարբերել հարձակումից,
որի ժամանակ հաճախ առաջանում է ինքնապաշտպանու-
թյուն: Այս չի նշանակում սակայն, թե առաջինի ժամանակ
բացառվում է ինքնապաշտպանության մոմենտը: Այդպիսին

² Տճ՝ Постановление Пленума Верховного Суда СССР от 4 июля 1960 г. «О судебной практике по делам об умышленном убийстве».

կարող է տեղի ունենալ, հատկապես, ընդհարողներինք մի կողմի ուժերի և գործածվող միջոցների խիստ գերակշռման դեպքում (մարդկանց թվական գերակշռություն, հրազենի գործածում և այլն): Այս տեսակետից կարևոր է տարբերել նաև անհրաժեշտ պաշտպանության ժամանակ և դրա սահմանների անցումով կատարված դիտավորյալ սպանությունները: Մի դեպքում՝ անձը զրկված լինելով բոլոր տեսակի հնարավորություններից, գործում է սպանվողի ոտնձգության բնույթի և վտանգավորությանը համապատասխան, մյուս դեպքում՝ անձը իր նկատմամբ կատարվող ոտնձգություններից խույս տալու հնարավորություններ ունենալով հանդերձ, պարզապես է հարցը լուծել «բռնությունից բռնությամբ» պատասխանելու ճանապարհով, զբաղելով իսկ թույլ տալով անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում: Եվ եթե առաջին դեպքում անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, ապա երկրորդ դեպքում՝ նա պատասխանատվություն է կրում անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանության համար:

Ի դեպ, պետք է նշենք, որ սպանության գործերով հնարավոր չէր լինի բացահայտել այս կամ այն կամստեր հաստատող կամ հերքող հանգամանքները, եթե սպանված լինի քննության օբյեկտիվությունը, բազմակողմանիությունն ու լրիվությունը:

Նման դեպքերում, սովորաբար զժվար է պարզել, թե մասնակիցներից որ մեկն է սպանություն կատարողը և որը զրդիչը կամ օժանդակողը: Իրավական այս կամ այն նորմալի բնորոշությունը և ավելի արարքի նկատմամբ նրա կիրառման ճշտությունը ևս պայմանավորված են այդ հարցերի լրիվ և բազմակողմանի պարզարանման հետ: Հաճախ հայտնի լինելով, որ սպանությունը կատարվել է երկկողմանի կովի ժամանակ, այլևս քննությունը չի տարվում սպանության բուն արժեքի մասին պարզելու ուղղությամբ և արարքը որակվում է որպես հասարակ սպանություն: Մինչդեռ, նման դեպքերում, հաճախ սպանությունը կատարվում է խուլիգանական զրգումներով, իսկ այս և նրկկողմանի կովի ժամանակ կա-

սարված սպանությունները պետք է տարբերել ըստ այն շարժառիթների, որով գործել է հանցագործության սուբյեկտը:

Առօրյա կյանքում, սովորաբար, սպանության այդ երկու տեսակները տարբերելիս, էլակետ են բնորոշում այն, թե ո՞վ է եղել կովի զրգապատճառը՝ սուժողը թե մեղադրյալը: Երբինակ՝ Ա-ի գործով, ՍՍՄ Գերագույն դատարանի քրեական գործերով դատական կոլեգիան նշել է, որ կովում կատարված սպանությունը չի կարելի համարել խուլիգանական զրգումներով կատարված, եթե զրգապատճառը և հրահրողը էղել է սուժողը՝ Այստեղից տրամաբանորեն բխում է նաևկարակը, որ սպանությունը պետք է համարել խուլիգանական զրգումներով կատարված, եթե կովի զրգապատճառը մեղադրյալն է եղել: Այս տեսակետը իր պաշտպանությունն է գտել Ն. Ֆ. Կուզնեցովայի «Պիտավորյալ սպանության որակման հարցերը» աշխատության մեջ³:

Քրեական իրավունքի տեսությունում զոտություն ունի մի կերպով տեսակետ ևս, ըստ որի սուժողի կողմից հրահրված կովում առաջացած սպանությունը պետք է որակել որպես աջակցի տակ կամ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանություն⁴:

Դրգապատճառի ի հայտ բերումը, իրքը, կարևոր նշանակություն ունի արարքի ճիշտ որակման համար, սակայն զրանով հարցը ամբողջությամբ չի լուծվում: Այդ՝ կատարված արարքի այն օբյեկտիվ հանգամանքներից մեկն է միայն, որը մյուս բոլոր հանգամանքների հետ միասին ենթակա է քննության: Մյուս կողմից, սուժողի ոչ բոլոր անօրինական զրոժողություններն են, որ կարող են արարքը Ք. օր-ի 101 կամ 102 հոդվածներով որակելու հիմք հանդիսանալ: Սպա-

³ Տե՛ս «Биолетень Верховного Суда СССР», 1961, № 5, стр. 25—26.

⁴ Տե՛ս Н. Ф. Кузнецова, Вопросы квалификации умышленного убийства, стр. 40.

⁵ Տե՛ս «Уголовный кодекс РСФСР», научный комментарий, т. 2, Свердловск, 1962, стр. 148.

նության որակումն այդ հոգովածներով հնարավոր է միայն որոշակի պայմանների առկայության դեպքում (այս պայմանների մասին տե՛ս հաջորդ գլխում)։ Մեր կարծիքով, բնկուզ տուժողի անօրինակն գործողությունների առկայության պայմաններում, երբեմն չի բացառվում մեղադրյալի խուլիգանական կամ այլ ստոր գրորումները, կամ թե այնպիսի ծանրացուցիչ հանգամանքներ, ինչպիսիք են՝ առանձին զամանութունը, երկու կամ ավելի անձանց սպանությունը, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակը և այլն։

Բանն այն է, որ երկկողմանի կովում սպանությունը կարող է կատարվել թե աֆեկտով վիճակում, թե անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, թե անզուշտությանը և թե Քր. օր-ի 99 հոդվածում թվարկված ծանրացուցիչ հանգամանքներից մեկն ու մեկի դեպքում։ Այն կարող է նույնիսկ անհրաժեշտ պաշտպանության ընդունելու պաշտպանության սահմանների անցումով, թե անզուշտությանը է որակվել 2002 Քր. օր-ի 100 հոդվածով, եթե բացակայում են նշված ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքները, «անկախ նրանից՝ կովի զրգապատճառ տուժողն է եղել, թե մեղադրյալը»⁶։

2. 2002 քրեական նոր օրենսգրքը դիտավորյալ սպանության հատարակ տեսակ է համարում նաև խանդի հողի վրա կատարված սպանությունը։ Այս դեպքում շարժառիթը խանդն է և արարքը որակելու համար նշանակություն չունի թե սպանություն կատարողը խանդեղու ունալ հիմքեր ունեցել է, թե ոչ։

Խանդն այնպիսի զգացում է, որի ժամանակ մարդը տուխությունը է լցվում իր հանույթները խանգարող ու դրանց հակադրվող ամեն ինչի հանդեպ և որը գնալով վերաճում է կատաղության կամ կասկածաբան և կրքոտ անխտանջության ուղեղ մեկի սիրտ կամ անհավատարմության նկատմամբ։ Խանդի զգացումը սովորաբար առաջանում է մարդկային երկու սեռի միջև տեղի ունեցող հարաբերություններից և պետք

է սակ, որ այն դեռևս հետևանք է մարդկանց որոշ մասի մոտ մնացած անցյալի այնպիսի բարբերի, որի համաձայն կիրն ենթարկվելով թառաչիի հասնողին», պատկանում էր նրան «տիրացման իրավունքի համաձայն», իսկ մեկ ուրիշ տղամարդ, այդ դեպքում թառաչիի նկատմամբ անհանգուրձելի մի մրցակից էր»։

Հակամարտ գոտակարգերի բարոյականության նորմաներից բխող այդ դեպքները, որոնք հաստատվում էին բացառապես տղամարդկանց կողմից, երբևէ չէին տարածվում հենց իրենց՝ տղամարդկանց վրա։ Միևնույն անհավատարիմ կիրն մտրակահարվում, նեմույն էր վրա կամ սպանվում։ Այդ բոլորը հետևանք էր այն բանի, որ կիրն նրանց մոտ համարվում էր ոչ թե մարդ, այլ իր։

Եթե անցյալում, ոմն Օտտո Վեյնինգերն Լայպցիգում լույս տեսած «Սեն և քնավորություն» գրքի գլուխներից մեկը անվանում էր «Տղամարդը ինչ որ բան է, կիրն՝ ոչինչ» և ավելացնում. «մարդ է նա արդո՞ք, բույս թե կենդանի։ Ոչ այս, ոչ այն, ոչ էլ երրորդը, նա (կիրն—Վ. Լ.) տղամարդու իրն է», ապա նրա «հանառքները» այժմ ԱՄՆ-ում իրենց սակզծագործությունները անվանում են «Կանաչ որպես կենդանիներ», «Կազր կիրն», «Գալլ կիրն», «Աբուն ու կզը» և այլ անհեթեթություններ, որոնք բնորոշ են բուրժուական գրականությանն ու արվեստին։ Ահա այսպիսի զագափարներով անվոչ, դրանցով դատախարակվող անձը, զավճանաության կամ ալոզպիանի ենթագրելու դեպքում, վարվում է կնոջ հետ, որպես իր «սեփական իրի», ավելի շուտ նշնելով իր ինքնասիրությունն ու անսիրտությունը պաշտպանելու բնագրից, քան թե սիրտ զգացումից։ Սոցիալիզմի պայմաններում արտատապես թոխվել է տղամարդու և կնոջ փոխհարաբերությունը։ Կիրն գոտ է եկել ստրկացված և ստորացված վիճակից։ Կնոջ վրա այլևս չեն նայում որպես տղամարդու սեփականության, «անայլին կահկարասու» և այլն։ Բայց այս բոլորը չի նշանակում, թե մեկ մաս կիրն մեծք բերելով հավատարմություն ու ազատություն, իրավունք ունի նաև զավա-

⁶ Տե՛ս «Бюллетень Верховного Суда СССР», 1960, № 4, стр. 51.

ճանկի ընտանիքին, ոտնահարել բարոյականության նոր-մերը:

Սովետական մարդկանց ընտանեկան հարաբերություն-ները գրեթեովում են բարոյական մարբությունը: Միմյանց նկատմամբ խոր հարգանք, փոխադարձ օգնություն, բարի ցանկություններ ու սկզբունքներովում, աշխատանքային հպարտություն և լավատեսություն,— ահա սովետական ըն-տանիքի բարոյական կյանքի կարեւոր գծերը:

Իրականացել է Ֆ. Էնդլերի այն կանխատեսումը, որ սոցիալիստական հասարակարգում կաճեն «...աղանաղ-կանց այնպիսի մի սերունդ, որ իր կյանքում երբեք փողով կանց սոցիալական արտոնություններով որեէ կեռչ անձնա-արտւթը զնկելու վիճակի մեջ չի եղել, ինչպիսի և կանանց այն-պիսի սերունդ, որ երբեք հարկադրված չի եղել բացի իսկու-կան սիրուց, ուրիշ որեէ նկատառումով անձնատուր լինելու մի աղամարդու...»⁷

Այո, նման սերնդի զոյությունն այժմ անհերքելի փաստ է, բայց անժխտելի է նաև այն, որ որոշ մարդկանց գիտակ-ցություն մեջ զեռես արժանաւորված են անցյալի մնացուկ-ները: Այդ մարդիկ ոտնահարում են բարոյական երթմերը և դատաւարտովում հասարակության կողմից, իսկ երբեմն էլ իրանդից զրգովմ կատարում են դատաւարտելի շարժերնր: Խանդուկո համար միշտ չէ, որ անձը բավարար հմբեր է ունենում: Հաճախ տուժողը, շնայած անմեղ, սակայն կաս-կածանքների զո՞ւ է դառնում:

Երբեմն ամուսիններից մեկի կողմից խանդի հողի վրա կատարված սպանությունը դատական պրակտիկայում հա-մարում են մեղմացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն (աֆիկտիվ վիճակ): Մեղ թվում է այդպիսի մոտեցումը հանգեցնում է այդ կարգի հանցագործություն-ների զեմ տարվող պաշարի թուլացմանը: Ճիշտ է նկատում Մ. Անիսյանը, որ ամուսիններից մեկի զավանտությունը, նույնիսկ ոչ կարծեցյալ, չի կարող մեղմացուցիչ հանգամանք

համարվել, եթէ բացակայում է որոշակի իրազրությունում զավանտությունը ծանր վիրավորանքի վերանկելու մոմեն-տը⁸: Սակայն շնք կարող համաձայնվել Բ. Ոսեակու այն սեռակետին, ըստ որի ամուսիններից մեկի զավանտությու-նը ոչ մի զեպքում ծանր վիրավորանք չէ մյուսի համար, որովհետև այն երբեք «չի նսնմացնում մյուսի պատիվն ու արժանապատվությունը»⁹:

Գրատական պրակտիկայից հայտնի են բազմաթիվ զեպ-քեր, երբ զավանտությունը զրեւողվել է մարդու պատիվն ու արժանապատվությունը ստորացնող ամենաայլանդակ ձևերով: Նույնիսկ սովորական պայմաններում վիրավորա-կան շքվացող առանձին երեւոյթներ, որոշ պայմաններում և որոշ մարդկանց մոտ կարող են առաջացնել հողեկան հա-կարժակի ծանր հողում, այնպես որ այդ հարցերը լուծելիս, բառ մեզ, պետք է ելնել կոնկրետ գործի հանգամանքներից:

3. Վրեժը, որը հաճախ զխաւթույալ սպանությունների շարժառիթն է համարվում, «պատճառովմ շարիքի» զիմաց իրեն հատուցում կատարվող զործողությունն է: Սակայն տու-ժողի արարքը կարող է շարիք համարվել միայն տվյալ անձի կամ մի խումթ անձանց համար, մինչդեռ ընդհանուրի հա-մար այն կարող է հանրողատ կամ օրեքնով սահմանված զործողություն լինել: Վրեժից ելնելով կատարված սպանու-թյան հասարակական վտանգավորությունը բարձր է հեց նրանով, որ անձը իրեն պատճառված շարիքի համար, դա-տա-քենչական կամ այլ իրավասու օրդանների զիմելու փո-խարեն բռնում է ինքնազատաստանի ուղին, իսկ հաճախ էլ շարիք պատճառողի նկատմամթ, այս կամ այն օրդանի կա-յարքում որոշումը կամ ձեռնարկված միջոցառումը անբավա-րար համարելով, կատարում է սպանություն:

⁸ Տե՛ս Մ. Կ. Акианц, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 122.

⁹ Տե՛ս Ե. С. Утецкий, Вина в советском уголовном праве, М., 1950, стр. 83—84; նույնանման տեսակետ է պաշտպանում նաև Մ. Գար-գորոսյակին Տե՛ս Մ. Д. Шаргородский, Ответственность за преступления против личности, М., 1953, стр. 21.

⁷ Տ. Էնդլեր, Ընտանիքի մասնաթր սեփականության և պետության թաղումը, Երևան, 1940, էջ 102:

Այսպես, 1958 թ. Անրինական քաղաքի բնակիչ, ավտո-
վարող Ֆ-ն խախտելով երթևեկության կանոնները, իր վա-
րած ավտոմեքենայով հարվածում է քաղ. Ս-ին, որից վեր-
ջինս մահանում է: Ֆ-ի նկատմամբ դատարանի կողմից
սահմանվում է օրկերի հողվածով նախատեսված մարտնչում
պատժաչափ, սակայն Ս-ի ամուսինը՝ Լ-ն ղգգո՛հ լինելով
կատարանի վճռից, 1963 թ. էրը Ֆ-ն իր պատիժը կրելուց
հետո վերադառնում է կալանավարժից, դանակի հարվածով
սպանում է Ֆ-ին ու ներկայանում դատա-բննչական օրգան-
ներին:

Քաղի վերը նշվածներին, վրեժի գրգայումը կարող է ա-
ռաջանալ մարդկանց ամենաբազմապիսի արարքներին՝ վի-
րավորանքից, քննադատության, հանցավոր գործունեություն-
ը մերկացնելու, ծառայության մեջ պահանջկոտություն
ցուցաբերելու համար¹⁰ և այլն: Այն կարող է նաև մեղադրյա-
լի այս կամ այն պահանջի չբավարարման հետևանք լինել:
Նրինակ՝ տուժողը չի ցանկանում հանցագործ խմբում մնալ,
կամ կիրք մեքծում է աշխատանքը թողնելու մասին ամուսնու
պահանջը և ա՛հա նման դիմաորության համար, որպես փոխ-
հատուցում, մեղադրյալը ռոնձգում է նրանց կյանքի դեմ:

Վրեժ լուծելու մտահղացումը չի պատժվում, քանի ղեժ
բրևական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիչ-
ներին համապատասխան այն չի գրտետրվել արտաքին աշ-
խարհում: Մակայն այդ գրտետրումն էլ կարող է սահմանա-
փակվել նրանով, որ անձը վրեժ լուծելու իր դիտավորությունը
պատմի որևէ մեկին, կամ ղրի իր հուշատեսարանում, կամ ուղ-
ղակի ափ այն անձին, որից վրեժ պետք է լուծի: Ընդհանուր
կանոնի համաձայն հանցագործության կատարման դիտա-
վորության գրտետրումը (բացառությամբ հակահեղափոխա-
կան հանցագործությունների) պատժի ենթակա չէ, Բայց
այստեղ որպես բացառություն, վրեժից դրդված սպանության
սպանալիքը պետք է համարել ավարտված հանցագործու-

թյուն (բայց ոչ ավարտված սպանություն), քանի որ գործող
բրտական օրենսդրությամբ սպանության, մարմնական ծանր
վնասվածքներ հասցնելու կամ գույքի ունչացման սպանա-
լիք տալը (ՀՍՍՀ Քր. օր-ի 223 հոդ-) պատժելի արարքներ են
համարվում, պայմանով, եթե այդ սպանալիքն իրականաց-
նելու ռեալ վտանգը առկա է եղել: Այսպիսով, վրեժից էնի-
նով սպանությունը ալարտված է համարվում, երբ մեղադր-
յալը ոչ թե սահմանափակվել է իր դիտավորությունը որևէ
ձևով արտահայտելով, այլ էրը ղեկավարվելով այդ շարժա-
սիթով, ուրիշին հակաօրինաբար գրել է կյանքից:

4. Դիտավորյալ սպանության տեսակներից մեկն է էլ
տուժողի անօգնական վրեժակից օգտվելով կատարվող սպա-
նությունն է:

1927 թ. նոյեմբերի 1-ից գործողության մեջ գրված
բրտական օրենսդրով այդ կարգի սպանությունը համարվում
էր ծանրացուցիչ հանցամասնություն կատարված սպանու-
թյուն, մինչդեռ նոր օրենսդրով այն դիտվում է որպես հա-
տարակ սպանություն: Մեր կարծիքով այդ հարցում նախկին
օրենսդրությունը կանգնած էր ավելի ճիշտ անսակետի վրա:

Նման դիտավորյալ սպանության դեպքում գաժանություն-
նը, խուլիգանական գրտումները կամ շահ՛ը համարվում են
մեղքը ծանրացող հանցամասնքներ, որոնք վկայում են հա-
տարակության համար մեղադրյալի մեծ վտանգավորության
մասին, այպա ավելի մեծ վտանգավորություն է ներկայաց-
նում նաև անօգնական վրեժակում գտնվող անձին սպանելը:

Անօղնական վրեժակ ստելով պետք է հակառեալ այն, որ
անձը սվյալ պահին որևէ պատճառով ղրվված էր իրեն
կյանքին սպանանցող վտանգին դիտադրելու ընդունակու-
թյունից (քնած, հարած, փորքահասակ, հիվանդ և այլն):

Կոմունիզմ կառուցողի բարոյական կողքբաի դրսվնե-
րից մեկը պահանջում է մարդկանց միջև փոխադարձ հար-
ցույթի, միմյանց նկատմամբ բարեկամական, բնկերական,
նորարարկան և մարդասիրական սկզբունքների գործողու-
թյան ոլորտի էլ ավելի ընդլայնում: Դրանք բարոյական նոր-
մաներ են, որոնք աշխատավոր մարդը մշակել է ղարերի

¹⁰ Տե՛ս Н. Н. Загородников, Преступления против жизни... М.,
1961, стр. 131.

ընթացքում: Մեր հասարակարգում ապրող մարդն անօգնական վիճակում գտնվող անձին սպանելով, ոչ միայն կատարում է քրեական օրենքով նախատեսված պատժելի արարք, այլև ոտնատակ է տալիս մեր օրենքները: Այս տեսակետից էլ ավելի է մեծանում նրա կատարածի հասարակական վտանգավորությունը: Այս կարգի սպանության շարժառիթները տարբեր կարող են լինել՝ շահ, խանդ, վրեժ և այլ ստոր գոյություններ: Այստեղ մարդասպանն ավելի է ենեզ, վրիժառու, ժամանակը հույսելի չի հանգստացնում՝ նրա սրբորբքված կրթերը: Հանցագործը փնտրում է հարմար տեղն ու պահը և օգտվելով նրանից, որ սուսուղը այս կամ այն պատճառով գրկված է դիմադրելու ընդունակությունից՝ իրականացնում է իր մտադրությունը: Այսպիսի դեպքերում, հանցագործն իր մեջ ընդհանրացնում է այն բոլոր բացասականը, որնք թե՛ վատասպարտելի են հասարակության մեջ գործող բարոյական նորմաներով և թե՛ պատժելի քրեական օրենքի ուժով¹¹:

Այս տեսակետից դիտավորյալ սպանության դեպքում սուսուղի անօգնական վիճակի օգտագործումը մեղքը ծանրացնող հանգամանք չշիտելը, ըստ մեզ գործող օրենսգրքի բացերից մեկը պետք է համարել:

5. Արյան վրեժը հնադարյան սովորույթների մնացուկ է, որը ժամանակի լայն տարածում էր գտել սոսնձատիրական կարգերում: Արյան վրեժի սովորույթը նրանում էր, որ

¹¹ Է. Յա. Ենժրովսկին սպանությունը առավել վտանգավոր է համարում, երբ սպանվողը գտնվելիս է եղել անօգնական վիճակում: (Э. Я. Немировский, Советское уголовное право, Одесса, 1926, стр. 314):

Ա. Ա. ժիբինկին գտնում էր, որ մեղադրյալի կատարածը առավել ծանր է, երբ նա գրտակցել է սուսուղի անօգնական վիճակը և օգտագործել է այդ սպանության կատարելու նպատակով: (А. А. Жижинский, Преступления против личности, М., 1927, стр. 20)

Ե. Բ. Չազարովիկիով մեղադրյալի հանցանքի հասարակական բարձր վտանգավորությունը տեսնում է նրանում, որ մեղադրյալը օգտագործելով սուսուղի անօգնական վիճակը, կոպիտ կերպով ոտնահարում է բարձր արժանության և համակերպության տարրական նորմաները: (Н. И. Захаровников, Преступления против жизни..., М., 1961, стр. 22):

ունձին, նրա հարազատներից որևէ մեկին սպանելու, վնասօգործ հասցնելու կամ վիրավորելու դեպքում, սուսուղի հասարակարգ կամ հենց ինքը՝ սուսուղը վրեժ էր լուծում մեղադրյալից կամ նրա հարազատներից: Ընդ որում արյան վրեժը կրթման անում էր երկար ժամանակ և առաջ էր բերում մեծ թվով զոհեր:

Արյան վրեժի առանձին դեպքեր հանդիպում են և այժմ, սուսունձին հանրապետություններում, ինքնավար հանրապետություններում, կամ առանձին վայրերում ապրող ազգերի մոտ:

Նման ազգերի և զրանցից որոշ մարզկանց մտա գեղեսվարապետական ծնով գոյություն ունեցող այդ սովորույթները նկատի ունենալով, ԽՍՀՄ, Արացական ՍՄՀ, Ղազախական ՍՄՀ, Թուրքմենական ՍՄՀ, Ուզբեկական ՍՄՀ և Կիրգիզական ՍՄՀ Քր. օրենսգրքերը արյան վրեժի հողի վրա կատարված սպանությունները դասում են ծանրացուցիչ հանցամտանքներում կատարված սպանությունների շարքը:

Միլիցիայի, դատախազության և դատարանների վայրայիններում գտնվող և անցած տարիների արխիվային նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ արյան վրեժի առանձին դեպքեր գոյություն ունեն նաև մեր հանրապետությունում: Այդպիսիք հասկապես նկատվում են քրեիկ, եղիղներին և մասամբ էլ Հայերի մոտ: Տոհմային-նահապետական հարաբերությունների մնացուկների տարբեր ձևերի պրեսերման փաստը չի ժխտվում նաև մեր հանրապետության օրենսդրության, այլպես, ՀՍՄՀ Քր. օրենսգրքում տեղ չէր գտնի այնպիսի մի հանցակազմ, ինչպիսին հարսնացուի համար հատուցապահ (ղալիմ) առաջ և ընդունելն է: Սա նս սոսնձային-նահապետական հարաբերությունների մնացուկներից է:

Հետևապես, Հայկական ՍՄՀ-ում և արյան վրեժը ծանրացուցիչ հանցամանք համարող միութենական մյուս հանրապետություններում ազգային առանձնահատկություններն այդ հարցում հանրկնում են: Այս տեսակետից, վերը նշված

Հանրապետությունների և ՀՍՍՀ Քր. օրենսգրքերում տեղ գտած հակասությունը հազվի՞ թե արգարացուցիչ լինի:

6. Գիտավորչայ սպանության հասարակ տեսակ է համարվում նաև մանկասպանությունը՝ մոր կողմից, ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, իր նորածնին դիտավորչայ կերպով կյանքից զրկելը: Եթե մանկասպանության այդ բնույթում բրտական իրավունքի տեսությունում գտել է ընդհանուր ճանաչողություն¹², ապա դրանով օրենսգրքերում մանկասպանության հատուկ հանցակազմ մտցնելու հարցը դեռևս սխալ է բրտագտնների կողմից:

Նրանիցից ոմանք գտնում են, որ այժմ չի կարելի օրենսդրության մեջ մանկասպանության հատուկ հանցակազմ մտցնել, որովհետև այն սպանության վտանգավոր տեսակ է և հիմք չկա իր նորածնին սպանող մոր վարքագծում մեղքը մեղմացնող հանգամանքներ փնտրել¹³: Ոմանք էլ ժխտելով այդ, պնդում են հակասակը, այսինքն, օրենսդրության մեջ մանկասպանության հատուկ հանցակազմ մտցնելը համարում են օգտակար մի գործ¹⁴:

¹² Տե՛ս՝ *М. Авдеева*, Детоубийство, «Социалистическая законность», 1937, № 8; *М. Д. Шаргородский*, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 79—95; *А. А. Пионтковский*, *В. Д. Меньшикин*, Курс советского уголовного права, часть Особенная, т. 1, М., 1955, стр. 547; *Э. Клобих*, Медицинская криминалистика, Прага, 1959, стр. 351—352; *Н. Н. Загородников*, Преступления против жизни..., М., 1961, стр. 155—161; *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 127 и др.

¹³ Տե՛ս՝ *В. С. Тадевосян*, Об уголовной ответственности за преступления против детей, «Советское государство и право», 1940, № 8—9, стр. 158; *А. А. Пионтковский*, *В. Д. Меньшикин*, Курс советского уголовного права, часть Особенная, т. 1, М., 1955, стр. 547—548; *Б. С. Утевский*, Уголовное право, М., 1950, стр. 184; «Советское уголовное право, часть Особенная», М., 1951, стр. 188; *Н. Н. Загородников*, Преступления против жизни..., М., 1961, стр. 164—165; *С. В. Бородин*, Квалификация убийств..., стр. 90—92.

¹⁴ Տե՛ս՝ *Белпалько*, Детоубийство, «Еженедельник советской юстиции», 1927, № 20; *М. Авдеева*, Детоубийство, «Социалистическая

Մենք նույնպես պաշտպանելով օրենսգրքում մանկասպանության հատուկ հանցակազմ չմտցնելու տեսակետը, պետք է նշենք, որ մանկասպանությունը, նայած գործի հանգամանքներին, կատարման եղանակներին, կատարողի դիտավորությանը և այլն, կարող է որակվել օրենսգրքում սպանության վերաբերյալ եղած հոդվածներից մեկն ու մեկով:

Մանկասպանությունը կարող է կատարվել թե աֆնկտիվ լինակում, թե առանձնակի դատնությունը, թե առանձնապես վտանգավոր սեփերիվխտ ճանաչված մոր կողմից և թե այլ շարժառիթներով: Հետևապես, օրենսգրքում առանձին հանցակազմ մտցնելը, այդ բոլորի վերաբերյալ կատարողների նաև առանձին հոդվածներ և հոդվածաժամանակի անհրաժեշտություն, որն ավելորդ կրկնություն կլինի օրենսգրքում: Մ. Կ. Անիայցը մանկասպանության հանցակազմ մտցնելու իր տեսակետը հիմնավորում է նրանով, որ դատարանները այդ կարգի սպանության սուբյեկտների համար հանրապետական մեղք մեղմացնում են ավելի մեղմ պատիժներ, քան հասարակ կամ առանձնապես վտանգավոր սպանությունների համար¹⁵:

Բայց այս չի նշանակում, թե դատարաններն այդպես են վարվում մանկասպանության բոլոր դեպքերում: Եթե ծննդաբերության պրոցեսում, մոր օրգանիզմում առաջացած փոփոխությունների պատճառով, մայրը հեճախ լրիվ հաշիվ չտալով և որով չափով կորցնելով իրեն զնկավարելու բնականությունները, սպանում է իր երեխային (այսպիսի դեպքեր մեր պայմաններում դրեթե չկան), որպիսի հանցամասերներն իրոք մեղմացնում են նրա պատասխանատվու-

«законность», 1937, № 8, стр. 53—70; *М. Д. Шаргородский*, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 88—94; *М. К. Ломидзе*, О квалификации уголовного законодательства Грузинской ССР, «Советское государство и право», 1959, № 8, стр. 115; *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 129—130.

¹⁵ Տե՛ս՝ *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 130.

վրանք, ապա նույնը չի կարող լինել ծանրացուցիչ հանգամանքներում կամ այլ շարժառիթներով կատարված մանկասպանության ղեպքերում: Մանկասպանությունը կարող է անմիջապես պայմանավորված լինել ծննդաբերության փաստով, կամ այնպիսի շարժառիթներով, որոնք հանդիպում են ամեն մի սպանության ժամանակ (շահ, վրեժ հոր նկատմամբ և այլն): Մանկասպանությունը կարող է նաև մարանզուլություն հետևանք լինել: Եկատի ունենալով կատարված արարքը և գործի հանցամասերնրը, այն կարող է որակվել Քր. օրենսգրքի 99, 100, կամ սպանությունը նախատեսող մեկ այլ հոդվածով: Եվ եթե մանկասպանություն հատուկ հանցակազմի բացակայությունը հնարավորություն է տալիս դատարաններին կատարված արարքի ծանրությունը հաստատարանքի պատիժ սահմանելու, ապա, միաժամանակ, հաշվի առնելով այս կամ այն մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները, մանկասպանության համար մեղմ պատիժ նախատեսող հատուկ հանցակազմի սովորությունը՝ կասմանափակեր այդ հնարավորության շրջանակները: Ինչպես իրավացիորեն նշում է Ն. Զագորոդնիկովը, նման հոդվածը մի տեսակ արտոնյալ վիճակ կստեղծեր այն անձանց համար, որոնք մանկասպանություն կկատարեին ստոր գրդումներից էլեելով¹⁶:

Այսպիսով, մանկասպանության առանձին ղեպքերի համար դատարանների կողմից մեղմ պատիժների սահմանումը օրենքում հատուկ հանցակազմ մտցնելու շահանքի չի կարող լինել և ՀՍՍՀ քրեական օրենսգրքում, ինչպես և միութենական մի շարք հանրապետությունների քրեական օրենսգրքերում նման հանցակազմների բացակայությունը, մեր կարծիքով, պետք է համարել ճիշտ:

Այժմ երկու խոսք Քր. օր-ի 100 հոդվածով որակվող այն սպանությունների մասին, որոնք կյանքում շնայած քիչ են հանդիպում, սակայն լրիվ վերացված չեն: Գրանք տուժողի

¹⁶ Տե՛ս Н. Н. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 165.

խղիղանքով նրան սպանեն է, գիտական փորձարկումների ժամանակ և պահակային ծառայության կանոնների խախտման հետևանքով կատարված սպանություններն են: Տուժողի խղիղանքով և նրան խղճալով կատարված սպանությունը այն ղեպքում կարող է որակվել ՀՍՍՀ Քրեական օրենսգրքի 100 հոդվածով, եթե չկան նույն օրենսգրքի 99 հոդվածով նախատեսված ծանրացուցիչ հանցամասերնրը: Մովորբարս այդպիսի սպանություն կատարվում է ոչ թե հիվանդին խղճալու, այլ շահ ստանալու նպատակով: Եթե բացակայում են այդպիսի նպատակներն ու այլ ծանրացուցիչ հանցամասերնրը և իրող սպանությունը կատարվել է տուժողի խղիղանքով, ապա այս ղեպքում մեղադրյալի արարքը կարելի է որակել որպես հասարակ սպանություն:

Գիտական էքսպերիմենտի ժամանակ կատարված սպանությունը որակվում է Քր. օր-ի 100 հոդվածով, եթե նրանում բացակայել են ծանրացուցիչ հանցամասերնրը (շահ, երկու և ավելի անձաց մահ և այլն): Այս կարգի սպանություն կատարողի գիտավորությունն անուղղակի է, նա նախատեսում է, որ կատարվող փորձի հետևանքով կառաջանա օրել մեկի մահը, շնայած չի ցանկանում, բայց գիտակցաբար թույլ է տալիս այդ հետևանքների առաջանալը:

Ըստ մեզ, հասարակ սպանություն պետք է համարել նաև քննչական էքսպերիմենտի ժամանակ առաջացած որևէ մեկի մահը: Ինչպես այս, այնպես և գիտական փորձարկումների ընկացքում առաջացած մահը. կարող է նաև էքսպերիմենտ կատարողի անզուլություն արդյունք լինել:

Պահակային ծառայության կանոնների խախտումը կամ նրանց ոչ ճշգրիտ կատարումը կարող է առաջացնել ծանր հետևանքներ: Օրինակ՝ պահակի փոխանակ զգուշացնելու պահակակետին մոտեցողներին, կրակում է նրանց կողմը, որի հետևանքով մոտեցողներից մեկը մահանում է: Հասարակ սպանություն է համարվում նաև միլիցիայի աշխատակցի կողմից զենքի ոչ ճիշտ օգտագործման ժամանակ կատարված սպանությունը, սակայն այստեղ առկա է իշխանականություն կամ պաշտոնական լիազորությունների սահ-

մանի անցում, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից դիտավորյալ կերպով կատարվում են այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն զուրս են դալիս օրենքով նրան վերապահված իրավունքների և լիազորությունների սահմաններից և որի հետևանքով առաջանում է այս կամ այն անձի մահը:

Այսպիսի զեպքերում նույնպես պետք է բացակային Քրեական օրենսգրքի 99 հոդվածում նշված ծանրացուցիչ հանգամանքները, հակառակ զեպքում կատարված սպանությունը չի կարող որակվել նույն օրենսգրքի 100 հոդվածով:

Գ Լ Ո Ւ Ն Զ Ո Ր Ր Ո Ր Գ

ՄԵՂՄԱՅՈՒՅԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սպանությունը ծանր հանցագործություն է, որովհետև մեկը զրկվում է իր կյանքից, իսկ մյուսը՝ կորցնում մարդկային կերպարը: Սակայն, ամեն անգամ քննելով այն հարցը, թե ինչից զրգված մարդը հասավ այդ գործելակերպին, պարզվում է, որ առանձին զեպքերում մարդն այնուամենայնիվ գործել է մի այնպիսի հանգամանքներում, որը եթե չի արգարացնում, գոնե մեղմացնում է նրա արարքը:

Ուրեմն, մարդու նկատմամբ կիրառվող պատժի խստությունը կամ մեղմությունը ղեկու պայմանավորված չէ սպանության սոսկ փաստով: Անհրաժեշտ է հաստատել կամ բացառել դրա վտանգավորությունը հասկանալու նրա բնզունականությունը, այդպիսին կատարելու նրա ձգտումը և այն հանգամանքների առկայությունը, որից ելնելով մարդը կատարել է հանցավոր արարք:

Այն մասին, որ մարդը կարող է մեկ ուրիշին կյանքից զրկել ամենատարբեր դրամներից ելնելով, որ նա կարող է իր անձնականն ու զույթային շահերը մոռնալ առաջին պլան, որ կուրացած լինելով իր շահից, չլսել զոհի հառաչանքներն ու սնրոցները՝ մենք խոսել ենք արդեն նախորդ գլուխներում: Բայց այս բուրրից բացի մարդը կարող է գործել և այլ պատճաններով՝ զրգված տուժողի այնպիսի գործողություններից,

ւրոնք փոթորկն են մեզազդուլի ներքնաշխարհը կամ ինքնապաշտպանութուն են առաջացրել:

Գործող քրեական օրենսդրությունը դեռավորյալ սպանությունը համարում է նվազ վտանգավոր, եթե այն կատարվել է սուսուռի կողմից գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի, ինչպես և սուսուռի այլ անօրինական գործողությունների ազդեցության տակ առաջացած հանկարծակի հոգեկան խիստ հուզման վիճակում...» (ՀՍՍՀ Քր. օր-ի 101 հոդ.):

Օրենսդիրը նկատի ունի ոչ թե անձի ընդհանրապես հուզված, այլ հոգեկան խիստ հուզված վիճակը, որին ընդունված է անվանել նաև ֆիզիոլոգիական աֆեկտ:

Հայտնի է, որ աֆեկտը մարդու ամենաուժեղ լարված հույզերն են, օրինակ՝ մոլեգնությունը, սարսափը, հուսահատությունը և այլն: Ամեն մի զգացմունք, հույզ. փոխում է մարդու կենսունակությունը և առանձին նշաններով արտահայտվում արտաքինում: Աֆեկտի ժամանակ, զգացմունքի մարմնական արտաքին արտահայտությունը ցայտուն է լինում: Այն կարող է արտահայտվել նրա բազմաթիվ շարժումներում, խոսքերում և գործողություններում: Բայց աֆեկտի ժամանակ մարդը կարող է գտնվել նաև հակառակ վիճակում՝ բոլոր շարժումների զուգավորման, ամեն մի ակտիվության լրիվ դադարում: Օրինակ՝ սարսափից կամ մոլեգնությունից մարդը կարող է, ինչպես ասում են, «քարանալ»:

Ճիշտ է, աֆեկտով վիճակում գտնվող մարդը զգված է տիպապետում իրեն, որտեղ շարժվել թուլանում է նրա կամքը, բավականաչափ կորցնում է իրեն զգալու կարողությունը, սակայն այդ չի նշանակում, թե նա չի գիտակցում և չի հասկանում թե ի՞նչ է կատարում, կամ ի՞նչ է կատարվում իր շուրջը: Աֆեկտը երբեք էլ անհաղթահարելի իշխանություն չէ մարդու վրա: Հետևապես այդ վիճակում կատարված հանցագործությունը պատժելի է, որովհետև նրա ստիպելուր գիտակցում է իր գործողության վտանգավոր բնույթը, նախատեսում է զրա հանրաշնորհն վտանգավոր հետևանքները և

ցանկանում կամ գիտակցաբար թույլ է տալիս դրանց առաջանալը:

Աֆեկտով վիճակում կատարված սպանության նվազ վտանգավորությունը բացատրվում է նրանով, որ, ինչպես վերևում նշեցինք արդեն, մարդու գիտակցական գործունեությունը, այնուամենայնիվ, սուսուռի բռնի գործողությունների հետևանքով արգելակվում է, «գիսամիկ պահերը գերակշռում են մտավոր բովանդակությունն ու գործողությունն ընտրելու էարդողությունը»:

Հոգեկան խիստ հուզումից պետք է տարբերել մարդու բացառիկ վիճակը կամ, այսպես կոչված, պաթոլոգիական աֆեկտը, որի ներքո հանցագործություն կատարած անձը մասնավոր է անմեղատեղ և ազատվում քրեական պատասխանատվությունից:

Պաթոլոգիական աֆեկտը մարդու մտա կարճատև, հիվանդագին հոգեկան վիճակ է, որը առաջանում է հանկարծակի, ծանր ապրումներից, անսպասելի վիրավորանքից և այլն: Այն ուղեկցվում է գիտակցության խանգարմամբ, մարդը կորցնում է իր արարքները ղեկավարելու ընդունակությունը, բացակայում է կամքը, գործողությունը կրում է ավտոմատիկ բնույթ: Անցածի մասին հիշողությունները չեն պահպանվում կամ գտնվում են խառնափնթոր վիճակում:

Պաթոլոգիական աֆեկտը պայմանավորված է այն հանգամանքներով, որոնցում ապրում է ազլալ մարդը: Գրանք կարող են լինել ընտանեկան լարված հարաբերություններ, տեսեական ծանր պայմաններ, երկարատև հիվանդություններ և այլն, որոնց պատճառով մարդը տառապում է ծանր ապրումներով, գտնվում է լարված հույզերի մեջ, ունենում է հիսթերիկ բնույթի նուպաներ, ապրում է սխտուացիոն բնույթի բնիկված վիճակ և բավական է լրագրացիլ մի վերջին «կաթիլ», որպեսզի հորդում առաջանա նրա մտա: Այսպես, Լ-ն կացեի հարվածով սպանում է իր սկիսրոջը՝ Հ-ին: Գործի

¹ С. Л. Рубинштейн, Основы общей психологии, М., 1940, стр. 395.

² Տե՛ս «Судебная психиатрия», Госюриздат, 1949, стр. 323.

ընտելւածը և դատա-ճոգեբութեան փորձագիտութիւնը պարզվում է, որ է-ն երկար ժամանակ ապրել է սխտաացիոն բնույթի ընկճված վիճակ, որը եղել է լարվածութեան ու ծանր ապրումների հետեանը, իսկ սպանութեան օրն առաջացած վեճը սկսաբար և հարսի միջև հանդիսացել է այն վերջին «կա-թիլը», որը հորդում է առաջացրել հարսի մտտ ու նա ընկ-նելով պաթոլոգիական աֆեկտի մեջ, սպանութիւնը կատա-րել է առանց իրեն հաշիվ առաւ:

Պաթոլոգիական աֆեկտի մեջ ընկած մարդու հոգեկանը պատկերավոր կերպով է ներկայացրել ռուս հանրամասնող փաստաբան Ֆ. Ն. Պլեվակոն, որին ժամանակակիցները իրա-վացիորեն համարում էին «Տոգերանական պաշտպանութեան վարպետ»: Նա իր պաշտպանական ճառերից մեկում ասում է. «...Ուժեղ փոթորիկ լինում է ոչ միայն մարդուց զուր, այլ և նրա ներսում: Այդ փոթորիկը իրենից ներկայացնում է մի կերպ, որը անհանդուստացնում է մարդուն և ցնցում նրա ներքնաշխարհը: Ինչքան էլ մարդը լինի լրջամիտ, ինչքան էլ օր նա ցանկանա զսպել, հետո մնալ հայտնի շարքից, բայց եթէ նրան վիճակվում է կյանքում հանդիպել փոթորկանման կերբերի, ապա ուղիղ զնացող միտքն ու խիղճը, որը համա-դրժանկցում է նրան, որպէսզի շորտովի՛ լուսն են, եթէ միայն լրիվ սկզբել է փոթորիկը»:

Եվ քանի որ պաթոլոգիական աֆեկտի զնայքում ժամա-նակավորապէս բացառվում, մթնանվում է անձի գիտակ-ցութիւնը, ապա բացառվում է նաև նրա մեղաւանկութիւնը և այդ վիճակում հանցագործութիւն կատարած անձը ազատ-վում է քրեական պատասխանատւութիւնից: Հակառակ այն տուչնակ կրում է հանկարծակի բնույթ ու կապված է աք-տաբին առիթի հետ), մարդը չի կորցնում իրեն և այս կամ այն շարիով պահպանում է իրեն տիրապետելու ընդունակու-թիւնը: Հետևապէս, ֆիզիոլոգիական աֆեկտը քրեական պա-

տասխանատւութիւնը մեղմացնող, այլ ո՛չ թէ բացառող հանգամանք է:

Սակայն, ֆիզիոլոգիական աֆեկտի տակ կատարված գիտավորչալ սպանութեան բոլոր դեպքերում չէ որ համար-վում է նվազ վտանգավոր:

Սպանութիւնը այդպիսին դիտելու և այն ՀՍՍՀ Քրեական օրենսգրքի 101 հոդվածով որակելու համար անհրաժեշտ է. 1) որպէսզի սուրյեկտը հանցագործութեան կատարելու պա-հին գտնվի հոգեկան ուժեղ հուզված վիճակում. 2) որ սոցե-կան այդ վիճակն առաջանա հանկարծակի. 3) որպէսզի սպա-նութիւնը կատարված լինի հոգեկան հուզման ժամանակ, այլ ո՛չ թէ զրանից հետո. 4) որպէսզի հոգեկան խիստ հուզ-մունքը ծագի տուժողի կողմից գործադրված բռնութեան կամ ծանր վիրավորանքի գործադրման հետեանքով, ինչպէս և տուժողի այնպիսի անօրինական գործողութիւնների կատար-ման պատճառով, որոնք մեղադրյալի կամ նրա մերձավոր-ների համար առաջացրել կամ կարող էին առաջացնել ծանր հետեանքներ: Թվարկված հատկանիշները կազմում են մի ամբողջութիւն, լրացնում են մեկը մյուսին: Եթէ այդ առ-տահայտենք սխեմայի ձևով, կատարվի այսպիսի մի պատ-կեր. գործադրված բռնութիւն (ծանր վիրավորանք, կամ այլ անօրինական գործողութիւններ), հոգեկան հանկարծակի խիստ հուզում (աֆեկտ), սպանելու գիտավորութեան հան-կարծակի առաջացում, գիտավորութեան անհասպող իրակա-նցում:

Սրանցից յուրաքանչյուր առաջինը իրեն հաջորդողի ան-միջական պատճառն է, իսկ հաջորդողը՝ առաջինի հետեան-քը: Այնպէս որ դրանք կապված են միմյանց հետ և քաղա-կան է այդ շղթան խախտվի, սպանութիւնը կզազարի նվազ վտանգավոր լինելուց, այսինքն, այն կատարող սուրյեկտը քրեական պատասխանատւութեան կենթարկվի ծանրացուցիչ հանցամանքներում կատարված հասարակ կամ անզօրւյշ օպտեռութեան համար՝ նայած գործի հանգամանքներին, հան-ցագործութեան կատարման շարժախիթներին և այն նպա-տակներին, որոնք զրել էր իր առաջ մեղադրյալը:

³ «Судебные речи известных русских юристов», Сборник, М., 1937, стр. 521—522.

Սակայն ի՞նչ պետք է հասկանալ բռնություն, ծանր վիրավորանք կամ այլ անօրինական գործողություններ ասելով, որոնց գործադրումից առաջացած հանկարծակի խիստ հուզված վիճակը, սպանության դեպքում, դիտվում է պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Բռնությունը որևէ մեկի նկատմամբ՝ ֆիզիկական ու գործադրելի է, Դա մարդու այնպիսի գործողությունն է, որը օտանհարում է մեկ ուրիշի մարմնական անձնանմխելությունը՝ ձեռնու, հարվածելու, որևէ հզանակով ֆիզիկական ցավ պատճառելու միջոցով կամ դրսևորվում է ֆիզիկական ու գործադրելու սպանալիքի ձևով (հոգեբանական բռնություն):

Հանկարծակի հոգեկան խիստ հուզված վիճակում կատարված դիտավորյալ սպանության համար պատասխանատվություն սահմանելով, օրենքը նկատի ունի մարդու կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնությունը, որոնք իրենց բնույթով և կատարման եղանակներով անձի կենսական շահերի համար ռեալ սպանալիքներ չեն ստեղծում: Այս վերջինի դեպքում անձը ձեռք է բերում անհրաժեշտ պաշտպանության իրավունք և ազատվում է քրահան պատասխանատվությունից, իսկ եթե անցնում է գրա սահմաններից՝ պատասխանատվություն է կրում նվազ վտանգավոր սպանություն կատարելու համար: Բացի դրանից, սպանությունը չի կարող դիտվել նվազ վտանգավոր, էթն այն կատարողը գործել է հոգեկան խիստ հուզված վիճակում ո՛չ թե սուստոդի, այլ նրա փոխարեն՝ հանդես եկող մեկ ուրիշի բռնի գործողության հետևանքով:

⁴ Տե՛ս Н. Н. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 189.

⁵ Ա. Վ. Բորոդինը գտնում է, որ սպանությունը կարելի է համարել նվազ վտանգավոր նեւ այն դեպքերում, երբ մեղադրյալը գործել է հոգեկան խիստ հուզված վիճակում, որը առաջացել է սուստոդի փոխարեն հանդես եկող մեկ ուրիշի բռնի գործողության հետևանքով: (Տե՛ս С. В. Бородин, Ответственность за убийство в состоянии внезапно возникшего сильного душевного волнения, «Социалистическая законность», 1960, № 4, стр. 30—32.

Այս տեսակետը գրեթե առանց տարածայնության է ընդունվում սովետական բոլոր քրեագետների կողմից, սակայն երբ հարցը վերաբերում է մեղադրյալի հարազատների կամ մերձավորների նկատմամբ գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի հետևանքով առաջացած հոգեկան խիստ հուզվածքին, քրեագետներից ոմանք հակադրվում են իրար: Այսպես, Մ. Անիյանցը բնագրատում է ն. Զագորոդիկովին և «ԽՍՀՄ 1960 թ. Քր. օրենսգրքի» կոմենտատրիայի հեղինակներին այն բանի համար, որ նրանք, սուստոդի կողմից մեղադրյալի հարազատների նկատմամբ գործադրված բռնության և ծանր վիրավորանքի հետևանքով առաջացած հոգեկան խիստ հուզվածք. համարում են սպանությունը մեղմացնող հանգամանք⁶:

Մ. Անիյանցը այդ տեսակետը համարում է վտանգավոր հետեյալ նկատառումներով. սրբակոտիկալում մեղադրյալի կնոջ կամ աղջկա նկատմամբ կատարված բռնության հետևանքով կատարված սպանությունը կարող է որակվել նվազ վտանգավոր այն դեպքում, երբ նույն արարքը, որը առաջացել է մեկ ուրիշի կնոջ կամ աղջկա նկատմամբ կատարված բռնության հետևանքով, կարող է որակվել հասարակ կամ նույնիսկ որակյալ սպանություն: Մինչդեռ դիտավորյալ սպանության նվազ վտանգավորությունը բնորոշվում է նրանով, — շարունակում է Մ. Անիյանցը, — որ այն կատարվում է մեղադրյալի կողմից դիտակցությամբ մեղադրված վիճակում և երկրորդ՝ այդպիսի վիճակը առաջանում է սուստոդի կողմից գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի պատճառով՝ համարվում է այդ գործողությունների ռեակցիան⁷:

Այս տեսակետի հետ համաձայնվել չենք կարող: Ռիշտ է, մեղադրյալի մոտ հոգեկան խիստ հուզումը սուստոդի գործադրած բռնության կամ հասցրած ծանր վիրավորանքի

⁶ Տե՛ս М. К. Ананиян, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 143—145.

⁷ Там же, стр. 143.

հետևանք է, դա քրեագետների կողմից ընդունված և համընդհանուր ճանաչում գտած տեսակետ է⁸, սակայն այդ չի նշանակում, թե մեղադրյալի հարազատի նկատմամբ գործազրկված բնությունն աֆեկտ չի կարող առաջացնել կամ մեղադրյալի մոտ առաջացած աֆեկտը առժողի այդ բնության հետևանքը չէ:

Ըստ այդ տեսակետի, մարդն իր անձից բացի ուրիշին չպետք է ճանաչի: Ես կարող է հուզվել, ընկնել աֆեկտի մեջ միայն իր անձի նկատմամբ կատարվող բնության ղեկարմում, իսկ երբ այդպիսին տեղի է ունենում որևէ մեկի, իր երեսխալի, կենդ կամ այլ հարազատի նկատմամբ՝ հուզվելու «երազուհե» չունի, որովհետև «այդպես է սահմանված»: Բայց չէ որ մարդու հոգեկան աշխարհը, նրա բնավորության այս կամ այն հատկությունը որևէ կանոնադրույթ կամ որևէ մեկի տեսակետով չի ձևավորվում, այլ այն մարդու հոգեբանական հատկությունների, հասարակական կյանքում ձևեր բերածի ամբողջությունն է: Մենք համամիտ ենք և. Զազորոզիիկովի հետ, որը դիտավորյալ սպանությունը համարում է նվազ վտանգավոր նաև այն ղեկբերում, եթե առժողի կողմից անօրինական գործողությունները կատարվել են ոչ մեղադրյալի, այլ ուրիշ անձանց նկատմամբ և, երբ այդ գործողությունները մեղադրյալի մոտ առաջացրել են աֆեկտիվ վիճակ: Համանան տեսակետ ունեցել են Ա. Ժիժիլենկոն, Մ. Շարգո-

րոզսկին և ուրիշներ⁹: Այդպես է վարվում նաև դատական պրակտիկան աֆեկտիվ վիճակում կատարված սպանության վերաբերյալ գործերը քննելիս¹¹:

Տուժողի կողմից գործազրկված բնությունից բացի, մեղադրյալի մոտ աֆեկտ կարող է առաջացնել նաև ծանր վիրավորանքը: Սակայն թե ինչպիսի վիրավորանքն է համարվում ծանր, կոնկրետ ղեկբերում պետք է լուծվի դատարանի կողմից, միաժամանակ հաշվի առնելով մեղադրյալի սուբյեկտիվ հատկությունները, հոգեկան վիճակը և այն իրազրույթունը, որում հասցվել է վիրավորանքը:

Մարդու հոգեկանի վրա ազդող ծանր վիրավորանք կարելի է համարել նրա պատվի և արժանապատվության նսեմացումը, անձի ֆիզիկական պակասություններն ուրիշների մոտ անվայել ձևով ընդհանրելը, հայհոյանքը ծնողական սիրո նկատմամբ, ազդային զգացումները ծաղր ու ծանակի եկիրակելը, մարդուն խիստ կերպով վարկարկելու տեղեկություններ տարածելը և այլն: Գործող օրենսդրության համաձայն ամեն մի վիրավորանք չի կարող սպանության ղեկբերում աֆեկտի առաջացման պատճառ դառնալ և պատահական չէ, և որ օրենքը խոսում է հենց ծանր վիրավորանքի մասին, այդպես ամեն մեկը իրեն «սպուլ», «թուլամուլ» և այլ նման բաներ ասողին կարող է սպանել ու պատասխանատվություն կրել նվազ վտանգավոր հանցագործության համար: Ավելի բարդ է պետք է ասել ղեկու գիտական վիճեթի տեղիք տվող պարբերվ է համարվում անտանական դավաճանությունները ծանր վիրավորանք ղեկու կամ ղիխուու հարցը: Քրեագետներից ոմանք գտնում են, որ ամուսիններից մեկի դավաճա-

⁸ Տե՛ս Մ. Դ. Շարգորոզսկի, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 213; «Советское уголовное право, часть Особенная», МГУ, 1957, стр. 174; А. А. Пионтковский, В. Д. Меншиков, Курс советского уголовного права, Особенная часть, т. I, М., 1955, стр. 552; «Советское уголовное право, часть Особенная», ЛГУ, 1939, стр. 151; «Советское уголовное право, часть Особенная», МГУ, 1964, стр. 141; «Советское уголовное право, часть Особенная», М., 1962, стр. 135; Ш. С. Рашкская, Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1959, стр. 21; Н. Н. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 183 и др.

⁹ Տե՛ս Н. Н. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 184.

¹⁰ Տե՛ս А. А. Жижилемко, Преступления против личности, Харьков, 1927, стр. 26; М. Դ. Շարգորոզսկի, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 215; Ш. С. Рашкская, Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1956, стр. 28; «Уголовный кодекс РСФСР, 1960 г.», Комментарий, ЛГУ, 1962, стр. 215—216.

¹¹ «Судебная практика Верховного Суда СССР», 1956, № 5, стр. 6—7.

Հուժիղներ մյուսի նկատմամբ շլկտք է համարել ծանր վիրավորանք, իսկ խանդի հողի վրա կատարված սպանությունը՝ նվազ վտանգավոր սպանություն¹²։ Մյուսները, ընդհակառակը, ընդունում են և մեկը և մյուսը՝ նայած գործի հանգամանքներին¹³։ Այս մասին արդեն մենք խոսել ենք նախորդ գլխում, անհրաժեշտություն չկա նույնը կրկնելու, բայց նշենք, որ չի կարելի մտթմամտիկական ճշգրտություն սահմանել այնպիսի շտիպանքի, որով հնարավոր լինե՞ր նախօրոք որոշել, թե որսմարանական ինչպիսի օրենքով է լուծվելու այս կամ այն խնդիր և չի կարելի բնդունել, որ այդ մասին շարադրված կանոնները երբեք օրենք քաջատու՜թյամբ չեն կարող ծխավել։ Մենք ճիշտ ենք համարում այն հեղինակներին, որոնք որոշ ղեկավերում ամուսնունենրից մեկի դավաճանությունը մյուսի նկատմամբ համարում են ծանր վիրավորանք, հետևապես և այդ հողի վրա կատարվող որոշ սպանությունները՝ նվազ վտանգավոր։

Գիտավորչալ սպանության նվազ վտանգավորությունը կարող է պայմանավորված լինել և սուսողի այլ անօրինական գործողություններով, սակայն այնպիսի գործողություններով, որոնք ծանր հետևանքներ են առաջացրել կամ կարող էին առաջացնել մեղադրյալի կամ նրա մերձավորների համար։ Պետք է ենթադրել, որ օրենսդիրը նկատի ունի հանրօրեն մտանգավոր և մեղադրյալի կամ նրա հարազատների կենսական կարևոր շահերին սպառնացող գործողությունները։ Այդպիսիք կարող են լինել ինքնիրավության կոպիտ ղեկավերը, ցինիկ սպառնալիքները, ծնողների մոտ (կամ թեկուզ առանձին) նրանց երեխաներին անարգելք, հարազատի նկատմամբ վրաերթ կատարելը և այլն։

¹² Տե՛ս Н. И. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 140—142.

¹³ Տե՛ս М. К. Аниязц, Ответственность за преступления против жизни, М., 1964, стр. 141; М. Д. Шаргородский, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 178—179; ego же, Ответственность за преступления против личности, Л., 1953, стр. 21—22.

Տուժողի կողմից գործադրած բռնությունը կամ ծանր վիրավորանքը, ինչպես և սուսողի այլ անօրինական գործողությունները սպանությունը մեղմացնող հանգամանքներ են դասում, եթե մեղադրյալը դրանց հետևանքով աճեկտի մեջ է բնկնում հանկարծակի և սպանությունը կատարում անմիջապես, ուշ ոչ թե հետագայում։ Օրինակ, Բ-ն խնդույթի ժամանակ հարվածում է Ա-ին և ստալի վտրի հայհոյանքներ։ Ա-ն լուսվ է, սակայն մյուս օրը հանդիպելով Բ-ին և հինչելով նախորդ օրվա ղեպը, սպանում է նրան։ Տվյալ ղեպում Ա-ի սրաքը չի կարելի համարել որպես հանկարծակի խիստ հուզման վիճակում կատարված սպանություն։ Հողեկան խիստ հուզման ու սպանելու դիտավորությունը պետք է առաջանան հանկարծակի, չնայած այստեղ նույնպես առանձին քաջատու՜թյուններ կարող են լինել։ Օրինակ՝ Վ. Վլադիմիրովը նկարագրում է այսպիսի մի ղեպը. Չ-ն Հալբերնական մեծ պատերազմի ժամանակ եղել է ղեստապոզի գործակալ և մասնել սովետական քաղաքացիներից շատերին, որոնց թումում և Յու-ի հարազատներին։ Պատերազմից մի քանի տարի հետո Յու-ն պատահական հանդիպելով Չ-ին, հանկարծակի խիստ հուզվում և սպանում է նրան¹⁴։

Հանկարծակի հոգեկան խիստ հուզված վիճակում հնարվող է, որ մեղադրյալը սպանությունը կատարի դաժանությամբ, սուսողին հասցնի քաղամթիվ հարվածներ, սլլանաղակի նրա ղեմքը և այլն։ Պետք է արդյո՞ք այդպիսի ղեպերում մեղադրյալի ալարըք օրակել ՀՍՄՀ Քր. օր-ի 99 հողվածով, այն համարելով ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանություն, թե՛ ոչ։

ՀՍՄՀ Քր. օրենսդրքի 99 հողվածի 8-րդ կետի համաձայն սպանությունը համարվում է որակալ, եթե այն կատարվել է առանձնապես վտանգավոր սեղեղիվտրի, կամ նախկինում դիտավորչալ սպանություն կատարած անձի կողմից, քաջատու՜թյամբ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, կամ սուսողի կողմից գործադրված բռնության, կամ

¹⁴ «Советская юстиция», 1957, № 8, стр. 25.

ժանր վիրավորանքի ազդեցության տակ առաջացած հանկարծակի հոգեկան խիստ հուզված վիճակում կատարված ւպանություն: Հետևապես, օրենսդիրը չնայած սպանություն կրկնակիությունը համարել է ծանրացուցիչ հանգամանք, այնուամենայնիվ, աֆեկտով վիճակում կատարված այդպիսի սպանությունը չի համարում առանձնապես վտանգավոր հանցագործություն: Բայց այս չի նշանակում, թե այդպես պետք է վարվել թուր զեպքերում: Մեր կարծիքով, ջրեական օրենսգրքի 101 հոդվածով որակել՝ շահագործական նպատակներով, խուլիգանական զորումներով, այլ հանցագործությունը թաքցնելու կամ նրա կատարումը հեշտացնելու նպատակով, արյան վրեժից էլնելով, բռնարարությունը զուգորդված և այլ ստոր զորումներով կատարված սպանությունները՝ կլինեն կոպիտ սխալ: Որովհետև, թուր այդ զեպքերում սպանության շարժառիթը ոչ թե տուժողի բնույթյան, կամ ծանր վիրավորանքի, կամ այլ անօրինական գործողությունների պատճառով առաջացած հոգեկան խիստ հուզումն է, այլ շահ ստանալու ձգտումը, վրեժը կամ որևէ ստոր նպատակ:

Մեղմացնող հանգամանքների առկայությամբ կատարված սպանություններին են վերաբերում նույնպես անհրաժեշտ պաշտպանության սահմաններից անցնելու հետևանքով կատարված սպանությունները:

Հայտնի է, որ սովետական պետության շահերի, հանրային շահերի պաշտպանողի, մի այլ անհատի, կամ իրավունքների դեմ հանրայնորեն վտանգավոր բռնագործություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվելու ժամանակ կատարված գործողությունը հանցագործություն չի համարվում և կատարողը ջրեական պատասխանատվության չի ենթարկվում: Հարձակողին վնաս պատճառելը դադարում է օրինաչափ գործողություն լինելուց միայն այն զեպքում, եթե պաշտպանվողը անցնում է անհրաժեշտ պաշտպանության սահմանները, այսինքն, թույլ է տալիս անպիսի գործողություն, որն ակնհայտորեն չի համապատասխանում

սովետական բնույթին ու վտանգավորությանը: Ոտնձգության ու պաշտպանության այդպիսի անհամապատասխանության ուժով էլ պաշտպանվողի արարքը դառնում է հանցագործություն, բայց չնայած դրան, օրենքն այնուամենայնիվ այդ կատարողների համար սահմանում է ավելի մեղմ պատիժ: Օրինակ՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանությունը ՀՍՄԸ Քր. օր-ի 102 հոդվածի համաձայն պատժվում է ազատազրկմամբ մինչև երեք տարի ժամանակով, կամ ուղղիչ աշխատանքներով միևնույն ժամանակով: Ինչպես տեսնում ենք, առաջուցած ծանր հետևանքի (մահ) և զրա համար սահմանվող պատժի անհամապատասխանությունը ակնհայտ է: Մակայն դա բացատրում է նրանով, որ 1. անձը ստուժողին մահ է պատճառում կուրեկտիվի կամ անձնական շահերը հանցավոր սովետականից պաշտպանելու ժամանակ. 2. սպանությունը կատարելիս չի ղեկավարվում սովետական օրենքով ու բարոյականությանը դատապարտող զորումներով, այլ բնօրինակում, զրանով իսկ ձգտում է պաշտպանել այդ իրավունքի ու բարոյականության նորմաները հանցավոր խախտումներից և վերջապես 3. անձը ենթարկվելով հարձակման, գործում է հոգեպես հուզված վիճակում, որը նույնիսկ որոշակի պայմաններում անձին ջրեական պատասխանատվությունից ազատելու հիմք կարող է դառնալ:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում հնարավոր է միայն այն զեպքում, երբ անձը գտնվում է անհրաժեշտ պաշտպանության վիճակում: Չկա անհրաժեշտ պաշտպանություն, չկա և զրա սահմանների անցում: Հետևապես, հարձակումը կանխելու նպատակով կատարված սպանությունը չի կարող դիտվել որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանություն¹⁵: Բայց այս չի նշանակում, թե նշված սկզբունքը որևէ

¹⁵ Սովետական ջրեպետներից Ն. Բ. Ջաղորդիկովը այդ հարցի կապակցությամբ գրում է. Սովորաբար, նրբ խոսք է գնում որևէ բանի անցման մասին, ապա նկատ է առնվում, որ գործություն ունի այս կամ

բացառությունք չի կարող խախտվել: Ինչպես նշել ենք արդեն, հանցավոր հարձակման ենթարկվելով, սննդ արքում է սֆեկտիվ վիճակ, որը շարունակվում է որոշ ժամանակ, նույնիսկ հարձակումը վերջանալուց հետո: Այս տեսակետից եման վիճակում կատարված սպանությունը կարող է որակվել որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանություն¹⁶, պայմանով, եթե հար-

ախ շահմանը ենթարկող ինչ-որ պայման, իրազատություն, որակ, որը կ խախտվում է»: Տե՛ս *Н. И. Загородников*, Преступления против жизни..., М., 1961, стр. 197; *Համայնական կարծիքներ են հայտնել Մ. Կ. Անիանցը, Վ. Կիրիլենկոն և ուրիշները Տե՛ս В. Ф. Кираченко*, Превышение пределов необходимой обороны, «Советское государство и право», 1947, № 6, стр. 24; *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 164; *Н. И. Случкий*, Обязательства, исключющие уголовную ответственность, Л., 1956, стр. 72; *Г. Мендельсон, Ю. Ткачевский*, О пределах необходимой обороны, «Социалистическая законность», 1956, № 7, стр. 34; *Л. Шуберт*, Об общественной опасности преступного деяния, М., 1960, стр. 109—116. *Մեթոդիկների մի ուրիշ խումբ գտնում է, որ անժամանակ պաշտպանությունը դեռ է համարել անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում: Տե՛ս А. А. Герцензон*, Уголовное право, часть Общая, М., 1948, стр. 269; «Советское уголовное право, часть Общая», М., 1952, стр. 257; *М. Д. Шаргородский*, Преступления против жизни и здоровья, М., 1944, стр. 238; *З. А. Вышинская, В. Д. Меньшагин*, Необходимая оборона и практика ее применения в работе органов милиции, М., 1955, стр. 53; *Ш. С. Рашковская*, Преступления против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1956, стр. 29; «Советское уголовное право, часть Особенная», М., 1957, стр. 176; *А. Трайнин, В. Меньшагин, З. Вышинская*, Уголовный кодекс РСФСР, комментарий, М., 1944, стр. 18.

¹⁶ *Այլպիսի տեսակետ է հայտնվել նաև սովետական մի շարք քրեագետների կողմից*: «Советское уголовное право, часть Общая», Госюриздат, 1959, стр. 194—196; *А. А. Пионтковский, В. Д. Меньшагин*, Курс советского уголовного права, Особенная часть, т. I, М., 1955, стр. 554—556; «Уголовный кодекс РСФСР», научно-практический комментарий, т. I, Свердловск, 1961, стр. 58—59; «Советская юстиция», 1963, № 7, стр. 29; *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 164.

ձակման ավարտի և պաշտպանական գործողության միջև բնկած ժամանակը ակնհայտ է:

Պետք է նշել, որ որոշակի պայմաններում անժամանակ պաշտպանությունը չի բացառում նաև անհրաժեշտ պաշտպանության վիճակը, որում գտնվող սննդ ազատվում է բրնական պատասխանատվությունից: Եթե ինքնապաշտպանության ակտը անմիջապես հարցրել է ավարտված հարձակմանը, բայց գործի հանցանքներով պաշտպանվողի համար հարձակման վերջանալու մոմենտը հայտնի չէր, ապա այստեղ ոչ թե անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում է, ինչպես պնդում են որոշ հեղինակներ¹⁷, այլ անհրաժեշտ պաշտպանություն¹⁸:

Եստե՛սով անժամանակ պաշտպանության մասին, մենք համառոտակի տվեցինք միայն նրա մի տեսակի՝ ուղղացած պաշտպանության բնութագրերը, սակայն կարևոր նշանակություն ունի նաև նրա մյուս տեսակի՝ վաղամամ պաշտպանության հարցի ուսումնասիրումը, որը դեռևս վիճարկվում է բրնականների կողմից: Մի մասը այն կարծիքն է հայտնում, թե պաշտպանական գործողությունների կարելի է ձեռնարկել միայն, երբ հարձակումն արդեն սկսված է¹⁹, իսկ մյուսները, բնդհակառակը, անհրաժեշտ պաշտպանությունը համարում են թույլատրելի, եթե հարձակումը սկսելու սպանալիքն սպա է և ակնհայտ²⁰:

¹⁷ Տե՛ս «Советское уголовное право, часть Общая», М., 1959, стр. 194—196; *М. И. Якубович*, Усиление охраны личности и вопросы необходимой обороны, «Советское государство и право», 1957, № 2, стр. 101; *А. А. Пионтковский*, Учение о преступлении по советскому уголовному праву, М., 1961, стр. 447—448.

¹⁸ Տե՛ս «Судебная практика Верховного Суда СССР», 1956, № 6, стр. 7—8.

¹⁹ Տե՛ս *М. Д. Шаргородский*, Преступления против жизни и здоровья, М., 1948, стр. 238; «Советская юстиция», 1958, № 3, стр. 57.

²⁰ Տե՛ս *М. К. Аниязи*, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 159—160; *А. А. Пионтковский*, Учение о преступлении..., М., 1961, стр. 429, 432; *Ш. С. Рашковская*, Преступления

Այս վերջին տեսակետը առարկման կարիք չի զգում, մինչդեռ առաջինի համաձայն պաշտպանվողը պետք է սպասի այնքան, մինչև հարձակվողը իրականացնի իր մտադրությունը: Այսինքն պաշտպանվողը հակահարձակ կարող է հասցնել այն ժամանակ, երբ ինքն արգեն ենթարկվել է զրան, բայց առաջին հարվածը ստանալուց հետո, թե ինչպիսին կլինի պաշտպանվողի վիճակը, կամ հնարավորություն կունենա արդյո՞ք պաշտպանվելու՝ այս հարցն արգեն անտեսվում է:

Ս-ի գործով կայացված 1945 թ. մայիսի 4-ի որոշման մեջ, ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը նշել է, որ «անհրաժեշտ պաշտպանության վիճակ առաջանում է ոչ միայն այն դեպքում, երբ պաշտպանությունը իրականացվում է անմիջապես հարձակման պրոցեսում, այլև այն ժամանակ, երբ հարձակումը իրականացնելու սկիզբն այնքան ակնհայտ է ու անխուսափելի, որ նախազգուշական միջոցների անտեսումը անձին դնում է այնպիսի բացահայտ, անխուսափելի և անմիջական վտանգի մեջ, որից ստիպված նա ձեռնարկում է նման միջոցներ»²¹: Այս նույն միտքն է արտահայտվում նաև ՍՍՀՄ Գերագույն դատարանի պլենումի 1956 թ. հոկտեմբերի 23-ի որոշման մեջ, որտեղ սոված է պաշտպանվել կարելի է ոչ միայն հենց հարձակման պահին հարձակվողին վնաս պատճառելու միջոցով, «այլև այն դեպքերում, երբ առկա է հարձակման ռեալ վտանգը»²²:

Օրինքով պահպանվող օրյկիսների համար ռեալ վտանգ ասելով պետք է հասկանալ անձի այնպիսի գործողությունները, որոնք ակնհայտորեն հաստատում են անձի հասարա-

կայունըն վտանգավոր հարձակում գործելու մտադրություն: Ընդ որում պաշտպանվողի համար, մեր կարծիքով, որևէ նշանակություն չի կարող ունենալ հարձակողի գործողությունը մեջ մեղքի առկայությունը կամ բացակայությունը: Թաղական է, որ օրյկիսիօրեն դատարանը հանրայնորեն վտանգավոր գործողությունը պատմիցի տակ է դնում իրավունքով պահպանվող անձի շահերը:

Այս հարցում մենք շեք կարող համաձայնվել Մ. Անիսյանի այն տեսակետին, որի համաձայն, անհրաժեշտ պաշտպանության օրինաբանության հարցը քննելիս, պետք է հաշվի առնել նաև հանրայնորեն վտանգավոր գործողության սուբյեկտիվ կողմն ու այն կատարող սուբյեկտին: Չի կարելի.— ասում է Անիսյանը,— պաշտպանվողի համար հարձակվողի աննշտանակությունը համարել ոչինչ: Հանցագործությունը ոչ միայն օրյկիսիվ վտանգավոր, այլև անպայման մեղավոր գործողություն է²³: Որ հանցագործությունը, իբրք, օրյկիսիվ վտանգավոր է միաժամանակ մեղավոր գործողություն է՝ ոչ-ոք չի ժխտում, սակայն այդ չի նշանակում, թե պաշտպանվողից պետք է պահանջել, սպասեցող վտանգը կանխելու փոխարեն, դրա օրյկիսիվ և սուբյեկտիվ կողմեր պարզելուց հետո միայն ձեռնարկի պաշտպանական միջոցների: Ինչպիսի վիճակում էլ որ մարդ լինի, նույն պահին նրա մոտ երկու կարծիք չի կարող լինել: Երբ մարդուն հարվածում են, նրա մոտ նախ և առաջ ինքնապաշտպանության զգացումն է խստում, այդ պահին նա որևէ բանի մասին մտածելու ժամանակ չի ունենում: Կամ ի՞նչ նշանակություն կարող է ունենալ պաշտպանվողի համար հարձակվողի աննշտանակ վիճակը, եթե այդ պահին պաշտպանվողը որևէ այլ միջոցներ չունի իր կյանքը փրկելու հարձակումից, նույնիսկ այն դեպքում, երբ նա գիտեր հարձակվողի աննշտանակության մասին: Այսպիսով, մենք պաշտպանում ենք այն հեղինակների տեսակետը, որոնք օրյկիսիօրեն վտան-

против жизни, здоровья, свободы и достоинства личности, М., 1959, стр. 24; Н. С. Тишкевич, Защита от преступных посягательства, М., 1961, стр. 23—24; М. Т. Михайлов, Право граждан на необходимую оборону, М., 1962, стр. 9; «Судебная практика Верховного Суда СССР», 1956, № 6, стр. 7 и др.

²¹ «Судебная практика Верховного Суда СССР», 1945, вып. V, стр. 4.

²² «Судебная практика Верховного Суда СССР», 1956, № 6, стр. 4—8.

²³ Տե՛ս Մ. Կ. Անիսյան, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 157.

բաժնի հարձակման ժամանակ անհրաժեշտ պաշտպանությունը համարում են հնարավոր, անկախ նրանից՝ հարձակվողի գործողություններում մեղք կար, թե ոչ⁵⁰։

Ինչ վերաբերում է ակտիվ պաշտպանության սկզբունքին, ապա հնարավոր է, որ այս սկզբունքը, որոշակի զեպւթերում, շտարածվի անմեղսունակ կամ անշահափառ հարձակվողից պաշտպանվելու պահին կատարված սպանությունների նկատմամբ։ Այդպիսի զեպւթերում, ինչպես գրում է Ա. Ա. Պրոնտովսկին, եթե հնարավոր է խուսափել հարձակումից, առանց վնաս պատճառելու հարձակվողին, անհրաժեշտ պաշտպանության կիրառումը օրինաչափ համարվի չի կարելի⁵¹։ Սակայն զրանք առանձին զեպւթեր են միայն։ Ընդհանրապես անձը իրավունք ունի հարձակվողին վնաս չապցնելու միջոցով պաշտպանելու իր շահին, շնչած և կարող էր իր կյանքը փրկել միախուսառով Մեր հասարակությունը ոչ թե վախճանի ու մորթապաշտներ են պետք, այլ քաղաքացիներ, որոնք կարող են անձնագործարար պաշտպանել պետության, կոլեկտիվի, իր և ընկերների՝ օրենքով

պահպանվող շահերը⁵²։ Այդպիսի վիճակում գտնվող անձը, նույնիսկ հարձակվողին կյանքից զրկելու զեպւթում, ազատվում է քրեական պատասխանատվությունից։ Իսկ երբ ատում ենք, թե նա անցել է անհրաժեշտության սահմանները, ապա բացի պաշտպանության անժամանակությունից (որի մասին մենք արդեն խոսել ենք վերևում), նկատի ունենք նաև այն, որ անձը պաշտպանության իրականացնելիս դիմել է հարձակման բնույթին և ռեալ իրադրության բացարձակապես չհամապատասխանող միջոցներին։ Բայց այս չի նշանակում, թե անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցման ակադրության կամ բացառությունից անհրաժեշտ զտասարանները մեխանիկորեն կնւում են նշված սկզբունքից, առանց հաշվի առնելու պաշտպանվողին սպանանցող վտանգի ստորինսն ու բնույթը, հարձակվողի ուժն ու հնարավորությունները և այլն։

Այսպես, Կ-ն ճաշարանում սպանում է վիրավորել Ե-ին։ Վերջինս սկզբում փորձում է համոզել Կ-ին, որպեսզի նա

⁵⁰ Մեր կարծիքով Բ. Բ. Սյուցկին շփոթել է անհրաժեշտ պաշտպանության և ժայռանդ անհրաժեշտության տարբերությունը շեշտող այն ընդհանուր կանոնը, բայց որի ժայռանդ և անհրաժեշտության զեպւթում միջոց վնաս է պատճառվում մի կերպով անձի, մինչդեռ անհրաժեշտ պաշտպանության զեպւթում այդ վնասը հաղթվում է անհիշապես հարձակվողին։ Այս նշմարությունը առանց անարկության ընթացվում է սովետական բոլոր քրեականների կոդիքից, այդ թվում և Բ. Բ. Սյուցկու տեսակետը պաշտպանող Մ. Կ. Անդրյանի կողմից (ՏԵՄՄՄ. Մ. Կ. Անյան, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 158)։

Ա. Գերբերգերը գտնում է, որ անհրաժեշտ պաշտպանությունը օրինաչափ կարող է համարվել այն դեպքերում, եթե ավել պայմաններում պաշտպանվողը միակ հնարավոր միջոցն էր Համայնության կործանելու հայտնում ավելայ կարգի կատարողությունը և Ն. Պաշե-Օզերսկին (ՏԵՄՄՄ. Ա. Ա. Герцензон, Уголовное право, Общая часть, М., 1948, стр. 270; Н. Н. Паше-Озерский, Основные вопросы учения о необходимой обороне, автореферат, Докт. диссертация, 1954, стр. 13)։

Այդպիսի կարծիքների հետևելը կհանգեցնեք նրան, որ հանցագործի կողմից կատարված հարձակումից պաշտպանվող քաղաքացիներ կենթարկվեն անհիմն դատապարտման։ Բացի դրանից, քաղաքացիների իրավունքի նման սահմանափակումը, հարձակման նկատարվող անձին կրեք ժայռանդ անձանկի վիճակում։

⁵¹ ՏԵՄՄՄ. А. А. Пионтковский, Учение о преступлении по советскому уголовному праву, М., 1961, стр. 426—427; В. Ф. Кирichenko, Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве, М.—Л., 1948, стр. 29; М. Михайлов, Право граждан на необходимую оборону, М., 1962, стр. 9; «Советская юстиция», 1962, № 17, стр. 17; «Советское социалистическое уголовное право, часть Общая», М., 1950, стр. 188; М. Н. Якубович, Вопросы теории и практики необходимой обороны, М., 1961, стр. 92—93; Н. Н. Паше-Озерский, Необходимая оборона и крайняя необходимость по советскому уголовному праву, М., 1962, стр. 37—38.

⁵² Քվարկված հեղինակների տեսակետի դեմ է արտահայտվել Բ. Բ. Սյուցկին, նշելով, որ այդ կարող է ժայռանդան ընդլայնել անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը։ Մասնավորապես նա գտնում էր, որ հողկան հիմանքների հարձակման դեմ չի կարելի թույլատրել անհրաժեշտ պաշտպանություն։ Հաս նրա, եթե պաշտպանվողը զիստ հարձակվողի անմեղսունակության մասին և սպանանցող վտանգը կտեսնելու նպատակով սպանում է հարձակվողին, ապա պետք է նրա արարքը որակել ժայռանդ անհրաժեշտություն (ՏԵՄՄՄ. Н. Н. Слюцкий, Обстоятельства, исключющие уголовную ответственность, Л., 1956, стр. 40)։

վերջ տա հայհոյանքներին ու հանգիստ թողնել իրեն, բայց Կ-ն հանգստանալու փոխարեն հարվածում է Ե-ին, այնուհետև բռնկելով նրա կոկորդից սկսում է խզզել: Կ-ի ճանկերից ազատվելու Ե-ի փորձերը մնում են ապարդյուն: Ե-ն ասիլաված զրպանից հանում է գնանակը և հարվածում Կ-ի որովայնին, որից առաջացած վնասվածքի պատճառով Կ-ն մի քանի օր հետո մահանում է:

Գործով ձեռք բերված տվյալներով հիմնավորվում է, որ Կ-ն իր ֆիզիկական ուժով բացահայտորեն զերազանցում էր Ե-ին: Նման դեպքերում Ե-ն զործել է անհրաժեշտությունից զրկված և չի անցել զրա սահմանները, որովհետև նրան կյանքից զրկելու սպառնալիքը եղել է սեռա, իրական, իսկ վերջ ուժ չունենալով ազատվելու հարձակվողից, նրանից պաշտպանվել է իր ուժի և ունեցած հնարավորությունները չափով: Գատարանը իրավացիորեն Ե-ին ազատում է բրեական պատասխանատվությունից: Անհրաժեշտ պաշտպանության սահմանները անցումը բացատրվում է ոչ թե հարձակման և պաշտպանության միջոցների անհամաչափություններ, անհավասարություններ կամ հարձակման և պաշտպանության գործիքների ոչ միատեսակությամբ, այլ զրանց միջև եղած բացանկալ սահմանապատասխանությամբ, չնայած այս վերջինը ևս որոշակի դեպքերում կարող է ժխտվել առանձին բացատրություններով (տե՛ս բերված օրինակը):

Մի դեպքում՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցման կամ նրա օրինաչափության շարքը լուծելիս էական նշանակություն կարող է ունենալ արարքի կատարման տեղն ու ժամանակը (գիշեր է, դեպքը կատարվում է ամառի վայրում, պաշտպանվողը որևէ հնարավորություն չունի խուսափելու նրանից): Մի ուրիշ դեպքում՝ հարձակվողը ֆիզիկական ուժով է պաշտպանվողից, կամ չնայած պաշտպանվողն ավելի ուժեղ է և հնարավորություն ունի մեղմ միջոցներով կասեցնել հարձակումը՝ դիմում է ավելի խիստ միջոցներին: Մի այլ դեպքում՝ թեկուզ չլինի վնասի համար, հանցագործին կարող է պատճառել ավելի մեծ վնաս, ասանց խախտելու անհրաժեշտության սահմանները, կամ հակառա-

կը և այլն: Այսպիսով, բոլոր դեպքերի համար մի ընդհանուր շարահերձի սահմանումը, մեր կարծիքով, բազմաթիվ սխալների պատճառ կդառնար: Ամեն անգամ պաշտպանության և սուսձգության բնույթի անհամապատասխանության հարցը լուծելիս, որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցման կարևոր պայմանի, պետք է էլնել կոնկրետ դեպքերից, գործի հանգամանքներից և այն իրադրությունից, որում կատարվել է տվյալ դեպքը:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանության դեպքում, անձի մոտ այդպիսի սրտքը կատարելու գիտավորությունը առաջանում է հանկարծակի, այսինքն այն պայմանավորված է հարձակմամբ, հետևապես և այդ հանցագործության նախապատրաստման մասին խոսելն ևս անհնարություն է:

Անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանությունը գիտավորյալ սպանության տեսակներից մեկն է:

Հարձակվողին վնաս պատճառելու միջոցով անձը հետապնդում է պաշտպանվելու նպատակ և նա տվյալ նպատակը իրականացնելիս նախատեսում է հարձակվողի մահը, ցանկանում է այդ, կամ գիտակցաբար թույլ է տալիս նման հետևանքի առաջանալ: Քրեաբաններից ոմանք այն տեսակետն ունեն, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարվող սպանությունը կարող է տեղի ունենալ նաև անզգուշությամբ²⁷, ոմանք էլ կատարում են, թե անհրա-

²⁷ Տե՛ս Ա. Կ. Առաջնի, Ответственность за преступления против жизни..., М., 1964, стр. 172—173; В. Ф. Кириченко, Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве, М., 1948, стр. 76—78, 88—89; Н. Н. Паше-Озерский, Необходимая оборона в советском уголовном праве, М., 1962, стр. 108—112; Н. И. Слыцкий, Обстоятельства, исключющие уголовную ответственность, Л., 1956, стр. 81—83; «УК РСФСР комментарий», М., 1944, стр. 189; «Советское уголовное право, часть Общая», ЛГУ, 1960, стр. 347—348; «Советское уголовное право, часть Особенная», М., 1962, стр. 136; «Советское уголовное право, часть Особенная», МГУ, 1964, стр. 142.

ծեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարվող սպանությունը կարող է տեղի ունենալ միայն անզգուշությամբ²⁵։

Նման տեսակետների հետ համաձայնվել շնորհ կարող է պաշտպանվող անձը ցանկանում է կասեցնել հարձակումը և նա այդ անում է ոչ այլ կերպ, քան հարձակվողին վնաս պատճառելու միջոցով։ Ինչպես արդեն նշեցինք, պաշտպանվողը դիտակցում է հարձակվողի կյանքից զրկվելու հնարավորությունը, ցանկանում է այդ կամ դիտակցորեն թույլ է տալիս։

Այստեղ հարձակվողին վնաս պատճառելու ցանկությունն ու այդ վնասի առաջացման նկատմամբ եղած անզգուշությունը անհամատեղելի են։ Ընդհանուր չէ կարծել, թե հարձակվողին վնաս պատճառելու ցանկությամբ հանդերձ, պաշտպանվողը հույս է ունեցել կանխելու վնասի առաջացումը կամ պաշտպանվելու պահին անփութ է եղել հարձակվողի կյանքի նկատմամբ։

Բացի դրանից, ինչպես իրավագիտորեն նշում է Ն. Զագորոդինիկովը, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցմամբ կատարված սպանության ժամանակ մեղադրյալի մոտ բացակայում են ստոր շարժառիթները, նա գործում է հարձակվողի անտրինական գործողություններից առաջացած հանկարծակի զրգումով։ Նման դեպքերում, շնայած անձը թույլ է տալիս անհրաժեշտության սահմանների անցում, սակայն գործում է հտատարական օգտակար նպատակների հասնելու համար։ Բոլոր այդ հատկանիշները վերաբերում են այնպիսի գործողությունների, որոնք կարող են կատարվել միայն դիտավորյալ²⁶։

Անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանության համար բրեական պատասխանատվություն է սահմանվում ընդհանուր հիմունքներով 14 տարեկան հասակից։ Սակայն այդ հասակում գտնվող սուբյեկտների նկատմամբ պատժատեսակ և պատժաչափ սահմանելու, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ անչափահասների նկատմամբ դժվար է ճիշտ գնահատել հարձակման բնույթն ու ինտենսիվությունը և հարձակումը կասեցնելու համար ընտրված միջոցների բնույթը։

Այսպիսով, անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանությունը՝ պետության, կոլեկտիվի, իր կամ մի այլ անհատի՝ օրենքով պահպանվող շահերը, օրյակտիվ գծերով ճանաչված և վասեզավոր, իրական ստորնգործունեներից պաշտպանվելու պրոցեսում դրսևորվող դիտավորյալ գործողության հետևանք է, որ հանցավոր և հանցավոր անհեղ ռոնձգուրյան հետևանքում անհամապատասխանությամբ կամ պաշտպանության անժամանակությամբ։

²⁵ Տե՛ս Մ. И. Якубович, Вопросы теории и практики необходимой обороны, М., 1961, стр. 147—148; П. Михайлов и Л. Гельфанд, Социалистическая законность, 1962, № 4, стр. 92—93; «Советское государство и право», 1962, № 3, стр. 153.

²⁶ Տե՛ս Н. И. Загородников, Преступления против жизни..., М., 1961, стр. 204.

**ԱՆՁԻ ԳԵՄ ՈՒՂՂԱՍԵ ՂԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

1. ՂԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՂԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Ղանցազորության առաջացման պատճառներ սակելով հասկանում ենք այն բացասական գործոնների ամբողջությունը, որը հակահասարակական հայացքներ է առաջացնում, ստեղծելով հանցազորություն ձևելու հնարավորություն: Այդ գործոնները հավերժական չեն և հասարակության սոցիալական, նյութական և հոգևոր կյանքի փոփոխումն են: Պատճառով իրենք ևս անհրաժեշտ փոփոխության են ենթարկվում: Գրանք վերջին հաշվով պայմանավորվում են տերապեւտող արտադրական հարաբերություններով, ուստի հիշատականալու համար պետք է նշական ընդունել գոյություն ունեցող արտադրական հարաբերությունների բնույթը:

Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ մի հասարակարգից մյուսին անցնելու հետևանքով հին հասարակական հարաբերությունները, թեև արմատական փոփոխություններին են ենթարկվում, բայց չեն վերանում դրանց մնացուկները, և պատավոր պայմաններ գտնելով, երկար ժամանակ շարունակում են իրենց գոյությունը:

Ղանցազորության առաջացման պատճառների պրորբլեմը տարբեր տեսանկյուններից կարելի է ուսումնասիրել: Հաշվի առնելով Ղանցազորության առաջացման պատճառ-

ների գոյությունը, նշանակությունը, և կայունությունը, կարելի է դրանք երկու խմբի բաժանել: Առաջին խմբում են այն պատճառները, որոնք տվյալ հասարակարգի նյութական, սոցիալական, հոգևոր կյանքի անխտափելի հետևանք են, պայմանավորվում են նրանց բնույթով, տվյալ հասարակարգն ինքն է ձևում ու անուցանում, այսինքն՝ նրա արգասիքն են: Գրանք օրյեկտիվ, մարդկանց կամփք անկախ ստաճառներ են, որոնք իրենց գոյությունը շարունակում են, բայց դեռ այդ հասարակարգը մնում է, նրա հասարակական կեցությունը արմատական փոփոխության չի ենթարկվել: Այդ պատճառների վերացումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ տվյալ հասարակարգը կփոխարինվի իր հակադիր հասարակարգով, որտեղ սոցիալական, նյութական, հոգևոր կյանքը կբացանն հանցազորություն ձևող բացասական գործոնների գոյությունը և առաջացման հնարավորությունը: Միևն այդ հին հասարակարգի փոփոխությունը, հանցազորության առաջացման պատճառների մեջ որոշակի փոփոխությունները հնարավոր են, բայց վերացումը՝ անհնարին: Այդ պատճառները կարող են ավելի խորանալ, արմատավորվել, լայն տարածում ստանալ և դրսևորվել իրենց ամբողջ ուժով: Այդպիսի դեպքում հանցազորությունը լայն ծավալ է ստանում, մասսայական բնույթ կրում և տվյալ հասարակության անդամների համար դառնում ահավոր: Սակայն գոյություն ունեցող դրական գործոնների ներգործության հետևանքով այդ պատճառների գործողության ոլորտի սրջը սահմանափակումը թեև չի բացառվում, բայց քանի դեռ ուրիշ պատճառները գոյություն ունեն հանցազորությունների առաջացումն անխտափելի է: Այդ են ապացուցում հանցազորության առաջացման պատճառների հետազոտությունները: Այդպիսի պատճառները ձևուցող են անուն ստրկատիրական հասարակարգի ձևավորման պրոցեսում, երբ ծագում են արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործումը, տիրակալանման ու ենթարկման հարաբերությունները: Ֆեոդալա-

կան ու կապիտալիստական հասարակարգերում հանցագործություն ծնող այդ պատճառները որոշ փոփոխություններ կենթարկվելով, պահպանվում են:

Բուրժուական բոլոր երկրներում էլ հասարակության սոցիալական, նշուխական և Շոքեր կյանքի պայմաններն ընդհանուր են, դրա հետևանքով հանցագործության առաջացման գլխավոր պատճառները նույնն են, ուստի և հանցագործության առաջատու բուրժուական բոլոր պետություններում էլ անխուսափելի է: Արտադրության կապիտալիստական եղանակը խարսխում է արտադրության մեղեցիկներն ու գործիքներն մասնավոր սեփականություն, տնտեսության կապիտալիստական սխառմի և մարդու կողմից մարդու շահագործման, ինչպես նաև զրանց անբաժան ուղեկիցներ կազմող՝ պարբերաբար կրկնվող անտեսական ճգնաժամների, գործազուրկների մշտական բանակի, բնակչության սոցիալական բացահայտ անհավասարության և համանման այլ սկզբունքների վրա, որոնք կազմում են ոչ միայն հանցագործության առաջացման ու բուռն աճման պատճառները, այլև առաքման ներքին կյանքի գլխավոր տեղեկները: Սակայն այդ օրեկտիվ հանգամանքները բուրժուական տարբեր երկրներում ունեն տարածվածության և զարգացման ոչ միևնույն մակարդակը, ուստի և հանցագործության տարածվածությունն աստիճանաբ կապիտալիստական տարբեր երկրներում նույնը լինել չի կարող: Առանց այդ ընդհանուր և սրվելու երկրի առանձնահատուկ հանգամանքները հաշվի առնելու, հնարավոր չէ այդ երկրում հանցագործության աճման մասին ճիշտ պատկերացում կազմել: Պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն 500 միլիոնից ավելի բնակչություն ունեցող բուրժուական 19 պետություններում 1950—1960 թթ. խոշոր հանցագործություններն աճել են 65 տոկոսով: Ընդ որում հանցագործության ավելացումն այդ երկրներում չորս անգամ գերազանցում է բնակչության աճին: Բացի այդ, խիստ ցածր է հանցագործության բացման սովոր, որը 1930 թ. կազմել է ընդամենը 50, 1958 թ. ավել-

լի է նվազել, ինչնելով 48 տոկոսի: Ավստրիայում օպանությունների և մարմնական ծանր վնասվածքների քանակը 10 տարում ավելացել է 259 տոկոսով: Ավիլի սոսկալի է գրությունը Փորձուգալիայում, Իսպանիայում և մի շարք այլ երկրներում:

Հանցագործության այդպիսի տարածված լինելն ամենից սուսը բացատրվում է նրանով, որ մի կողմից արկատիստական և ֆեոդալական կարգերում հանցագործության ծրույնը տվող օրեկտիվ պատճառներն ավելի են խորացել և ծավալվել կապիտալի տիրապետության ժամանակաշրջանում, մյուս կողմից էլ՝ կապիտալիստական կարգերում ծրույնում են յանպիսի երևույթներ, որոնք նախորդ հասարակարգերին կամ հայտնի չէին, կամ սաղմուտյին վիճակում էին գտնվում: Տնտեսական պարբերաբար կրկնվող ճգնաժամներ, որոնք իրենց ամբողջ ուժով ու ծանրությամբ ընկնում են աշխատավորների ուսերին, արտադրության կապիտալիստական եղանակի արգասիքն են: Գործազուրկների բանակի զոլությունը թեև սկսվում է ֆեոդալիզմի շրջանում, սակայն մըշտական բանակի է վերածում կապիտալիզմի պայմաններում: Կապիտալիստական արտադրական-հասարակական հարսբերություններն անխուսափելիորեն ծնում են այնպիսի բացասական գործոններ, որոնք արգեն գոյություն ունեցողների հետ միասին հանցագործության առաջացման առատ հող նպաստավոր պայմաններ են ստեղծում: Դրանք ընդհանուր են կապիտալիստական բոլոր երկրների համար: Սակայն զս զրուես չի նշանակում, որ այդպիսիները բոլոր երկրներում կարող են միևնույն մակարդակի վրա գտնվել: Հանցագործությունը սոցիալական երևույթ է, դրա առաջացման պատճառները նույնպես սոցիալական են: Իրեկ սոցիալական երեվույթ, հանցագործության պատճառներն այս կամ այն երկրում որոշակի առանձնահատկություններ ունեն: Դրա համար սխիլիկ օրինակ կարող է ծառայել ԱՄՆ-ը, նա հանցագործությամբ ամենից վարակված երկիրն է և ոչ մի պետությունում

¹ «Советская Юстиция», 1965, 6, էջ 92 և:

Հանցագործությունն այնպես արագ չի աճում, ինչպես ԱՄՆ-ում: Այնտեղ յուրաքանչյուր 58 րոպեում մի սպանություն է կատարվում, ամեն 6 րոպեում՝ մի կողողուտ, յուրաքանչյուր 39 րոպեի ընթացքում մի որակյալ գողություն: Միայն Նյու-Յորքում 1961 թ. առաջին եռամսյակում կատարվել է 3344.3 խոշոր հանցագործություն կամ օրական միջին թվով տեղի է ունեցել 370 հանցավոր դեպք, այդ թվում՝ սպանություն 112, բռնարարություն 177, կողողուտ 1755, ավազակություն 2642, գողություն 23617²: ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջոնսոնը 1965 թ. սեպտեմբեր ամսին երկու անգամ հանդես է եկել հանցագործության հարցի վերաբերյալ: Նա ԱՄՆ-ում աճողոր է համարել հանցագործությունը: Հանցագործություններն ԱՄՆ-ում շարունակում են անել շտեյնվաժ շափերով ու ծավալով, գրոտաչիները գատարվել են, խանութպանները վախենալով հարձակումներից, զինվում են: Անօդատ է զրկանքների, ազիտության, նախապաշարունքների դեմ պայքարելը, եթև երկրի քաղաքների փողոցներում շարունակվում է հանցագործների տնօրը, իսկ քրեական ատրերը ճշնում են վերահսկողություն հաստատել քնակություն նկատմամբ: Այդ երկրի պետական գործիչներն անգամ հանցագործություններից սարսափաշար են լինում: Այդ մասին է վկայում Նույն Ջոնսոնի հուլիսի հանցագործության դեմ պայքարի համադրային հանձնաժողովի նիստում. «Հանցագործությունները թարախապալար են Ամերիկայի դեմքին... Դա սպառնալիք է մեր փողոցում: Դա վնասում է մեր քաղաքներին: Դա աշխատում է մեր երիտասարդությանը: Դա անլուր տառապանքների ու գո՛հեր պրոյուր է:

Ես ուզում եմ իմանալ, թե ժամկետից շուտ ազատված բոլոր հանցագործների մեկ երրորդն ինչո՞ւ է նորից հանցագործություն կատարում: Ես ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ մարդու մեկը խախտում է օրենքը, իսկ մինևույն պայմաններում սպրոզ ուրիշն այդ բանը չի անում: Ես ուզում եմ

իմանալ, թե ինչո՞ւ երիտասարդության շրջանում թմրամուլեկրի թիվը մեծանում է: Ես ուզում եմ իմանալ, թե ինչո՞ւ, շնայած այն կանխելու մեր ջանքերին, կազմակերպված ուժգործությունը շարունակում է աճել»³:

Պրեզիդենտ Ջոնսոնի այդ հույսովում լուրջ խոստովանություններ կան ԱՄՆ-ում հանցագործության փաստական վիճակի մասին: Այստեղ հատկապես ուշագործության արձանի են հետևյալ հանցամասերը. ա. հանցագործություններն այնքան են տարածվել, որ ԱՄՆ-ի զեմբը թարախապալարով է ծածկվել, բնակիչները սարսափաշար են լինում, քաղաքների համար աճողոր վտանգ է սեղծվել, բ. հանցագործությունները հիմնականում կազմակերպված բնույթ են կրում և կազմակերպվածությունը հանցագործության անման բնորոշ տեղեկներինց մեկն է դառնում, գ. հանցագործությունը հատկապես լինի տարածում է ստանում երիտասարդության շրջանում, որը նրան աշխատում է: Վերջապես, պրեզիդենտը ջանկանում է իմանալ դրանց պատճառները և առաջարկում է «հանցագործությունը վերացնելու արդյունավետ միջոցների ծրագրը մշակել»⁴:

Դա դուր խոստովանություն է ԱՄՆ-ում հանցագործության տարածվածության աստիճանի մասին: Ինչ վերաբերում է հանցագործության ու նրա պատճառների վերացման հարցին, ապա դա վեր է պրեզիդենտի ուժերից, քանի որ հանցագործության զլխավոր պատճառը կապիտալիստական հասարակարգն է: Այդ պատճառը վերացնելու համար պետք է ոչնչացնել կապիտալիզմը, այն հասարակարգը, որն իր իսկ գոյությունը անխուսափելիորեն հանցագործություն է ծնում, զրա առաջացման պայմաններ ստեղծում: Հանցագործությունը կապիտալիզմի օրոք այնպիսի երևույթ է, ինչպես ասեղ գործազուրկների մշտական բանակի գոյությունը, տնտեսական ձգնաձամների անխուսափելիությունը, քնակության բացարձակ մեծամասնությունը Նյութական անապահովությունը:

² «Советское государство и право», *ամսագիր*, 1963, № 3, էջ 70.

³ «Երեկոյան Նրեսն», 1965, № 226:

⁴ «Սովետական Հայաստան», 1965, № 214:

⁵ Նույն տեղում:

Դրանք օրչեկխիվ պատճառներ են և ներհատուկ կապիտալիզմին: Իհարկե այդ հանցագործությունների դեմ պայքարի հետոզ կազմակերպումը կարող է հանցագործության ամբ ընթացքի նկատմամբ որոշ ներգործություն ունենալ, այս կամ այն շահով դանդաղեցնել զրա աճը, սակայն կասեցնել էամ առավել ևս վերացնել, չի կարող, քանի որ այն ծնող պատճառները լիկվիդացում չեն, այդպիսիների վերացման օրչեկխիվ նախադրյալներ չեն ստեղծվել:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու հատկապես ԱՄՆ-ում է հանցագործության այգպիսի արագ ու բարձր աճ սեղի ունենում, ապա դա ամենից առաջ բացատրվում է նրանով, որ բուժօտկան բոլոր երկրներին հատուկ հանցագործության սոցիալական պատճառները ԱՄՆ-ում ավելի խոր ու լայն արմատներ են գցել, ծայրահեղության հասել և մեծ կենտունակություն ձևեր բերել: Այդ երկրում հարստության ցերսկչող մասը կենտրոնացվել է մի բուտն միլիոնատերերի ու միլիարդատերերի ձեռքում և ազգային եկամտի բաշխման մեջ նրանց բաժին ընկնող մասը տարեցտարի ավելանում է: Բուրժուական ոչ մի երկրում սոցիալական անհավասարությունն այնպիսի ծայրահեղություն չի հասել, ինչպես ԱՄՆ-ում: Մյուս կողմից էլ այդ բոլորի հետ միահյուսվում են այլ բնույթի բացասական հանգամանքներ, որոնք ավելի ուժեղ են դրսևորվում ԱՄՆ-ում: Ազգային ու առասպալական խտրականությունը, քաղաքական ռեակցիան և «Եկնի զատաստանը», թագավորող շահամուտությունն ու եսամուտությունը, բարոյական ու կենցաղային այլասերվածությունը, բայթայվածությունը, հանցագործության կազմակերպված բնույթն ու զրա դեմ հետևողական պայքարի բացակասությունը և համանման այլ բացասական գործոնները հանցագործության լայն տարածման նպաստավոր պայմաններ են ստեղծում: Վերջապես, այդ բոլորի պետք է ավելացնել նաև այն, որ հանցագործության առաջացման պատճառները ոչ միայն սոցիալական ու նյութական գործոններ են, այլև զաղափարական ու բարոյական բացասական հայացքները, վատ ընտե-

լություններն ու սովորությունները, արագիցիաներն ու հոգերանությունը և այլն, միահյուսվելով, ԱՄՆ-ում ստեղծել են հանցագործության բուտն աճի նպաստավոր պայմաններ: ԱՄՆ-ում տիրայիտող զաղափարախոտությունն ու բարոյական հայացքները հանցագործության առաջացման համայ հոգևոր պայմաններ են ստեղծում: Բուրժուական նեխված զաղափարախոտությունն ու բարոյական հայացքները մարդկանց, հատկապես երիտասարդության մեջ այնպիսի գծեր են զատախարակում, որոնք նրանց հեշտությունը հանցագործության ոլորտն են նետում: Քաղաքական աղիտացիան ու պրոպագանդան, քաղաքական ու զեղարվեստական զրակալությունը, կենտն ու թատրոնը, զարոցն ու ռադիոն, մի խոտբով զաղափարախոտության բոլոր ձևերն աշխատավոր մասաների շահերին արմատապես խորթ արատավոր զաղափարներ ու հայացքներ, բնավորություն ու վարքագիծ են արմատավորում: Դրա հետ միասին այլասերում են երիտասարդությանը, նրան հրում դեպի քայքայվածությունն ու կենցաղային այլասերվածությունը, շահամուտությունն ու եսամուտությունը, հարբեցողությունն ու ուրիշի հաշվին ապրելու պորտաբուժային կյանքը: Նման բացասական զատախարակությունը նրանցը շատերին զարծնում են զող կամ կողոպտիչ, զանկահայրող կամ մարդասպան: Այդ զաղափարախոտությունը ձգտում է արգարացնել տիրող անարդարությունը, Եկնի զատաստանը և ոտորիկանական կամայականությունները:

Ինչ է հետևում այդ բոլորից: Ամենից առաջ այն, որ կապիտալիստական հասարակարգում հանցագործության առաջացման զլխավոր պատճառը կապիտալիզմն է, ստանություն կապիտալիստական սխտեմը և նրա անբաժանելի ուղեկիցները՝ տնտեսական ու քաղաքական հիմքերը, զաղափարական վերնաշնեքը: Դրանք այնպիսի օրչեկխիվ պատճառներ են, որոնք կարող են վերացվել միմիայն կապիտալիզմը ոչնչացնելու հետևանքով: Նրա սոցիալական ու նյութական պատճառներին միահյուսվում են նաև հոգևոր պատճառները, որի հետևանքով հանցագործությունների անսահ-

մանտիակ աճման հնարավորություն է ստեղծվում: Անուհետև, այդ բոլորից երևում է, որ օրյկկալիվ պատճառները բուրժուական տարրեր պետություններում իրենց հիմքում լինելով միատիպ, սակայն միաժամանակ ունեն նաև որոշակի առանձնահատկություններ, զարգացման ու տարածման տարրեր աստիճաններ, որոնց հետևանքով էլ զանազան երկրներում հանցագործությունների տարածվածության և աճման տարրեր աստիճաններ կան: Այդ բացասական գործոնների զարգացումը ու տարածումը լայն ծավալ է ստացել ԱՄՆ-ում, ուստի և հանցագործությունների բուռն աճ հենց այդ երկրում է տեղի ունենում:

Իմպերիալիզմի շատագույները տեսնում են տիրող սոսկալի վիճակը և ցանկանում տեսականորեն այն մի կերպ արդարացնել, ցույց տալ, որ դա իրը թե կազմված է իմպերիալիզմի գոյության հետ, հատուկ չէ նրան այն, ինչ որ գոյություն ունի: Այդ նպատակով էլ հորինում են զանազան տեսություններ կամ զրանց վարիանտները, բայց փաստորեն վերականգնում են հին տեսությունները նոր տեսքով: Այստեղ առաջին հերթին լայն տարածում են ստանում իրավունքի բիրտլոգիական և սոցիոլոգիական ուղղությունները: Դա բացատրվում է նրանով, որ այդ տեսությունները հնարավորություն են տալիս սրղղել հանցագործության առաջացման իսկական պատճառները ոչ թե անտիկ մարդաբանական-բիրտլոգիական (լուրբոզոսյական) տեսությունն այժմ կոչվում է բիրտլոգիական-սոցիոլոգիական կամ սոցիոլոգիական⁶ սոցիոլոգիական-բիրտլոգիական, ապա զրանից ըստ էության ոչինչ չի փոխվում: Գրեմիտոլոգիան այժմ լայնորեն օգտագործում է բուրժուական դադափարախոսությունը⁷ օրինականության տարրական սկզբունքներն անգամ իմպերիալիզմի կոլոնից սուռահարելու հանգամանքն արդարացնելու համար⁸:

Այդ տեսությունը կապիտալիստական հասարակարգում խնամքով սրղղելով հանցագործությունների առաջացման իս-

կական պատճառները, հանցագործության պրոբլեմի լուծումը սոցիալական ոլորտից փոխադրվում է բիրտլոգիական ոլորտը, կապիտալիստական հասարակարգի օրգանական հիվանդությունները նեղագիտում է հանցագործի անձնավորության օրգանական առանձնահատկություններով: Լուրբոզոսյականությունը, նեղուժբորոզյականությունը և այդա Ֆրեյդիվը սեակցիոն նույն ուսմունքն է իր էվոլյուցիայի տարրեր աստիճաններում: Դա անպիսի մի ուսմունք է, որ ոչ միայն չի բացահայտում հանցագործության առաջացման իսկական պատճառները, այլև անմիջական ծանր հետևանք է ունենում քնակչության համար: Նրանք հանցագործությունը բացատրում են հանցագործի ոչ լիարժեք հոգեբանության բիրտլոգիական պաշմանավորվածությամբ: Նրանք այդպիսի մարդկանց անվանում են սահմանադրական խռովարարներ, անհաստապաշտներ, որոնք ամեն բանում անհաջողության են մատնվում և այդ բոլորի համար շրջապատից վրեժ են լուծում: Այստեղից էլ՝ նրանց մասսայական ոչնչացումը: Յաշխատական բանանները համարյա բոլորովին ոչնչացրին ժամանակավորապես օկուպացված տերիտորիայում գտնվող հոգեբուժարանների հիվանդներին: Նրանց օրինակին են հետևում ԱՄՆ-ի կառավարողները, որոնք մի քանի նահանգներում հարկադարար ստեղծիլոգիայի (ամլացման) են ինվարդկել 31038 մտավոր անբավարար զորացուցում ունեցող մարդկանց⁹: Նրանք ճգնում են ապացուցել, որ հանցագործությունը նախորդված է, ուստի շրջապատի ներգործությունը, պետությունը և հասարակությունը պատասխանատու չեն կատարվող հանցագործության համար: Հանցագործների ներքին մղումը և բանականության այլասերումը մըշտապես նրանց հրում են դեպի ամեն բանի ոչնչացումը, բուռնոր սարքելը, ցրիկիությունների և համանման այլ տարրերի կատարումը: Բոլոր այդ կարգի ոչ լիարժեք մարդիկ կատարում են ամեն տեսակ գործողություններ՝ իրենց մոտ ծագող ցանկություններն ու զորումներն անմիջապես

⁶ «Советское государство и право», 1963, № 2, стр. 115.

⁷ Նույն տեղում:

բավարարելու համար, հաշվի շտանելով այդ գործողությունների հնարավոր հետևանքները և այն էլ առանց պատասխանատվության ու մեղքի քաղման:

Անցյալ դարի 80-ական թվականներին ծնունդ առած սոցիոլոգիական ուղղությունը, որ այժմ շատ քիչ է տարբերվում անցյալից, ըստ էության նույնպես ձգտում է խնամքով սրտիկ հանցագործության առաջացման իսկական պատճառները և մեղքը լիովին զգել անձի անհատականության վրա: Անտրոպոլոգիական ուղղությունը վերին անհատը, բացի հանցագործության առաջացման բիոլոգիական պատճառներից նախատեսում է նաև սոցիալական բնույթի պատճառները, որոնց որոշիչը բիոլոգիական անհատականությունն է: Հենց այդ պատճառով էլ նրանք իրենց տեսությունն անվանում են՝ բիոլոգիական-սոցիոլոգիական: Սոցիոլոգիական ուղղությունն ընդունում է և բիոլոգիական պատճառները, բայց առաջնությունը տալիս է սոցիալական գործոններին և իրենց տեսությունն էլ կոչում են սոցիոլոգիական-բիոլոգիական: Սակայն այդ տեսությունը հանցագործության իսկական պատճառները տեսնում է ոչ թե կապիտալիստական հասարակարգի էության, բովանդակության մեջ, այլ անձի անհատականության, հակասոցիալական մղումներին և նրա հակաօրինական գործողությունների մեջ, որի նպատակն իր ցանկությունների անմիջական բավարարումն է՝ Այդ տեսության համաձայն անձը ձգտում է անմիջական բավարարության՝ հագուրդ տալ իր սեռական կրթբերին և ահա նա կատարում է բռնարարություն, սպանություն կամ նյութական բավարարության նպատակով գողություն է կատարում, սակայն իրեն հաշիվ չի տալիս այն բոլորի հետևանքի, պատասխանատվության և մեղքի սպաշխարանքի համար:

ԱՄՆ-ում պիիսոպատներին (Շոգելիան հիվանդներին) անվանում են սոցիոպատներ, բայց ըստ էության ոչինչ անփոխում: Այդ երկրի գիտնականները չեն կարող շտանել այն ահավոր դրությունը, որ ստեղծվել է հանցագործությունների

ծավալման հետևանքով և ահա ն. Տրսխն ու Ի. Բառլերը խոճապահար գոչում են. «սոցիոպատական հիվանդությունները սպանում են մեր կյանքին, մեր սեփականությանը և մեր հասարակական կառուցվածքին ամբողջապես»: Նրանք չեն համարձակվում բացահայտել հանցագործության առաջացման արմատական պատճառները, այսինքն՝ այն որ հանցագործության իսկական աղբյուրը կապիտալիզմն է, նրա բարդին ու վերնաշնները, հասարակական ու պետական կառուցվածքը հասարակական ամբողջ կեցութունը: Եվ նրանք փորձում են հանցագործության առաջացման պատճառներին սալ բնածին, բիոլոգիական ծագում և պատճառ որոնել հանցագործի անհատականության մեջ այն հաշիվով, որպեսզի հասարակարգն ու պետությունը հեռու մնան այդ բոլորից, հակասակ զեպրում գրանց վերացման անհրաժեշտությունը կծագեր անիստապիեիտրեն: Նման մակերեսային մոտեցումը չի կարող բացահայտել այդ հասարակարգում հանցագործությունների առաջացման իրական պատճառները: Եվ իբր, Լոմբրոզոն կանգնած էր հանցագործության բնածին լինելու տեսակետի վրա, այդ այժմ սոցիոլոգիան դրան ավելացնում է սոցիալական զբոյշների ներգործությունը միայն: Նրանք տեսնում են կապիտալիստական հասարակարգի շատ ու շատ արատներ, բայց այդ բոլորի պատճառը տրանում են ոչ թե այդ հասարակարգի բուն էության մեջ, այլ բիոլոգիական, կրամիկական և սոցիալական ներգործության ինովյուբսի մեջ, որոնք կարծես ծնունդ են ստանում և գործում անձի անհատականության ոլորտում:

* * *

Սովետական իրավարան-տեսաբանները ճիշտ բնազատելով բուրժուական բիոլոգիական, սոցիոլոգիական և մյուս սենսությունները, գիտակառույց են հիմնավորելով հանցագործության առաջացման իսկական պատճառները և մերկացնելով բուրժուական գիտնականների ոչ գիտական բացատրությունները, այդ բոլորի հետ միասին, միաժամանակ երկման բնկնում էին մյուս ծայրահեղության մեջ և ահաստատում

⁵ Նույն տեղում:

րակ բացառում էին անձի բիոլոգիական հատկությունները նշանակությունը: Վերջինս պետք է հասկանալ որպես բիոլոգիական պայմանավորված տեղեղնե՝ հանցագործություն կատարելու համար, որպես անձի բիոլոգիական հույզեր, կամային և հոգևոր ազդեցիկների կամպլեքս, որոնց շնորհիվ սոցիալական գործոնների միջնորդությամբ, համապատասխան իրազրության մեջ, պայմանավորվում է հանցագործության կատարումը: Այդ հատկություններից շատերը ձևավորվում են շրջապատի ազդեցությամբ, սակայն չի կարելի ժխտել նյարդային բարձր համակարգի մեջ բացասական երևույթները, ոչ ճիշտ գարգացումը, մարտն առանձին օրգանները անկանոն գործելը և այլն: Այդ ստորն է վկայում այն փաստը, որ գտնվելով միևնույն պայմաններում և բացասական ներգործության ոլորտում, մեկը հանցագործություն է կատարում այն դեպքում, երբ մյուսները նման արարք թույլ չեն տալիս: Պարզվում է, որ այստեղ անձնական հատկությունները որոշակի դեր են խաղում: Երբայպատող միջավայրում մարդկանց առջև դնում է երկրնարության (պտերնատիվ) հնարավորություն և նրանք այստեղ ընտրում են կամ օրինալի կամ ոչ օրինալի գործողությունը: Հենց այդտեղ է, որ անձի բիոլոգիական հատկությունները դեր են խաղում: Օրինակ, անձի այնպիսի հատկություններն, ինչպիսին են՝ դիտարգրությունը, անկայունությունը, անզսպվածությունը, կոսկամամտությունը և այլն, հեշտացնում են հանցավոր ակտերի կատարումը: Որոշակի իրազրության մեջ այդպիսի մարդիկ անձեռն ու օրենքին հակասող քեարություն են կատարում: Անձի պաթոլոգիական (ախտաբանական) առանձնահատկությունները այնպիսի գործոններ են, որոնք հեշտությամբ նպաստում են հանցագործության սոցիալական պատճառների կենսադորժմանը: Եվ իրոք, հատկապես սպանությունների, մարմնական վնասվածքների, բռնաբարության վերաբերյալ գործերի բնության ժամանակ հաճախ են հանդես գալիս նման հանգամանքներ, և նույն պայմաններում

մեկը կատարում է հանցագործություն, մյուսը՝ ոչ: Այսպես, Բ. Ն.-ն աշխատում էր շրջանում, իսկ ընտանիքը թողնել էր երևանում. բնակարանի բանալիներից մեկը նա պահում էր իր մոտ և երբեմն ուղ գիշերով գալիս էր տուն: Մի անգամ էլ ներս մտնելով տեսնում է, որ իր կին Ս.-ն քնած է Զ.-ի հետ: Նա երկտող է գրում և, ամուսնալուծության մասին հայտնելով, վերադառնում շրջան: Կինը առավույցան կարգում է երկտող և հասկանում, թե բանն ինչումն է: Նրանք ամուսնալուծվում են: Նա անպայման ճիշտ է վարվել և նրան այդ բանում օգնել է նրա համբերությունը, կամար: Իսկ Ս.-ն (Արտաշատի շրջան) տեսնելով իր կնոջը ուրիշ տղամարդու հետ, երկտողն էլ սպանում է: Նա ճիշտ է վարվել, իհարկե ոչ, բայց նրա դուրսագործությունը հնարավուրություն չի տվել Բ. Ն.-ի նման ճիշտ լուծել հարցը: Այստեղ օրգեն անձի կենսաբանական հատկությունները որոշակի դեր են կատարել: Մեր հանրապետության դատական միճակարակում տվյալները ցույց են տալիս, որ մարմնական վնասվածքներ պատճառելու և բռնաբարության դեպքերի բացարձակ մեծամասնությունը կատարել են մինչև 30 տարեկան երիտասարդներ, իսկ այդ գործում դեր է խաղացել նաև բիոլոգիական հանգամանքը, անկախ այն բանից, որ սեռության մեջ ժխտվում էր այդ Պետք է նշել, որ մեր օրենսդրությունը նույնպես անտղգակի կերպով հաշվի է առնել այդ հանգամանքը:

ՀՍՄՀ Քր. օր. 101 և 107 հոդվածները խոսում են հանկարծակի հուզմունքի հետեանքով սպանություն կատարելու կամ մարմնական վնասվածք պատճառելու մասին, որպիսին պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է:

Տուժողի կողմից կիրառված բռնության կամ անօրինական գործողության հետեանքով հուզվում է անձը և կատարում հանցագործություն: Եթե նա շուտով և կարողանալ իրեն դպպել, ապա կարող է ստժողին սահմանված կարգով պատասխանատվության ենթարկել տալ, բայց նա չի կարողացել իրեն դպպել և կատարել է տվյալ արարքը: Դա ոչ այլ ինչ է, ևթե ոչ անձի անհատականության հատկություն:

* «Советское государство и право», 1966, № 10, стр. 109.

Այժմ անցնենք Հանցագործության առաջացման պատճառների երկրորդ խմբի քննարկմանը: Եթե այդ պատճառների առաջին խումբը տվյալ Հասարակարգի ծնունդ է, նրա անխուսափելի արգասիքը և վերջին հաշվով պայմանավորվում է այդ Հասարակարգի արտադրական Հարաբերությունների բնույթով, ապա Հանցագործությունների առաջացման պատճառների երկրորդ խումբը տվյալ Հասարակարգի անխուսափելի ծնունդ չէ, չի բխում նրա սոցիալական, նյութական և հոգևոր կյանքի պայմաններից, որից խոսքով, սոցիալական արտադրական Հարաբերությունները Հանցագործություն ձևող պատճառներ չեն ստեղծում: Այստեղ խոսքը ոչ թե Հանցագործության գոյության օրյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների մասին է, այլ այն նյութական, սոցիալական և հոգևոր կյանքի, Հասարակական կեցության, որոնց իրենց բնույթով ծնում են բացասական այնպիսի գործոններ, որոնք միահյուսվելով Հանցագործություն են առաջացնում: Թեև այդպիսիները գտնվում են մի միասնության մեջ, բայց չեն նույնանում: Սոցիալիստական Հասարակարգն իր Հաւարակական ու պետական կառուցվածքով, տնտեսական ձևով ու սեփականության բնույթով, բարեխային ու վերնաշենքային ամբողջությամբ բացասելով մասնավոր սեփականությունը և մարդու կողմից մարդու շահագործման հարաբերությունների առաջացման հնարավորությունը, դրանով իսկ բացառում է նաև Հանցագործություն ձևող արտասական պայմանները, աղբյուրները:

Այս հարցում պարզություն մտցնելու նպատակով որոշ համեմատություն կատարենք կապիտալիստական և սոցիալիստական Հասարակարգերում Հանցագործությունների առաջացման պատճառների միջև: Կապիտալիստական Հասարակարգն իր էությունում անխուսափելիորեն ծնում է այնպիսի բացասական գործոններ, որոնք Հանցագործություն են ձևում: Գրանք կարող են լինել սոցիալական բնութիւն, նյութական կարգի և հոգևոր (գաղափարախոսություն, բարոյական Հայացքներ, սովորություններ, բնորոշություններ և այլն):

Այդ բացասական գործոնները Հասարակության բոլոր դասակարգերի ու խավերի վրա միատեսակ ներգործություն չեն կարող ունենալ: Մարդու կողմից մարդու շահագործման հարաբերությունը չի կարող միատեսակ ազդեցություն ունենալ շահագործողի և շահագործվողի վրա: Գործազուրկների մշտական բանակը և տնտեսական ճգնաժամներ իրենց ամբողջ ծանրությամբ բնկնում են աշխատավորության ուսերին: Մակայն կապիտալիստական ոչ միայն սոցիալական ու տնտեսական կեցությունը, այլև տիրապետող գաղափարախոսությունն ու բարոյական Հայացքները չեն կարող որոշակի ազդեցություն չունենալ Հասարակության բոլոր դասակարգերի ու խավերի, Հասարակության անդամների վրա: Այն կարող է տարբեր աստիճանի ներգործություն լինել, սակայն նրա ազդեցությունն անխուսափելի է: Մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը գոյություն ունի ոչ միայն մանր արտադրողի, այլև բանվորի մոտ, իսկ շահագործողի ամբողջ հոգեբանությունը և գաղափարները, բարոյական Հայացքներն օժտված են սեփականատիրական հոգեբանությամբ: Կադրտալը ծնում է շահամոլություն ու եսամոլություն, անդալվություն և ազահություն, իսկ այդպիսի գործոնները միահյուսվելով Հանցագործություն են առաջացնում: Այստեղ ստեղծվում է այնպիսի գոյություն՝ բացասական գործոններ ձևող Հասարակական կեցություն՝ բացասական գործոններ, և այդ գործոնների միահյուսումը՝ Հանցագործություն: Այդ բացասական գործոնները թեև ծնունդ են ստեղծում Հասարակական որոշակի կեցության պայմաններում, նրա արդյունքն են կազմում, բայց առաջանալուց հետո կարող է երկար ժամանակ շարունակել իր գոյությունը նույնիսկ այդպիսին ձևող կեցությունը վերացվելուց հետո էլ: Թրինակ, մասնավոր սեփականությունը վերացվելուց հետո, սեփականատիրական հոգեբանությունը երկար ժամանակ պահպանում է իր գոյությունը և զրևերվում նպաստավոր պայմանների առկայության դեպքում:

Սոցիալիզմը ոչնչացնում է հանցագործության հիմնական ազդուրեները՝ այն բացասական գործոնները, որոնք միահյուսվելով հանցագործություններ են առաջացնում: Սոցիալիզմը, որպես հասարակական անտեսական ֆորմացիա, հանցագործության առաջացման նյութական, սոցիալական, հոգևոր օբյեկտիվ պայմաններ չի ստեղծում: Ուստի հակահասարակական երևույթները, մանավանդ հանցագործությունների գոյությունը, սոցիալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսի օրինաչափ երևույթ չեն, նոր հասարակարգի զարգացման օբյեկտիվ ու անխուսափելի արդյուք չեն: Եվ իրոք, սոցիալիզմը խորսովում է հանրային սեփականության և մարդու կողմից մարդու շահագործումը բացառող, ինչպես և համանման այլ սկզբունքների վրա, խզկ դրանք չեն կարող բացասական գործոնների մասսայական առաջացման հնարավորություն ստեղծել: Սակայն սոցիալիզմը լիովին չի ազատագրվում այնպիսի պակասություններից ու արտաներից, որոնք հանցագործության առաջացման օբյեկտիվ պատճառներ են: Սոցիալիզմը ելնում է հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքները ճանաչելու և դրանցից հերչ օգտվելու, այդ օրենքների պահանջներին համապատասխան գիտատեխնիկական հիմնավորման օբյեկտիվ հնարավորությունները իրականացնելու սկզբունքից: Այդ օբյեկտիվ օրենքների պահանջների անստամբ կարող է նաև օբյեկտիվ պայմաններ ստեղծել հակահասարակական արարքների առաջացման համար:

2. ԱնՁի ԳեՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Հանցագործությունների վերացումը ՍՍՀՄ-ում օրակարգի հարց է դարձել և այժմ պայքարն ուղղված է այդ նպատակի իրականացմանը: Դա ամենից առաջ նշանակում է, որ սոցիալիստական կարգերը հանցագործությունն արմատախիլ անելու համար արգեն ստեղծել են նյութական և հոգևոր նա-

խաղրյալներ: Մարքսիզմ-լենինիզմն ուսուցանում է, որ այս կամ այն խնդիրն առաջ է քաշվում այն ժամանակ, երբ այն լուծելու համար նյութական նախադրյալներ են ստեղծվում: Դա ոչ թե մարդու սուբյեկտիվ ցանկության արդյունք է կամ գրեթեում, այլ հասարակության զարգացման օբյեկտիվ օրենքների, օրինաչափությունների, հասարակության զարգացման տվյալ աստիճանի իրավիճակի հետևանք: Եվ իրոք, միամտություն կլիներ, եթե վաղաժամ, առանց անհրաժեշտ նախադրյալների ստեղծման առաջ քաշվեր հանցագործության վերացման հարցը, օրենակ, կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում հանցագործությունն արմատախիլ անելու խնդիրն առաջարկելու դեպքում դա կլիներ միայն բարի ցանկություն:

Բացի դա, կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում տվյալ հարցը հասարակության իրական պայմաններին իրենք առաջ չէին քաշել, քանի որ այդ լուծելու օբյեկտիվ նախադրյալները տակավին չէին ստեղծվել: Հանցագործությունն փտանգամաձուլություն էր և դա զեմ վճռական պայքար ծավալելու անհրաժեշտությունը գիտակցում էին, բայց այն վերացնելու հարցն առաջ չէին քաշում: Դա բացատրվում էր նրանով, որ մարդիկ հանգանալով այն անժխտելի հանգամանքը, որ հանցագործությունը կարող է արմատախիլ արգել նյութական ու հոգևոր նախադրյալներ ստեղծելու դեպքում միայն, ուստի և վաղաժամ չէին կարող այդ հարցը բարձրացնել: Հայտնի էր, որ հանցագործությունը հավերժական չէ, այն ծնունդ է առել հասարակության զարգացման մի որոշ աստիճանում և կվերազդի նույն հասարակության զարգացման մի այլ աստիճանում: Սակայն հանցագործությունը ծնունդ է առել, առաջ է եկել այն ժամանակ, երբ դրա համար ստեղծվել են անհրաժեշտ օբյեկտիվ պայմաններ, ուստի և կարող է արմատախիլ արգել այն ժամանակ, երբ դրա համար նույնպես օբյեկտիվ նախադրյալներ կստեղծվեն:

Այստեղ ամենից առաջ պետք է նկատի ունենալ այն պատճառների վերացումը, որոնք հանցագործություն են ծնում, իսկ այդ պատճառները օբյեկտիվ և սուբյեկտիվ

ընույթի բացասական այնպիսի գործոններն են, որոնց հաղթահարումը կարող է տեղի ունենալ սոցիալիստական հասարակարգի զարգացման պրոցեսում միայն: Գա շատ տեսակի պրոցես է, որն սկիզբ է առնում սոցիալիստական կարգերի հաստատումից, վճռական որոշակի բայց և կատարում սոցիալիզմի հիմքերի ստեղծման շնորհիվ, բայց ծավալուն ու լրակատար կիրպով տեղի է ունենում հասուն սոցիալիզմի արք:

Այստեղից հետևում է, որ հենց հանցագործություն ծնող պատճառների վերացման համար պետք է ստեղծվեն օբյեկտիվ նախադրյալներ, նյութական և հոգևոր պայմաններ, Զեռանց որոնց դրանց հաղթահարումը անհնարին կլինի: Թե կարելի բարի ցանկություններ կամ սուրկտիվ ձգտումներն իրականության տեղ ընդունել և այդ ժբազայիք վրա կատուցել թաղաբականությունը:

Առհասարակ հանցագործություն ծնող պատճառների և դրանց հաղթահարման խնդիրը կարող է ճիշտ պատկերացվել միմիայն այն դեպքում, եթև տվյալ հարցը բնույթյան է առերվում ոչ թև վերացականորեն, այլ կոնկրետ հասարակարգի իրադրապայմաններում, նույնիսկ նույն հասարակարգի զարգացման դիապոթր փուլերում, աստիճաններում: Բանն այն է, որ հանցագործության, նրա առաջացման պատճառները, ինչպես և հասարակական այս կամ այն պրոբլեմը սերտորեն կապված են լինում հասարակական այլ պրոբլեմների, պայմանների, հարաբերությունների հետ, ուստի և այն չի կարելի առանձին քննության առնել:

Այսպես, Ֆեոդալական հասարակարգը հանցագործության առաջացման մի շարք օբյեկտիվ պատճառներ ունի, որոնք գործում էին իրենց ամբողջ ուժով, բայց Ֆեոդալիզմի բնիքերում կապիտալիստական հարաբերություններ ծագելու հիման վրա ծնունդ են առնում հանցագործության առաջացման նաև նոր պատճառներ: Կապիտալիզմի բարձրագույն ստադիայում՝ իմպերիալիզմի շրջանում հանցագործության առաջացման պատճառներն ավելի են խորանում, գործող պատճառներին միահյուսվում են նորերը և աճավոր դառնում

հասարակության համար: Նույնիսկ կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, սոցիալիզմի օրոք և սկզբում սոցիալիզմից կոմունիզմին անցման շրջանում տեղի են ունենում հանցագործություններ և դրանց առաջացման պատճառները բնույթի, բովանդակության և լույթյան արմատական փոփոխություններ:

Այս բոլորը ցույց են տալիս, որ անհրաժեշտ է տվյալ պրոբլեմը և որը կարող է ճիշտ հասկացվել միմիայն իր կոնկրետության մեջ, այսինքն՝ Ռոբշ երևույթների հետ ունեցած կապերի, փոխադարձ պայմանավորվածության և փոփոխությունների մեջ:

Հանցագործություն ծնող պատճառներն ամենից առաջ պետք է փնտրել հասարակական տվյալ կեցության մեջ, հասարակական հարաբերությունների բնագավառում դոյություն ունեցող իրադրության ներքին կյանքում, քանի որ տվյալ հասարակական հարաբերություններում եղած բացասական գործոնների միահյուսումն է, որ վերջին հաշվով հանցագործություն է ծնում, հանցագործության առաջացման տեղիք տալիս: Առանց երևույթի ներքին պատճառի առկայության, արտաքին պատճառը չի կարող վճռական դեր խաղալ, թեկուզ հենց այն պատճառով, որ դրանց գործողության համար պայմանները ստեղծվում են ներքին կյանքում, իրադրապայմաններում:

Ներքին պատճառը գլխավորն է, վճռականը, ուստի առանց այն հաշվի առնելու, միշտ էլ կարող են սխալվել, հանելու ոչ ճիշտ հետևություններ, որի հետևանքով էլ պայթարը հանցագործությունների դեմ կդառնա անարդյունավետ:

Փեոդալական կարգերում արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը և մարդու կողմից մարդու շահագործումը, որոնք դոյություն ունեն նաև սուրբկատիրական կարգերում, հանցագործության առաջացման հիմնական պատճառներն էին: Կային նաև այլ պատճառներ՝ թե՛ նյութական և թե՛ հոգևոր բնույթի, սակայն գլխավորը երկուսն էին:

Տեղալիզմի ընդերքում առաջացող կապիտալիստական հարաբերությունները չեն վերացնում հանցագործության աստիճանական գոյություն ունեցող պատճառները, այլ ընդհակառակը, արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը իր կատարելագործման ու զարգացման բարձրագույն աստիճանին են հասցնում, իսկ մարդու կողմից մարդու շահագործումն անվարը շափեր է ընդունում: Կապիտալիզմը ծայրահեղության է հասցնում եսամոլություններն ու շահամոլությունը, գոյանում ու ծավալվում են պարբերաբար կրկնվող անասնական ճգնաժամներ և գործադուրկների մշտական բանակը, սովյալ ու աղքատությունը, վարք և բարբերը, ընտելություններն ու արագիցիաները միահյուսվում են, դանդաղում հանցագործության ծավալման նյութական ու հոգեոր բաղա: Իմպերիալիզմի օրոք ավելի են խորանում հակասություններն և այդ իսկ պատճառով էլ հանցագործությունն այնպիսի շափեր է ընդունում, որ անվար է դառնում հասարակության համար:

Այստեղից կարելի է անել առաջին հետևությունն այն մտայն, որ հանցագործության վերացման համար հարկավոր է արմատախիլ անել այն պատճառները, որոնք հանցագործություն են ծնում, իսկ այդ պատճառները վերացնելու համար անհրաժեշտ է փոխել այն հասարակական կենցառությունը, որը բացասական գործոններ է ստեղծում: Մակայն շահագործողական հասարակարգում դա հավասարադր է այդ հասարակարգի վերացմանը, քանի որ առանց նման գործոնների, տվյալ հասարակարգը չի կարող շարունակել իր գոյությունը և իրքը, արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործումը և այլն բուրժուական կարգերի հիմքն են կազմում, առանց որոնց կապիտալիստական հասարակարգը չի կարող գոյություն ունենալ:

Չետևարար, կապիտալիզմի առկայության պայմաններում հանցագործության վերացումն անհնարին է, քանի որ այն այդ հասարակարգի արգասիքն է, իստում է նրա էությունից և անբաժանելի է նրանից: Այդ հասարակական կե-

ցություն, նշանակում է և հանցագործության վերացման, նարավորությունը ստեղծվում է սոցիալիստական հեղափոխության շնորհիվ, նրա միջոցով վերացնելով այդ հին կարգերը: Մակայն սոցիալիստական հեղափոխությունը արմատական հեղաշրջում կատարելով հասարակական կյանքի բոլոր բնագավառներում և հանցագործության վերացման նարավորություն ստեղծելով հանդերձ, պետականախիվ չի կարող միանգամից վերացնել հին աշխարհից եկող բոլոր բացասական գործոնները: Այդպիսինեպես հիմնականում կարող են վերացվել կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում, համառ ու տևական պայքարի պրոցեսում: Հեղափոխական նոր պետության ղեկընտնելով վերացվեց արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը և այդպիսինեպես դարձվեցին պետության, համաժողովրդական սեփականություն: Դա անպայման ծանր հարված էր նաև հանցագործությանն ու նրա առաջացման պատճառներին, քանի որ մասնավոր սեփականությունը դրա հիմնական աղբյուրներից մեկն է, նրա անասնական-նյութական հիմքը: Մակայն հեղափոխական ուժի ղեկընտնող չի կարող վերացվել մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, եսամոլությունն ու շահամոլությունը:

Արմատական փոփոխություններն էկոնոմիկայում հնարավորություն են տալիս բարձրացնել սովետական մարդկանց կոլտուրան, նրանց դաստիարակությունը, սակայն բուրժուական նեխված գաղափարներն ու բարոյական հասցանքները, խորթ սովորություններն ու ընտելությունները, և կենցաղավորության հակառակ ուժը մի անգամից հնարավոր չէ հաղթահարել: Կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում վերացվեց մարդու կողմից մարդու շահագործումն ու այն ստեղծելու հնարավորությունը, սակայն սովետական մարդու կոմունիստական բարոյականության վեճ օկոլոբաներով դաստիարակումը, անցյալի խորթ մնացուկներից լիտին պատագրված մարդու ձևավորումը կարող է տեղի ունենալ միմիայն տևական, համառ ու հետևողական պայքարի միջոցով: Այդ պայքար տեղի է ունենում ոչ միայն

կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում, սոցիալիզմի օրոք, այլև սոցիալիզմից կոմունիզմին անցման շրջանում:

Պետք է որոշակի տարբերություն դնել հանցագործության պատճառների զանազան տեսակների և դրանց ծնող գործոնների միջև: Սոցիալիզմը վերացրեց է արտագործության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը, հաստատեց է սոցիալիստական սեփականությունը անբաժան արքայապետություն, արմատախիլ է արվել մարդու կողմից մարդու շահագործումը և այն ծնող պատճառները, բացառվել է տնտեսական ճգնաժամների հնարավորությունը, վերջ է արվել գործազուրկների մշտական բանակի գոյությունը, լուծվել են համանման բազմաթիվ այլ հարցեր:

Դա ամենից առաջ նշանակում է, որ վերացվել են հանցագործություն առաջացնող գլխավոր պատճառները, այն հիմնական բացասական գործոնները, որոնց միահյուսումը անխուսափելիորեն հանցագործություն էր ծնում: Դրա հետևանքով արմատական փոփոխություններ են տեղի ունեցել հանցագործության առաջացման պատճառների բնագավառում: Այդպիսիներն այլևս հասարակարգի բնույթի հետ չեն կապված, նրա էությունից չեն բխում, նրա արգասիքը չեն: Սոցիալիզմը հանցագործության պատճառներ չի ծնում, չի ստեղծում, այնպիսի բացասական գործոններ չի առաջացնում, որոնց միահյուսումը հանցագործությունների առաջացման հնարավորություն են ստեղծում:

Այդ նշանակում է, որ սոցիալիզմի օրոք անհնարին է հանցագործության այնպիսի բուռն աճն ու ծավալումը, որը տեղի է ունենում կապիտալիզմի օրոք, թեև հանցագործության որոշ աշխուժացման կամ ժամանակավոր կայուն վիճակի հնարավորությունը չի բացառվում, բայց դրանց մասսայական ծավալման և աման հնարավորությունը բացառված է:

Սակայն այդ բոլորը զեռուս չի նշանակում, որ հանցագործության առաջացման օրինկով պատճառներ չկան, այդպիսիներն արդեն լիովին վերացված են: Եթե իրօք հան-

ցագործության առաջացման օրինկով պատճառներ չլինեին, ապա այն վաղուց վերացված կլինեին և այլևս գոյություն չէր ունենա, բայց այն կա, տեղի է ունենում: Մտեցվել է յուրահաստակ իրավիճակ՝ հանցագործության պատճառները վերացված են, բայց հանցագործությունները շարունակում են իրենց գոյությունը, իսկ առանց պատճառների հանցագործություն չի կարող ծնվել, առաջանալ: Առաջանում է հակասական դրություն՝ սոցիալիստական և կան և չկան:

Բանն այն է, որ սոցիալիզմը, նրա տնտեսական ու քաղաքական հիմքերը, հասարակական կեցությունը հանցագործություն ծնող բացասական գործոններ չեն ստեղծում: Թեև սոցիալիստական հասարակարգում գոյություն ունեն հանցագործությունների առաջացման օրինկով պատճառներ, բայց դրանք իրենց էությունը ու բովանդակությունը, բնությունը արամագործին հակապատկեր են այն պատճառներին, որոնք գործում են կապիտալիստական կարգերում: Հանցագործությունը ոչ թե սոցիալիզմի ծնունդն է, նրա պտուղը, արգասիքը, այլ հին աշխարհի մեղացուկներից լիովին ազատազրկված շիկեկու հետևանք: Եվ իրօք, վերջնենք մի օրինակ, արագրության միջոցներ և գործիքների մասնավոր սեփականությունը մարդու կողմից մարդու շահագործման անտեսական հիմքն է և հանցագործության առաջացման գլխավոր աղբյուրը: Այդ մասնավոր սեփականության վերացումը տեղի ունեցավ սոցիալիզմի հաղթանակի շնորհիվ: Դրանով իսկ վերացվել է նաև հանցագործության առաջացման հիմնական, վճռական աղբյուրը: Սակայն մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը ստեղծ է և հանցագործություն ծնելու հնարավորություն ստեղծում:

Այստեղից մի բանի հետևություններ կարելի է անել: ա) արտագործության միջոցների և գործիքների մասնավոր սեփականության վերացմամբ բացառվել է մարդու կողմից մարդու շահագործումը և այն ծնող պատճառները: Դրա հետ միասին լիկվիդացվել է հանցագործության առաջացման գլխավոր աղբյուրը, մասսայաբար առաջանալու հնարավորությունը, բ) թեև վերացվել է մասնավոր սեփականությունը,

բայց մասնավոր սեփականատիրական հոգեբանությունն արմատախիլ չի արված, որը նպաստավոր պայմաններում կարող է հանցագործության առաջացման հնարավորություն ստեղծել: Սակայն միատեսություն կիներ արտազորության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունն է մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, զրա մնացուկները միևնույն մակարդակի վրա զնել, նույն նշանակությունը տալ, ց) դրանից բխում է, որ մասնավոր սեփականության վերացման համար պահանջվում է սոցիալատական հեղափոխություն կատարել, քանի որ կապիտալիզմի պայմաններում մասնավոր սեփականություն վերացումն անհնարին է, հնարավոր չէ պահպանել կապիտալիստական կարգերն և միաժամանակ վերացնել նրա անտեսական հիմքը: Մինչդեռ մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը վերափոխվում է սոցիալիզմի նվաճումների քաղաքի հիման վրա, աշխատավորների նյութական ապահովության, կուլտուրական մակարդակի և գիտակցության աճի շնորհիվ: Հետևաբար, սոցիալիզմը օրյնկախիվորեն ստեղծում է նախադրյալներ հանցագործությունը և զրա առաջացման պատճառները արմատախիլ անելու համար: Իհարկե այդ նպատարյալները միանգամից չեն ստեղծվում և միանգամից էլ հնարավոր չէ հանցագործությունը և զրա առաջացման պատճառները վերացնել:

Այժմ համատող քննության առնենք այդ պատճառները: Սոցիալիստական հասարակարգում հանցագործությունն ծնող պատճառը անձի մոտ, նրա գիտակցության մեջ հակահասարակական հայացքի (դրվածքի, գիտավորության) առկայությունն էլ է ի՞նչ մարդու մոտ հակահասարակական հայացք չլինելը, արար արտաբերն ոչ մի գործոն չէր կարող հանցագործության առաջացման տեղիք տալ: Հանցագործությունը մարդու կամային արտահայտությունն է, նրան այն դրսից չի հրամցվում: Գա մի կողմից, մյուս կողմից էլ անձի մոտ հակահասարակական հայացքների առկայությունը զենև հանցագործության առաջացումը անխուսափելի չի դարձնում, ուրիշ խտրում, հանցագործության առաջացումը

նման անձի մոտ ճակատագրական անխուսափելիություն չէ, այլ նման հայացքը հանցագործության է վերաճում, երբ զրա համար նպատավոր պայմաններ են ստեղծվում:

Բունն այն է, որ հասարակական հարաբերություններում գոյություն ունեցող բացասական գործոններն են մարդու մոտ հասարակական հայացքներ առաջացնում, իսկ այդպիսիք էլ որոշակի իրադրապայմաններում հանցագործության են վերաճում: Որեմե այդպիսի է բնիմում՝ բացասական գործոններ, հակահասարակական հայացքներ, զրանց իրացումը՝ հանցագործություններ:

Այստեղ մենք նկատի ունենք նման հնարավորությունը, բայց պետք է հաշվի առնել, որ հասարակության թեկուզ նույն իրադրապայմաններում գանձվող ոչ բոլոր անդամների մոտ է նման հակահասարակական հայացք գոյանում, ինչպես և այն ոչ բոլորի մոտ է հանցագործության վերաճում: Այդ գործում թեև վճռական դերը խաղում է հասարակական կեցությունը, նրա ներգործությունը, բայց որոշակի նշանակություն ունեն նաև անձի անհատականությունը՝ բարոյական զատիարակվածության աստիճանը, կրթական վիճակը, կուլտուրական մակարդակը, անձնական կյանքի պայմանները:

Հետևաբար, հանցագործությունը օրյնկախիվ ու սուբյեկտիվ բացասական հանգամանքների միջոցառման հետևանք է: Օրյնկախիվ ու սուբյեկտիվ բնույթի գործոնների խաչաձևման հետևանքով է, որ անձի մոտ հակահասարակական հայացք է գոյանում, ընդ որում այն կարող է տեղի ունենալ և՛ տեղական ժամանակաշրջանում և՛ առավել կարճատև ժամանակամիջոցում: Այդ կախված է ինչպես հասարակական կեցության ներգործության աստիճանից, այնպես էլ սովյալ անձի անհատականությունից: Սակայն միայն բացասական գործոնները չեն, որ ներգործում են անձի վրա, այլ առաջին հերթին զրական գործոնները, քանի որ սոցիալիստական հասարակական կեցություն մեջ տիրապետում են զրական գործոնները, բայց դա չի բացառում նաև բացասական գործոնների ներգործության հնարավորությունը: Այդպիսի իրու-

գրութեան պայմաններում հասարակական գրական գործունեւորի ներգործութեան աստիճանը որոշակի դեր է խաղում, բնոյ որում այն կարող է հակահասարակական հայացքներին հանցագործութեան վերահամոհ հնարավորութեանը բացառել: Այդ հանգամանքը կախված է այն բանից, թէ հասարակական գրական գործունեւոր անձի վրա որքան արդշունակաւ են ներգործում և գրանելով իսկ նրա մոտ գրացած հակահասարակական հայացքները հաղթահարում:

Վերջիններք երկու օրինակ մեր Հասարակական կյանքից: Գ. Ա.-ն թէ՛ ընտանիքում և թէ՛ դպրոցում վատ դաստիարակութեան էր ստացել, նա փոքր հասակից միտում էր ոչ միայն ծխախոտ, այլև հաշիշ, գրադվում էր հարբեցողութեամբ, մանր գոշութեաններ անում, ինչպես ինքն է ստում՝ ծխախոտի և խմիչքի փող ձեռք բերելու համար: Բարոյական ձևավորման պրոցեսում եղած բացասական գործունեւորի ներգործութեամբ նրա մոտ հակահասարակական հայացքներ էին գոյացել, որ կարող էր վերանվել հանցագործութեան և կարող էր հաղթահարվել: Այդ կախված էր այն բանից, թէ Գ. Ա.-ն ինչպիսի պայմաններում կլինի և ինչպիսի շրջապատ կունենա: Այնպես է դասավորվում, որ նա աշխատանքի է անցնում Ս. Մ.-ի մոտ, որտեղ աշխատանքի պայմանները, առողջ միջավայրը, պետական ու աշխատանքային բարձր կարգապահութեանը, հակահասարակական հայացքներին նկատմամբ ստեղծված ասելովության միջուրտը ներգործում են նրա վրա: Կոնկրետ վրան իր անմիջական դաստիարակութեան տակ է վերցնում և նա իրոք դառնում է օրինակելի մարդագծի տեր, վերափոխվում է և ինքն է սկսում առել վատ արարքները: Աշխատանքային կարգապահութեան, կոնկրետի ներգործում մեծ ուժի շնորհիվ Ա.-ն դառնում է գրական հասականիչների տեր անձնավորութեան:

Վ. Շ.-ի կյանքը այդպես չի դասավորվում: Ընտանիքում, դպրոցում, բնակարանական շրջապատում որոշակի գրանորվում է նրա հակահասարակական հայացքը: Նա սկսում է բնկերութեան անել Ռ. Բ.-ի հետ, որը պրոտարայծ կյանք էր վարում: Թրն դալիս փողոցներում, հարբեցողութեամբ գրադվում սե-

տորաններում, թույլ էր տալիս խուլիգանական արարքներ և աստիճանաբար հանցագործութեան ճահիճը գրոզվում: Նա իր նման հանցակից մարդու բնկերն էր, կատարում է հանցագործություն և բանտ նեւովում:

Այստեղից հետևում է, թէ անձի կոմունիստական դաստիարակութեանը, բարոյական հաջող ձևավորումը, կուլտուրական մակարդակի բարձրացումը, կյանքի անձնական պայմաններին վճարական լավացումը ինչպիսի բացառիկ կարևորութեան ունեն:

Անձի բարոյական ձևավորումը տեւական ու բարդ պրոցես է: Այն սկսվում է մանկութեանից և տևում մինչև նրա կյանքի վերջը: Թեև այդ ձևավորումը հիմնականում տեղի է ունենում պատանեկութեան և երիտասարդութեան շրջանում, բայց այն չի սպառվում և մարդ միշտ էլ գտնվում է այդ պրոցեսում: Սխալ է կարծել, թէ հասակավոր մարդը, ունեւելով որոշակի հայացքներ, բնավորութեան գծեր, հոգեբանութեան, կենցաղավարութեան ու ապրելակերպ, այս կամ այն շափով իր վրա չի կրում միջավայրի գրական ու բացասական ազդեցություններ: Երբ նրա գիտակցութեան մեջ հաղթահարվում են անցյալի մնացուկներ և արմատավորվում կոմունիստական բարոյականութեան վեհ գաղափարները, սպա գրանելով իսկ նրա հայացքների մեջ փոփոխություն է տեղի ունենում:

Սակայն ամեն ինչ կախված է այն բանից, թէ անձի կյանքն ինչպես է ընթանում. նա ինչպիսի դաստիարակութեան է ստանում ընտանիքում, հարեանների միջավայրում, դպրոցում, աշխատանքում և հասարակական այլ շրջապատում: Մարդը մեկուսացված չէ հասարակութեանից և իր վրա է կրում նրա ազդեցությունը, միտմամանակ ինքն էլ ներգործելով շրջապատի վրա:

Հայտնի է, որ հասարակական կեցութեան բնագավառում տեղի ունեցող արմատական փոփոխութեանները որոշակի ազդեցություն են ունենում նաև անձի, նրա վարք ու բարքի, կենցաղավարութեան և ապրելակերպի վրա: Սակայն այդ

ներգործությունը հասարակության բոլոր անդամների նկատմամբ միատեսակ ու միաշափ չի լինում: Այդ գործում նշանակություն ունեն անձի դասակարգային ու սոցիալական ստեղծանելիությունը, կատարված փոփոխությունների հետ ունեցած առնչության աստիճանը, նրա հետևների անմիջական ներգործությունը տվյալ մարդու վրա:

Այսպես, 1918—1921 թթ. քաղաքացիական կռիվների ընթացքում, երբ կյանքի ու մահվան գոտեմարտ էր տեղի ունենում, ժողովրդական տեսնությունը զանվում էր փյուռման պայմաններում, սովին ու աղքատությունը շաննված շափերի էին հասել, այդ իրադրապայմաններում բայրաջվող ու կազմալուծվող տարրերն իրենց դրսևորում էին կողոպտաների, սպեկուլյացիայի, կաշտատկերության, մարգասպանության, խուլիգանության և այլ հանցագործությունների ձևով: Երբ գլուզը ենթարկվում էր սոցիալիստական վերափոխման, համաարած կոլեկտիվացման հիման վրա վերացվում էր կուլակությունը սրպես շահագործողների վերջին դասակարգ, ապա այդ բայրաջվող ու կազմալուծվող տարրերն սկսեցին իրենց դրսևորել հանցագործությունների ձևով՝ կատարում էին տեւորիստական ակտեր, սպանում էին ակտիվիստներին, դողանում, աչրում, ոչնչացնում կոլեկտիվ տեսնությունների ունեցվածքը, դառնում էին սպեկուլյանտներ ու խուլիգաններ, կատարում դանդաղ տիպի այլ հանցագործություններ: Նրանք մերթ հանցում էին գալիս իրեն վնասարարներ ու զիվկրատաններ, մերթ սրպես գողեր ու կրողապիշներ, մերթ իբրև մարդասպաններ, կեղծարարներ և խարդախներ:

1941—1945 թվականներին Հայրենական մեծ պատերազմի մասնակաշրջանում անխուսափելի էին նաև ներքին կյանքին տանձնահատուկ բացասական երևույթները՝ անտեղական-նյութական ծանր դրությունը, երեխաների խնամքի ու դաստիարակության աշխատանքների հայտնի թուլացումը և համանման այլ հանգամանքներ չէին կարող իրենց որոշակի բացասական ներգործությունը չունենալ հասարակության անկաշտն տարրերի վրա և նրանց մտտ հա-

կահասարակական հայացքներ շառացնել: Առհասարակ այդ պայմանները, հատկապես պատանիների և երիտասարդության բարյալակն ձևավորման ընթացքում բացասական ներգործություն են ունենում: Պատերազմի տարիներին ժողովրդական տեսնությունը նյութական վիթխարի վնասներ կրեց, մեծ թվով արդյունաբերական ու գյուղատնտեսական ձևնարկություններ ոչնչացվեցին, շատերն էլ ծանր վնասներ կրեցին, լուրջ կերպով տուժեցին արտադրողական ուժերը, ամեն ինչ ներքուլում էր հանուն հաղթանակի: Թե արդյունաբերությունը, թե գյուղատնտեսությունը, թե արհեստ-բայրչնաստությունը, մեծ տրանսպորտ մեծ շափերի հանող վնասներ կրեցին: Այդ իրադրությունը չէր կարող բացասաբար շանդրադառնալ նաև մարդկանց նյութական վիճակի վրա: Նույնիսկ աշխատավորների բացարձակ մեծամասնությունը զանազան անվան տակ ազգամահկատին էր նվիրաբերվում: Հայրերն ու եղբայրները մեկնեցին ազգամահկատ, իսկ մայրերն ու քույրերը, նույնիսկ գեահահաները նրանց փոխարեն գնացին արտադրություն՝ իրենց ուսերին կրելով ամբողջ ծանրությունը: Մայրն ու երեխան, պապն ու թոռը հերոսաբար աշխատում էին արտադրության մեջ, համախ երկու կամ երեք ենթափոխությունը:

Այդպիսի իրադրապայմաններում անխուսափելի էր երեխաների խնամքի և դաստիարակության աշխատանքների թուլացումը: Թագմածակատան ու թիկունքը մի ամբողջությունը դրածած, պաշարում էին հաղթանակի համար, բայց դրա հետ միասին անխուսափելի էին նաև բացասական հետեվաները՝ հատկապես երեխաների խնամքի ու դաստիարակության բնագավառում: Պատերազմի տարիներին սովետական քաղաքացիների շփումը արտաքին աշխարհի հետ բազմաթիվ անգամ ավելացել էր, որը չէր կարող իր բացասական ներգործությունը չունենալ սովետական մարդկանց, մասնավորապես երեխաների վրա:

Նման պայմանները չէին կարող բացասաբար շանդրադառնալ նաև մարդկանց ֆիզիկական ու հոգևոր վիճակի վրա:

Երբ համեմատում ենք քրեական գործերի քանակը 1940 և 1946 թվականների տվյալներով, ապա պարզվում է, որ մի շարք հանցագործությունների, մասնավորապես քաղաքացիների անձնական գույքի գողությունների, սպիակույացիայի, կաշտակերությունների, մարդասպանության, զանա-կահարությունների, խարդախությունների և մի քանի այլ հանցա-գործությունների վերաբերյալ հանցագույները համարյա կրկնապատկվել էին, իսկ անշահահասների կողմից կատար-վող հանցագործությունները եռապատկվելի:

Գա պատերազմի անխուսափելի հետևանքներից մեկն էլ Այն ոչ միայն ծանր հարված է հասցնում արտադրողական ուժերի զարգացմանը, ժողովրդական անտեսության վերել-քին, մարդկանց նյութական վիճակին, այլև մտաբու հոգեկո-ւշխարհին, նրանց հայացքներին, հոգեբանությանը, մտա-ձևակերպին, վարք ու բարքին, կենցաղավարությանը, կրթ-թվական ու կուլտուրական մակարդակին: Պատերազմը միշտ էլ աշխուժացրել է հանցագործությունները՝ ստեղծելով նը-պատասալը պայմաններ: Պատերազմական իրադրությունը հայտնի չափով ներգործում է մարդու նյարդային սխտանի վրա, թուլացնում արելակման կենտրոնի գործունեությունը (ֆունկցիան), մարդը հաճախ է բեկնում ջղաձիգ վիճակի մեջ, անընթաց շարժառիթներով ծանր հանցագործություն կատար-ում, քանի որ գյուրաբարդ է գտնվում, չի կարողանում իրեն տիրապետել: Չափազանց գյուրաբարդ են լինում պա-տերազմի անմիջական մասնակիցները և հատկապես հաշ-մանգումները: Նրանցից ոմանք շկարզանալով իրենց զայել, վիրավորում են մարդկանց, արատավորում նրանց պա-տիվն ու արժանապատիվությունը: Հաճախ ամուսինները մի քանի տարի գտնվելով միմյանցից հեռու և երբեմն կնոջ բա-րոյական վարքագծի մասին շատագուժ տեղեկություններ չենլով, ամուսինը թույլ է տալիս աններկի արարքներ, եթե նրանք չեն բաժանվում, ապա նրա մոտ մտնում է այդ կաս-կածը, որը հաճախ անպատվության, ծեծի, վիրավորանքի, անգամ ակնհայտ զրպարտության տեղիք է տալիս: Նա գտն-վում է գյուրահավաստ և բալվական է վատ հարևանի մի ակ-

նարկ, որպեսզի նրա մոտ գույացած դիտավորությունը հան-ցագործության վերածի:

Հայրենական պատերազմն ավարտվելուց հետո ոչ քիչ թվով հանցագործություններ են կատարվել: Այդ երևույթն ամենից շատ նկատվեց Արտաշատի շրջանում, որտեղ մի շարք սպանությունների կատարվեցին: Ամուսինները վատ հարևաններից նամակ ստանալով, գյուղ վերադառնալուց հետո առանց ստուգելու փաստերի ճշտությունը, սպանում էին կանանց: Իհարկե ամուսնական ավատարմության խախտման զեպեր տեղի են ունեցել, այդ ոչ ոք չի կարող ժխտել, զա էլ ունի իր պատճառները: Կապված դարձյալ պա-տերազմի հետ: Առանձին կանայք թեթևամտություն են ունե-ցել, ոմանք էլ տնտեսական պայմաններից ստիպված զովա-ձանել են ամուսիններին: Սակայն այդ զեպերը որոշիչ չեն կալնում: Հիմնականն այն է, որ մարդիկ դարձել են գյու-րաբարդիս և շկարզանալով զայել իրենց, տեղիք են տվել հանցագործության:

Այժմ թեև անցել է արդեն շուրջ քառորդ դար, բայց դրանց մնացուկները լիովին արմատախիլ չեն արված:

Կարելի է նաև պատերազմի հետևանքների հետ կապ-ված այլ հանգամանքներ հիշատակել, սակայն ամեն ինչ բացատրել պատերազմով կամ կապել պատերազմի հետ, երևու չի լինի: Անժխտելի իրողություն է, որ մինչև պատե-րազմն էլ հանցագործություններ լեղել են, թեև դրանք պա-տերազմի հետ անընդուն չեն ունեցել: Պատերազմը հան-ցագործության ծավալման հնարավորություններ է ստեղծում և նպատակ դրանց տարածմանը: Սակայն զա որոշիչ չէ և չի կարող լինել:

Հանցագործության առաջացման պատճառների ուսում-նասիրությունները մեր հանրապետությունում ցույց են տա-լիս, որ հանցագործությունն ծնող զլիխավոր պատճառները ինչպես ամբողջ ՍՍՀՄ-ում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում նույնն են, սակայն դրանց տարածվածության աստիճանը մի շարք զեպերում միևնույն մակարդակի վրա չի գտնվում,

ինչպես նաև որոշ հանցագործությունների առաջացման բնագավառում էական տարբերություններ կան:

Ուստի հանցագործությունների դիմ արդյունավետ պայթար ծավալելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այդպիսի հանցամանքները Փրինսկի կնոջ ազատության, պատվի, արժանապատվության, կյանքի նկատմամբ կատարվող ոտքնադուրծությունները ներանում և կենսիզդարում չի կարելի միևնույն մակարդակի վրա դնել: Կենսիզդարի բնակչուհին չի կարող անզամ պատկերացնել ևնջար չայն սովորություններն ու արագիցիաները, որոնք հայ կինը հաճախ է գրում, ասելում ու կրում ամուսնու, սկեսուրի և սկեսորայի վերաբերմունքից: Հայ կանանց մի մասը զեռես լիովին չի ազատագրվել այնցայից եկող կյանքենքերից, ամուսնու և մյուսների հալածանքներից, տնտեսության մեջ ունեցած անհավասարության մնացուկները: Գարնը շարունակ նրան դիտել են որպես բնականի սպասարկու, սերունդ ստեղծող, պահուսնող ու խնամող, ամուսնու կամքը միխանկորնե կատարող: Նա բոտ լուրջան համարվել է ամուսնու սեփականությունը և նրա նկատմամբ կիրառվել են բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են համարել ամուսինը, սկեսուրը ու սկեսորայրը:

Մինչև սովետական կարգերի հաստատումը, հայ կնոջ վիճակը բնատիրում համեմատաբար ավելի ծանր է եղել, յան ոուս կնոջը:

Կինը բոլոր երկրներում էլ գտնվել է ամուսնու իշխանության տակ, եղել է իրավազուրկ և տտապալա, բայց մեր երկրում շնորհիվ սոցիալիստական հեղափոխության նա կարողացավ թոթափել այդ ծանր լուծը և աղամարզուն հավասար իրավունքներ ձեռք բերել:

Սոցիալիստական կարգերում արմատապես փոխվել է կնոջ իրավական դրությունը, բայց նա լիովին չի ազատագրվել անցյալի մնացուկներից: Եթև Հայաստանի բնակիչ Ս-ն այժմ էլ կնոջը համարում է իր սեփականությունը և նրա նկատմամբ տմարդի վերաբերմունք ունի, ապա զա անցյալի մնացուկ է, և եթև նրա կին Հ-ն հանդուրժում է այն, ապա

Մտովայի բնակչուհին այդ իրավունակը երբեք չի հանդուրժի: Սոցիալիզմի օրոր անցյալից եկող խորթ երևույթները կյանքում գրեթեբում են զանազան ձևերով ու եղանակներով: «Մենք այստեղ գործ ունենք ոչ թև այնպիսի մի կոմունիստական հասարակության հետ,—ասում է Կ. Մարքսը,— որ զարգացել է իր սեփական հիմքի վրա, այլ այնպիսի մի հասարակության հետ, որն ընդհակառակը ետ-ետը է ծագում հենց կապիտալիստական հասարակությունից և որն այդ պատճառով բոլոր տեսակներից՝ թե՛ տնտեսական, թե՛ բարոյական, թե՛ մտավոր, զեռ կրում է իր վրա այն հին հասարակության գրոշմը, որի ընդերքից նա զուրս է եկել: Գրան համապատասխան՝ յուրաքանչյուր տասնձին արտադրող հասարակությունից ետ է ստանում, բոլոր հանուրդներից հետ, ճիշտ այնքան, որքան ինքը տալիս է նրան»¹⁰:

Մարդիկ աշխատում են բոտ իրենց ընդունակության և տանում բոտ իրենց աշխատանքի քանակի ու որակի: Սակայն մարդկանց ֆիզիկական առանձնատկությունը, մասնագիտական որակը (կվալիֆիկացիան), բնատների վիճակը և այլն տարբեր են լինում, ուստի հավասար աշխատանքի համար հավասար ստացումը փաստական անհավասարություն է: Ձերտագրողների իրավունքը համեմատական է իրենց մատուցած աշխատանքին: Հավասարությունն այն է, որ լավումը կատարվում է հավասար շափով՝ աշխատանքում¹¹: Փանի որ մարդկանց աշխատունակությունը, որակավորումը և այլն հավասար չեն, ուստի Ձերտ հավասար իրավունքն անհավասար իրավունք է անհավասար աշխատանքի համար¹²: Անհավասար անհատական օտավածություն հետևյալներով՝ Ձերտ համար էլ նա իր բովանդակությամբ անհատ-

¹⁰ Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Ընդեր երկր, հատ. 2, Երևան, 1950, էջ 17:

¹¹ Նույն տեղում, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 19:

¹³ Նույն տեղում:

վասարության իրավունք է»¹⁵։ «Դրա համար էլ հավասար իրավունքը այստեղ զեռես բուրժուական իրավունք է»¹⁶։

Այստեղ մեզ անմիջականորեն հետաքրքրող հարցի տեսանկյանից մի բանի խիստ կարևոր զեկավար ցուցումներ կան։ Սեյցլալի մնացումները սոցիալիզմի շրջանում պատահակապեսություն չեն, այլ հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափության արդյունք։ Սոցիալիզմը լիակատար կերպով չի ազատագրվում հին հասարակարգի մնացուկներից, այլ այդ լիակատար կատարողությունը կարող է տեղի ունենալ սոցիալիզմից հրմտնիցում անցման շրջանում։ Այդ ամենից առաջ վերաբերում է նյութական կյանքի բնագավառին։ Մեկը շինարարության աշխուկ է, մյուսը բանվոր, նրանք ստանում են ըստ իրենց աշխատանքի, հենց այդ պատճառով էլ հավասարությունն անհավասարություն է առաջացնում նրանց նյութական կյանքի իրավիճակում։ Մեկն ավելի լավ նյութական և կուլտուրական պայմաններում է գտնվում, քան մյուսը։ Դա մի կողմից, մյուս կողմից էլ արտադրողական ուժերի զարգացման արդի մակարդակը տակավին չի այսպեսուհիվում նյութական ու կուլտուրական բարիքների այնպիսի առատությունը, որը կարողանա լիովին բավարարել բոլոր մարդկանց հարաճուն պահանջումները։ Այդպիսի իրապետությունը հակահասարակական հայացքների առաջնման հետարվորություն է ստեղծում։ Այն ազդում է մարդկանց հայացքների, վարք ու բարքերի, բնավորության և հոգեբանության վրա։ Մեկը ստանում է ամակալան աշխատավարձ 300 ու., մյուսը 70 ու., թեև նրանց բնասնիքների անզամների թիվը հավասար է։ Պարզ է, որ նրանց նյութական վիճակը չի կարող նույն մակարդակի վրա լինել։ Մեկի երեխաներն ավելի լավ են հագնվում ու սնվում, քան մյուսի։ Դա չի կարող բացասական ազդեցություն չբողնել։ Այդ իրավիճակն ամենից առաջ ներգործում է կնոջ վրա։ Ուսանասիրությունը ցույց է տալիս, որ ընտանիքում ամուսինների գծտության գլխավոր պատճաններից մեկը շատ համախ նյութական վի-

ճակն է. կահ-կարասիքի, հագուստի, սննդի և այլ կարիքների հոգար չեն կարող անհանգստություն չպատճառել ամուսիններին։ Երբ միջոցները չեն ներում զնել անհրաժեշտ հագուստ կամ սննդի միջոցներ, կամ կահ-կարասիք, ապա բնկում է նրանց տրամադրությունը, կարծես ներքին մի հուզմունք առաջացնում. ինչո՞ւ չպետք է դրանք զնելու հետարվորություն ունենալ, չէ որ հարևանն ունի այդպիսին, և ամուսինների միջև անաշանում է վիճմ, որը երբեմն սրվում է, մյուս հետևանքներ առաջացնում։ Նրանցից մեկը մյուսին մեղադրում է «անտեսեալարության», «միջոցները ոչ խելացիրեն տնօրինելու», «ավելորդ ծախսելու» և համանման այլ «մեղքեր» ունենալու մեջ, թեև այս հարցում նրանցից ոչ մեկն էլ մեղավոր չեն։

Փաստերը ցույց են տալիս, որ մանր գողությունների զգալի մասը կատարվում է անտեսական անբարվոք պայմանների պատճառով, սակայն հետագայում այն վերածվում է սովորության և թեև նա անտեսապես վատ դրություն մեջ չի լինում, բայց դարձյալ զրադված է գողությունը։ Օրինակ, Գ. Ա.-ն սկզբում կորցնելով ձեռններին և գտնվելով տնտեսական վատ պայմաններում, սկսում է մանր գողություններ կատարել՝ «օրվա հաց զնելու համար»։ Նա այգիններից վարունգ, ծիրան, խաղող, դեղձ է գողանում և վաճառում։ Բարի մարդիկ նրան տեղավորում են տեխնիկում, որը նա ավարտում է հաջողությամբ, դառնում տեխնիկ, բարձր աշխատավարձ է ստանում, բայց չի կարողանում հրաժարվել իր հին սովորությունից և բռնվում է հարևանի տանը գողություն կատարելու պահին։ Դատական նիստում նա հայտարարել է, որ այժմ ես նյութական կարիքի մեջ չեմ, բայց գողություն անելը ինձ համար սովորություն է դարձել։ Եվ իբրք, պետական միջոցները հափշտակողների, քաղաքացիների անձնական գույքը գողացողների զգալի մասը գտնվում են նյութական միանգամայն բարվոք վիճակում, բայց ճաշարաններում ու ռեստորաններում հարեցողությունը են զրադվում։ Պորտաբույծ կյանք վարողներին կարելի է շատ համախ տես-

¹⁵ Նույն տեղում, էջ 18։

Նեկ ուստորումս՝ քեֆ անկիս կամ ավտոմեքենայով զրու-
նեկիս:

Նրանց այդ կյանքին է մղել ոչ թե նյութական կարիքը, այլ սնաշխատ եկամտաբեր, նման անտաղելի ճանապարհով ուրիշ բաղաբացու կամ պետության հաշվին ապրելը: Մեր պայմաններում կարիքը չի, որ մարդուն մղում է զեպի հար-
բեցողությունը և այլասերված կյանքը, այլ այդ նպատակին նամար միջոցներ ձեռք բերելու անաղելի եղանակը: Սակայն երբ դառնում է պիկոտլամուլ, ապա նա այլևս կոնց չի առ-
նում ուղեկց խմիչք ձեռք բերելու համար դրամական միջոց-
ների հայթայթման նարավոր ձևերի առև:

Այկոտլամուլ Խ. Մ.-ն հասել էր այն աստիճան ցածրու-
թյան և ստորության, որ զողացել էր իր դեռահաս աղջիկ-
ների նկեր ստացած հագուստ և փոխանակել օդու հետ: Նա
լացող աղջկանն ստում է. հասկացիր, կարևոր օդին է և ոչ
թե շորը, զու կարող ես նաև հին շորերով ման գալ. իսկ ինձ
օդի է հարկավոր, որի համար ես փող չունեմ...:

Ընդունելով, որ նյութական կարիքն իրքը որոշ թվով
մարդկանց մղում է զեպի հանցագործության կատարումը,
միտածանակ ուշադրություն է դրավում այն փաստը, որ
նյութական կարիք ունեցող մարդկանց միմիայն աննշան
մասն է հանցանք կատարում, իսկ բացարձակ մեծամասնու-
թյունը, թեև նյութական կարիքի մեջ է լինում, բայց հան-
ցանք չի կատարում: Ինչո՞ւ բացատրել այդ իրավիճակը,
ինչո՞ւ նույն պայմաններում գտնվող անձանց մի մասը կա-
տարում է հանցագործություն, իսկ մյուս մասը ոչ:

Այդ իրողությունն ամենից առաջ բացատրում է նրա-
նով, որ բացասական մի գործոնը դեռևս հակահասարակա-
կան արարք չի առաջացնում, հանցագործություն չի ծնում,
և թե մեկուսացված վիճակումն է գտնվում, բայց երբ միա-
շխույթում է բացասական այլ գործոններին, ապա հանցա-
գործության առաջացման հնարավորություն է ստեղծվում:
Պրանց օրգանական միակցումն է, որ պատճառ է դառնում
նաև հանցագործության առաջացման, հնարավորությունն

իրականության վերածման համար, կարճ առաջ՝ հանցագոր-
ծությունը բացասական գործոնների խաչաձևման արդյունք
է, ուստի մեկն առանձին չի կարող նման որակ տալ:

Յուրաքանչյուր հանցագործի իր անմիջական՝ կոնկրետ
պատճառն ունի, առանց որի հանցագործություն չի լինում,
բայց կոնկրետ հանցագործողը չէր լինի, եթե հանցագործության
ընդհանուր պատճառները գոյություն չունենային: Ուստի
ավելի հարցը քննելիս պետք է նկատի ունենալ ինչպես
հանցագործության ընդհանուր պատճառները, այնպես էլ
կոնկրետ հանցագործության անմիջական պատճառը: Հան-
ցագործության ընդհանուր պատճառն անձի մտտ հակահասո-
րակական հայացքի գոյությունն է, իսկ հանցագործության
կոնկրետ պատճառները բազմատեսակ են լինում:

Բայց ինչո՞ւ է անձի մտտ հակահասարակական հա-
յացքներ առաջանում, ո՞րտեք են այդ ընդհանուր պատճառ-
ների գոյացման պայմանները: Ահա այն գիտավոր հարցը,
որը պետք է ամենից առաջ պարզաբանել: Եվ իսկպետե-
մարդը ծնվել է սովետական կարգերում, սովորել պարտում,
սպորում է սոցիալիստական հասարակարդում, բայց հան-
ցագործություն է կատարում: Այստեղ արդարաբերեն ծա-
ղում են բազմաթիվ ինչուներ, որոնք իրենց պատասխաններն
են պահանջում: Փորձենք որոշ պարզաբանումներ տալ:

Մարդու կյանքում առավել վճռական դերը խա-
ղում է նրա բարոյական ձևավորումը, ի՞նչպիսին է այն և
ի՞նչպես է տեղի ունեցել, դրական և բացասական ի՞նչպիսի
գործոններ են ներգործել այդ ընթացքում և ի՞նչ աստիճանի:
Անձի բարոյական ձևավորումը բարդ և տեսական պրոցես է,
որի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, հասարակակո-
սմբողջ կենդանությունը: Նա բարոյական ձևավորում է ընտա-
նական և հասարակական բարդ իրադրապայմաններում, որ-
տեղ խաչաձևվում են բազմաթիվ ու բազմատեսակ գործոն-
ներ:

Հարցը ճիշտ հասկանալու համար պետք է թափանցել
այդ բազմաթիվանդակ երևույթների մեջ և վերհանել այն

զիսավորները, որոնք սովյալ անձի կյանքում առավել վճուհան զեք են խաղացել: Դրանք կարող են լինել թե՛ ընտանեկան և թե՛ հասարակական կեցության այս կամ այն կողմի ազդեցությունը: Կարող է մի դեպքում վճռական զեքը խաղալ մեկը, մյուս դեպքում՝ մյուսը: Այդ հարցը կարող է ճիշտ լուծում ստանալ կոնկրետ մոտեցմամբ միայն: Ընդ որում սկզբնական սոցիալական խմբերը՝ ընտանիքը, հարևանքը, զարգացր կարևոր զեք են խաղում:

Երեխաների և երիտասարդների դաստիարակությունն ամենից առաջ սկսվում է ընտանիքում: Ուստի ընտանիքի իրավիճակը երեխաների բարոյական ճիշտ ձևավորման գործում կենսական նշանակություն ունի: Ահա թե ինչու մեր օրենսդրությունը մեծ կարևորություն է տալիս այդ հարցին և իրավական այնպիսի նորմեր սահմանում, որոնք պարտադիր են բոլոր ընտանիքների և բոլոր քաղաքացիների համար: Այսպես, «ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների ամուսնության և ընտանիքի օրենսդրության հիմունքներին» 18-րդ հոդվածը սահմանում է, որ «Նայրը և մայրը իրենց երեխաների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Ծնողները պետք է իրենց երեխաներին դաստիարակեն կոմունիզմ կատարող բարոյական կուլուրի ոգով, հող ստանեն նրանց ֆիզիկական զարգացման, ուսման և հանրօգուտ գործունեության համար նախապատրաստելու մասին»: Այսպես է պարզ ու որոշակի՝ երեխայի դաստիարակության առանցքը կազմում է կոմունիստական բարոյականության վեճ սկզբունքներով դաստիարակումը, հանրօգուտ աշխատանքների համար նախապատրաստումը, այդ ոգով նրա բարոյական ձևավորումը: Դա շատ բարդ ու զգվարին գործունեություն է, որը պահանջում է համառ ու տևական աշխատանք, մեծ շնորհի գործազուտ: Մշակել երեխայի հոգեբանությունը, կերտել ու կատարելագործել նրա բնավորության գծերը, զերծ պահել նրան անցյալից եկող բացասական սովորությունների, տրագիցիաների և ընտելությունների ազդեցությունից: Դա ամենօրյա քրտնաջան աշխատանք է, որը ծնողներից պահանջում է

համառություն, համբերատարություն, հետևողականություն, հմտություն: Դա ծնողների իրավական ու բարոյական սերբազան պարտականությունն է: Սակայն, ինչպես ցույց է տալիս նշված իրավանքները, երեխայի դաստիարակությամբ պետք է զբաղվեն ոչ միայն ծնողները, այլև հասարակությունը: Երեխան նախապատրաստվում է հասարակական գործունեության համար, հասարակության համար արժանի անձում դառնալու նպատակով, ուստի երեխայի բարոյական ձևավորումը հասարակական մեծ նշանակություն ունի: Ահա թե ինչու այդ գործը չի կարելի միայն ընտանիքի գործը համարել, սահմանափակել ընտանիքի նեղ շրջանակում: Հասարակությունը չի կարող անտարբեր լինել այդպես կարևոր նշանակություն ունեցող խնդրի նկատմամբ: Ես ոչ միայն մասնակցում է երեխայի դաստիարակության գործին, այլև պահանջում, որպեսզի ընտանիքում երեխան բարոյական ճիշտ ձևավորում ստանա: Այդ հարցում հասարակությունը, պետությունը համակողմանի աջակցություն են ցույց տալիս ծնողներին: Պետությունը նկատի ունի նաև այն հանգամանքը, որ երեխայի կոմունիստական դաստիարակությունը, բարոյական ձևավորումը զգվարանում է նաև նրանով, որ հասարակական կյանքի ոչ մի բնագավառում անցյալի մնացուկներն այնպես խորը շեն արմատավորված, ինչպես ընտանեկան հարաբերություններում: Այդ խորթ մնացուկների զեմ պայթյալը զեմվում է, ծանր ու տևական, պահանջում է մեծ շնորհք, սակայն առանց դրանց զեմ անհրաժեշտ պայթյալ ծավալելու, հնարավոր չէ երեխայի բարոյական ճիշտ ձևավորումը, կոմունիստական բարոյականության վեճ սկզբունքների արմատավորումը, կոմունիստական դաստիարակությունը:

Այդ խնդրի լուծման գործում կենսական նշանակություն ունեն ծնողների դաստիարակված լինելը, կուլտուրական, բարոյական ճիշտ հայացքները: Եթե ծնողների միջև անզոր լիս, նրանք հաճախ են ընդհարվում, հայրը զբաղվում է հարբեցողությամբ, հալածում է կնոջը, թույլ է տալիս անպատկառ արտահայտություններ, ապա այդ բոլորը շեն կա-

բոլ անհետանք մնալ և բացասական ներգործություն չունենալ երեխայի դաստիարակության վրա:

Վ. Ղ.-ի զպրոցական հասակի Հասած տղան ձգտում է ամեն բանում նմանվել հորը՝ հայրը շարունակ հարբում է, թույլ տալիս փոզոցային հայհույանքներ կնոջ և նրա հարազատների հասցեին, երբեմն զազանաբար ծնծում նրան: Եվ ա՜հա տղան փորձում է հարբած հոր նման բայել և երբ տառ նախազգուշացնում է, ապա երեխան հոր խոսքերով հայհույում է նրան:

Եթե ամուսնու սպունդակ վարքագիծը կնոջ համար սովորական է գործել, ապա այն կործանել չազդեցություն է ունենում երեխայի համար: Ենթադրուցական հասակի երեխայի ճիշտ դաստիարակության գործն ավելի է դժվարեւում նաև նրանով, որ հասարակությունը դեռևս չի կարողանում այդ հասակի բոլոր երեխաներին լիովին բնոզդել մանկամտությունում, մանկապարտեղներում և մանկական ս-լլ հիմնարկներում: Այսպես, 1967 թ. Հայկական ՍՍՀ-ում մանկամտություն և մանկապարտեղներում ընդգրկված է նման հասակի երեխաների ընդամենը 14 տոկոսը, որ ոչ միայն անբավարար է, այլև նկ երբորդով ցածր է անգամ՝ ՄՍՀՄ-ի տեբիտորիայում միջին թվից: Ընդհանրապես ՍՍՀՄ-ում 21 տոկոսի ընդգրկումը բառ հետո է այսօրվա պահանջները բավարարելուց, շատ ավելի վատ է մեզ մտու: Ժամանակն է լուրջ կերպով մտահոգվելու այդ կարևոր հարցով:

Ենթադրուցական հասակի երեխաների դաստիարակությունից ավելի ոչ բարձր դիճակում են գտնվում միանյակ մոր, ապահարզան կատարած կնոջ երեխաների խնամքն ու պահպանությունը: Մայրը հարկադրված է թողնել երեխաներին և զեւլ աշխատանքի, հաճախ նա տան միակ աշխատողն է և ուրիշ կերպ վրավել չի կարող: Երեխաները մնում են առանց խնամքի և հսկողության, որի հետևանքով նրանց մոտ առաջանում են վատ գծեր, սովորություններ, հոգեբանություն: Փաստերը ցույց են տալիս, որ հակահասարակական արարք կատարող անչափահասներին զղայի

մասը հենց այդ նանսպարճով է վատ շրջապատ ընկել: Ստեղծված նպաստավոր հանգամանքներից օգտվում են հանցագործ տարրերը և նման երեխաներին աստիճանաբար ներգրավում հանցավոր ոլորտը:

Հասկանալի է, որ առանց այդ իրավիճակի, օբյեկտիվ դրություն էական փոփոխության զգվար է զրական արդյունքի հասնել, վերացնել երեխաների մոտ հակահասարակական հայացքները, նրանց ճիշտ դաստիարակություն տալ: Երբ ցանկությունները բել են, անհրաժեշտ է արմատախել անել այն աղբյուրը, որը նման բացասական երևույթներ է մնում: Առաջին հերթին անհրաժեշտ են գործնական մի շարք միջոցառումներ. ա) բնոարձակել մանկական հիմնարկների ցանցը, որպեսզի նախազգի լինի նախազգրոցական հասակի երեխաների գոնե բացարձակ մեծամասնությունն ընդգրկել և լավ հիմքերի վրա դնել նրանց դաստիարակության գործը: Հակահալի է, որ զա կապված է հսկայական միջոցների ներդրում, հիմնարկների ստեղծման, խնամքի ու դաստիարակության հարցերը խնամքով նախապատրաստելու հետ: Այդ ցանցը միանգամից կրկնապատկել կամ եռապատկելու շատ զգվար է, դա հայտնի է բոլորին, բայց հարկավոր է լուրջ կերպով մտահոգվել այդ խնդրի լուծման գործով: Միանգամայն արդարացի կլինեն այդ ցանցում առաջին հերթին բնոտեղ այն երեխաներին, որոնց մայրերը աշխատում են և խնամող չունեն: Առաջին հերթին և լրիվ պետք է բնոգրկել նաև միանյակ և ամուսնայրուժված կանանց երեխաներին, եթե տանը խնամող չունեն, իսկ իրենք աշխատում են: Պահանջում բան չէ, բայց կենսականորեն անհրաժեշտ է թե՛ միայն երեխայի և թե՛ հասարակության համար: Մեր հասարակարգի զարգացման արդի ժամանակաշրջանում հասունացել է այդ պրոբլեմի լուծման անհրաժեշտությունը, իսկ մեզ մոտ արդեն ստեղծվել են այդ հարցը լուծելու համար անհրաժեշտ նախադրույթներ, նյութական և կուլտուրական սպասարկման հնարավորություններ, խնամելու և դաստիարակելու անհրաժեշտ միջոցներ: Այստեղ ամեն ինչ կախված է պետական օրգանների, հասարակական կազմակերպությունների-

րի, ծնողների, ամբողջ հասարակության վերարբմունքից, հոգատարությունից, սրտացավությունից: Կադրեր կան, համապատասխան շենքեր ստանձնացնելն այդ նպատակով մեծ զօժանությունների հետ չի կապված, օրական մեծ թվով շենքեր են ծնունդ առնում, որոնց առաջին հարկերում կարելի է տեղավորել մանկական հիմնարկները, իսկ պետությունը հակալական միջոցներ է ներդրում այդ նպատակի համար: Եթե դրան ավելացնեն տեղական հնարավորությունները, սպա հարցի լուծումը կարող է ապահովվել: Ցանկություն, հոգատարություն, աշխատանք և համություն՝ ահա այդ հարցի լուծմանը նպաստող հանգամանքները:

բ) Այժմ արդեն հասնումացել է այն հարցը, որ բազմազավակ մայրը պետք է լիովին զբաղվի իր երեխաների դաստիարակության գործով: Կրեթ չի կարող 3—6 երեխա խնամել, դաստիարակել և միաժամանակ աշխատել: Տվյալ դեպքում նրա աշխատանքը կարող է հանդել բացասական արդյունքի: Այդքան մեծ թվով երեխաներին մանկական հիմնարկներում տեղավորելը, խնամելն ու պահպանելը նյութական ավելի մեծ ծախսեր են պահանջում, քան թե պահպանելով կնոջ միջին աշխատավարձը, նրան հնարավորություն տալ մնալու տանը և խնամելու ու դաստիարակելու իր երեխաներին: Կասկած չկա, որ նման դեպքում կնոջ վրա կզրկվեն ոչ միայն բարոյական, այլև իրավական պարտականություններ՝ երեխաներին խնամելու և դաստիարակելու համար: Ժամանակն է արդեն բարձրացնելու ծնողների պատասխանատվության զգացումը, պատշաճ բարձրության վրա զենելու երեխաների ճիշտ դաստիարակության գործը, առանց որի հնարավոր չէ վերացնել այդ ընդգծվածում եղած թերությունները: Աշխատավորների կոլեկտիվների ժողովներում, բնկերական դատարաններում, թաղային կոմիտեաների նիստերում քննության առնել այն ծնողների հարցը, ովքեր վատ են դաստիարակում երեխաներին: Հարկավոր է մամուլի, կինոկարներ, ուղիղ լույսի և այլ միջոցներով բացատրական լայն աշխատանք կատարել, պարզաբանել նրանց իրավունքներն ու պարտականությունները, խրախու-

սել լավը և խարազանել վատը: Երեխաների դաստիարակությունը համաժողովրդական գործ է, հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է զբաղվի դրանով:

Երեխաների հասարակական դաստիարակությունն ըստ էության սկսվում է դպրոցից: Այդտեղ երեխան ոչ միայն գիտելիքներ է ձեռք բերում, այլև դաստիարակվում, ձևավորվում են նրա անհատականության գծերը, դրական հատկությունները, ուղղվում և վերացվում են ընտանիքում ստացած դաստիարակության սխալներն ու թերությունները: Գյուրջում աշխատանքի հարողությունը կախված է նրանից, թե ինչպես է կազմակերպված դաստիարակության գործը: Այդ աշխատանքներն ավելի բարձր արդյունք են ապրի մի շարք անհրաժեշտ պայմաններ ճիշտ կատարելու դեպքում: 1) Գրպրոցի մանկավարժական կազմի ջանքերի միասնությունը, կազմակերպվածությունը և համախմբվածությունը առաջին, կենսական պահանջն են: Մանկավարժները պարտավոր են երեխաների մոտ բարձր պահել մեկը մյուսի հեղինակությունը: Երեխան պետք է սիրի և հարգի իր ուսուցչին, այլպպես նա չի կարող լավ սովորել և լավ վարքագիծ ունենալ: Ուսուցչի խոսքը մեծ նշանակություն ունի երեխայի համար, ուստի այն պետք է լինի կշռադասված և խելացի: Չպետք է անտեսել նաև երեխայի իրավունքներն ու պարտականությունները, պետք է լինել պահանջկոտ, բայց պրոգրեսիս, անաչառ ու օրյնկտիվ: Ուսուցչին իր բարձր կուլտուրայով պետք է օրինակ ծառայի երեխային: Երեխաների իրավունքներն երբեք չի կարելի սոսնհարել, նրան անձնական վիրավորանք հասցնել: Երբ ուսուցչիչը թույլ է տալիս անթույլատրելի արատահայտություն, անձնական վիրավորանք, առպ դրանով իսկ ոչ միայն դրսևորվում է նրա անճարակությունը, անկուստարականությունը, անդատարակ լինելը, այլև խիտա բացասական ազդեցություն է ունենում երեխայի վրա: 2) Գրպրոցում ճիշտ դաստիարակության կարևոր պահանջներից մեկն էլ այն է, որ մանկավարժական կազմը, դպրոցի պետներական և կոմերիտական կազմակերպությունները, ծնողական խորհուրդը գործեն միասնաբար, բնզհանոր ջանքերով:

Պիտեղական կամ կոմերիտական ժողովուն երկխաչի վատ արարքը քննելիս ուսուցիչներին ներկայությունը, բարոյական ներգործությունը որպես կանոն արդյունավետ է լինում, եթե այն կազմակերպվում է խելացիորեն, բարձր մակարդակով, խստապահանջությամբ ու օրչեկախժովյամբ: Երեխայի մոտ եկատավող ոչ մի թերություն, բացասական երևույթ չպետք է անտեսվի. կարևորը ոչ թե այն է, թե ինչ ներգործության միջոց է կիրառվում, այլ այն, որ ոչ մի զեպք անուշազորության շփոթք է մատնվի: Երեխան պետք է համոզված լինի, որ նրա ոչ մի վատ արարք չի մտադրում անասն ընտանիքում: Յ) Երեխաների դաստիարակության գործում ավելի մեծ արդյունավետություն են հասնում այն դեպքում, երբ մանկավարժական կազմը, դպրոցական կազմակերպություններն իրենց աշխատանքներին մասնակից են դարձնում երեխաների ծնողներին: Այստեղ եկատի ունենք ոչ միայն երեխայի ծնողին դպրոց կանչելը, այլև նրանց տուն գնալը, երեխայի տնային պայմաններին ծանոթանալը, երեխայի վատ արարքների մասին նրա ծնողների աշխատանքին և բնակվելու վայրի կազմակերպություններին և հիմնարկներին առաջ հարց բարձրացնելը, նրանց իրազեկ դարձնելը: Հաճախ է պատահում, որ երեխայի վատ արարքն անտանիքում տիրող աննորմալ դրությունը է: Այդ համագտանքի պարզումը և այդ մասին համապատասխան կազմակերպություններին հայտնելը, նրանց կողմից միջոցառումներով մշակումը լավ արդյունք է տալիս: Մի շարք գործարաններում (Երևանի պահածոների, Կիրովի անվան, Կանաչ և այլն) հազորդուներն ստանալով դպրոցներից, այդ հարցը քննության են առնում կուսակցական, կոմերիտական կազմակերպություններում, կուկետիվի ընդհանուր ժողովներում և կանխում միջոցառումներ մշակում այդ թերությունները վերացնելու գործում: Երբ դպրոցը մնում է պատսխիվ, փորձում է հարցը լուծել իր ջանքերով, ապա շատ հաճախ այդ նրան չի հաջողվում և զրական արդյունքի չի հասնում, իսկ նման երեխաների ծնողներն էլ մի կողմ են քաշվում ու մեղադրում դպրոցին, որ նա չի կարողանում Երեխային ուղղել կամ վերադասել: Նրանք պատասխանա-

սվումը չեն զգում, թեև այդ արարքները մեծ մասամբ բնտանեկան վատ դաստիարակության արդյունք են:

Ֆ. 2.-ի 2-ն, 1950 թ. ծնված, ԼԿԵՄ անդամ, 8-րդ դասարանի աշակերտ, եղել է օրինակելի երեխա: Սակայն նրա դաստիարակությունը բնտանիքում վատ է ընթացել, իսկ զարոցում էլ այն չի ուղղվել ու շտկվել, բնդհակասակը, բացասական գծերն ավելի են արմատավորվել, որն աստիճանաբար այդ երեխային տարել է զեպի կործանում: Թ՛ն տունը, թե՛ դպրոցում նրա հարցով լուրջ իերպով ոչ որ չի զբաղվել: Նա բնկնելով վատ տարրերի ազդեցության տակ, իրեն լավ չի պահում, չի սովորում, մեկը մյուսի հետևից վատ արարք է կատարում, բայց ոչ որ չի փորձում նրան այդ ճանապարհից հա պահել, քանզի այդ արարքները կանխել: Պարպապես նրան բախտի բմահաճույցին են թողնում: Բացահայտ կերպով նա զեպի հանցագործության ճահեմ է գնում, սկսում է մանր գողություններ անել: 15 հավ դողանալու համար շրջանի դասախոսը նրա հարցը դնում է Աշխատավորների զեպուտատների Արտաշատի շրջուվետի անչափահասների գործերի հանձնաժողովին քննությանը: Նրան տույժի են ենթարկում և հարցը համարում սպառված. նրանով դարձյալ չեն զբաղվում: Եվ իրքը, թե՛ Արտաշատի դպրոցում սովորելու ժամանակ և թե՛ նշված տույժին ենթարկվելուց հետո նրա դաստիարակության հարցով չեն զբաղվում, թեև այդ փաստն արդեն ցույց էր տալիս, որ նրա վերադաստիարակության հարցը հրատապ է և այն չի կարելի անտեսել: Ֆ-ն մշալով առանց հսկողության, ինքնազույլ գնում է Հոկտեմբերյանի շրջանի և ընդունվում դաստիարակական տեխնիկում է կարճ, բայց այստեղ հա ոչ որ չի զբաղվում նրանով և կարճ ժամանակ անց վատարում են տեխնիկումից: Նա ընդունվում է Երևանի № 2 պրոֆտեխն. ուսումնարանը, սակայն կրկնվում է նույն պատմությունը և մեկ ամիս անց նրան հեռացնում են ուսումնարանից: Ֆ. 2.-ը վերջնականապես զրկվում է հանցագործության զրկը. նա 1967 թ. բուսաբարության փորձ է կատարում Էրեք տարեկան Ա. Գ.-ի նկատմամբ, որի համար ժողգատարանը դատապարտում է նրան ազատազրկման

չորս տարի ժամանակով: Այդպիսի տխուր վախճան է ունեւում Յ. Հ.-ի հարցը և այդ բուրբը նաև այն պատճառով, որ նրան ժամանակին չեն ուղղում ու վերագաստիարակում և էհիշ ուղղութիւն չեն տալիս:

Մի այլ վրդովեցուցիչ օրինակ. Երևանի № 34 դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Ա. Ա.-ն ընտանիքում վատ դաստիարակութիւն է ստանում, և դպրոցում ոչ միայն չեն ուղղում ու վերագաստիարակում նրան, այլև նպատակօր պայմաններ են ստեղծում նրա համար: Նա հաճախ է բացակայում դասերից, խանգարում է ուրիշներին, ծծծում երևխաներին, կոիվներ ստորում: Նույնիսկ այն բանից հետո, երբ նրա մոտ երեք անգամ դանակ են հայտնաբերում, դարձյալ Հ.-ի հարցով լուրջ կերպով չեն զբաղվում: Քեև բացահայտօրեն նրա մոտ հակահասարակական վարքագիծը շարունակվում է, վատ արարքներ է կատարում մեկը մյուսի հետևից, բայց ոչ միայն մանկավարժական կազմը, հասարակական կազմակերպութիւնները, այլև դասընկերները հանգուրծում են այն, նույնիսկ վերջիններս խնամքով թուրջրծում են Հ.-ի վատ արարքները՝ «հանուն ընկերութիւնան» և նա գլորվում է դեպի հանցագործութիւնան ճահիճը: Նրան չեն մեղանցնում այդ կործանիչ ճանապարհից և ահա մի օր էլ, երբ դառնկ Ռ. Գ.-ն Հ.-ին աղաղտում է դասից և պահանջում ծնողին բերել, նա թաքնվում է դպրոցի պատերի տակ և սպասում Գ.-ին՝ վրձ լուծելու համար: Նրա դասընկերները դնում են նրա մոտ և հաստատ իմանալով նրա մտադրութիւնան մասին, դարձյալ լուրջութիւն են պահպանում, նրանց տեղակ չեն դարձնում մանկավարժներին, թեև Հ.-ն չի թարջրծում այն հանգամանքը, որ ինքնաշեն ստրճանակով պետք է սպանի Գ.-ին: Միայն Ա. Բ.-ն է համարձակվում դիտողութիւն անել Հ.-ին, բայց մյուս աշակերտները չեն պաշտպանում նրան, որից օգտվելով Հ.-ն կրակում և մարմնական ծանր վնասվածք է պատճառում Բ.-ին, որի համար էլ ժողգասարանը 1967 թ. Ա.-ին դատապարտում է ազատազրկման հինգ տարի ժամանակով:

Եթե ժամանակին ընտանիքում և դպրոցում Հ. Ա.-ի հարցով լուրջ կերպով զբաղվեին, հետաքվոր կիներ վերագաստիարակել, չէ որ նրա հասակն այնպիսին էր, որ նրան ուղիղ ճանապարհի բերելը բացառված չէր:

Այս հարցում մեղավոր են թե՛ ծնողները, թե՛ մանկավարժները, թե՛ դասընկերները, որոնք կեղծ «ընկերասիրութիւնան» քողի տակ վատութիւն են արել և շցանկանալով «մասնիչ լինել», նպատակօր պայմաններ են ստեղծել, որից շատ լուրջ կերպով տուժել է Ա. Բ.-ն և հենց ինքը՝ Ա.-ն:

Անձի բարոյական ձևավորման հարցում ներգործութիւն են ունենում նաև հարեանները, նրանց վարք ու բարքերը, հայացքներն ու սովորութիւնները: Արդի շրջանում այդ ուղղեցութիւնը, մանավանդ երեխաների ու երիտասարդների վրա, ավելի է մեծացել: Դա բացարձակ է նախ նրանով, որ քաղաքային բնակչութիւն թիվը շատ արագ է աճում. եթե երևանում 45 տարի առաջ եղել է ոչ ավելի, քան երեսուն հազար բնակիչ, այսպ այժմ այդ թիվն ավելացել է քսանչորս անգամ: Դրան պետք է նաև ավելացնել այն, որ դրսից երկվան եկողների թիվն ավելացել է ոչ թե ստանդակ, այլև հարչուր անգամ: Նրանք իրենց հետ անխուսափելիօրեն բերել են բարոյական դանազան հայացքներ, սովորութիւններ, տրադիցիաներ, բնտելութիւններ, կենցաղավարութիւններ: Նըրջրծ մոտ հաճախ կարելի է նույնիսկ նախակապիտալիստական շրջանի խորթ մնացուկներ տեսնել: Երկրորդ. այն հանգամանքը, որ կատուցվում են բնակելի մեծ շենքեր, որտեղ բնակչութիւն են հաստատում հարյուրավոր ընտանիքներ, հաճախ ավելի շատ բնակիչներ, քան կան շատ ու շատ գլուղերում: Դեռ ավելին, նույն բնակարանը երեք ընտանիքներ է հատկացվում: Խաչալու համար միտժամանակ տասնչակ երիտաներ բակ են գուրա գալիս:

Սա նշանակու է, որ բնակիչների շփումը, հարաբերութիւնները միմյանց հետ անչափ ավելացել են, իսկ որբան ուժեղանում են նրանց հարաբերութիւնները, այնքան մեկը մյուսի նկատմամբ ներգործութիւն ունենալու համար ավելի շատ հետաքվորութիւններ են ստեղծվում: Բայց հենց այսու-

սեղ էլ ընդհարում են նրանց բարոյական տարբեր հայացքները, կենցաղավարտությունները, տրագիկոսները: Այդպիսի պայմաններում մի բնասնիրի կամ անձնավորության վարքագծի ներգործությունը ուրիշի վրա տարածելու համար ավելի նպաստավոր հնարավորություն ու պայմաններ են ստեղծվում: Եթե անցյալում հարեանները նույնիսկ օրերով միմյանց չէին տեսնում, ապա այժմ օրվա ընթացքում բազմաթիվ անգամ ոչ միայն հանդիպում են, այլև ընդհարում, երևանի Սպանդարյան շրջանի ժողովարարների № 34 բրեսկան գործի նյութերից կրում է, որ դատապարտվալ Զ. Խ.-ն խուլիզան և ապա մարդասպան է դառել իր հարեան, հարեցող ու բաշբալված Գ. Զ.-ի ազդեցությամբ: Նա այդ երիտասարդին կապում է իր հետ, միասին ճառում են, զրպի՞ խաղում, հետ սկսում օղկից խմիչքներ գործածել, քաղվում են սեռական սանձարձակությամբ: Գ. Զ.-ն ներշնչում է այն միտքը, որ Զ. Խ.-ն բակում պետք է իշխող լինի, ոչ ոք իրավունք չունի նրան հակադրվել և ահա նա հարեանուհիներից մեկի նկատմամբ երույլ է տալիս խուլիզանական տրարք, որի համար դատապարտվում է, բայց կաշանից ազատվելուց հետո Գ. Զ.-ի զրգումը սպանում է այդ կնոջ ամուսնուն, որը համարձակվել էր նրան քրանո գեղը:

Մի այլ գործի նյութերից կրում է, որ Վ. Ղ.-ի վարքագիծը փաստորեն որոշվում է իրենց հարեանների, ընկերների՝ Ս.-ի և Վ.-ի վարքագծի ներգործությամբ: Նա բառացիորեն իր տանը կրկնում է այն, ինչ Ս.-ն և Վ.-ն անում են իրենց տանը: Երբ նրանք ծնծում են իրենց կանանց, ապա նա էլ սուս գալով, ծնծում է կնոջը, էրբ նրանք հարբում են, նա նաև պանան հարբում է. «ես նրանցից ի՞նչով եմ պակաս տեսում է նա: Մի օր էլ Ս.-ն հարբած ժամանակ դանակով հարվածում է կնոջ թևին: Վ.-ն գալով սուս կրկնում է այն և կնոջը մարմնական վնասվածք պատճառում, որի համար էլ գատական պատասխանատվության է ենթարկվում: Գատարանում նա հայտարարում է, որ այդ տրարքերը կատարել է իր ընկերներ Ս.-ի և Վ.-ի ազդեցության տակ, բայց թե ինչու է մեխանիկորեն կրկնել նրանց արարքները,

այդ բացատրել չի կարող: Գործի նյութերից կրում է, որ այստեղ պատճառը եղել է այն, որ Վ. Ղ.-ի բարոյական ձևավորումը սեղի է ունեցել մոտավորապես այնպիսի պայմաններում, ինչպիսին Ս.-ի և Վ.-ի: Նրանց բնասնիրներում անցյալի խորթ մնացուկների ակալությունը շատ նման են, կարծես նույնը լինեն: Նրանք փոքր հասակից միասին են խաղացել, դպրոց գնացել, ծնծել ու ծնծվել, կերել ու խմել: Ինչպես ստում են աչքառող նմանները գտել են միմյանց:

Անձնավորության նկատմամբ միջավայրի ազդեցությունն ավելի ուժեղ է դրսևորվում աշխատանքում: Աշխատանքային դատարարականությունն ամենից կարևորն է ու վրձականը: Այդտեղ կարծես մարդու բարոյական կերպուրը վերջնական ձևավորում է ստանում: Նախ թե ինչպիսի կուլիտիվում է նա աշխատում, ինչպիսի իրավունք գոտությունն ունի այնտեղ, ինչ մարդկանց հետ է նա շփվում, մտերմություն անում և համանման հանգամանքներով էլ պայմանագրված են այն ներգործությունն ու ազդեցությունը, որ կրում է նա:

Մարդ ամենից առաջ կրում է միջավայրի դրական ներգործությունը, բայց չի բացառվում նաև բացասական ներգործության հնարավորությունը: Երբ պետական և աշխատանքային կարգապահությունը իրենց բարձրության վրա չեն, սխալներն ու թերությունները հանդուրժվում են, արտադրական ուղանների կատարումը, արտադրանքի որակը, խնայողական ռեֆորմ վառ դրույթում մեջ են դաժվում, ապա այդ բոլորը անձի վրա բացասական ազդեցություն են ունենում: Երբ հետևում են կուլիտիվի յուրաքանչյուր անգամի վարքագծին, կանխում են նրա շեղումները, ժամանակին միջոցներ են ձևոր ստեղծում նկատվող հակահասարակական երբվությունների արմատախիչ անելու համար, ապա դրական արդյունքների են հասնում: Երբ յավ հիմքերի վրա են դրված բնեղատուրությունն ու ինքնաբնեղատուրությունը, ապա դրական արդյունք է ստացվում:

Երևանի Կանազի գործարանում արգեն տրագիցիա է դարձել ոչ միայն կուլիտիվի անդամի, այլև նրա բնասնիրը

անդամի կողմից վատ արարք կատարելու զեկաբուն աշխատողի հարցը ժողովում ըննության առնելը: Նրանք ուսումնասիրում են կողիկտիվի անդամի ընտանիքի, երեխաների հետ կապված հարցերը և արդյունքները ըննության առնում: Այստեղ գործում է բարոյական ներգործության հակայական ուժը: Սակայն № 4 ավտոպարկում լրիվ հակադասակեր ենք անհետնում. հանգրվածվում է ամեն ինչ և խիստ բացասական ներգործություն ունենում աշխատողների վրա: Ահա թե ինչու մեք ընդհանուր առմամբ այդ կողիկտիվի 14 աշխատողները դատական պատասխանատվության են ենթարկվել: Այդտեղ քարոյական ներգործության ուժը չի գործադրվում, հակասասարակական արարքները դատաստանություն չեն արժանանում և կարծես թե վերածվում են ստորություն: Հանցագործության նկատմամբ ատելություն չի սերմանվում:

Անձի բարոյական ձևավորման վրա անդամյան մեծ ազդեցություն են ունենում զիրն ու զրականությունը, արվեստի բոլոր տեսակները, հատկապես զեղարվեստական զիբրը, կինոն, մամուլը: Նայած թե ինչ հիմքերի վրա է դրված այդ զորքը: Կա՞վ աշխատությունը, նկարը, նազդրումը զրական զործ են կատարում: Մենք ունենք շատ լավ վեպեր ու պոեմաներ, պատմվածքներ, բանաստեղծություններ, կինոնկարներ ու ներկայացումներ, որոնք մշակում են մարդու, մասնավորապես երիտասարդության հոգևոր աշխարհը, մտահորիզը: Մակայն հենց այս շահագրանց կարևոր բնագավառում ոչ թիչ թերություններ ու բացեր կան: Օրինակ, զրական և բացասական կերպարների կերտման հարցը: Հաճախ զեկաբուկանական զրականություն մեզ բացասական կերպարք ափելի հաջող է նկարագրվում, քան զրականը: Մեր վիպասաններն ու արձակագիրները կարծես մոռանում են, որ զրական կերպարի ստեղծումը թեև շատ ափելի զվար է, բայց զա կենսական անհրաժեշտություն է: Երիտանդազեն ու Նար-Պոսը, Մուրացյանը և թունանյանը, ինչպես և մյուսները բավական հաջող են հակադրում զրական ու բացասական կերպարները: Զի կարելի էրբեք մոռանալ Ք. Սուրբուկյանի «Պեպոն», որտեղ Պեպոն, Կեկելը և մյուսները հակադրվում են

Զիվիմոտիվն, նրա կնոջը: Դա չի մոռացվում, իսկ այն ինչ չի մոռացվում, նշանակում է, որ նա մարդու վրա անհրաժեշտ, խոր ներգործություն է ունեցել: Անձի հոգևոր կյանքում, մանավանդ անչափահասների մոտ մեծ զիբ է խաղում կինոնկարը: Դատական որոշ զործերից երևում է, որ երիտասարդը արտասահմանյան կինոնկարների բացասական ներգործության ներքո հանցագործություն է կատարել: Երիտասարդը ձգտում է զանաչ այնպիսի քաշը, «հենթոս», ինչպիսին կինոնկարի բացասական տիպն է:

Դժբախտաբար մեզ մոտ էլ ոչ թիչ թվով այնպիսի նկարներ են ցուցադրվում, որոնք զրական ներգործություն չեն կարող ունենալ: Ֆինանսական պլաններին կատարման ձգտումը վնասում է մարդու դատասարակությանը:

Անձի բարոյական ձևավորման վրա ներգործում են նաև ռազիթարձրախոսները, հեռուստացույցը, թերթը: Դրանց միջոցով զովերզվում են զրական երևույթները, պարզարևվում և միաժամանակ խարսկանվում բացասականը: Սակայն զրա հետ միասին ռազիթընդունիչը նաև բացասական ներգործության հնարավորություն է ստեղծում. մարդիկ լսում են արտասահմանյան հաղորդումները և թնադատական մտեցնում շունենալով, ընկնում զրանց ազդեցության տակ: Իմպերիալիզմի գազափարական զվիկտրիան որոշակի բացասական զիբ է խաղում: Այդ ազդեցությունը հատկապես ուժեղ է այն դեպքում, երբ զրա զեմ հետեղական պայթույթի մղվում, այն չի մերկացվում:

Դատական զործերը ցույց են տալիս, որ երեխաների, զինահասների, երիտասարդների բարոյական ձևավորման վրա այս կամ այն շահով բացասական ազդեցություն են ունենում, այսպես կոչված, մյուսադիրը (Հայկ. ՍՍՀ Քրեական օրենսգրքի 227 հոդվածը նախատեսում է այդպիսի հանցագործություններ): Բացասական տարրերն իրենց ազդեցության տակ են առնում որոշ երեխաների և նրանց հրահրում հակահասարակական արարքներ կատարելու նրանք զրամով խաղեր են կազմակերպում և սկզբնական շրջանում զիտավորյալ կերպով մանր զումար են տանող տալիս և երբ

արդին այդ գործում ներգրավված են համարում միամիտ երիտասարդին, այս մեծ գումարներ են կորցում նրանից և հարկազրույց գողություն կատարել պարտք մարելու համար:

Միջավայրի գրական և բացասական գործոնների ու անձի անհաստեակության փոխադարձ պայմանավորվածությունը, փոխադարձ ներգործությունը ստեղծում են վարքագծի բնորոշյան պատերազմի իրավիճակ. ես կարող է քննադատել գրական կամ բացասական ներգործությունը: Նշանակում է, որ արարքը մարդու կամքի արտահայտությունն է: Այս ցույց է ապիտ, որ մարդու հակահասարակական արարքը ճակատագրական անխուսափելիությունն էր, այլ անձի կամքի արտահայտություն: Եթե մարդ կատարում է հանցավոր արարք, այսպես դա նշանակում է, որ նրա ռոգեբանության և բնավորության մշակման պրոցեսում բացասական ներգործությունն ազդելի ուժեղ է եղել և այդպիսին իր ժամանակին չի կանխվել, ուղղվել և ճիշտ դաստիարակություն տրվել: Անձի բարոյական ձևավորման պրոցեսում բացասական գործոնների հետևանքով առաջացել են հակահասարակական հայացքներ, որոնք և նպաստավոր պայմաններում կարող են վերածել հանցագործության:

3. ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Հանցագործության իրական պատճառները մարդու հակահասարակական հայացքներն են, իսկ այդպիսիները կարող են գոյանալ հասարակական կեցության մեջ եղած որոշակի հակասությունների հետևանքով: Հասարակական կեցությունը ներկայացնում է հավերժ զարգացող և փոփոխվող կենդանի օրգանիզմ իր բազմաթիվ կողմերով, երևույթների օրինաչափություններով և դարգացման օբյեկտիվ օրենքներով: Գրանք ունեն իրենց դրական և բացասական կողմերը, անցյալն ու ապագան, այն ինչ որ գալիս ապրել է, մահանում է և այն ինչ նոր է, դրական է, ծագում ու զարգա-

նում է, կատարելագործվում: Նրանք ունեն իրենց ներքին հակասությունները, որի հետևանքով էլ տեղի են ունենում ոչ միայն նրանց առաջացումը, այլև փոփոխությունները, զարգացումը, կատարելագործումը:

Հասարակության մեջ հակասություններն առաջանում են հասարակության նյութական հիմքի զարգացման հիման վրա: Այդ հակասությունները կարող են լինել անտազոնիստական և ոչ-անտազոնիստական: Անտազոնիստական հակասությունները իշխանական հասարակական ուժերի, նպասակների, անեղենների այնպիսի հակասություններն են, որոնք բխում են դասակարգային կենսապայմաններից, և որոնց հաղթահարումը կարող է տեղի ունենալ դասակարգային այնպիսի պայքարի միջոցով, որի հետևանքով անտազոնիստական այդ դասակարգներից մեկը ջախջախվում է: Այդպիսի հակասությունը գործում է կապիտալիզմի օրոք և այն իր վերացման սկիզբն է առնում շահագործող դասակարգի տապալմամբ, բայց լիովին վերանում է կապիտալիստների դասակարգի լրակատար ոչնչացմամբ միայն: Նշանակում է, որ այդ հակասությունը իր գոյությունը շարունակում է կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում և չբանում է սոցիալիզմի լրակատար ու վերջնական հաղթանակի շնորհիվ: Այդ հակասությունը ուրիշ կերպ հաղթահարել չեն կարող և դրա միակ ուղին կապիտալիստական հասարակարգի ոչնչացումն է:

Ոչ-անտազոնիստական հակասություններն սոցիալական ուժերի ու անեղենների միջև տեղի ունեցող այնպիսի հակասություններն են, որոնք հակասությունների հետ միասին ունեն ընդհանուր այնպիսի բան, որ դրանք լուծելու հնարավորություն է ստեղծում: Սոցիալիզմի պայմաններում այդ հակասությունները հանդես են գալիս ամբողջ հասարակության սոցիալական, քաղաքական-բարոյական միասնության բազայի իրադրապայմաններում: Թեև հասարակության մեջ որոշ ոչ-անտազոնիստական բնույթի հակասություններն անխուսափելի են, բայց հասարակության անտեսական, քաղաքական, գաղափարական շահերի ու նրա նպատակների

այդ միասնությունը որոշիչ, առաջատար այնպիսի գործոն է դառնում, որը հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծել ամեն մի զժվարություն և հակասություն:

Հետևաբար, սոցիալիստական հասարակարգում թեև տնտեսափեղի են ոչ-անտազոնիստական հակասությունները, դրանց գոյությունը, բայց միաժամանակ սոցիալիզմն օրյկկտիվ նախադրյալներ է ստեղծում այդ հակասությունները հաղթահարելու համար: Այստեղ ևս տեղի է ունենում իր դարն ապրածի և նորի՝ առաջադիմականի միջև համառու տեսական պայքար: Նշանակում է, որ սոցիալիստական հասարակարգում գոյություն ունեն և հակասություններ և դրանք լուծելու օրյկկտիվ նախադրյալներ: Այդ հանգամանքի անտեսումը սխալ հետևություն է առաջացնում, որի հետևանքով պայքարը դրանց վերացման համար արդյունավետ չի կազմակերպվում:

Այդ գլխավոր հակասությունները կարելի է հետևյալ ստորաբաժանման ենթարկել.

ա) Տնտեսական-նյութական բնույթի հակասություններ

Սոցիալիզմի օրոք հասարակության արտադրողական ուժերը դեռևս չեն հասնում այնպիսի մակարդակի, որ կարողանան լիովին բավարարել հասարակության բոլոր անդամների հարաճուն պահանջումները: Այժմ պայքարը մղվում է հասարակության կարիքների լիակատար բավարարման համար անհրաժեշտ նյութական և կուլտուրական բարիքների առատություն ստեղծելու նպատակով: Սակայն զադեռևս հեռանկար է և երբ այդ հնարավորությունը իրականություն դառնա, այն ժամանակ կվերանա պահանջի և առաջարկի միջև եղած էական տարբերությունը, մարդիկ կաշխատեն ըստ ընդունակության և կտանեն ըստ պահանջումների:

Արդի շրջանում արտադրության մակարդակի և պահանջի փոստական վիճակի միջև որոշակի հակասությունն անխուսափելի է: Այդ իրադրապայմաններում արտադրության և

արտադրանքի բաշխման բնագավառում հակասության հնարավորությունը հասարակության ու նրա առանձին անդամների միջև բացառված չէ: Գաղտնիք չէ, որ որոշ տնտեսակալարները պակասը սպիկուլյացիայի հնարավորություն է ստեղծում, բնակարանային անհրաժեշտ ֆոնդի պակասը, անբավարար վիճակի գանադան շրաշաշումների հնարավորություն է առաջացնում, նյութական դրությունը մասը պրոլյուան տոիթ է տալիս:

Սոցիալիստական արտադրության գլխավոր նպատակը հասարակության բոլոր անդամների նյութական ու կուլտուրական հարաճուն պահանջումների լիակատար բավարարումն է, սակայն այդ խնդիրը կարող է արմատապես լուծվել կոմունիզմի նյութատեխնիկական բաղալի ստեղծմամբ միայն: Չի կարելի անտեսել սոցիալիզմի ներհատուկ այն կարևոր հատկանիշը, որ հասարակական արտադրության աճման հետ միասին անընդորեն բարձրանում է հասարակության անդամների գնողունակությունը, պահանջումները, ճաշակը, պահանջկոտությունը: Մարդիկ կատուցելով նոր հասարակարգ, արդարացիորեն ցանկանում են ալելի լավ հաղորդել, ալելի լավ սնվել, ալելի լավ բնակարաններում ալելի, ալելի շատ ու բարձր որակի կաշխատիք ունենալ:

Սակայն բանը միայն անհրաժեշտ քանակի ու որակի, նյութական ու կուլտուրական բարիքների ստեղծումը չէ, թեև դա տվյալ հարցի պրիմատն է: Այստեղ մեծ նշանակություն ունի նաև այդ բարիքների ճիշտ բաշխումը, որը սոցիալիզմի տնտեսական հիմնական օրենքի պահանջների անընդ կատարման կարևոր պայմաններից մեկն է: Դրա անտեսումը, խախտումը հակասություն է առաջացնում այդ բարիքների արտադրության և բաշխման միջև:

Սոցիալիստական հասարակարգի հիմնական տնտեսական ըստ ընդունակության աշխատելու և ըստ աշխատանքի ստանալու սկզբունքը հասարակության անդամների միջև նյութական վիճակի տարբերության վերացման պայմաններ չի ստեղծում, բայց հակասություններն առաջանում են ոչ թե այդ սկզբունքի հետևանքով, այլ այն խախտելու պատճառով:

ելի չի աշխատում, նա չի ուսում սկզբունքի խախտումն է՝ քսա քեղունակութիւն շաշխատելը և քստ աշխատանքի շհատուցելը, աշխատունակ անձի կողմից հասարակութիւն հաշիին ապրելը, հասարակութիւնը թիշ տալը և նրանից շատ կորզելը:

Որոշակի թվով մարդիկ, թեև աշխատունակ են, հատկապես կրիտատարզներ, չեն աշխատում, բայց հաջնվում են, անվում, ապրում ավագույն բնակարանում, օգտվում հասարակական այլ բարիքներից: Գա պարզապես հակասութիւն է հասարակութիւն և նման տարրերի միջև, որը կարող է հասթահարվել նրանց աշնիվ աշխատանքային գործունեութիւն մեշ ներգրավելու շնորհիվ: Երբ աշխատունակ անձը հասարակութիւնը ոչինչ չի ապիտ, կամ տալիս է թիշ, բայց վնրցնում շատ, ապա դրանով իսկ նա իր անձնական շահերը հակադրում է քեղհոանութի շահերին, պլլլլլլլլ մեշ է մտնում նրա հետ: Երբ պաշտոնատար անձը, շարաշնելով իր պաշտոնական գիրքը, ավելի շատ նյութական ու կուլտուրական բարիքներ է ստանում, քան նրան հասնում է քստ օրերի, ապա դրանով իսկ նա իր անձնական շահը հակադրում է հասարակութիւն շահին: Նշված և համաման այլ հակասութիւնները հետևանք են նյութական ու կուլտուրայան բարիքների արտադրութիւն մակարդակի և հասարակութիւն պահանջներին: Այդ հակասութիւններն անձի մտտ հակահասարակական հայացքներ են առաջանում և միահշուտվելով բարոյական ձևավորման ընթացքի բացասական գործունեորի հետ, հանցագործութիւնների առաջացման հնարավորութիւն ստեղծում:

բ) Հոգևոր բնույթի կակասութիւններ

Անձի մտտ հակահասարակական հայացքների առաջացման աղբյուրները լինում են ոչ միայն նյութական բնույթի, այլև հոգևոր: Սովորաբար հանցագործութիւնները ծնվում են նյութական և հոգևոր բնույթի բացասական գործունեորի

միահշուտման հետևանքով: Փաստերը ցույց են տալիս, որ նյութական կարիք ունեցող անձանց միայն անձնան մասն է հանցագործութիւն կատարում: Եթե հանցագործութիւն պատճառը լիներ միմիայն նյութական բնույթի բացասական գործներ, ապա նյութական կարիք ունեցող բոլոր մարդիկ էլ այդ կարգի հանցագործութիւն կկատարին, բայց չեն կատարում: Գա նշանակում է, որ հանցագործութիւն պատճառը միայն նյութական գործը չէ, այլ իողեր բնույթի տարրեր անակի բացասական գործունեորի առաջնում: Եթե վնրցնենք միայն նյութական բնույթի բացասական գործներ մեկուսացված դրութիւն մեշ, ապա այն հանցագործութիւն չի առաջանի, անձի կեղավ մտտ հակահասարակական հայացքներ չի գոյացնի, այն նոր որակ է ստանում ուրիշների հետ միատուլվելով միայն:

Այստեղ գործում է զանազան երևույթների փոխադրված կարիքի, փոխադրված պաշտոնավորվածութիւն, փոխադրվածութիւն սկզբունքը. երևույթը մեկուսացած միճակում ինքն իր գոյացման պատճառը չի կարող բացահայտել: Ահա թե ինչու այն պետք է վնրցնել իր գիտակտիկական կոնկրետութիւն մեշ, այլ կեղավ մտտ հակահասարակական:

Ինչպես արդեն նշվել է, կարևորագույն զեր է խաղում ամենից առաջ անձի բարոյական ճիշտ ձևավորումը, հակասակ զեպրում նրա մտտ կարող են առաջանալ հակահասարակական հայացքներ: Ինչո՞ւ է բացատրվում այդ հանդամները: Այն ճիշտ հասկանալու համար պետք է նկատի ունենալ որ հասարակական գիտակցութիւնը հանդիսանում է հասարակական կեցութիւն արտացոլում: Գա նշանակում է, որ հասարակական գիտակցութիւնը չի կարող զերծ մնալ այն լացասական գործունեորի ազդեցութիւնից, որոնք կան հասարակական կեցութիւն մեշ: Թանն այն է, որ գիտակցութիւն մեշ արտացոլվում է հասարակական կեցութիւն մեշ զրոյութիւն ունեցող ոչ միայն դրականը, այլև բացասականը: Սակայն պրիմաթը հասարակական կեցութիւնն է, որի մեշ սեղի ունեցող էական փոփոխութիւններն իրենց արտահատկութիւնն են զտնում նաև հասարակական գիտակցութիւն

մեջ: Այստեղից հետևում է, որ հասարակական գիտակցությունը չի կարող առաջնայինը լինել, եթե այն կեցութիւյան արտահայտութիւն է, ապա ամենից առաջ այն պետք է գոյութիւն ստնի կեցութիւյան մեջ և ապա արտացոլվի գիտակցութիւնում:

Հետևաբար, հասարակական գիտակցութիւնը հայտնի չափով ետ է մնում հասարակական կեցութիւնից: Բայց դա ի՞նչ է նշանակում: Ամենից առաջ այն, որ հասարակական կեցութիւյան և հասարակական գիտակցութիւյան միջև որոշակի նակասութիւններն անխտասախիլ են: Սակայն այդ նակասութիւնների բնույթը պայմանավորւում է հասարակական կեցութիւյան և հասարակական գիտակցութիւյան բնույթով, էութեամբ, բովանդակութեամբ: Մյուս կողմից հասարակական և անհատական գիտակցութիւյան փոխադարձ պայմանավորվածութիւնը, փոխադարձ ազդեցութիւնը և փոխադարձ կապերը հաշվի առնելով միայն կարելի է ճիշտ եզրակացութիւն հանգել:

Անձի հոգեբանութիւյան և գաղափարական վերափոխման բոլոր պրոցեսներում գրեթեբոլոր ան նաև տնհատական գիտակցութիւյան առանձնահատկութիւնները: Չի կարելի անհատական գիտակցութիւնը մեկուսացնել հասարակական գիտակցութիւնից: Հասարակական գիտակցութիւնը գոյութիւն ունի առանձին մարդկանց գիտակցութիւն մեջ: Անհատական գիտակցութիւնը հասարակութիւյան մեջ ապող մարդկանց գիտակցութիւն է և այդ իսկ պատճառով էլ այն հասարակական գիտակցութիւյան արտահայտութիւնն է: Այսուհանդից հետևում է, որ հասարակական գիտակցութիւնը ետ է մնում հասարակական կեցութիւնից, իսկ անհատական գիտակցութիւնն էլ հասարակական գիտակցութիւնից:

Անձի անհատական գիտակցութիւյան զարգացումն անցնում է զանազան աստիճաններ, մինչև որ հասնում է նրա անձնական ու հասարակական շահերի ներդաշնակութիւյան անհրաժեշտութիւյան գաղափարին: Այդ մակարդակին նա բարձրանում է ոչ թե արեբարայնորեն, այլ կոմունիստական դաստիարակութիւյան շնորհիվ: Բանն այն է, որ հասարակա-

կան գաղափարները տարբեր են լինում՝ առաջվոր և անակցիտն, բայց թե՛ մեկը և թե՛ մյուսը որոշակի դեր են խաղում հասարակական ու անհատական կյանքում: Առաջվոր գաղափարները ծառայում են հասարակական պրոգրեսին, նորին, ծագող ու զարգացողին, իսկ անակցիտն գաղափարները կառուցում են այն բուրբից, ինչ որ արդեն ապրել է իր դարն, այնև չի ծառայում հասարակութիւյան շահերին, խղճնորտում է նրա զարգացման և ձգտում պահպանել հին հասարակութիւյան ուժերը: Գա համառ ու տեւական պայքարի պրոցեսն է, որի ընթացքում մեռնում է հինը և ծնվում ու զարգանում նորը, առաջադիմականը:

Սոցիալիստական հասարակարգը մեծ հնարավորութիւններ է ստեղծում նոր մարդու դաստիարակման, նրա մտտ ընդհանուր գործին նվիրվածութիւյան՝ աշխատասիրութիւն, կոլեկտիվիզմի ու համագործակցութիւյան ազնիվ հասկանիչներ ձևավորելու համար: Ուրիշ խոսքով, սոցիալիզմը օբյեկտիվ նախադրայինն ու պայմաններ է ստեղծում կոմունիստական հոգեբանութիւյան ու հայացքների, բարբերի ու վարքի նոր նորմերի առաջացման և զրանց արդյունավետ զործունեութիւյան համար: Կոմունիստական դաստիարակութիւնը մարդու հայացքների, զգացումների, կամքի, բնավորութիւյան ճիշտ զործողութիւնների և զրական հայացքների ձևավորման, անձի համակողմանի կատարելագործման ու զարգացման պրոցեսն է: Գա իմաստամասկ համառ ու տեւական պայքարի պրոցեսն է, քանի որ կոմունիզմը կառուցողի բարոյական կողերքի վե՛հ սկզբունքների արմատավորումը կարող է տեղի ունենալ միայն անցյալի խորթ մնացուկների հարթաւարմամբ, արգելքները վերացնելով: Օրինակ, հայտնի է, որ արտաարտիւյան միջոցներն ու գործիքներն մասնավոր սեփականութիւնը մարդուն անջատում է, հեռացնում, վանում մյուսներէր, իսկ հանրային սեփականութիւնը, բողահակտակը, նրանց մերձեցնում է, համախմբում: Սոցիալիզմը վերացրել է այդ մասնավոր սեփականութիւնը և լայն հնարավորութիւններ ստեղծել կոլեկտիվիզմի ոգին արմատավորելու համար: Բայց այդ հնարավորութիւնն իրակա-

նյություն դարձնելու համար պահանջվում են մեծ ջանքեր, աշխատանք, դաստիարակչական գործունեություն:

Բանն այն է, որ մասնավոր սեփականության վերացման հետ միասին անմիջապես չեն անհայտանում մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, շահամոլությունը, եսամոլությունը և համանման բացասական այլ գործոնները: Կապիտալիզմը ժայռահեղուկացնում է հասցնում ինդիվիդուալիզմը, եսամոլությունը, շահամոլությունը, որոնք ներթափանցում են հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Դրանք շարունակում են իրենց գոյությունը ոչ միայն կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում, սոցիալիզմի օրոք, այլև անգամ սոցիալիզմից կոմունիզմին անցման ժամանակաշրջանում: Այդպիսիները հազվահարուցում են կոմունիստական բարոյականության սկզբունքներն արմատախրոնելու պրոցեսում: Դա ոչ այլ ինչ է, եթև ոչ պայքար:

Սոցիալիզմի նյութական և հոգեոր կյանքի բուռն զարգացման հետ միասին օրինաչափորեն նվազում են հանցագործությունները, հակահասարակական արարքները, բայց դրանք դեռևս արմատախիլ չեն արվել: Սոցիալիստական հասարակության անգամներին նյութական ու կուլտուրական բարեկեցիկ կյանքի աճը, նրանց կուլտուրական մակարդակի պայառած բարձրացումը և կոմունիստական դաստիարակությունը մահացու հարված են հասցնում հակահասարակական հայացքներին, հանցագործություններին և դրանց առաջացման պատճառներին: Սակայն այս պայքարը դեռևս երկար կտևի մինչև որ լիակատար կերպով արմատախիլ արվեն հանցագործություն ձևող պատճառները:

Հակահասարակական հայացքներ առաջացնող հոգեոր պատճառները կարելի է ստորաբաժանել երկու զիսավոր խմբի. մեկը զա անցյալի խորթ մնացուկների վերապրուկներն են, իսկ մյուսը՝ իմպրիսիզմի նեխված հայացքների, դազափայնների բացասական ներգործությունը:

Անցյալի խորթ մնացուկներ ասելով պետք է հասկանալ ոչ միայն կապիտալիստական, այլև նախակապիտալիստական շրջանից եկող այնպիսի մնացուկների վերապրուկները,

որոնք մարդկանց գիտակցության մեջ հակահասարակական հայացքներ են առաջացնում: Սակայն դրանք տարբեր են լինում և սովետական դանազան մարդկանց գիտակցության նկատմամբ տարբեր աստիճանի ներգործություն են ունենում: Այստեղ շփալվիչու և հանցագործության դեմ կազմակերպված, նպատակասույց, գիտականորեն հիմնավորված պայքար մղելու համար պետք է նկատի ունենալ անհատական գիտակցության առանձնատեսությունները՝ ավելյալ անձի կրթությունը, կուլտուրական մակարդակը, դաստիարակչամոլության աստիճանը, հոգեբանությունը, բարոյական հայացքները և համանման այլ հատկանիշներ:

Անձի բարձրագույն կրթությունը նպաստավոր պայման է նրան ճիշտ դաստիարակություն ցույց տալու համար, բայց կրթությունը դեռևս լրիվ դաստիարակություն չէ: Եվ եթև ոչ միայն միջնակարգ, այլև բարձրագույն կրթություն ունեցող անձը հակահասարակական արարք է կատարում, ապա դա նշանակում է, որ նա լավ դաստիարակություն չունի, նրա մոտ անցյալի խորթ մնացուկներ տակավին ուժեղ են: Եթև մարդ զբաղվում է հարբեցողությամբ և հալածում կնոջը, վատ դաստիարակում երեխաներին, ապա զա վկայում է նրա գիտակցության մեջ անցյալի խորթ մնացուկների առկայության մասին: Այսպես, Երևանի բնակիչ Խ. Մ. - ն տղայի է իր վարքագծով: Նա շուրջ քսան տարի չի աշխատում, թեև ֆիզիկապես առողջ է և լավ մասնագիտություն ունի: Նա կազմվելով հակահասարակական տարբերի հետ, ընթանում է հանցավոր ճանապարհով և կնոջը, երկու երեխաներին լքած՝ դուրում պորտաբույծ կյանք: Նա երեք անգամ դատական պատասխանատվության է ենթարկվել զոլուկությունների և խորախախտությունների համար, դարձել է ակոհոլյանոլ, թեև երկու անգամ եղել է հոգեբուժական հիվանդանոցում, թշում է, թև բուժել են ակոհոլիզմից, բայց զուրա գրվելուց հետո նորից է զբաղվել հարբեցողությամբ և սկսել հալածել կնոջը, պորտաբույծ կյանք շարունակել: Այժմ արդեն ուղղակի օրհնաբեկ է դարձել նրա բուժումը, քանի որ այդ ուղղությամբ նրա մեջ բոլորովին ցանկություն չի գրահորվում: Նա

չի կորսում վատ ընկերներին և շարունակ նրանց ազդեցության տակ էլ նրա հետ ունեցած դրույցից պարզվել է, որ նա Երևանում չի կորսող ճիշտ ճանապարհ՝ դալ, դրան խանգարում են նրա հանցակից ընկերները, իսկ ինքը կորցրել է իր կամքի ուժը, մի բան, որ շատ բերող է անընդհատ հարեցողությունը դրազվողներին: Իսկ քաղաքում չէ, թեև համանման տիպերի միջև ևս որոշակի տարբերություններ կան, որոնք պետք է հաշվի առնել պայքարի հաջողության համար:

Անցյալի խորթ մնացուկներն ավելի ուժեղ են կենցաղում, բարոյական հայացքներում, ընտանեկան հարաբերությունների մեջ: Եթե տվյալ անձը բարձրագույն կրթություն է ստանում, բայց կնոջ նկատմամբ այնպիսի հայացքներ ունի, ինչպիսին ունեցել են նրա պապերը, այսինքն՝ կնոջ համարում է իր սեփականությունը, տան ծառան, ընտանիքի ասկ սպասարկուն, զրկում է նրան բոլոր տեսակի ազատություններից, անպատվում ու հարածում է նրան, սպա դա վկայում է նաև այն մասին, որ նրա մոտ ամուր են նստած անցյալի խորթ մնացուկները, նրա նկատմամբ դպրոցում և դարձրագույն ուսումնական հաստատությունում տարված դաստիարակչական աշխատանքները անհրաժեշտ արդյունք չեն տվել:

Տրոգիցիանների և սովորությունների ուժը մեծ է և զբվար հաղթահարելի: Անցյալի խորթ մնացուկների դեմ ամենից առաջ պայքար տարվում է համոզման ու հարկազանքի միջոցներով, որոնց ճիշտ զուգակցումը բացասիկ կարևորություն ունի: Գլխավոր համոզումն է, դաստիարակչությունը, բայց այն չի բացառում հարկազանքի՝ բարոյական և իրավական բնույթի, կիրառման ոչ միայն հնարավորությունը, այլև համախա անհրաժեշտությունը: Այստեղ հաշվի պետք է առնել մի շարք հանգամանքներ: Ամենից առաջ պիտի նկատի առնելու, թե ինչպես է զբեռնվում այդ անցյալի սև ուժը և զրա հիման վրա էլ որոշել կիրառելիք միջոցառումների բնույթը, տեսակը, շափքը, ծավալը: Հարկավոր է հաշվի

առնել ֆեոդալական երևույթի վաճառվորության աստիճանը, արածավածությունը, զրա դեմ մղվող պայքարի վիճակը:

Գատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայկական ՍՍՀ-ում կնոջ կյանքի, առողջության, սեռական անձեռնմխելիության, պատվի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները վերջին տարս տարում կեսով շափ նվազել են: Սակայն դեռևս այդ խիստ վտանգավոր հանցագործություններն արմատախիլ չեն արվել: Բազմաթիվ դատերը վկայում են, որ այդ բնագավառում գաղափարական պայքարը շատ ցածր մակարդակի վրա է գտնվում, այդ նպատակով չեն օգտագործվում ունեցած բազմաթիվ հնարավորություններ: Կինոնկարների ցուցադրումը կենցաղային հարցերի վերաբերյալ բացատրիկ դեպք է լինում, մամուլում զատ քիչ տեղ է հատկացվում այդ հարցերի լուսաբանմանը, արտաստություններ, զրույցներ, հարց ու պատասխաններ շատ քիչ են կազմակերպվում: Կոմունիստական կենցաղավորություն, սովետական ընտանիքը լավագույն օրինակների մաստայականացման աշխատանք չի տարվում: Ընդհակառակը, արտաստական շատ այնպիսի կինոնկարներ են ցուցադրվում, որոնք խորթ են կոմունիստական բարոյականության սկզբունքներին:

Մ. Նալբանդյան և Ա. Շիրվանզադեն, Ս. Շահապիրը և Պ. Պողոսյանը, Նար-Պոսը և Հովհ. Թումանյանը, ինչպես և մյուս հայ վիպասաններն ու արձակագիրները, բանաստեղծները համարձակորեն խարազանել են կնոջ նկատմամբ տրամադրի վերաբերմունքը, լուսաբանել են կնոջ թշվառ ու սուսապալ վիճակը, փորձել են ցույց տալ, թե ինչպես կինը կարող է հրջանիկ լինել: Միայն սովետական կարգերի հաստատումը կնոջ պայծառ ապագայի հնարավորություն ստեղծեց: Այժմ կինը հասել է մեծ նվաճումների, բայց գեղարվեստական գրականության մեջ դեռևս կնոջ ձեռք բերած հոյակապ նվաճումները իրենց ամբողջ մեծությամբ չեն արտացոլվում, ինչպես և անցյալի խորթ մնացուկները, զրանց ծանր հետևանքները լավ չեն երևան հանվում ու մերկացվում: Էին սովորությունները մնում են կենցաղում, բարոյական հա-

յացքներում, մասնավորապես մեծահասակների գիտակցութեան մեջ: Ամեն մի կին իր մոր շարունակութունն է. նա փորձում է հաղորդել, փոխանցել իր հաջողիկ այն, ինչ ինքը օտացել է, ժառանգել նախորդից, և հենց այդտեղ է, որ պետք է կանխել այդ և նրան օւսուցանել նորը, կոմունիստական բնտանիքի լավագույն օրինակը: Այդ բանը հրամանով չի կարելի անել, բայց լավ վիպը զրական մեծ զործ կարող է կատարել, կամ ասանք նույնը ոչ ավելի պակաս հաջողութեամբ լավ կինեկարք կարող է անել:

Կենդ հայածող ամուսնուն պետք է բարոյական գաղափարաբանութեան ենթարկել և թեկուզ մի օրինակ զրանից կինեկարքներում անևող մարդը չի կարող որոշակի հետևութուններ իր համար շահել: Երբ ընկերական գաղափարանում, թաղային կոմիտեում կամ կուլեկուլի ժողովում բնուտ են կենդ հայածող ամուսնու կամ հարսին տանող սկեսուրը հարցը, ապա այն հաջող կազմակերպելու ղեկացում մեծ ազդեցութուն է ունենում ոչ միայն տվյալ անձի, այլև ուրիշ շատ քաղաքացիների կատմամբ:

Անձի հոգևոր կյանքի վրա բացասական ազդեցութուն է ունենում իմպերիալիզմի նեխված գաղափարախոսութունը, երբ տվյալ մարդու բարոյական ձևավորումը ճիշտ չի ընթացել, նրա մտա կոմունիստական աշխարհայացքը չի մշակվել: Այդ ներքործութունը անզի է ունենում զանազան ձևերով ու մեթոդներով՝ կինեկարքների, զեղարվեստական գրականութեան, ուղիորդուկների, անձնական շփումների և այլ միջոցներով: Հաճախ գրոսաշրիկների պատմածները երիտասարդութունը ընդունում է անքննադատաբար և իրավիճակի մասին սխալ պատկերացում կազմում: Նույնիակ սովետական այն քաղաքացիների վերադասնալով պետք են արտասահմանյան ուղեորութեան, վերադասնալով պետք են նկարագրել այնտեղ թթազավորող գրախոսքը: Նրանցից շատերն այդ անում են արտաքին տպավորութեան ներքո, ասանց դրա Լուսիյան մեջ ներթափանցելու:

Առհասարակ առաջին հայացքից մարդուն, իբրև կանոն, նորութունը լավ է թվում: Եվ նա արտաքին ձևի ազդեցու-

թյան տակ իբրև մոտ ամեն ինչ իղեկալական է համարում: Չէ որ արտաքին տեսքից չի երևում, թե տվյալ բուրժուական պետութեան քաղաքում ինչպիսի իրական վիճակ գոյութուն ունի, մարդու ազատ հասարակութեամբ, գործազուրկների մշտական բանակ, կողոպուտ ու կեղեքում, որբերի քաղցած մասսան և համանման հաղարավոր այլ քացասական երևույթներ: Զրոսաշրիկը չի կարող թափանցել հասարակական կեցութեան իրական վիճակի մեջ և տեսնել այն, ինչ որ իբր գոյութուն ունի և արտաքին տպավորութեան տակ պատմում են որպես «նրաշրիկներ» թաղում աշխարհ:

Իմպերիալիզմը գաղափարական ղեկբերսիաներ կազմակերպելու շանքեր չի խնայում և այդ նպատակի համար միլիոնների միջոցներ է ներդնում: Բավական է ասել, որ ԱՄՆ-ը վողուց արդեն օրինականացրել է պետական բյուջեում տարեկան 100 միլիոն գույար հատկացնելը՝ ուրիշ երկրներում գնատարութուն, ղեկբերսիա, քայքայիչ գործունեութուն նախալելու համար: Իսկ թե որբան գումար են ծախսում այդ նպատակով ասանց պետական բյուջեում ցույց տալու, այսինքն՝ ցարդանի, զանազան անվան տակ ու խորամանկութեաններով, ղեկբեր է ասել: Իմպերիալիզմի գաղափարական ղեկբերսիայի ղեմ սովետական մարդու պայքարը կենսական օրնորմաձևութուն է ներկայացնում:

Իմպերիալիզմի գաղափարական ղեկբերսիան առաջին հերթին նպատակ ունի տանննալան վտանգավոր պետական նույնագործութունների ստացուցումը, սակայն զա չի բացառում նաև այլ հանցագործութունների ստացման հնարավորութունը: Այն քաղաքացու գիտակցութեան մեջ առաջ է բերում հակահասարակական հայացքներ և հենց զա էլ բավական է նպատակավոր պայմաններում քացասական այլ գործունեների հետ միտնջուտվելով հանցագործութուն ծնելու համար: Գաղափարական որոշ գործերի նշույթները ցույց են տալիս, որ արտասահմանյան կինեկարքների ազդեցութեան տակ կրիտասարդը զողգլթուն, խուլանակալան արար կամ բռնաբարութուն է կատարում: Իմպերիալիզմի գաղափարախոսութունը արտավորում է մարդու հոգեբանութունը,

ազնվութիւնը, նրան մղում է դեպի եսամոլութիւնն ու շահամոլութիւնը, կենցաղային սլլասերվածութիւնը, քայքայվածութիւնը: Բացի այդ բոլորից, նաև նկատի պետք է ունենալ այն շահգամանքը, որ իմպերիալիստական պետութիւնների հետախուզութիւնները քայքայելէ զործուներութիւն նպասակող մեր երկիրն են ուղարկում իրենց զործակալներին և նրանք որսում են առաջին հերթին այն մարդկանց, որոնց մտա տակալին ուժեղ են անցյալից եկող խորթ մնացուկները:

Պարզ է, որ այն մարդը, որն ունի կոմունիստական աշխարհայացք, ստացել է լուրջ դատախարակութիւն, օժտված է կոմունիստական բարոյականութիւնան վեհ սկզբունքներով, նա ոչ միայն չի բնկնի դիվերսանտի կամ լրտեսի, իմպերիալիզմի գործակալի ազդեցութիւն տակ, այլև նրան կմերկացնի ու կհանձնի պետութիւն համապատասխան օրգաններին՝ արժանի պատժի ենթարկելու համար: Այս բոլորից նաև հետևում է, որ կոմունիստական դատախարակութիւնը կենսական նշանակութիւն ունի մարդու կյանքի բոլոր կողմերի, նրա ամբողջ գործունեութիւնան համար, հակահասարակական արարքներից ոչ միայն զերծ մնալու, այլև գրանց զման հրտածելու ու վճառական պայքար մղելու համար: Իմպերիալիզմի գաղափարական ուժը չի կարելի թերագնահատել կամ անտեսել, առհասարակ այն խիստ վտանգավոր է, բայց ավելի է բարձրանում դրա վտանգավորութիւնը այն պագրում, այն ժամանակ, և այն պայմաններում, երբ դրա զեմ կազմակերպված ու անխնա պայքար չի մղվում:

գ) Պետական ապարատի անկաճան գործունեությունը

Սոցիալիստական պետութիւնը կոմունիստական հասարակարգի կառուցման գլխավոր գործքն է, որի ֆունկցիաների իրականացումը տեղի է ունենում նրա ապարատի միջոցով: Պետութիւնն առանց պետական մեխանիզմի՝ ապարատի վերացական հասկացութիւն է վերածվում, քանի որ պետութիւնն ըստ էութիւնան միա ու արուն է դրանում իր ա-

պարատի միջոցով: Ահա թե ինչու պետութիւնը շարունակ կատարելագործում ու զարգացնում է իր ապարատը, այն բարձրացնելով սոցիալիստական հասարակարգի զարգացման ավելալ ժամանակաըջանի պահանջների մակարդակին: Ուստի որբան մեծանում է և բարգաւնում պետութիւնան առջև դրվող պրոբլեմը, այնքան ավելի ու ավելի է մեծանում նաև պետական ապարատի դերն ու նշանակութիւնը:

Հանրահայտ է, թե Վ. Ի. Լենինն ինչպիսի բացատրիկ կարևորութիւն էր տալիս պետական ապարատի ճիշտ գործունեութիւնը: Այդ ապարատը պետք է լինի լայն հասարակայնութիւնան շահերի, իրձերի, մտայնութիւնների, նպատակների արտահայտիչը, կամքը կատարողը, իր կառուցվածքով պետք է լինի պարզ, բնակչութիւնան համար մատչելի, ունենա հոտակ գործունեութիւն, սերտ կապերի մեջ լինի լայն մասսաների հետ, զտնվելով նրանց վերահսկողութիւնան ներքև և գործի նրանց ակտիվ աջակցութիւն պայմաններում: Այն պետք է լինի մասսաների ստեղծագործական նախաձեռնութիւնան կազմակերպողն ու գլխավորողը: Այդ ապարատի յուրբանչուր աշխատող պետք է հաշվապառ լինի մասսաների առջև, իրեն պատասխանատու զդա իր գործունեութիւնան համար: Վ. Ի. Լենինը վճառակարեն դատապարտում էր այդ ապարատում բյուրոկրատիզմի, քաշքշուկի, թերութիւնների, խալաների ու սպորինի գործողութիւնների ամեն մի դեպք, ինչպես նաև աշխատողի զոտոզմատութիւնը, ինքնամեկուսացումը, քաղաքացիների, նրանց զանգատների, զիմամենի, խնդրանքների նկատմամբ չլինելիակական ու անհոգի վերաբերմունքը: Վ. Ի. Լենինը բյուրոկրատիզմի և քաշքշուկի գոչութիւնը կապել է անկուլտուրականութիւնան հետ¹⁵: Նա շատ բարձր էր գնահատում մասսաների ակտիվ և ստեղծագործական անպարտ ուժը, հնարավորութիւնները, որոնք հողթահարում են անհավատալի զմվարութիւններն անգամ. այդ ուժի աղբյուրը մասսաների զիտակցութիւնը և հերոսութիւնն է. «Մեր հողթանակների պատճառը մեր կուսակցու-

¹⁵ Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, Երևան, 1952, էջ 499:

Քյան և Սովետական իշխանության ուղղակի դիմումն է աշխատավոր մասսաներին ամեն մի Հերթական ղեկավարության և Հերթական խնդրի մատնանշումով. հմտությունը՝ բացատրելու մասսաներին, թե ինչու հարկավոր է այս կամ այն մոմենտում սովետական աշխատանքի երբեմն մեկ, երբեմն մյուս կողմի վրա կենտրոնացնել բոլոր ուժերը, հմտությունը՝ բարձրացնելու մասսաների կուսակցը, հերոսությունը, խանդավառությունը, հեղափոխականորեն լարված ջանքերը կույրագույն Հերթական խնդրի վրա կենտրոնացնելով¹⁵:

Գծվարությունները հաղթահարելու կական պայմաններից մեկը պետական ապարատի ու մասսաների սերտ կապն է, նրանց համագործակցությունը: Սովետական պետական ապարատը մեծադույն նվաճումներ ունի և իր գոյությունն ապահովելու բան հիսուն տարիների ընթացքում ցուցաբերել է կենսագործունեություն, անսպառ հնարավորություններ ու կայունություններ: Սակայն սխալ կիրառել կարծել, որ ամեն ինչ բարվոք վիճակումն է և այդ ապարատը հասել է իր կատարելագործության բարձրագույն ստադիանին: Եվ իբր, նրան պետական ապարատն արդեն հասած լինել նման բարձրությունը, ապա դա կհշտնակեր, որ այն արդեն իրեն սպառել է, այլևս զարգացման ու կատարելագործման տեղ չունի և այդ խակ պատճառով նա այլևս չէր կարող բավարարել անչեղուն են աճող պահանջները, ապահովել նոր պրոբլեմների լուծումը: Մյուս կողմից, կյանքը վիպյում է այն մասին, որ դեռևս շատ ու շատ թերություններ, բացեր ու սխալներ ունի այն: Այդ ապարատը տակավին չի ապահովում ՍՄԿԿ Մրտգործի մեծ պահանջների լիակատար կատարումը. «ՍՄԿԿ-ն մեծ նշանակություն է տալիս պետական ապարատի գործունեության բարելավմանը,—ասված է ՍՄԿԿ Մրագրում,— որից մեծապես կախված է երկրի բոլոր ռեսուրսների ճիշտ օգտագործումը, աշխատավորների կուսուր-կենցաղային ապարարման հարցերի ժամանակին լուծումը: Սովետական ապարատը պետք է լինի պարզ, էփան և օպերատիվ, առանց

բյուրոկրատիզմի, ֆորմալիզմի և քաշքշուկի որևէ զրսերման»¹⁷: Այստեղ պարզ ու հստակ ասված է այն մասին, թե ինչպիսի դեր է կատարում այդ ապարատը և ինչպիսին նա պետք է լինի:

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն և Սովետական պետությունը վերջին շրջանում մի շարք կոնկրետ միջոցառումներ են ձեռնարկել այդ ուղղությամբ, սակայն չի կարելի ասել, որ տվյալ խնդրի արդեն լուծված է: Այդ ապարատի թերությունները տակավին արմատախիչ չեն արված: Այսպես, ՍՄՇՄ Գերագույն սովետի նախագահությունը 1968 թ. ապրիլի 12-ին «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և դանդաղները քննելու կարգի մասին» հրամանագիրը թերությունները վերաբերյալ արձանագրել է. «Գրանք նաև վկայում են պետական ու հասարակական շատ մարմինների աշխատանքներում տակավին գոյություն ունեցող բոլոր թերությունները մասին»¹⁸, որ «Հաճախ անպատիժ են մնում քաշքշուկի և բյուրոկրատիզմի համար մեղավոր պաշտոնատար անձինք» (նույն տեղում):

Հետևաբար, օրենսդրական ակտում ևս հիշատակվում է պետական ապարատում դեռևս գոյություն ունեցող թերությունները, մասնավորապես քաշքշուկի և բյուրոկրատիզմի, ինչպես և այդ գործում մեղավոր անձանց անպատիժ թողնելու մասին:

Պետական ապարատի անկանոն գործունեությունը այնպիսի լուրջ բացասական գործոն է, որը միահյուսվելով այլ բացասական գործոններին, հանցագործության առաջացման հնարավորություն են ստեղծում: Իհարկե նշանակություն ունեն պետական կոնկրետ ապարատը, նրա բնույթը, նրան վերապահված իրավունքները և նրա վրա զրված պարտականությունները, պետական մեխանիզմի սխառնմում զբաղված գիրքը և այլ հանգամանքները, որոնց հետևանքով պետական ապարատի անկանոն գործունեությունը կարող է տարբեր

¹⁵ Վ. Բ. Լենին, Երկեր, հատ. 30, Երևան, 1951, էջ 157—158:

¹⁷ ՍՄԿԿ XXXI համագումարի կյուրբեր, Երևան, 1962, էջ 526:

¹⁸ «Սովետական Հայաստան», 1968, № 98:

հետևանքներ ունենալ իրենց բնույթի և ծանրության տեսակետից: Այսպես, պետական-վարչական օրգանների անկանոն գործունեությունն ավելի ծանր հետևանք է ունենում, քան պետական մյուս օրգանների թույլ տված սխալները: Դա ամենից առաջ բացատրվում է նրանով, որ պետության վարչական օրգանների գործունեությունն անմիջականորեն է կապված քաղաքացու ազատության իրավունքների, պատվի և արժանապատվության հետ: Մեջ բերենք երկու օրինակ. Ժ. Գ.-ին (Լենինական) կալանավորում են մարզապահության մեղադրանքով: Սակայն որոշ ժամանակ անց նրան ազատ են արձակում և կալանքի տակ վերցնում Յ. Գ.-ին: Ազատվելուց հետո Ժ. Գ.-ն փախուստի է դիմում, իսկ Յ. Գ.-ին դատապարտում են ապտադրված ուլի տարի ժամանակով: Այդ գործի քննությունը շատ երկար է տևում, քանի որ Յ. Գ.-ի կողմից սպանություն կատարելու զրգապատճառներ չեն հայտնաբերում, նա թե՛ նախաբնություն և թե՛ դատաբնության ժամանակ շատ խիտա կերպով հերքում է մեղադրանքը, միաժամանակ հայտարարում, որ այդ սպանությունը կատարել է Ժ. Գ.-ն, որը տուժողի հետ վատ հարաբերությունների մեջ է եղել: Սկզբնական ակտերը նույնպես կարծես Ժ-ի մեղավորությունն են հաստատում, հենց այն հանգամանքը, որ նա կալանքից ազատվելուց հետո փախուստի է դիմել, վկայում է ինչ-որ լուրջ հանգամանքների մասին: Յ. Գ.-ն բուզմաթիվ ցուցմունքներում և զանպատճերի մեջ Ժ-ին ապառելն ու իրեն դատապարտելը բացատրում է նրանով, որ Ժ-ի ազգականներից երկուսը աշխատում են վարչական օրգաններում: Նա այդ դատավճռի դեմ ամբողջ վեց տարի համառորեն զանգատվում է և ձգտում հիմնավորել իր անօրինական լինելը: Բայց նա միշտ նույն պատասխանն է ստանում, որ դատավճիռը «ճիշտ է և վերանայելու հիմքեր չկան»: Եվ ահա Գ.-ն հուսահատվելով և միաժամանակ կորցնելով իր հավասարակշռությունը 1967 թ. շրթ դեկտեմբերի հասցնելով դրամ է նամակներ, որոնց մեջ թույլ է տալիս անձնական վերավերանայնություն, որի հիման վրա Բասարդեղյարի ժողդատարանը ՀՍՍՀ Քրեական օրենսգրքի

222 հոդվածի 2-րդ մասով դատապարտում է ազատազրկման չորս տարի ժամանակով:

Այդ գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա զանգատների մեջ ստուգման ենթակա հարցեր են եղել, շատ լուրջ սվյալներ այն մասին, որ սպանությունը հավանաբար կատարել է Ժ. Գ.-ն, այդ գործի քննության ժամանակ անտեսվել են ՀՍՍՀ Քր. օր. 14 հոդվածի պատճանջները, ըստ երևույթին անդի է ունեցել սոցիալիստական օրինականության ոտնահարում, սուբյեկտիվ մտեցում: Նա ամբողջ վեց տարի համբերատար զանգատվել է, հույս ունենալով, որ մի օր իրեն կհաջողվի հասնել ճշմարտության բացահայտմանը, բայց այդ նրան չի հաջողվել պետական աղաքատի որոշ աշխատողների բյուրոկրատական վերաբերմունքի հետևանքով: Սակայն նրա պարբեր. օր. 222 հոդվածի 2 մասով նախատեսված հանցակազմ համարել, մեր կարծիքով չէր կարելի. այն անձնական վերավորանք է և պետք է որակվեր Քր. օր. 132 հոդվածով: Այն հանգամանքը, որ նամակները հասցեագրված են եղել պատասխանատու աշխատողներին, դեռևս հիմք չի տալիս հանցանքի որակումը փոխելու համար:

Մի այլ վրդվեցուցիչ օրինակ.

Մ-ի նկատմամբ խիտ վատ տրամադրված լինելով, երանից վրժժ լուծվու նպատակով մի քանի անձինք հանցավոր կոմբինացիայի մեջ են մտնում դատաքննչական աշխատողներ Բ. Բ.-ի և Ա. Ն.-ի հետ, հորինում են արհեստական մեղադրական նյութեր, կուպիտ կերպով ոտնահարում սոցիալիստական օրինականությունը, հմտորեն օգտագործում են նրա աշխատանքում եղած առանձին թերությունները, դրանք ազավաղում, հանցագործներին «տուժող» են դարձնում, բացառապես իրեն վկաներ բերում են նրանց, ովքեր թշնամական հարաբերությունների մեջ են: Բավական է ասել, այդ «վկաներից» Ն. Ա.-ն և Լ. Թ.-ն հայտնի են որպես փորձված զրպարտիչներ, մի քանի տասնյակ մարդիկ տուժել են նրանց կեղծ վկայությունների պատճառով, բնդ որում Ս-ն երեք անգամ դատական պատասխանավության է ենթարկվել:

Նրանք կարողանում են կազմակերպված կերպով Մ -ին դատական պատասխանատվության ենթարկել: Մ -ն 15 տարի պայքարելուց հետո միայն կարողանում է մեկիացնել այդ կեղտոտ զրպարտությունները և լիովին արգարացվել: Այդ զործի պատմությունը ցույց է տալիս, թե որքան վտանգավոր է վարչական, քննչական, դատական ապրտատի անկեանոն զործունեությունը: Գրա համար էլ ճիշտ են ասում, որ դատարանը սխալվելու իրավունք չունի, քանի որ նրա ամեն մի սխալ կարող է ծանր հետևանք ունենալ թազարացու համար: Եվ իրոք. առևտրի միևիտարության սխալ կարելի է այնպես ուղղել, որ ոչ մի հետևանք չմտա, անձի վրա ոչ մի հետք չթողնի: Բայց երբ սխալվում է գերազույն դատարանը, սպա հետագայում նրա սխալի ուղղումը թեև իրավաբանորեն ընդունվում է, բայց բարոյական տեսակետից բացասական հետևանքը մնում է երկար ժամանակ: Ամեն անգամ, երբ որևէ հարց է առնչվում նրա հետ, վերհիշում են նրա կալանքի տակ գտնվելը, արատավորվելը և թերահավատ են լինում նրա նկատմամբ. ստացվում է, որ նա մեղավոր է, քանի որ նրան զրպարանել են: Դա զուտ իրականություն է: Մյուս կողմից էլ տվյալ անձը ինքը երբեք չի կարող մոռանալ այն ծանր օրերը, երբ հոգեպես ստուպացել էր անմիջ կերպով դատապարտվելու կամ կալանավորվելու հետևանքով:

Սակայն հարց է ծագում, թե ինչու է նման դատապարտելի դեպք տեղի ունենում, ինչու է են թույլ տրվում սոցիալիստական օրինականության նկատմամբ այդպիսի կոպիտ ոտնձգություններ, որո՞նք են դրանց օրինկտիվ պատճառները: Ահա այդպիսիներից մի քանիսը.

ա) Արդյո՞ք նման հանցագեպերը կարող են օրյնկտիվ պատճառների արդյունք լինել: Այդ բացառվում է, քանի որ տվեետական պետությունը իր բնույթով, բովանդակությամբ, լուծվամբ, հետապնդած նպատակներով պրոգրեսիվ է, այն արտացոլում է սոյկիտական ժողովրդի շահերը, ծառայում է նոր հասարակարգի կառուցմանը: Պետության լուծվունը դրևտրվում է նրա մեխանիզմի կենսագործունեությունը: Ինչպիսին պետությունն է, այնպիսին էլ նրա մեխանիզմն է,

նրա ապարատը: Հետևաբար, պետական ապարատն իր բնույթով հանցագործությունն ծնող գործոններ չի ստեղծում: Մյուս կողմից, կարող են արդյո՞ք այդ պատճառները բացառապես սուբյեկտիվ լինել: Դա նս բացառվում է, քանի որ առանց օրյնկտիվ պատճառների, սուբյեկտիվ պատճառները բավական չեն հակահասարակական հայացքներ առաջացնելու համար: Արեման, ինչո՞ւմն է քանը, ինչո՞ւմ է այն բացառվում:

Այստեղ օրյնկտիվ և սուբյեկտիվ պատճառներ կան, որոնք միահյուսվում են, խաչաձևվում, որի հետևանքով էլ տեղի են ունենում նման հանցագեպերը: Ամենից առաջ աչքի է ընկնում այն հանգամանքը, որ մեր պետական ապարատը բավալին չի հասել իր կատարելագործման այնպիսի բարձր ստորճանի, որը պահանջում է սոցիալիստական հասարակարգի զարգացման տվյալ մակարդակը, այդ ապարատը գոնե ունի այնպիսի թերություններ, որոնք բուտ էուծվան հակասում են սոցիալիստական հասարակական կեցությունը, չեն համապատասխանում արդի պահանջներին:

Այստեղ մենք առաջին հերթին նկատի ունենք սոցիալիստական դեմոկրատիզմի բնագավառի թերությունները: Հասարակական կյանքը պահանջում է դեմոկրատիայի համակողմանի զարգացում, կատարելագործում, մասնավորապես անձի իրազունքների հետագա բնղայնում և պատասխանատվության զգացմունքի բարձրացում: Սակայն երկրի պետական կառավարումը տակալին մնում է որոշ թվով մարդկանց մասնագիտությունը. նույն մարդիկ տասնյակ տարիներ զբավալարում են նույն պատտոնում՝ գրվելով արտունյալ դեկլարան մեք: Նրանց ժողովրդը չի ընտրում և նրանք իրենց գործունեության մասին հաշիվ չեն տալիս մասնաներին: Այդպիսի պայմաններում նրանց մի մասի մոտ սխալ պատկերացում է գոյանում, արատավորվում են նրանց հոգեբանությունը, անձնական գատողությունները. նրանց թվում է, որ իրենցից գուրս երկիրը կառավարող չի կարող լինել, նրանք կոչված են իշխելու, հրամայելու, իսկ ուրիշները նրանց ենթարկվելու, նրանց կամքը կատարելու համար: Նրանք ոչ թե ենթարկվում են օրններին, այլ ձգտում են

օրենքը ենթարկել իրենց կամքին: Այդ պատճառով էլ նրանք չեն հանդուրժում իրենց սխաների ու թերությունների քննադատությունը, նույնիսկ այդ ուղղությամբ ամեն մի փորձ համարում են իրենց դեմ ուղղված ստեճգություն, որի նպատակն է զրկել նրանց մեծ բարիքներից, բարձր դիրքից և այլ տրոտոնություններից: Եվ նա հալածում է քննադատողին նրան համարում է իր անձնական թշնամին: Նման մարդկանց կարծիքով քննադատության և ինքնաքննադատության տակ պետք է հասկանալ քննադատություն ղեկավարի կողմից նյութալայի նկատմամբ, իսկ հակառակը չի հանդուրժվում:

Նման իրավիճակը նպատակաբար պայմաններ է ստեղծում նաև բյուրոկրատիզմի, քաշքշուկի համար: Փաստորեն կառավարող որոշ խումբ զուրա է մտում հասարակության վերահսկողությունից, որը կամայականությունների համար լայն հարաբերություններ է ստեղծում: Այստեղ բացահայտվում է այն հանգամանքը, որ ՍՄԿԿ ծրագրային պահանջները պետական ապարատի մասին դեռևս լիովին չեն իրագործվում, չեն իրականացվում: Հաճախ բացակայում է պատրաստարանների պատասխանատվության զգացումը պետական ապարատի զբովածքի պատճառով: Եթե մինիստրը համոզված լիներ, որ իր բոլոր գործողությունների համար ինքը պատասխանատու է ժողովրդի առևն, ապա հանգիվ թե նա համարձակվեր օրենքն իր բնահանձնարին ենթարկել: Կուսակցության ծրագրի պահանջն այն մասին, որ պետական ապարատը պետք է լինի պարզ, հասակ, էփան և ազատ բյուրոկրատիզմից ու քաշքշուկից, տակավին չի իրականացվում, բնհակառակը, պետական ապարատի առանձին օղակներում անսեււմում են այդ պահանջները: Ավելորդ կերպով ուժճացված են պետական ապարատի որոշ օղակների հաստիքները, որն աստացյետում է դիմադրվություն ու անպատասխանատվություն, բյուրոկրատիզմ ու քաշքշուկ: Այս գործում իր բացասական դերն է կատարում նաև իրավական նորմերի խտտիվ պահպանման ու անշեղ կիրառելու համար անհրաժեշտ իրավական նրաշխիքների անբավարար վիճակը: Պետք է լինի

ալնպես, որ իրավական նորմի ամեն մի խախտում պատասխանատվություն առաջացնի:

Հարցը լավ պարզարանելու համար բերենք մի քանի օրինակ: Պետական հեղինակավոր օրգաններից մեկում 1967 թ. մեծ քանակությամբ դիմումներ, զանգատներ են ստացվել, որոնց ուսումնասիրությունը հետևյալ պատկերն է տվել. 1. մեր հանրապետության վերադաս օրգանների կողմից այդ զանգատ-դիմումների 28 տոկոսը բավարարվել է: Դա նշանակում է, որ զանգատների այդ տոկոսը, որը հազարավոր քաղաքացիների շահերն են շոշափել, պետական ապարատի ստորադաս օրգաններում սխալ բնթացք են ստացել կամ զրանք այդ օրգանների կողմից օրենքը խախտելու կամ անտեսելու դեմ են ուղղված եղել, այլ կերպ զրանք չէին կարող բավարարություն ստանալ: 2. Պետության հանրապետական օրգանների կողմից մերժված դիմում-զանգատների 13 տոկոսը ՍՄՀՄ պետական օրգանների կողմից վերանայվել ու բավարարվել է: Դա ցույց է տալիս, որ հանրապետական օրգանների կողմից այդ զանգատների վերաբերյալ ոչ ճիշտ բորոշում է բնորոշվել, հակառակ դեպքում այդպիսիները չէին վերանայվի ու բավարարում ստանալ:

Հետևաբար, քաղաքացիների կողմից 1967 թ. տված զանգատ-դիմումների 41 տոկոսը եղել է արդարացի, տեղին: Սակայն դա ոչ այլ ինչ է, եթե ոչ պետական ապարատի անհանոն գործողությունների հետևանք կամ սխալներ, որոնք վերացվել կամ ուղղվել են պետական ապարատի վերադաս օրգանների միջոցով: Դրանք վերջին հաշվով սոցիալիստական օրինականության խախտման դեպքեր են, օրենքի խախտումներ կամ անտեսումներ: Բայց այդ հազարավոր անկանոն գործողությունների համար մեղավոր պաշտոնատար անձինք պատասխանատվության չեն ենթարկվել:

Վերցնենք մի այլ օրինակ.

Աշխատանքից ազատված այն քաղաքացիները, ովքեր 1965—1966 թթ. մեր հանրապետության մեջ դատական պաշտպանության են դիմել, 62 տոկոսը աշխատանքում վերականգնվել են: Դա ամենից ասաջ խոսում է այն մասին, որ

գլխաբանը պաշտպանել է քաղաքացու օրինական շահը և աշխատանքի իրավունքը, որը նրա համար կենսական նշանակություն ունի: Սակայն դատարանը բավարարվել է զրանոյ և քաղաքացուն անհիմն կերպով աշխատանքից ազատողին չի պատժել:

Ինչպես քաղաքացիների դիմում-զանգասներին ընթացք առյու ժամանակ, այնպես էլ նրանց աշխատանքում վերականգնելու հետ միասին մեղավոր պաշտոնատար անձանց պատժելու հարցը մնացել է սովորի ստակ, իսկ դա վկայում է իրավական երաշխիքների անբավարար լինելու մասին: Եթե պաշտոնատար անձը համոզված լիներ, որ քաղաքացու դիմումն անհիմն կերպով մերժելու զեպրում կամ աշխատաշին անհիմն աշխատանքից ազատելու համար ինքն է պատասխանատու, սպա նա անհոգի, բյուրոկրատական վերաբերմունք չէր ունենա նախատեղի նկատմամբ:

Պետական օպարատի կառուցվածքը, նրա ներքում աշխատանքների գրվածքը պաշտոնատար անձանց իրավունքների և պարտականությունների հստակ սահմանումը, անկանոն գործողությունների համար իրավական պատասխանատվության հարցի ճիշտ լուծումը և այլն մեծ նշանակություն ունեն պետական օպարատի բացերը վեր հանելու և դրանով իսկ վերացնելու այն աղբյուրներ, որը բացասական հորժոն է ձնում, հանցագործության առաջացման հնարավորություն ստեղծում:

Եթե դատական-դատախազական-քննչական-միլիցիայի՝ Երգանների գործունեության մեջ սցիալիստական դիմոկրատիզմը պատշաճ չափով ծավալված լիներ, սպա հաջիվ թեև սեղի ունենային նշված հանցաղեկներ: Դա նշանակում է, որ այդ օրգաններում դիմոկրատական սկզբունքների զարգացումը կենսական անհրաժեշտություն է դարձել:

բ) Պետական օպարատի այդ օրյեկտիվ թերություններին միահյուսվում են նաև պաշտոնատար անձանց կողմից ցուցաբերվող սուրյեկտիվ վերաբերմունքը, կամայականությունները, անպատասխանատու ու բյուրոկրատական մոտեցումը: Վերջին հաշիվով հարցեր են լուծում մարդիկ, որոնց

անձնական որպիսությունը, կրթությունը, կուլտուրան, դաստիարակվածությունը մի՛հաս, անձնական բնորոնակությունները պետական օպարատի կանոնավոր գործունեությունը սպահոնվելու համար կենսականորեն կարևոր են:

Այս հարցում ամենից առաջ նշանակություն ունի կադրերի ճիշտ ընտրությունը, տվյալ պաշտոնի համար նրա անհրաժեշտ հատկանիշների առկայությունը, նրա դատախազականությունը: Երբ պատասխանատու պաշտոնում նշանակվում է այն անձը, որն իր կրթությամբ, մասնագիտությամբ, բնորոնակություններով ի մի՛հասի չէ ղեկավարել, սպա նա վնասում է թե տվյալ օրգանին, թե ուրիշներին: Նման զեպրում սեխոտասիելի են սեծտական այդ օպարատի անկանոն գործողությունները, որոնք և բացասական դեր են խաղում հասարակական կյանքում, նպաստում հակահասարակական հայացքների առաջացմանը:

Այստեղ հարցի ճիշտ լուծման համար բացառիկ կարևորություն ունի պաշտոնատար անձի իրավական գիտակցությունը և իրավական կուլտուրայի մակարդակը: Եթառ կարևոր է նաև մասսաների իրավագիտակցության բարձրացումը:

Մեզ անմիջականորեն հետաբերող հարցի տեսակետից մեծ նշանակություն ունեն հասարակական և անհատական իրավագիտակցությունը, իրավական կուլտուրան, հոգեբանությունը: Գրանք բացառիկ կարևորություն ունեն նաև անձի բարոյական ձևավորման համար¹⁵: Հասարակական գիտակցությունը հասարակական կյանքը բարդ ու բազմատեսակ ձևերի արտահայտությունն է: Նա իր բովանդակությամբ սլվելի շատ հարուստ է, քան անհատական գիտակցությունը: Սակայն նա առանձին անձնավորությունների գիտակցությունից զուրս գոյություն չունի, դրա հետ միասին հասարակական գիտակցությունը անհատական գիտակցության հասարակ գումար լի: Անհատական գիտակցությունը կրում է

¹⁵ «Իրավագիտակցության և իրավական կուլտուրայի մասին», ակա «Советское государство и право», 1962, № 7.

Հասարակական գիտակցության ազդեցությունը և իր հերթին ազդում նրա զարգացման բնիացրի վրա: Թե՛ հասարակական և թե՛ անհատական գիտակցության մեջ կարելի է առանձնացնել մարդու գաղափարներն ու հոգեբանությունը: Մարդու գաղափարները գիտակցության այն կողմն են, որոնք արտացոլում են շրջապատող աշխարհի մասին նրա պատկերացումները, հայացքներն ու հասկացությունները: Գաղափարները կապված են մտածողության պրոցեսի հետ և աչքի են ընկնում իրենց ակտիվությամբ:

Հոգեբանությունը գիտակցության մի մասն է, որը կապված է զգացումների, հուզելիքի, սովորությունների, բնավորությունների հատկությունների և այլնի հետ: Գիտակցության այդ կողմերը սերտորեն կապված են միմյանց հետ: Սակայն զրանք հավերժական շինել: Գաղափարների ու հոգեբանության հարաբերակցությունը փոխվում է անկի քաղաքության կրթության, դաստիարակության մակարդակին համապատասխան:

Հասարակական և անհատական գիտակցությունը բնութագրող գծերը տարածվում են նաև իրավագիտակցության վրա: Սոցիալիստական հասարակական իրավագիտակցությունը որպես իրավական հայացքների, համոզմունքների, գաղափարների միասնական սխեմեմ, սովյալ հասարակության մեջ ընդգրկում է իրավական երևույթների բոլոր կողմերը և վերջին հավով հանդիսանում այն երեվույթների արտացոլումը, որոնք տեղի են ունենում հասարակության տնտեսական ու քաղաքական կառուցվածքում:

Սոցիալիստական իրավագիտակցությունն արտացոլում է սովետական ժողովրդի պատմությանը իրավունքը բնույթի, էության, սկզբունքների մասին: Սովետական պետության պատվիրանների կենսագործման անհրաժեշտության համոզում, հասարակական հարաբերությունների մասնակիցների ոչ օրինակավ վարքագծի, անօրինականության և կամայականության չորաբանչուր փաստի դատարարում: Սոցիալիստական իրավագիտակցությունը ոչ

միայն հասարակական կյանքի արտացոլումն է, այլ և բնութագրում է իր ակտիվ ստեղծագործական դերով, որը նրա բացառիկ կարևոր կողմերից մեկն է: Սոցիալիստական իրավագործությունը գաղափարական նախադրյալ է իրավական այնպիսի նորմեր ստեղծելու համար, որոնք խարխվում են հասարակական կյանքի դարգացման օրինակով օրենքների պահանջների վրա, ուստի և նպատում են էկոնոմիկայի հետագա անհրաժեշտ ուղղությամբ զարգացմանը:

Սոցիալիստական իրավագիտակցությունը գոյություն չունի առանձին անհատների գիտակցությունից դուրս. անհատական գիտակցությունը առանձին մարդու հայացքների ու համոզմունքների համակցությունն է իրավունքի, օրինականության արդարացիության մասին: Անհատական իրավագիտակցության ձևավորման ու զարգացման վրա ազդեցություն են ունենում առաջին հերթին հասարակական կյանքի նյութական պայմանները, քաղաքական գաղափարախոսությունը, գիտակցության գնահատման ձևերը: Բացի դրանցից այն որոշվում է մարդու կոնկրետ կյանքի պայմաններով, նրա քաղաքական գիտակցությամբ, կրթությամբ, կուլտուրական մակարդակով:

Հասարակական իրավագիտակցությունն ընդգրկում է սովետական պետության իրավական կյանքի բոլոր կողմերը: Այստեղ կարևոր նշանակություն ունի իրավագիտակցության մասին այն դրույթը, որ այն մարդկանց զործողությունների կարգավորման մի ձև է մարդու նպատակահարմար բնույթի գործունեությունը գրեթեբոլոր եղանակի անհատականության մեջ, իր գործունեության նպատակի արդյունքի նախատեսման հնարավորությունը և այդ նպատակին հասնելու համապատասխան գործողությունների պլանավորումը: Ընդ որում, գիտակցության առաջումը գիտակցական գործողությունների, գիտակցական վարքագծի ավելացումն է, իսկ գիտակցական գործունեությունը մարդու գոյության ավելիքի հղանակն է: Իրավագիտակցությունը հասարակական հարաբերությունների ոլորտում

մարդկանց վարքագծի, գործունեության սպեցիֆիկ եղանակով կարգավորումն է, որը պետք է ընդգրկի Հասարակության բոլոր անդամների համար պարտադիր ընդհանուր կանոնները: Այս տեսակետներից է խոսում Հասարակական և անհատական իրավագիտակցության մասին: ԵՑԽ Հասարակական սոցիալիստական իրավագիտակցությունը նպատակն է սահմանելու իրավական այնպիսի նորմեր, որոնք կարգավորում են մարդկանց վարքագիծը ընդհանրապես, այս անհատական իրավագիտակցությունը այն կարգավորիչներից է, որը կամ ճիշտ ուղղություն է տալիս մարդու գործողություններին կամ հարկադրում է նրան շեղվել իրավանորմերի պատվիրաններից: Ուրիշ խոսքով, անհատական իրավագիտակցությունը նպատակն է մարդու վարքագծի կարգավորմանը կոնկրետ իրադրության մեջ, թեև այն ամբողջությամբ վերցրած բնօրրկում է զնահատող դատողություններ իրավունքի և օրինականության մասին:

Այստեղից հետևում է, որ կարևոր նշանակություն ունի Հասարակական և անհատական իրավագիտակցության դաստիարակումն ու ձևավորումն ինչպես պետության բեղմնավոր գործունեության, այնպես էլ իրավանորմերի կիրառման, սոցիալիստական օրինականության ամրապնդման համար:

Անհատական իրավագիտակցությունը անիզելիտրեն կապված է մարդու հոգեբանության հետ: Միմիայն մանրամասն հետազոտությունը կարող է ցույց տալ, թե ինչու մեկ անձ կատարում է օրենքի պատվիրանը, մյուսն անտեսում: Մարդու իրավագիտակցության մակարդակը որոշվում է ոչ միայն նրանով, որ նա իրագործում է օրենքը, վերջինիս պատվիրանները, այլև դրանց կատարման շարժառիթներով: Արտաքին ազդեցության տակ օրենքի պատվիրանի կատարումը տակավին չի վկայում անձի իրավագիտակցության մակարդակի մասին: Սոցիալիստական իրավագիտակցության առկայության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ ճշմարտության և արդարության մասին սոցիալիստական իրավագիտակցության առաջատար սկզբունքը համա-

պատասխանում է մարդու հոգեկան խոր համոզմունքին: Երավանորմերի պատվիրանները մարդու ներքին պահանջմանը դառնալը և պարտականությունները ներքին մղումով կատարելը կազմում են սոցիալիստական օրինականության հետագա ամրապնդման կարևոր գործոններից մեկը:

Սոցիալիստական իրավագիտակցություն միանությունը զեռես չի բացառում անհատական և Հասարակական իրավագիտակցությունների տարբերությունները: Իրավագիտակցության միանությունը սոցիալիստական Հասարակարգում նշանակում է անհատական և Հասարակական իրավագիտակցություններում ընդհանուր և առաջատար գաղափարների սկզբունքների համընկնում, բայց ոչ թե նույնացում: Անհատական իրավագիտակցություն ունի իր սուսանձանհատկությունները, որոնք որոշվում են անձի կյանքի կոնկրետ պայմաններով, քաղաքական գիտակցությամբ, կուլտուրական մակարդակով: Բացի այդ, սուսանձին անհատների գիտակցության հետ անմիջականորեն կապվում են հին հայացքները, քնտիրությունները, սովորությունները, համոզմունքները: Անցյալի խորթ մնացուկներն առաջին հերթին զբաղեցրվում են սովետական պետության օրենքների նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, անհատական շահեր հասարակական շահերին հակադրելով և նման այլ միջոցներով:

Իրավախախտումը Հասարակական իրավագիտակցության և անհատական իրավագիտակցության հակասության դրսևորման ձևերից մեկն է: Ուստի այդ հակասության վերացումը կարևոր է նաև մարդկանց գիտակցություններից օնցյալի խորթ մնացուկների հաղթահարման համար:

Սոցիալիստական իրավագիտակցությունը անիզելիտրեն կապված է իրավական կուլտուրայի հետ: Իրավական կուլտուրան վկայություն է սոցիալիստական իրավագիտակցության բարձր մակարդակի մասին: Իրավագիտակցությունը զոյություն ունի յուրաքանչյուր մարդու մոտ՝ այս կամ այն տեսքով, պատահելացումով իրավունքի, օրինականության, արգարագատության մասին, սրև առաջանում է

ատարերաշնորհն, իսկ իրավական կուլտուրան ծագում է իրավագիտակցութիւնն զատախաբակման ու բարոյացման շնորհիվ: Իրավական կուլտուրան իրավագիտակցութիւնն որոշակի աստիճան է, որը հնարավորութիւն է ապիս իմանալ օրենսդրութիւնը, օրենքների նկատմամբ խոր հարգանք դրսևորել, իրավաճեղճները ճիշտ հասկանալու և անշեղ կիրառել: Իրավական կուլտուրան իրրև իրավագիտակցութիւնն տարբ անխզկիրոնն կապված է սոցիալիստական օրինակունութիւնն ամբապընդունն հետ: Բնականութիւնն իրավական կուլտուրան մեծ ազդեցութիւնն է ունենում օրինակունութիւնն իրնակի վրա, քաղաքացիների իրավունքների պահպանման ու պարտականութիւնների կատարման ընթացքի նկատմամբ: Սոցիալիստական օրինակունութիւնն կողմն խախտումը, առանձին ղեպքերում վարչական կամայականութիւնը բացասական ազդեցութիւնն են ունենում սոցիալիստական իրավագիտակցութիւնն, կուլտուրայի զարգացման ու ծավալման վրա և ոտնահարում են քաղաքացու իրավունքները: Մական մարդիկ հասկանում են, որ նման սոցիալիստական սոցիալիստական պիտակունութիւնն սկզբունքից ղեք իրում և հակադրվում նրան, ուստի օրինակունութիւնն վերականգնումը բարձրացնում է մարդկանց վստահութիւնը սոցիալիստական պիտակունութիւնն նկատմամբ:

Բանն այն է, որ սոցիալիստական իրավագիտակցութիւնն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական նշանակութիւն: Այդ հանգամանքի իր որոշակիութիւնը արտահայտվում է ղատական գործունեութիւնն մէջ: Սոցիալիստական պիտակունութիւնն ղատարանը յուրաքանչյուր քաղաքացիական և քրեական գործ բնելու ժամանակ պարզարտում է գործի բարդ ու բազմատեսակ հանգամանքները, ճիշտ կողմնորոշում ստանում սոցիալիստական իրավագիտակցութիւնն շնորհիվ, նրանով ղեկավարվելով: Իրավագիտակցութիւնն օգնում է ճիշտ հասկանալու օրենքը և ղիտակցարար անշեղ կատարելու նրա պատվիրանները: Ապացույցների ղնահատումը տեղի է ունենում սոցիալիստական իրավագիտակցութիւնն հիման

վրա: «Պատարանը, ղատախաբը, քննիչը և հետաքննութիւնն կատարող անձը,—ասված է ՀՍՍՀ Քր. Դատ. օր. 58 հոդվածում,—ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցութիւնը, ապացույցները ղնահատում են գործի՝ իր ամբողջութիւնը վերացած թուր հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օրջնկտիվ քննութիւնն վրա հիմնված իրենց ներքին համոզմամբ: Քաղաքացիական գործերով ևս նույն սկզբունքի է սահմանված (ՀՍՍՀ Քաղ. ղատ. օր. 56 հոդված): Մական հարցն բաց էութան ղրանով ղի սպառնում է, սոցիալիստական իրավագիտակցութիւնը ղեկավար սկզբունք է ոչ միայն սպացույցները ղնահատելու և այդ գործունեութիւնն մէջ օրենքի պահանջները ճիշտ հասկանալու ու այն անշեղ կիրառելու թնաղավտում, այլև հարցն բատակութիւնն լուծելու գործում: Այսպես, ՀՍՍՀ Քր. օր. 34 հոդվածը սահմանելով, որ պատիժը նշանակվում է գործող քրեական օրենքի պահանջներին լիովին համապատասխան, այնուհետև, հոդվածի երկրորդ մասում սովում է՝ «Պատիժ նշանակելիս ղատարանը, ղեկավարվելով սոցիալիստական իրավագիտակցութիւնը, հաշվի է առնում կատարված հանցագործութիւնն բնույթն ու հասարակական վտանգաղորութիւնն աստիճանը, հանցաղորի անձնավորութիւնը և գործի այն հանգամանքները, որոքք մեղմացնում կամ ծանրացնում են պատասխանատվութիւնը»:

Այստեղ անհրաժեշտ է ոչ միայն բարձրացնել քաղաքացիների ու պաշտոնատար անձանց իրավագիտակցութիւնը և իրավական կուլտուրան, այլև սահմանել իրավական բնույթի այնպիսի երաշխիքներ, որոնք մեծապես կկանխեն քաղաքացու իրավունքների նկատմամբ ոտնձգութիւնը, ոչ մի պաշտոնատար անձ և քաղաքացի չի համարձակվի խախտել օրենքը, ոտնահարել քաղաքացու իրավունքները:

Գ) Իրավագիտակցութիւնն, իրավական կուլտուրայի իրական պատկերն ավելի լավ է երևում քաղաքացու ղիմումների, ղանգատների և անձնական ընդունելութիւնն կաղավերողական նկատմամբ պաշտոնատար անձի կողմից քուցարբովող վերաբերմունքից: Երբ այդ հարցը հաշող է կաղակերպվում

և նիշտ լուծում ասանում, դա ցույց է տալիս, որ իրոք տվյալ պաշտոնատար անձը հոգատարություն է ցույց տվի, իր պարտականությունները հաջող է կատարում, ունի իրավական բարձր կուլտուրա: Եվ ընդհակառակը, երբ անհոգի ու բյուրեղիքատակն վերաբերմունք է ցույց տալիս՝ ուշադրությունը չի կարողում դիմումը, ուղարկում է հենց այն օրգանին կամ պաշտոնատար անձին, որի դեմ ուղղված է, կամ նրկար ժամանակ ձգձգում է ընթացքը, կամ պատճառաբանված ու հիմնավորված պատասխան չի տալիս, ապա դա վկայում է տվյալ անձի իրավագիտակցությունից անբարձր մասին:

4. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԵԱՐԺՄԱՌԹՆԵՐԸ

Հանցագործության առաջացման նյութական և հոգևոր պատճառներն ունձի գիտակցության մեջ առաջացնում են հակահասարակական հայացքներ, բայց դա դեռևս բացասական պոտենցիալ է, որն իրականացվում է, կյանքի կոչվում այն դեպքում, երբ հանդես է գալիս արտաքին շարժառիթ, իրաչառվում է նրա հետ և հանցագործություն առաջացնում: Դա ամենից առաջ նշանակում է, որ հանցագործության առաջացման պատճառների և արտաքին շարժառիթների միջև սերտ կապեր գոյություն ունեն: Մեկը առանց մյուսի հանցագործություն չի կարող առաջացնել, բայց զիբավորը, վրձուականը՝ պատճառներն են, թեև կատարել շարժառիթները խիստ կարևոր են և մեծ դեր են խաղում:

Հասարակական կյանքը ցույց է տալիս, որ հակահասարակական հայացքներ ունեցող ոչ բոլոր մարդիկ են հանցագործություն կատարում: Թեև զանազան հանգամանքների, բացասական գործոնների ներգործությամբ անձի գիտակցության մեջ զոյանում են հակահասարակական հայացքներ, բայց այն դրսևորվում է իրրև հանցագործություն միայն այն դեպքում, եթե վրա է հասնում արտաքին շարժառիթը, որը հրահրում է նրան հանցագործության կատարմանը: Բայց ինչու է, ինչու էլ բացատրվում այդ հանգամանքը: Թանն այն

է, որ մարդու միջավայրը նրա վրա ազդում է թե դրականորեն և թե բացասաբար, այդ հանգամանքը կախված է համապատասխան գործոնների առկայությունից: Ահասարակ սոցիալիստական հասարակական կենցույցյան մեջ բացարձակորեն տիրապետում են դրական գործոնները, բայց այն չի բացառում բացասական գործոնի առկայության հնարավորությունը: Ահա հենց այս պայմաններում էլ տեղի է ունենում ունձի նկատմամբ նաև բացասական ներգործություն: Այս դեպքում անձի գիտակցության մեջ զոյացած հակահասարակական հայացքները իրաչառվում են արտաքին բացասական ներգործությամբ, անձին մղում դեպի հանցագործության կատարումը:

Արտաքին ներգործող բացասական ուժերը կարող են լինել բազմառեսակ և բազմաթիվ: Սակայն վճռական նշանակություն ունեն կրկու հանգամանք, նախ՝ այն, թե տվյալ անձի գիտակցության մեջ հակահասարակական հայացքները որքան խոր ու արմատական են, ծավալուն ու ամուր, ինչպես նաև հենց այդ անձի անհատականության որպիսությունը և Լրկրորդ՝ արտաքին շարժառիթների բնույթը, ներգործության ուժը, տեղը, ժամանակը, պայմանները, կատարման եղանակն ու ձևերը:

Արտաքին շարժառիթները տարբեր սեմանց նկատմամբ կարող են տարբեր աստիճանի ներգործություն ունենալ: Այստեղ որոշակի դեր են կատարում անձի անհատականության բնորոշ գծերը՝ դյուրարգրողություն աստիճանը, զսպվածություն կարողությունը, ընկալիչ ունակությունը: Ետյն արտաքին շարժառիթը տարբեր տեղերում տարբեր ժամանակ ու տարբեր պայմաններում կարող է հենց նույն անձի նկատմամբ տարբեր աստիճանի ներգործություն ունենալ: Այլ է, երբ նա միայն ինքն է առկա, այլ է, երբ նրա կինը, րոյրը, մայրը և ուրիշներ ներկա են գտնվում այդ արտաքին առիթի հանդես գալուն: Սրիմակ, Ռ. Բ.-ն հանդիպելով Գ. Հ.-ին ստում է՝ Քթ կինը պոտնիկ է: Այս դեպքում նրանք երկուսով են, ուրիշ մարդ ներկա չէ: Մի այլ դեպքում նույն բուրդ կրկնում է, երբ ներկա են նրա կինը և ուրիշ մարդիկ: Հաս-

կանալի է, որ վերջին դեպքում ներգործության ուժն աճելի է մեծանում և ավելի ուժեղ սնակցիս առաջացնում:

Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ինչպիսի իրազարգացմաններում է հանդես գալիս այդ արաբքին շարժառիթը: Որքան ցածր է անձի կրթությունը, կուլտուրական մակարդակը, դաստիարակվածությունն աստիճանը, այնքան աճելի ուժեղ է ներգործում արտաքին շարժառիթը: Մեծ բերնք՝ նույնմերթյանի (Քարանախի) շրջանի խոր անցյալից մի փոքրիկ պատմություն, որը հայտնի է «Մի քորոցի գորբախառնությունը» անունով: Դա իսկպահան մի աստիճանի պատմություն է, որը վերաբերում է երկու հարևանների 13 անդամների սպանությունը՝ մի քորոցի պատճառով:

Համապուրջացրե՛նք Գ-ն և Ե-ն ամառանոցում միասին աշխատել են որպես նախնապահներ: Նրանք շատ մտա ընկերներ են եղել, միասին կերել, խմել, ապրել, բայց եղել են անզորագետ, հասարակական կյանքից կտրված, լեռներում ապրող մարդիկ, պարզապես Ֆեոդոսյան հայացքներով օժտված, նամուսին զերի, պատվի համար մեռած՝ այդպիս են ասում նրանց մասին:

Հուլիսյան մի օր հովիվները նստած հաց են ուտում և գրուցում գանազան հարցերի մասին. ոմանք պատմում են իրենց կատարած կամ չկատարած քաջադործությունների, սխալագործությունների և այլ արվածների մասին: Բոլորը ծիծաղում են, ուրախանում, կատակներ անում, միայն Ե-ն էր, որ լռության էր մատնվել, թե ինչու՞ ոչ որ ոչինչ չէր հասկանում: Գ-ն նրան դիմելով ասում է. ինչու՞ ես լռում, միթե՞ դու ոչ մի քաջադործություն չես արել... Այդ ուրախության ժամին Ե-ն հանկարծ դիմելով Գ-ին ասում է. «Ես թո եղբոր կին Սիրուշի սիրելիսն եմ...»: Գ-ն ջնցյովում է ամբողջ մարմնով և պատառ-պատառ անելու նպատակով դուրս քաշում լայն «խանջալը», հարձակվում նրա վրա, բայց ընկերների կանխում են և ձգտում հաշտեցնել նրանց, սակայն իդուր փորձեր, խախտակվել է Գ-ն, նրա հայրական օջախը, նրանց նամուսը... նա ստիպում է Ե-ին երեք օրում ապացուցել ասածը, հակառակ դեպքում «երզվում եմ հայ-

208

րական օջախի ամբողջ պատվով, որ թո մեծ կտորը ականջը կմտնա: Բոլորը դիտին Գ-ի համառությունն ու համարձակությունը, հայրական օջախի պատվի պահպանման գործին նրա նվիրվածությունը և վտանգը կանխելու միջոց չէին գրուում: Նա այդ հայտարարությունը արել էր մի խումբ մարդկանց ներկայությունը, այն վերաբերում էր ամենամեծ արբությունը՝ հայրական օջախի պատվին:

Ե-ն ստել էր, նա ոչ մի կապ չի ունեցել այդ կնոջ հետ, գրպարտել է, հիմարություն է արել, բայց այժմ ինչպե՞ս գուրս դալ այդ գրությունից, վտանգը մեծ էր թե իրենց տան և թե Սիրուշի համար: Ինքն իրեն կրակի մեջ էր նետել թե՛ թե՛ անմիտ ու չկառաջաված հայտարարությամբ:

Նա այդ մասին պատմում է իր կին Հերիքեռզին և զգուշացնում սպանացող մեծ վտանգի մասին, ես իմ լեզվից կրակի մեջ եմ բնկել, ի՛նչ անել, աղերսում է կնոջը և խընդրում օգնել այդ գրությունից դուրս դալու համար. թե՛ն կինը նախատում է ամուսնուն նման հիմարության համար, բայց իրատանում է նրան փրկելու մի ելք գտնել: Եվ նա գտնում է ելքը:

Հասակակից հարսները միասին զնում են աղբյուրից ջուր բերելու: Նրանց մեջ էին նաև Սիրուշն ու Հերիքեռզը: Այստեղ նրանք կատակներ են անում, ջուր լցնում իրար վրա, բաշշում ու ուրախանում և ահա օգտվելով առիթից Հերիքեռզը Սիրուշի ճակատի «չխառնից» հանում է նշանդրեքին սասցած ոսկե քորոցը: Այդ քորոցը նա տալիս է իր ամուսին Ե-ին, որ նա ներկայացնել Գ-ին իրեն ապացույց և դրանով իսկ փրկի գրությունը:

Հաջորդ օրը Ե-ն մյուս հովիվների ներկայությամբ Գ-ին է տալիս այդ քորոցը և ասում. «Շահա սպացույցը, հենց այս գիշեր եղել եմ Սիրուշի մոտ և այս քորոցը բերել քեզ համար- կու՞մ համար»:

Կարծես աշխարհը փլվում է Գ-ի գլխին, հայրական օջախի պատիվը ցեխն է զցկել նրա հարքը, ամեն ինչ դատարկվում է, ամպերը որոտում են... նա շտապում է տուն՝ օրհնեն, թե՛ն հենց նոր էին գլուխից եկել նրա եղբայրը (Սիրուշի

209

ամուսինը) և հայրը, բայց նա չի բարևում նրանց, այլ ուղղակի դիմում է Սիրուշին. «Յուսյց սուր թո նշանդրեքի քորոցը: Խեղճ կինը փնտրում է բորոցը, բայց այն չկար և Գ-ն մոլեղնած վրա է հասնում ու հովվական «խանջալը» խրում նրա կուրծքը: Հայրն ապշած ու շփարած չի կարողանում շարժվել տեղից: Բուրբը քարացել էին, միայն շունչը փչող Սիրուշն էր գալարվում արյան մեջ:

Գ-ն պատմում է այդ զոքախո պատմությունը և ոչ ոք նրան չի նախատում սպանություն համար. չէ՞ որ խոսքը վերաբերում էր օջախի պատվին, նամուսին: Սիրուշի ամուսինը լուռ դուրս է գալիս տանից, ոչ ոք չի իմանում զրա պատճառը, բայց մի քանի րոպե անց հայտնում են, որ նա հասնելով հովիվների մոտ, մոլեղնած հարձակվել է Ե-ի վրա և հովվական «խանջալով» նրան այնպես է կտոր-կտոր արել, որ անձող դժվար է ճանաչել: Եվ այսպես սկսվում է երկու ընտանիքների բնաջնջումը: Սիրուշի 13 տարեկան տղան վերջում ւզպանում է Ե-ի հորը և այդ արյունահեղությունը վերջ է տրվում, քանի որ այլևս նրանց բնտանիքներում ուրիշ մարդ չէր մնացել:

Ինչի՞ մասին է խոսում այս փաստը, որքանո՞վ է այն պարզաբանում մեր կողմից քննարկվող խնդիրը: Այդ երկու ընտանիքի անդամների դիտակցություն մեջ խորացած են և-ղև Հին աշխարհում թագավորող բարոյական քաջասական հայացքները, սովորությունները, բնությունները, մտածողությունները: Նրանք այդ արարքը՝ «Սիրուշի դավաճանությունը» համարում են հայրական օջախի մեծ անպատվություն, նամուսի ոտնահարում, իսկ մարդիկ պատրաստ էին իրենց կյանքը զոհարելու հայրական օջախի պաշտպանության համար: Եթե այդ իրավիճակը չլիներ, ապա Ե-ի նման անհիմն հայտարարությունը երկու ընտանիքների ոչնչացման շարժառիթ չէր կարող գտնելու Այստեղ Ե-ի հայտարարությունը եղել է այն արտաքին շարժառիթը, որը տեղիք է սպիլել նման ծանր ողբերգությունը:

Դատական գործերը ցույց են տալիս, որ ոչ միայն անցյալում, այլև այժմ շատ համախո նման հանցագործություն-210

ների արտաքին շարժառիթներ հանդիսանում են հենց իրենք՝ աստվղները: Նրանք են տեղիք տալիս հանցավոր արարքների կատարմանը: Այսպես, Ա. Բ.-ն իր ամուսին Զ-ի հետ Արովյան փողոցով իջնելու ժամանակ նրանց է մտնելում Մ. Ե.-ն և ձեռքը զգելով Ա. Բ.-ի ներքենաշորին, իջեցնում է այն և սկսում ծիծաղել: Հ-ն հոգեկան ուժեղ հուզման ազդեցության տակ հարվածում է Մ. Ե.-ին և զորում գետին, նրա դուրիքը քարին կաշվու է հետանկրով մարմնական ծանր վնասվածք է ստանում: Այստեղ Մ. Ե.-ի ապօրինի գործողությունը՝ արարքը արտաքին այն շարժառիթն է, որ ստաշ է բերել հանցագրգռել: Սակայն կոնկրետ դեպքում Մ. Ե.-ի գործողությունն այնպիսի շարժառիթ է, որն ատանձին վերցրած իր մեջ հանցավազ է պարունակում: Դա նշանակում է, որ մի հանցավոր արարք կարող է արտաքին շարժառիթ հանդիսանալ մի այլ հանցագրգռի համար: Այս հանգամանքն է, որ մեր իրավաբանական գրականության մեջ անտեսվում է և արտաքին շարժառիթների վերաբերյալ տարբեր կարծիքների տեղիք տալիս: Ոմանք այդ պայման են համարում, մյուսները կոնկրետ հանցագրգռի զրգապատճառ: Սակայն ինչ էլ, որ անվանեն, միևնույն է, արտաքին շարժառիթը մտնում է որպես այդպիսին, որը մի դեպքում ինքը կարող է հանցագործություն լինել, մի այլ դեպքում հանցավազ շարժառիթ: Դրանից չի փոխվում արարքի արտաքին շարժառիթ լինելու հանգամանքը:

Մի այլ համանման հանցագրգռ. է. Թ.-ն վատ հարբաբությունների մեջ է եղել Գ. Զ.-ի հետ և առիթ որոնել նրանից վրեժ լուծելու համար: Մի անգամ, երբ Գ. Զ.-ն վիճարկություն մեջ է մտնում վ: Հ.-ի կողմ հետ, է. Թ.-ն ատիթից բզովելով դնում է վ. Հ.-ի մոտ՝ զործարան և այնպես է նկարագրում այդ հասարակական վիճարկությունը, որ վ. Հ.-ն թողնելով աշխատանքը վազում է ստոն և երկաթի կտորով հարվածելով Գ. Զ.-ին, նրան պատճառում է մարմնական ծանր վնասվածք: Այստեղ է. Թ.-ի արարքը ակնհայտորեն երկու դեպ է կատարել. մի կողմից նա վ. Հ.-ին զրգռել է, դրդել հանցանք կատարելու համար և ճիշտ են վարվել նրան

ենթարկելով քրեական պատասխանատվության, մյուս կողմից նրա վարքը պարզապես հանցակազմ է պարունակում որպես զրգոզի, իսկ Վ. Հ.-ի արարքի համար այն արտաքին շարժառիթ է:

Մեջ բերենք մեկ օրինակ ևս: Քաղաքացի Ս. Պ.-ն աշխատելիս է եղել իր այգում: Նրա մոտ է գալիս Խ.-ն և արցունքն աչքերին աղբրում օգնություն ցույց տալ իրեն, ասելով, որ կովը դուռն կհալից խնդրվում է, ինքը չի կարողանում փրկել նրան: Ս. Պ.-ն հավաստով վազում է դեպի դուռ: Խ.-ն փակում է դռնի դուռը, գնում նրա այգին և զոգանում վարունգները: Այդ բոլորը տեսնում է մոտ մեկ ժամ: Երբ Խ.-ն բացում է դռնի դուռը և ասում, որ ինքը կատակ է արել, Ս. Պ.-ն հոգեկան ծանր ապրումների ազդեցության տակ հարվածում է նրան և մարմնական ծանր վնասվածք պատճառում, որից նա մեկ օր անց մահանում է:

Այստեղ Խ.-ն կատարել է թե՛ քաղաքացուն ազատությունից ապօրինաբար զրկելու հանցագեպ (Հայկ. ՍՍՀ Քր. օր. 130 հոդ.) և թե՛ անձնական սեփականության զոդուցյուն (Հայկ. ՍՍՀ Քր. օր. 143 հոդ.): Սակայն զրա հետ միասին նրա արարքը Ս. Պ.-ի հանցագեպի համար արտաքին շարժառիթ էր:

Շատական գործերը նույնպես ցույց են տալիս, որ արտաքին շարժառիթը կարող է լինել նաև այնպիսին, երբ սուսժողը ոչ մի մեղք չունի, նա պաշտպանել է իր օրինական շահերը, կամ իրականացրել իր իրավունքները, բայց այն արտաքին շարժառիթ է ծառայել հանցագեպի համար: Զ. Ս.-ն մի քանի տնկում դատական պատասխանատվության էր ենթարկվել պաշտոնական զիբբի շարձաձման, կաշտակելության, խարդախության և վերջապես կոդուպտի համար: Վերջին տնկում դատապարտվել էր ազատազրկման հինգ տարի ժամանակով, որը կրելուց հետո, վերադառնալով, մի օր փողոցում հանդիպում է քաղ. Ա. Հ.-ին, պահանջում նրանից 200 ռ. դրամ, բայց նա մերժում է անելով, որ զրամ չունի և պարտավոր չէ նրան զրամ տալ: Նրա այդ մերժումը վիրավորական է համարում Զ. Ս.-ն, զանազան հանում է զրպանից

և ցանկանում զանակահարել նրան, բայց հենց այդ պահին վրա է հասնում միևիցիայի աշխատող ու կանխում հանցափորձը: Տվյալ դեպքում թեև Ա. Հ.-ի կողմից նրա ապօրինի պահանջի մերժումը արտաքին շարժառիթ է ծառայել, բայց այն հանցագեպը չի պարունակում իր մեջ, քանի որ Ա. Հ.-ի զործողություններն օրինական են եղել:

Մի այլ օրինակ. Գ. Ն.-ն շարձաձում է իր պաշտոնական զիբբը, կատարում հանցագործություններ, բայց մնում է անպատժ: Մի օր կողեկակի ժողովում Տ.-ն խիստ ուսար քննադատության է ենթարկում Գ. Ն.-ին, մերկացնում նրա հանցավոր զեմբը: Ժողովը վերջանալուց հետո, երբ մարդիկ վերադառնում են իրենց տները, Գ. Ն.-ն հարվածելով Տ.-ին, կուրացնում է նրա ձախ աչքը: Այստեղ հանցագործության պատճառը Գ. Ն.-ի հակահասարակական հայացքներն են, իսկ արտաքին շարժառիթը Տ.-ի կողմից նրան քրեականացնելն ու մերկացնելն է: Տվյալ դեպքում Տ.-ն կատարել է իր սովետական քաղաքացու սրբազան պարտականությունները և ստուգել: Այդ հակամասններ խիստ կերպով բարձրացնում է Գ. Ն.-ի պատասխանատվության ստիճանը:

Թ.-ն զբաղվում է տնթարյականություններ և զաղտնի անտականոց պահելով, կավատությանը եկամուտներ է ձեռք բերում: Նա հավաքագրում է կանանց և իր տանը կաղմարկույում մարմնական ծառայություն, մի հանցագործություն, բրբ պատժվում է Հայկ. ՍՍՀ Քր. օր. 226 հոդգածով: Հարևան Ս.-ն մի քանի անգամ նրան զգուշացնում է և պահանջում վերջ տալ այդ խախտակությունը, քանի որ իրենց տանը անչափահաս աղբիկներ կան, որոնց վրա կարող է քաղաքական աղբեցություն թողնել: Մի անգամ էլ, երբ Ս.-ն զարձալ զիրողություն է անում Թ.-ին, վերջինս հարձակվում է նրա վրա և երկաթի կտորով հարվածելով նրա քունքին, սպանում: Տվյալ դեպքում Թ.-ն հանցագործություն է կատարում, երբ զբաղվում է կավատության և երկրորդ սպանելով Ս.-ին կատարում է նոր ծանր հանցագործություն, իսկ սուսժող Ս.-ի արարքում ոչ մի հանցավոր բան չկա, նրա պատժը

Նանըը եղել է օրինական, իսկ նախազգուշացումը արտաքին շարժառիթ:

Գ. Ա.-ն լարված հարաբերությունների մեջ լինելով Գ.-ի հետ, հարեանների ներկայությամբ հայտարարում է, թե նրա կինը անբարոյական է, որ իբր թե ինքն է տեսել նրա մտտատար մարդկանց գալ ու գնալը: Գ.-ն լսելով այդ մասին, նրանից պատիվ է պահանջում, իսկ Գ. Ա.-ն ներողություն խնդրելու փոխարեն անպատվում է և ձեռնում նրան: Հասմանան բնույթի է Վ. Պ.-ի և Ա. Ս.-ի միջև տեղի ունեցող զեպրը: Ա. Ս.-ն մի քանիսի ներկայությունը հայտարարում է, որ իբր Վ. Տ.-ն գնացել էր Վ. Պ.-ի կնոջ մոտ և ինքն այդ տեսել է իր աչքով: Պարզվում է, որ դա ակնհայտ սուտ է, կեղծ ու ստոր զրպարտություն, որովհետև նրա կինը մի շարքի առաջ գնացել էր Մոսկվա և զեռ չէր վերադարձել: Երբ Վ. Պ.-ն նրանից պատիվ է պահանջում, նա հարձակվում և ձեռնում է նրան: Այս երկու օրինակները նման են, բայց հանցակազմը տարբեր: Գ. Ա.-ի արարքները պարունակում են Հայկական ՍՍՀ Քր. օր. 110 և 132 հ.հ. նախատեսված հանցակազմը (ձեռն և վիրավորանք), իսկ Ա. Ս.-ի արարքները համապատասխանում են Քր. օր. 110 և 131 հ.հ. նախատեսված հանցակազմներին (ձեռն և զրպարտություն): Առաջին զեպրում հայտարարվել է, որ նրա կինը մարմնավաճառություն է զբաղվում: Գա վիրավորանք է, քանի որ կոնկրետ չի ստում, թե ո՞ւմ հետ է զեպրը տեղի ունեցել, իսկ երկրորդ զեպրում՝ զրպարտություն է, քանի որ կոնկրետ չի նշվում սուտանակը, երբ Ա. Ս.-ն տեսել է Վ. Պ.-ի կնոջը Վ. Տ.-ի հետ: Ընդհանուր հայտարարությունը՝ վիրավորանք է, իսկ կոնկրետ սուտ հետ կապված լինելու հանգամանքը նշելով զրպարտություն:

Քրեական գործերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձի զեռ ուղղված հանցագործությունները որպես կանոն ունենում են կոնկրետ շարժառիթներ: Այստեղ ամենից առաջ պետք է հիշատակել այկոհիչ բացասական ազդեցությունը: Այկոհիչով, առհասարակ ոգեկից խմբերների և զուտ, բնածին հատկություն չէ, այլ արտաքին ան-

բարենպաստ պայմանների ազդեցությամբ ձեռք բերված սրատալիք սովորություն: Այկոհիչովին նպաստում են մի շարք կենցաղային տրադիցիաներ, որոնց ժամանակ մարդիկ անպայման մեծ քանակությամբ ոգեկից խմիչքներ են զործածում և այն դառնում է սովորություն: Մարդուն որոշ զեպրերում այկոհիչ զերկն է նետում որևէ հիվանդության հետևանքով առաջացող խրոնիկական ցավը, վատ ինքնագացումը, որոնք զորում են նրան հարբել ժամանակավորապես թեթևանալու համար: Մարդիկ խմում են կյանքի ծանր բույսներին, զիտակցությունը ճնշող ապրումներին ազատելու նպատակով, սակայն դրանք ճակատագրական չեն:

Եվ իսկպես, վերջնենք նշանդրերը, հարսանիքը, ծնունդը կամ մահը, զբախտությունը, ձախողումները: Մի զեպրում շափից այկելի ոգեկից խմիչքներ են զործածում ուրախության, մշտա զեպրում տխրության պատճառով: Հաճախ են թեթև կազմակերպում, ուտում, խմում, ուրախանում, բայց այնքան են խմում, որ հարբում են, զթովում, կոիվ սարբում, ձեռնում ու ձեռնվում, վնասում ու վնասվում: Ուրախությունը կորցնում է իր արժեքը, այն վերածվում է տխրության, զբախտության: Եվ զրա հիմքում ընկած այն սովորությունը, որ ուրախության պահին պետք է խմեն. այնքան, որ իրենց կօրցենեն, շկարողանան պահպանել հավասարակշռությունը: Բայց ո՞ւմ է պետք այն ուրախությունը, որը զբախտությամբ, ոգերբությունը է ավարտվում: Եթե ըրլ խմեն, ապա կասեն ժշատ է աստտերը, այնքան խմիչք չունի, որ մարդիկ կարգին խմեն, իսկ զր վիրավորական է, անհասում է պապենական սովորությունը: Երևանում մի հարսանիքի ժամանակ հարբեցողության հետևանքով զոհվել են երեք մարդ, իսկ յոթ հոգի մարմնական վնասվածքներ են ստացել: Դրանով հարսանիքի ուրախությունը տեղիք է տվել եղբայրական ոգերբության, բայց մի՞թե հնարավոր չէ վերացնել այդ շարքը, այն կարող է վնասազերծ արվել, եթե բոլոր պայքարեն հարբեցողության զեռ, երբ մարդիկ համոզվեն,

որ հարբեցողը մարդկային տակաճք է և խիստ վտանգավոր հասարակության համար:

Սակայն ավելի սոսկալի է, երբ հարբեցողությունը տեղի է ունենում տիրության կապակցությամբ. մարդ կբացնում է իր հարազատին և այդ ծանր արքունների պահին նյութական մեծ զոհարարություններ է կատարում:

Հարբեցողությունը մարզու մոտ կրկնվելով սովորություն է դառնում, շնորհիվ նաև ընկերների ազդեցությամբ: Նրանք բարոյապես ազդում են այն անձի վրա, որ խույս է ապիսխ խմելուց, նրան հարկադրաբար դարձնում են հարբեցող: Ալկոհոլի կարճատև ազդեցությունը ևս թունավորման երևույթներ է առաջացնում. մասնավորապես այն անդրադառնում է մարզու ուղեղի վրա: Ալկոհոլը բարձրալիջ ազդեցություն է ունենում նյարդային սխտեմի, հատկապես գանդուղեղի վրա: Ողեղից խմիչքեղենի երկարատև օգտագործման հետևանքով մարզու մոտ կարող է առաջանալ նյարդային սխտեմի ֆունկցիոնալ խանգարում, որը փոխում է նաև արվյուղ անձի ընկալությունը:

Մարդը սովորություն դարձնելով խմիչք գործածելը, չի մտածում, որ այդ նրան ծանր հետևանքների կարող է հասցրել: Անտեսանելի ձևով, բայց անխնայափնտրեմ ալկոհոլը մարզու օրգանիզմը ուժասպառ է անում և կամազուրկ դարձնում: Ալկոհոլումովի մոտ բավական վաղ առաջանում է սեռական թուլություն, նա դառնում է կոսակաժամիտ, խանդոտ, դյուրբարորոք, կորցնում հետաքրքրությունը շրջակայտի, աշխատանքի, ընտանիքի, ընկերների նկատմամբ, նրա մտքերն ու զգացմունքները դրադված են վրձում միայն խմիչքով: Հիվանդագիյն ձգտումը դեպի ալկոհոլը առաջացնում է զբոխացով, զվեսպտույն, գիտակցության մթաղում, ընդհանուր դյուրաբարգոտություն: Օջարային նշաններից ամենից առաջ երեան են դալիս ակնագնդի շարժիչ սկանների թուլացում: Խանգարվում են ստատիկայի (հավասարակշռության) և կոորդինացիայի (համաձայնեցման), շնչառության և արյան շրջանառության ֆունկցիաները, որոնք համախ այդ անձի մոտ ճակատագրական ելք են ունենում: Բացի ֆիզիկական

բազմաթիվ ծանր հետևանքներից, ալկոհոլիզմը նաև հոգևոր վտանգավոր երևույթներ է առաջացնում. ողեղից խմիչքների երկարատև գործածությունից մարզու օրգանիզմում տեղի է ունենում նյութափոխանակության խանգարում, որի հետևանքով դրաջող թունավոր նյութեր ներգործում են կենսորենական նյարդային սխտեմի բեղբների վրա: Ալկոհոլը թուլացնում է օքսիդացման ֆերմենտների ազդեցությունը և զարնով խկ ուղեղում նվազեցնում օքսիդացման պրոցեսները: Ալկոհոլի բուժավոր ներգործության հետևանքով մարզու մտավոր կարողությունները նվազում են խիստ կերպով և հետագայում հոգեկան հիվանդություններ առաջացնում:

Այդ բուրբ վկայում են այն մասին, թե ալկոհոլը ինչպիսի բացասական դեր է խաղում մարզու կյանքում, նպաստավոր պայմաններ ստեղծում հանցագործության առաջացման համար: Սովորաբար ծնծն ու անպատվությունը, կրկններն ու դանակահարությունները, ինչպես նաև հանցագործությունների կատարող անձինք այդպիսի արարքների կատարելու պահին նղել են խմած կամ հարբած վիճակում: Եթե այդ անձը վատ դատարակություն է ստացել և նրա բարոյական ձևավորման ընթացի վրա բացասական գործունեները ներգործուն ազդեցություն են ունեցել, ապա նա հարկելու դեպքում նեափում է հանցագործության ճահճիք: Կամ գաստրոարակություն, կոմունիստական բարոյական հայացքների ունեցող, պատշաճ կուլտուրայի տեր մարդը հարբեցողությամբ չի դրադվում և կնոջը չի հուլածում, տանցում ու երբեմն ինքնասպանության հասցնում: Հարբեցողությամբ դրադվելն էլ մի վկայություն է այն մասին, որ տվյալ անձը վատ դատարակություն է ստացել: «Երեկոյան Երևան» օրաթերթը 1968 թ. մայիսի 22-ի համարում գետեղել է մի թղթակցություն՝ «Հանցագործներ կարող էին լինել» վերնագրով, ուր Եանումյանի շրջանի ավագ ժողգաստավոր Ա. Մանուկյանը նշում է, որ Ա. Ք.-ն շորս անգամ դատապարտվել է իուլիգանության համար և միշտ էլ հարբած ժամանակ է կատարել խուլիգանությունը: Ակտորուստային N 4 տեսեսության կուլեկտիվի անդամները վկայում են, որ «խնայքի աշ-

խառող է, կարգապահ, բայց երբ հարբում է, ամեն ինչ ունեւատակ է անում»: նույնն է ատում նաև նրա ծեր հայրը: Եթողովրդական գաղափարների գաղափարներից երևում է, որ այդ երիտասարդի խուլիգանական արարքները արտահայտվել են ամենացրեկն ձևով: նա ձեռք է բարձրացրել մեր բազաբացիներին, միխրիայի աշխատողներին և նույնիսկ հարազատ հոր վրա: նա փորձել է հրդեհել այն ստուը, որտեղ բնակվում են իր երեխաները, օգտագործել է զանակ: Հարբեցողությունը նրան զրգել է ամենաստոր արարքների: «Ի՞նչն է նրան նորից բանտ բերել, անշուշտ արևո՞ւր, անհույս հարբեցողությունը, որն ամեն տեսակի հանցագործությունների նախապայմանն է»:

Հարբեցողությունը մեծ շարիք է և շատ ու շատ ցավեր ու վշտեր է պատճառում թե՛ հարազատներին և թե՛ ուրիշներին: Թերթը գրում է, որ «հարբեցողության դեմ մղվող պայքարը տակավին պատշաճ արդյունավետ չէ, քանի որ օգնից խմիչքների վաճառքի բնագավառում չի պահպանվում սահմանված կարգ ու կանոնը, առևտրի աշխատողները պլանների կատարման նպատակով խախտում են առևտրի միևնույնության կողմից սահմանված ոգելից խմիչքների վաճառքի կարգը, շափերը: Հարբեցողության նկատմամբ մինչև այժմ ստեղծված միջոցառումները, ծանր հետևանքները չեն մասսայականացնել: Գաղափարական պայքարն ակնհայտորեն անբավարար է, միջոցառումները քիչ արդյունավետ, վարչական օրգանների և լայն հասարակչությունից միասնական համագործակցված պայքարը շատ ցածր մակարդակի վրա է գտնվում:

Այդ բոլորը ճիշտ է, թերթը հրամայաբար պահանջում է վճարական ու հետևողական, արդյունավետ պայքար կազմակերպել հարբեցողության դեմ, որը ոչ միայն անհրաժեշտ է հասարակության և նրա անդամների, այլև հենց իրենց՝ հարբեցողներին այդ կործանիչ ճանապարհից փրկելու համար:

«Հարբեցողությունը մեծագույն շարիք է. ալկոհոլումայր, վերջին հաշիվով, կամ սոսոցիալություն է կորցնում կամ ազա-

տադրկվում: Հարկավոր է լայն հասարակական հակադրանք, ստեղծվյալ միջոցառումներով հարբեցողների նկատմամբ: Այստեղ անհրաժեշտ է որոշ դիտողություններ անել. առեւտրությունը պետք է ստեղծել ոչ թե հարբեցողի, այլ հարբեցուցության նկատմամբ: Սոցիալիզմի օրոք ճիշտ ճանապարհից շեղված ամեն որ կարող է վերագրանալ ուրիշ ճանապարհի, սպիտակ աշատանքային կյանքի: Մենք ստեղծվյալ ենք սերմանում ոչ թե սարգու, այլ արարքի, երևույթի նկատմամբ: Գրանք տարբեր բաներ են: Այնուհետև հարբեցողությունը խիստ բացասական դեր է խաղում մարդու կյանքում, հարբեցողությունը զրգովոր շատ շուտ է մարդկանց անպատվում, անձնական փրավորանք հասցնում, զրպարտում, նարվածում, սպանում: Սակայն նույն արարքները կարող են կատարել նաև այնպիսի մարդիկ, ովքեր հարբեցողությունը չեն զրգովում: Չրպարտելներն իրեն կանոն հարբեցող են լինում, բայց կան և այնպիսիները, որոնք չեն հարբում, բայց արտֆեսիոնալ զրպարտիչներ են: Հայտնի է, որ Հ. Ս.-ն և Կ. Բ.-ն երբեք հարբեցողությունը չէին զրգովում, բայց կարնցից յուրբարանչուրը զրպարտել էր 280—290 մարդու, և նրանք բանտում էլ մահացան: Լ. Ք.-ի և Հ. Ս.-ի զրպարտությունների հիման վրա շատ ու շատ մարդիկ են տուժել: Նրանք նույն զրպարտիչներ էին և հասարակության համար խիստ վտանգավոր:

Թերթի այն պնդումը, որ հարբեցողությունը ամեն տեսակի հանցագործության նախապայմանն է, ճիշտ զրվածք չէ, այդպիսի բանն առհասարակ հնարավոր չէ:

Այսպիսով, մենք մտնում ենք այն հարցին, թե հարբեցողությունը պետք է համարել հանցագործության առաջացման պատճառ, թե արտաքին շարժառիթ: Այդ հարցը ճիշտ պարզաբանելու համար պետք է վերհիշել մի քանի հանգամանքներ: Ինչպես արդեն ասվել է, մի բացասական գործոնը մեկուսացված, առանձին վիճակում վերցված հանցագործություն էր առաջացնում, այն հանցագործության առաջացման հնարավորություն էր ստեղծում այն դեպքում, երբ միահյուսվում է ուրիշ բացասական գործոնների հետ: Այդ

վիճիկն վերաբերում է նաև Հարրեցողութիանը, որն առանց արիչ բացասական գործոնների հանրային վտանգավորություն չի ներկայացնում, բայց երբ այն միահյուսվում է այնպիսի բացասական գործոնների հետ, ինչպիսին է անձի հակահասարակական հայացքը, ապա հանցագործության առաջացման հնարավորություն է ստեղծվում:

Այնուհետև, բացասական գործոնը ոչ միայն կարող է հանցագործության առաջացման պատճառ լինել, այլև նույն գործոնը մի այլ կապակցության դրամի կարող է հանդես գալ որպես արտաքին շարժառիթ: Այստեղ արդեն նշանակություն ունի այն հանգամանքը, թե ինչպիսի բացասական գործոններ են խաչաձևվում միմյանց հետ: Այս դեպքում գործում է երեւելովի փոխադարձ կապակցությունն և փոխադարձ պայմանավորվածության օրենքը:

Արդեն վերը նշել ենք, որ հասարակական կենցիությունը ներգործում է անձի վրա, այն կարող է լինել զրական և բացասական: Սակայն այդ ներգործության աստիճանը կախված է ոչ միայն հասարակական կենցիությունից, այլև անձի անհատականությունից: Երբ հասարակական կենցիության մեջ գոյություն ունեցող բացասական գործոններն անձի գործոնները խաչաձևվում են անձի մոտ եղած բացասական գործոնին, ապա հանցագործություն են ծնում կամ զրա հնարավորություն ստեղծում, որը կարող է վերահանել, հանցագործություն դառնալ, եթե չի կանխվում:

Բոլոր դեպքերում հանցագործության պատճառը անձի պիսակցության մեջ հասարակական հայացքների առկայությունն է, բայց այդպիսին գոյանում է զանազան բացասական գործոնների ազդեցությամբ: Ահա այդպիսի բացասական գործոններից մեկն էլ Հարրեցողությունն է, որի հանրային վտանգավորության աստիճանը կախված է ոչ միայն նրա ներգործությունից անձի ներվալին համակարգության վրա, այլև տարածվածության ծավալից, զրա դեմ մղվող պայքարի իրավիճակից, արդյունավետությունից:

Ամեն բացասական գործոն կարող է հանրային լուրջ վտանգավորություն ձեռք բերել, եթե զրա դեմ հետեղական

ու արդյունավետ պայքար չի կազմակերպվում: Նույնն է և Հարրեցողությունը. զրա դեմ տարվելիք պայքարի գլխավոր պահանջը ատելության սերմանումն է, որ հասարակությունն ինքը բացահայտուն պիտք է հանդես գա զրա դեմ իրեն սոցիալական շարքի: Նման պայքարի համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները կան:

Հանցագործության առաջացման արտաքին շարժառիթների հարցի լուծումը թվարանում է նաև նրանով, որ շատ հաճախ հանցավոր արարքի շարժառիթը միահյուսվում է արարքի նպատակի հետ և զրաներով որպես նպատակ: Այսպես, նոյնմերկային շրջանում Բ. Ա.-ն ծնում է Հ. Խ.-ին. առեժող այդ մասին հայտնում է իր եղբայր Գ. Խ.-ին, որը համար առիթ է որոնում վրեժ լուծելու համար: Մի օր էլովում են նրանք շնեք և նաև այդ աղբիթով Գ. Խ.-ն իխտ ծեծի է ենթարկում Բ. Ա.-ին: Այստեղ շարժառիթը, նպատակը, զրգապատճառը կարծես միահյուսվել են: Նպատակը ծեծելն էր, իսկ շարժառիթը շնեքի կոչելը: Նպատակը պարզելու դեպքում բացահայտվում է նաև շարժառիթը:

Մի այլ օրինակ. Հ. Ս.-ն երկար ժամանակ առիթ է որոնում Մ.-ից վրեժ լուծելու համար: Երբ բոլորովին ուրիշ առիթով Մ.-ի հարցը քննության առարկա է դառնում, ապա Հ. Ս.-ն սկսում է զրպարտություններ գրել պետական և կուսակցական օրգաններին և իրեն կանոն դրանք գրում է առանց ստորագրության: Գրանով էլ շրավարավելով, նա Մ.-ից զգո՞՞ մարդկանց սովորեցնում է նույնպես զրպարտություններ գրել: Քննությունն ամանակ բացահայտում է այդ կեղտոտ զրպարտությունը: Ա.Գ.-ն քննության ժամանակ ցուցմունք է տվել. «Հ. Ս.-ն հկավ մեր տուն և սասց, որ ժամանակը վրա է հասել Մ.-ից վրեժ լուծելու համար: Հարկավոր է զրել որքան հնարավոր է շատ և ծար մեղադրանքներ բարդել նրա վրա: Երբ ես սասցի, որ ոչինչ չգիտեմ նրա վերաբերյալ և բացի այդ, սուտ բաների մասին գրելը ի՞նչ օգուտ կարող է տալ, Հ. Ս.-ն պատասխանեց՝ ես նույնպես չեմ կասկածում, որ սուտվան ժամանակ դրանք կհերքվեն, բայց մենք կհասնենք մեր նպատակին զոնե սկզբնական

չբանում. մասսաներին հայտնի կդառնա, որ նրա հարցը բնում են և դա լուրջ հարված կլինի նրա հեղինակությանը: Գործված զրպարտիչը կարողացել էր նրանց ևս համոզել ու իրեն հանցակից դարձնել, զրգել հանցավոր արարքներ կատարելու: Ստուգումները ցույց են տվել, որ Ղ. Ս.-ն իր կեղծոտոտ անցյալով և հակահասարակական հայացքներով խիստ վտանգավոր տարր է: Նա եղել է արտգիտտ, մի քանի անգամ դատապարտվել է զանազան հանցագործություններ կատարելու, այդ թվում մի անգամ զրպարտությունների համար, մյուս անգամ խաբեբայությունների՝ աշխատանքի մասսաներից դրամ կորզելու, մի անգամ էլ կեղծ մատուցության համար: Նա իր արատավոր հոգեբանությունը, հակահասարակական հայացքներով, ծայրահեղ եսամոլությամբ ու շահամոլությամբ պատրաստ էր տանջելու մարդկանց կյանքը խտրանակել:

Այստեղ Մ.-ի նկատմամբ որոշ ստուգումներ կատարելը եղել է արտաքին շարժառիթը, որից ելնելով Ղ. Ս.-ն սկսել է արշավանք Մ.-ի դեմ և ոտքի հանել նրա համարյա բոլոր հակառակորդներին: Տվյալ հանցագործության իրական պատճառները Ղ. Ս.-ի հակահասարակական հայացքներն են, նպատակը՝ Մ.-ից վրեժի լուծումը, շարժառիթը՝ Մ.-ի նկատմամբ ստուգում սկսելն է:

Շատ հաճախ հանցագործություն կատարման մեջ դրսևորվում են տվյալ արարքի սուբյեկտի հոգեկան գծերը, քանի որ անձի վարքագիծը հայտնի չափով կախված է նրա խոնվածքից ու բնավորության տանձնահատկություններից: Վերջիններս բացահայտելով հնարավոր է դառնում նաև պարզել, թե ինչու նրա գիտակցության մեջ զրույթուն ունեցող հակահասարակական հայացքները վերանել են հանցագործության: Գառական դրոճերը ցույց են ապիս, որ միևնույն արտաքին շարժառիթը տարբեր մարդկանց վրա տարբեր ձևով է ներգործում, թեև նրանց գիտակցության մեջ առկա են լինում հակահասարակական հայացքներ: Մեկը դյուրագրգիռ է, քան մյուսը, մեկն ավելի մեծամիտ է, քան մյուսը, մեկի մոտ եսամոլությունն ու շահամոլությունն ավել-

ի ուժեղ են, քան մյուսի: Որքան ցածր է մարդու կուլտուրական մակարդակը և նա անզաստիարակ է, այնքան ավելի ուժեղ է ներգործում նրա վրա արտաքին շարժառիթը: Մարդու անձնական որպիսությունն ու իրավիճակը ևս հաճախ որոշակի դեր են խաղում: Այդ է պատճառը, որ ոմանք հանցագործություն կատարելուց առաջ գործածում են ողջից խմիչք կամ հաշիշ՝ համարձակությունը բարձրացնելու նպատակով:

Հանցագործություն կատարելու շարժառիթները տարբեր են լինում տարբեր մարդկանց մոտ: Արտաքին միջավայրի ներգործությունը մարդու գիտակցության վրա կարող է առաջացնել վիրավորանքի զգացում, վիրավորվածություն, հուզվածություն, կատաղություն, վրդովմունք: Սակայն այդ ներգործությունը միատեսակ ու միապիսի լինում բուրբ անձանց վրա: Ոչ կալուն բնավորություն, թույլ կամք ունեցող անձնավորությունը սովորաբար բարձր է դատում ու զնահատում իրեն, նրա մոտ առաջանում է այնպիսի սեպագիտ, որն իր ուժով ազնվատու չէ հանցավոր մտադրությունը հանցագործության վերափոխելուն: Այդ կարող է իրացվել նրան վիրավորողի հետ գառատատան տեսնելով: Այդ ամենից առաջ նկատվում է հարբեցողների մոտ, քանի որ նրանց հոգեբանության գաղղի կենտրոնը թուլացած կամ ջլատված է լինում և աննշան առիթը բավական է ամենածանր հանցագործություն կատարելու համար: Հակահասարակական հայացքները հանցավոր մտադրության վերափոխմանը կարող են որոշ դեպքերում տեղիք տալ: Ինչպես հանցավոր արարքին հեշտությամբ հասնելու, այնպես էլ առանց լուրջ զոժվորության հանցագործության հետևանքը թացընելու: Հնարավորություն ստեղծող հանգամանքները: Նա համոզված է, որ ինքը զոժվորության չի հանդիպի այդ գործում:

Բանն այն է, որ հակահասարակական հայացքների արմատներն ավելի խորն են և տևական են լինում, գոյանում են զանազան բացասական դրոճների ներգործությամբ: Սակայն զրանք հանցավոր մտադրության են վերափոխվում այն կամ այն շարժառիթով, երբ անձը վճռականություն է

ցուցաբերում այն իրազործելու համար: Եարժառիքները սովորաբար գոյանում են հանցադեպերի նախօրյակին:

Պա նշանակում է, որ զրանով չի կարող բացատրվել հանցավոր արարքի կատարումը: Հանցագործության արտաքին շարժառիթը հաճախ միահյուսվում է արարքի նպատակին, այն նախորդում է հանցավոր մտադրության իրացմանը, անձին այդ կատարելու համար հրահրելու, մղելու գործում:

Ազդկանն առևանգելու մտադրությունը առաջանում է անձի որոշ տարիքում և իրազորապլաններում, բայց զրա իրականացմանն է դիմում նպատակով պայմանների և արտաքին շարժառիթների, հանգամանքների առկաության ղեկավարում: Եթե նա համոզված լինի, որ կարող է հասնել իր նպատակին և զրա համար խիտ պատասխանատվության չի ենթարկվի, ապա նա ի կատար կածի իր մտադրությունը, իսկ եթե համոզված չի, որ իր փորձն անհաջողության կմտնվի, ապա հազիվ թե նա դիմի իր մտադրությունը իրականացնելու փորձին: Նա չի կարող անտեսել առևանգման համար սպառնացող պատասխանատվության վտանգը, հետադրությունը, մանավանդ, որ եթե համոզված չէ նպատակին հասնելու հաջողության մեջ: Այստեղ նաև նշանակություն ունի այն հանգամանքը, թե նրան արդյոք հրահրում, խրախուսում են կատարելու այդ արարքը, թե հակառակը՝ խորհուրդ են տալիս ձեռնպահ մնալ: Պայմաններն ու հանգամանքները կարևոր դեր են խաղում: Մ. Ա.-ն (Աշտարակի շրջան) սովետական բանակից վերադառնալուց հետո սիրահարվում է Լ. Տ.-ին և նրա ծնողների մոտ խնամախոս օւղարկում, բայց մերժում է ստանում: Ազդիկն ու տղան համաձայնվում են, իսկ հայրն արգելում է, խանգարում: Նրանք սպասում են, հույս ունենալով, որ ժամանակը կկտորի ազդիկ հոր կամահորությունը: Մակայն նրանք սխալվում են: Հայրը ցանկանում է աղջկանն ուրիշի հետ ամուսնացնել: Մ. Ա.-ն ելք է որոնում. նրան խորհուրդ են տալիս առևանգել Լ. Տ.-ին: Ազդիկը համաձայնություն է տալիս: Օգտվելով հոր բացակայությունից, տղան «առևանգում» է աղջկան: Հայրը խիստ հուզված որոշում է վրեժխնդիր լինել: Նա զենու է զգազգ,

աղջկա շորերը լցնում մեջը և հարևանների հետ միասին տանում են, թաղում: Հայրը զերեզմանի քար է պատվիրում՝ աղջրկանը համարելով մեռած:

5. ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱԿՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Այժմ քննության առևնք այն բացասական գործոնները, որոնք նպաստում են հանցագործության հետևանքի առաջացմանը: Հանցագործությունն արմատախիլ անելու նպատակով անհրաժեշտ է վճռական պայտք Ժավալել ոչ միայն հանցագործության առաջացման պատճառները, արտաքին տարիքները, այլև հանցագործությունն առաջացնող գործոնները վերացնելու համար:

Այս երրորդ խմբի բացասական գործոնները ևս լուրջ վտանգ են ներկայացնում և քստ էություն հանցագործության առաջացման պատճառի և արտաքին տարիքի բացասական գործոնների հետ միասին կազմում են մի ամբողջություն՝ ավելի բարձրացնելով հանցագործության վտանգավորության աստիճանը: Այդ է պատճառը, որ զործող քրեական օրենսդրությունը, պատժատեսակներն ու շտափերը նախատեսելու ժամանակ, կարևոր տեղ է հատկացրել նաև արարքի հետևանքի հարցին: Օրինակ, Հայկական ՄՍՀ Քր. օր. 103, 106, 109 հ.՝ սպառնալի են սուղրաման հաշվի են առնում մարմնական վնասվածքի տեսակներն ու բնույթը, սատիճանը և այլն, մի խոտքով, հանցագործության հետևանքը: Մյուս կողմից հանցավոր արարքի հետևանքի առաջացումն անհնարին դարձնելու ղեկավարում հանցավոր արարքը կարող է կորցնել իր վտանգավորությունը կամ նվազ վտանգավոր արարք դառնալ: Օրինակ, երբ մարք ցանկանում է դանակահարել, բայց այն կանխվում է և մարմնական վնասվածք չի պատճառվում, ապա տեղի է ունենում որակավոր արարքը կարող է կորցնել իր վտանգավորությունը, իսկ եթե չի հարվածում, ապա դանակահարելու փորձը կորցնում է արարքի վտանգավորությունը, իսկ եթե ուրիշն է կանխում, ապա նվազում է վտանգավորության աս-

աիճանը: Վերջին դեպքում արարքի վտանգավորությունը մնում է, բայց մեղմանում է պատասխանատվության աստիճանը: Ա-ն դանակով հարվածում և տուժողի զենքն այլանդակում է: Բ-ն ցանկանում է դանակով հարվածել տուժողի էրեսին, բայց բռնում են և նա չի կարողանում հարվածել: Այդ երկու դեպքում էլ նրանք կենթարկվին դատական պատասխանատվության, սակայն հանցանքի որակումը և պատժատեսակին ու չափը նույնը չեն կարող լինել: Նմանք Քր. օր. 35 և 36 հ. նախատեսվող պատասխանատվությունը մեղսացողի և խտանցող հանգամանքները երկու դեպքում էլ միասնական են:

Ամենից առաջ պետք է քննզծել, որ երրորդ խմբին պատկանող բացասական գործոնները կապված են ոչ այնքան հանցագործության սուբյեկտի, որքան դրա օբյեկտի հետ: Շատ դեպքերում անձն իր հանցավոր գիտավորությունը չի կարող իրականացնել, եթե դրա համար օբյեկտիվ հանգամանքները նպաստավոր չեն: Այդ բացասական գործոնները լինում են զանազան տիպի և կապվում տեղի, ժամանակի ու այլ հանգամանքների հետ: Քրեական գործերով դատական պրակտիկան ցույց է տալիս, որ իրոք հանցավոր արարքի հետևանքի առաջացումը կապված է օբյեկտիվ պայմանների ազդեցության հետ: Քրեական մի գործի նյութերից երևում է, որ 2. 2.-ն սեռական կապի հաստատելու նպատակով երկար ժամանակ հետապնդել է տուժող Լ. ին: Շուրջ երկու տարի նա իր հանցավոր նպատակին չի հասնում, բանի որ տուժողը ոչ միայն լավ վարքի տեր է, բարոյական ազդիկ, այլև այն պատճառով, որ նա ցուցաբերում է զգուշություն և կանխորհիրեն սպանացող վտանգը: Նա միշտ իրեն հաշիվ է տալիս, թե և՛ որ, ո՞ւմ հետ և ո՞ւր է գնում: Նպատակի որ պայմաններ չեն ստեղծվել և նա չի կարողացել իր նպատակին հասնել: Սակայն դատապարտույուն իր շար մտազրույթությունից չի հրաժարվում: Երբ տուժողը սովորելու նպատակով կիրովականից փոխադրվում է Երևան և ապրում հանրակացարանում, ապա հանցագործի համար կարծես նպատակվոր պայմաններ են ստեղծվում: Դատապարտույուն տուժողի հետ բնակվող մի

ազդեկա իր ազդեցության տակ է գցում և նրա միջոցով ծուղակ սարքում: Նա մի բանի անգամ խնջույթ է կազմակերպում, հյուրասիրություն սարքում, ժանաթանում է շքեպատի հետ և մի օր էլ, երբ տուժողը մենակ է մնում՝ նրան բռնարարում է:

Հանցագործն օգտվել է հանրակացարանում կարգ ու կանոնի բացակայությունից, շարաշահել է կողմնակի անձանց ուզատ էլքն ու մուտքը, նույնիսկ օգտվել խղամտություն կազմակերպելու ճնարավորությունից: Խնջույթի միջոցով կապիկս նաև հանրակացարանի պարետին մասնակից դարձնելով իրենց խնջույթներին, շահել է նրանց վստահությունը և ազատ մուտք ու էլք ունեցել: Հանցագործը մի ամբողջ ամիս մնացել է Երևանում և հասել նպատակին: Նա այն կարծիքին է եղել, որ տուժողին բռնարարելու դեպքում վերջինս հարկադրված կլինի իրեն հետ ամուսնանալ, սակայն ճիշտ հակառակում է ստացվել, տուժողի մոտ նրա նկատմամբ խոր ատելություն է առաջացել: Այդ վտանգավոր հանցագործությունը տեղի չէր ունենա, եթե հանրակացարանում այդ արարքի համար նպատակվոր պայմաններ չստեղծվեին:

Ահա Երևանի ժողգատարանիցի մեկի քննած մի քրեական գործ է: Վ. Մ.-ն և Կ. Գ.-ն մտերիմ ընկերներ են եղել: Եվ ահա մի անգամ, ազդեկա ներկայությամբ Վ. Ն.-ն ապրտակում է Կ. Գ.-ին, որից հետո նրանք թշնամանում են: Կ. Գ.-ն որոշում է վրեժ լուծել: Սակայն կովի բեզիվ իրենից ավելի ուժեղ ու համարձակ հակառակորդի հետ հնարավոր չէր: Ելք չգտնելով, նա այդ մասին պատմում է իր եղբայր Գ. Գ.-ին և խնդրում օգնել: Վերջինս աշխատում է գործարանում որպես մեխանիկ: Օգտվելով գործարանի ցեխում հակառակության բացակայությունից, արքնանակ է պատրաստում և հանձնում եղբորը: Վերջինս հետապնդում է և հարմար առիթի սպասում վրեժ լուծելու համար: Մի անգամ տեսնում է, որ տուժողը ծաղի տակ քնած է, մոտենում է և կրկում, որից նա մարմնական ծանր վնասվածք է ստանում:

Հասկանալի է, որ գործարանի այդ ցեխում պատշաճ կարգ ու կանոն լինելու զեպքում կրացառվեր ասորճանակի պատրաստումը, հետևաբար հնարավոր է, որ հանցագործության կատարումը ևս անհնարին կդառնար: Եւ մի զուցն կարողանար մի այլ տեղից զենք ձարել: Բայց հնարավոր է, որ այդ նրան չհաջողվեր: Ժամանակն ու տարածությունը կարող էին կանխել սպանացող վտանգը:

Մի այլ օրինակ. ճաշարաններից մեկում խմիչք վաճառելիք արգելված է եղել, սակայն աշխատողները դադտնի վաճառել են և՛ կոնյակ և՛ դիճի: Մի խումբ պորտաբույծների զնայով այդտեղ, մի քանի ժամ շարունակ խմում են և խանգարում կարգ ու կանոնը, լվաի արտահայտություններ թույլ տալիս, ծաղրում մարդկանց: Իր կնոջ հետ աղտոն է գալիս Ա. Ա.-ն: Խուլիգանները սկսում են նրա կնոջ նկատմամբ լվաի արարքներ թույլ տալ: Ճաշարանի աշխատողներն այդ խուլիգանությունը վերջ տալու համար ոչ մի միջոցի չեն դիմում: Տուժողը հարկադրված է լինում նրանց կարգի հրավիրել, բայց գազազած խուլիգաններից մեկը դանակի ուժ հարված է հասցնում նրան և դիմում փախուստի, սակայն բռնվում է միլիցիայի աշխատողի կողմից:

Տվյալ դեպքում հանցագործության առաջացման համար նպաստավոր պայմաններ են ստեղծում ճաշարանի աշխատողները: Պարզ է, որ ճաշարանում հսկողության, կարգ ու կանոնի բացակայությունը, անօրինակ և կերպով խմիչք վաճառելը, պորտաբույծ տարրերի համար արտոնյալ պայմանները, ճաշարանի աշխատողների նման անտարբեր վերաբերմունքը զանակահարություն հնարավորություն են ստեղծել:

Հանցագործության հետևանքի առաջացման ուղղությունը գործող հանգամանքներն ավելի հեշտ է պարզել, քան առաջին երկու խմբի բացասական գործոնների նկատմամբ: Դա բացատրվում է նրանով, որ այդ երրորդ խմբին պատկանող բացասական գործոնների զգալի մասը շարունակում է իր գոյությունը հանցագործությունը կատարվելուց հետո ևս: Թե՛ հանրակացարանում ստեղծված գրությունը և թե՛ ճա-

շարանում գոյություն ունեցող պայմանները չեն փոխվել հանցագործությունը կատարվելուց հետո էլ:

Գտնական-քննչական օրգաններն իրենց ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում են այդ երրորդ խմբի բացասական գործոնները բացահայտելու և վերացնելու վրա: Ինչ վերաբերում է առաջին և երկրորդ խմբերի բացասական գործոնների բացահայտմանը և վերացմանը, ապա այդ օրգանները շատ բիչ են զբաղվում այդ հարցով և զբաղում իսկ վնասում են ընդհանուր գործին: Հարկավոր է պայքար ծավալել բնաբովանդակ երեք խմբերի բացասական գործոնների վերացման համար: Այստեղ մենք ընդհուպ մոտենում ենք հանցագործության նախազգուշացման ու կանխման հարցին:

ՔԼՈՒՆ ՎԵՏԵՐՈՐԳ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՍԵԱԶԳՈՒՇԱՑՈՒՄԸ ՈՒ ԿԱՆԽՈՒՄԸ

1. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՍԵԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՈՒ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հանցագործության նախազգուշացման ու կանխման հարցը հանցագործության վերացման համար մզվող պայմարի գլխավոր և կարևոր խնդիրն է: ՄՄԿԿ Մրազիրը սահմանում է, որ կոմունիզմ կառուցող հասարակության մեջ իրավաստիքներն ու հանցագործությունները չպետք է կենն, սակայն, քանի որ դեռևս այդպիսիները գոյություն ունեն, անհրաժեշտ է վճռական պայքար ծավալել դրանց դեմ և «գլխավոր ուշադրությունը պետք է ուղղել հանցագործության կանխմանը»¹:

Հանցագործության նախազգուշացում և կանխում սակայն չհասկանում ենր այն միջոցառումների ամբողջությունը, որը պետությունը և լայն հասարակայնությունը կիրառում են հանցագործությունն արմատախիլ անելու նպատակով: Կասկած չկա, որ հանցագործության վերացման գլխավոր հիմքը հասարակության բոլոր անդամների էությունական ապահովվածության և կուլտուրական մակարդակի պատշաճ բարձրացումն է, նրանց մեջ կոմունիստական դաստիարակության և կոմունիզմ կառուցողների բարոյական կողմնորոշված սկզբունքների արմատավորումը: Սակայն դրա հետ միասին

կենսական նշանակություն ունի այն հատուկ միջոցառումների համակցությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցագործությունն արմատախիլ անելու գործին:

Հանցագործության նախազգուշացման ու կանխման հասկացություններն այնքան են սերտորեն կապված միմյանց հետ, որ հաճախ մեկը գործ է ածվում մյուսի փոխարեն կամ մեկի անվան տակ հասկանում են թե՛ մեկը և թե՛ մյուսը: Գրանք մի ամբողջություն են, զանվում են սերտ կապերի մեջ և հետագայում են նույն խնդրի լուծումը՝ հանցագործության վերացումը: Հանցագործության նախազգուշացումն ու կանխումն թեև այդքան սերտ կապերով են կապված միմյանց հետ, սակայն դա դեռևս չի նշանակում, թե դրանք նույնանում են, դադարում տարբեր հասկացություն լինելուց:

Կանխել կարելի է այն, ինչ որ արդեն ծնունդ է առել կամ սկսել է ձևավորվել, եթե չկանխվի, սպա այն կշարունակվի և կստանա նոր որակ: Տվյալ դեպքում նկատի ունենք այնպիսի արտքեր լինելության պրոցեսը, որտեղիկ սատիճանը, որը կարող է վերածել հանցագործության: Չի կարելի կանխել այն, ինչ որ դեռևս իր գոյությունը չի սկսել, լինելության ձևավորման պրոցես չի մտել: Սակայն այն, եթե արդեն ծնունդ է առել, որոշ սատիճանի է հասել, ձևավորվում է իրեն հանցագործություն: Այստեղ է, որ կանխման միջոցը խաղում է վճռական դեր և բացառում հանցավոր արարքի կատարումը: ԱՄՆ օրինակ, զանցանցները կարող են հանցագործության վերածնել, եթե չկանխվեն: Արտքերիկ ճաշարաններից մեկում Շ.-ն ճաշում է և հետո էլ օդի խմում, էրը անցնում է իր կարողության սահմանները, սպա նա սկսում է իրեն վատ պահել և բոլոր նշանները խոսում են այն մասին, որ այդ զանցանքը չկանխվելու դեպքում հանցագործության կվերածի: Նա արդեն հարբած վիճակում անթույլատրելի արտահայտություններ էր անում հարեան սեղանի մոտ նստած կնոջ հասցին, օրի ամուսինը ճաշ էր ստանում: Այդ նկատույնով, հասարակական կարգի պահպանության երկու գլուխներին կենր նրան կարգի են հրավիրում՝ կանխելով սպառնացող վտանգը:

¹ ՄՄԿԿ XXII համագումարի էությունը, Նրևան, 1962, էջ 323.

Ձանցանքը Հանցագործության վերաճելու կանխումը կազմում է Հանցագործություն զեմ մղվող պայքարի կարևորագույն խնդիրներից մեկը: Այդ են վկայում և ապացուցում Հասարակական կարգի պահպանման ժողովրդական գրոմի-նաների, կոմերիտական շտաբների, ֆաղային կոմիտեաների, բնկերական դատարանների և պետական օրգանների՝ միլիցիայի, դատախազության, դատարանի աշխատանքները: Դա մի այնպիսի կարևոր գործունեություն է, որը զնալով այնչի ու ապիկի մեծ նշանակություն է ստանում և զառնում Հոսովու միջոց հակահասարակական արարքների արմատախիլ անելու համար: Ձանցանքը Հանցագործության վերաճելու կանխումը շատ կարևոր է, բայց միայնը չէ:

Հայտնի է, որ մարդը մոտ Հանցավոր դիտավորությունը, մտադրություն առաջանալուց հետո, նա, սովորաբար, նախապատրաստական որոշ գործողություններ է կատարում, որոնք անհրաժեշտ են Հանցավոր դիտավորության իրացման համար: Այդ Հանցագործության նախապատրաստությունը և Հանցափորձը Հանցագործության զարգացման էտապներն են: Հայկական ՍՍՀ Քր. օր. 15 հ. ապված է՝ «Հանցագործության նախապատրաստություն է համարվում Հանցագործություն կատարելու համար դիտավորությամբ միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը կամ այլ պայմաններ ստեղծելը:

Հանցափորձ է համարվում այն դիտավորյալ գործողությունը, որն անմիջականորեն ուղղված է Հանցագործություն կատարելուն, բեք որում, կեք Հանցագործությունը մինչև վերջը չի հասցվել Հանցավորի կամբից անկախ պատճառներով:

Այստեղից երևում է, որ Հանցագործության կանխումը կարող է տեղի ունենալ ինչպես նախապատրաստական, այնպես էլ Հանցափորձի շրջանում: Երբ համապատասխան օրգանները միջամտում են և կարողանում կանխել, թույլ չառալ, որ այն զարգանա ու վերաճի Հանցագործության, ապա դրանով իսկ կանխում են սպանությունը, զանակահարությունը, սարմնական վնասվածքի պատճառումը և այլ Հանցագործու-

թյուններ: Այդ գործունեությունը ևս կենսական նշանակություն ունի ինչպես Հանցագործության վերացման նպատակով մղվող պայքարի հաջողության, այնպես էլ անձի կյանքի, առողջության, պատվի ու արժանապատվության բրես-իրավական պաշտպանության խնդրի իրական կատարման համար:

Հանցագործության կանխումը կարող է տեղի ունենալ նաև նախազգուշական միջոցառումներով, երբ որոշակի անդեկություն է ստացվում սպառնացող արարքի նախապատրաստման վերաբերյալ և այդ հիման վրա կանխարկող միջոցներ են կիրառվում, ապա դրանով իսկ կանխվում է հանցագործությունը:

Նախազգուշական և կանխարկող միջոցառումները կարող են տարբեր տեսակի ու բնույթի լինել: Երբ հայտնի է զրանում, որ տվյալ անձը սպանության սպառնալիք է տալիս, կանչում են միլիցիայի բաժանմունք, ստորադրություն վերցնում և միաժամանակ հետևում նրա վարքագծին: Այդ միջոցառումը ոչ միայն նշտացնում է Հանցագործին մերկացնելու գործը՝ որևէ արարք կատարելու զեպքում, այլև այն, որ նրանցից շատ-շատերը հրաժարվում են իրենց Հանցավոր դիտավորությունը իրագործելուց: Հայտնի է, որ Հանցագործների զգալի մասը համազված է այն բանում, որ իր կատարած Հանցագործությունը չի բացվելու և ինքը պատասխանատվության չի ենթարկվելու, հակառակ զեպքում նրանք կհրաժարվեն Հանցանք կատարելուց: Տվյալ զեպքում միլիցիայում նրան արվող նախազգուշացումը հարկադրում է նահանջել և հրաժարվել Հանցավոր դիտավորությունից և կատար անելուց: Վերջապես հետևելով նրա վարքագծին, կարողանում են խափանել Հանցանքի կատարումը: Երբ տեղեկություն է ստացվում այն մասին, որ նա բնտանիքում իրեն լավ չի պահում, հայանում է կնոջը, ծեծում ու անպատվում, ապա նրա հարցը քննության են զնում ֆաղային կոմիտեում կամ բնկերական դատարանում, հասարակական ներգործության միջոցով կանխում են Հանցավոր արարքները, վերափոխում և բողոքում տվյալ անձին: Այն զեպքում, երբ հայտնաբերվում է

անօրինական ճանապարհով առքճանակ ձեռք բերելու դեպք, ապա նրան պատասխանատվության են ենթարկում և դրանով իսկ կանխում պայմաններին կատարելու նրա շար դիտավորության իրականացումը: Երբ պորտաբուծ կլանք վարող մարդուն կանչում են միլիցիայի բաժին և պահանջում աշխատանքի անցնել, վերջ տալ հարեցողության և հարևանների նկատմամբ ցուցարներից անպատկառ վերաբերմունքին, ապա այստեղ միահյուսվում են հանցագործության նախադրչական ու կանխման հասկացությունները, բայց դարձյալ չեն նույնանում:

Հանցագործության նախադրչացման հասկացությունը շատ ավելի լայն է ու խոր բովանդակություն ունի, քան հանցագործության կանխում հասկացությունը: Հանցագործության նախադրչացումը պետության և հասարակության կողմից արվող այն բոլոր միջոցառումներն են, որոնք ուղղված են հանցագործության անաչացման պատճառների, արտաքին առիթների և հանցագործության հետևների առաջացման բացասական գործոնների վերացմանը:

Այդ միջոցառումները կարելի է ստորաբաժանել երկու խմբի, այն է՝ բնդհանոր միջոցառումներ և հատուկ միջոցառումներ: Առաջին խմբին են պատկանում այն միջոցառումները, որոնք ձեռք են առնվում պետության և հասարակչությունից կողմից՝ սովետական մարդկանց նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացման, աշխատավոր մասուսանների զարգափարական ու բարոյական նշայցքների ձևավորման, նրանց կոմունիստական ոգով դաստիարակելու, բուրժուական զարգափարակության և բարոյական հայացքների դեմ պայքարելու, մի խոսքով, նյութական բնույթի և զարգափարական պայքարի միջոցառումների ամբողջությունը: Ետո միջոցառումներ, իրենց անմիջական նպատակին զուգահեռ կամ անուղղակի կերպով լուծված են նաև բնեթվող խնդիրների մի մասը կամ մեծ նշանակություն են ունենում դրա համար: Փաստերը ցույց են առելու, որ բուրժուական զարգափարակության ու բարոյական հայացքների ազդեցությունն ավելի ուժեղ է գրեթեբոլորում այն-

տեղ, որտեղ դրանց դեմ պատշաճ պայքար չի կազմակերպվում, մարդկանց կոմունիստական դաստիարակության գործը լավ հիմքերի վրա չի զրվում, մարդկանց նյութական և կուլտուրական կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ բավարար աշխատանք չի տարվում: Երբ կոմունիստական բարոյականության վեհ սկզբունքները չեն արմատավորվում, մարդու կրթական ու կուլտուրական մակարդակը չի բարձրացվում, նրան կոմունիստական դաստիարակության չի սովորում, ապա նա հեշտույթում է գործում անզուսպ, հանցագործության մտիճքը, բնիկում է հին ու խորթ հայացքների սղեցիցության տակ: Մեք կողմից տեղերում կատարված ուսումնասիրությունները պարզվեց, որ դասապարտյաների մի կողմի մասը տարրական կրթություն ունի կամ կիսազրագետ է, նույնիսկ կան անգրագետներ: Նրանց բացարձակ մեծամասնությունը կտրված է եղել հասարակական աշխատանքներից, նրանց հետ դաստիարակական աշխատանք չի տարվել, նրանցից շատերը մեր կուլտուրական ու կատավորության ներքին ու արտաքին բազմապատկանության մասին զարգափար անզամ լուծեն: Այդպիսի մարդկի շատ հեշտ են բնիկում խորթ հայացքների ազդեցության տակ և հանցում կատարում: Այսպես, նույնբերյանի շրջանի ժողգաատարանի 1964 թ. մի քրեական գործով պարզվել է, որ անասնապահներ Գ. Ա.-ն՝ ծնված 1945 թ., 8-րդ դասարանի կրթությամբ, շղատված, և Մ. Կ. Մ.-ն՝ ծնված 1927 թ., շղատված, անգրագետ, կովի են բռնվում աննշան առիթով և միմյանց վնասում: Կոմում են երկու խմբի անասնապահների շնքըբերի կուլտուրական Մ.-ն հարձակվում է Ա.-ի և նրա բնիկը Զ.-ի վրա, պատճառում մորմնական վնասվածք և դիմում փախուստի: Ա.-ն էլ իր հերթին հարձակվում է նրա բնիկը Ս.-ի վրա և մարմնական վնասվածք պատճառում նրան:

Գրատպարտյաների հետ ունեցած զրույցից պարզվեց, որ Մ.-ին զրագետ դարձնելու հարցով ոչ ոք չի զրագվել, նա կարված է հասարակական կյանքից, չի մասնակցում ժողովների, զասախոսություններին, պարտավունքներին, սովետական կարգերի մասին զարգափար լուծի: Նույնիսկ դատական

պատասխանատվության ենթարկվելուց հետո նրա դատախարակության հարցով չեն դրադվել: Ա-ն թեև կոմերիտական է, բայց կյանքից կտրված, նրա հարցով նույնպես չեն դրադվել:

Բասարզեչարի շրջանի ժողդատարանի 1964 թ. քրեական մի գործի նյութերով հաստատված է, որ Մ. Թ. Ա.-ն թեև ՄՄԿԿ անդամ է, սակայն օժտված է աղայական սովորություններով ու քնտելություններով, հին հայացքներով ու զազախարներով: Նա իր կին Ա.-ին համարում է ոչ թե կյանքի րեններ, այլ իր տնային ծառան: 1963 թ. սեպտեմբերի 21-ին սեռի գալով, սեռանում է, որ Ա.-ն բավում էր ձած խոտը չի հավաքել, հարձակվում է նրա վրա և հարվածելով սպանում: Նշված և համանման փաստերը ցույց են տալիս, որ քեզ-հանուր միջոցառումներով, մասնավորապես պայքարը խորթ զազափարեների ու բարոյական հայացքների դեմ, կենսական կարեորություն ունի հանցագործության վերացման նպատակով մշտնջ պայքարը հաջողությամբ պատկելու համար:

Ինչ վերաբերում է հանցագործության նախազգուշացման հատուկ միջոցառումներին, սպա դրա տակ հասկանում ենք հանցագործության վերացման ուղղությամբ դատարանի, դատախազության, միլիցիայի և քննչական օրգանների կողմից ձեռնարկվող միջոցառումների ամբողջությունը: Այդ ա-մենը պայմանավորված է նաև բեկերական դատարանների, հասարակական կարգի պահպանման ժողովրդական դրուժի-նանների, կոմերիտական շտաբների և համանման այլ օրգան-ների գործունեությամբ: Այդ օրգանները հանցագործության դեմ ոչ միայն կոնկրետ գործերով են պայքար ծավալում, այլև իրենց արամադրության տակ գտնվող բազմատեսակ այլ միջոցառումներով: Հետաքննության և նախաքննության օրգանների, դատախազության և դատարանի գործունեու-թյունն ամենից առջ ուղղված է այն բանին, որպեսզի ար-մատախիլ արվեն հանցագործության առաջացման պատճառ-ները և արտաքին առիթները, վերացվեն այն բացասական գործոնները, որոնց միաշջտամբ ծնունդ են առնում հան-ցագործությունները, որով և կնախազգուշացվեն և կկանխվեն

դրանք: Այստեղ պետական հարկադրանքը և հասարակական ենթործությունը, բացատրական և դատախարակական աշ-խատանքները հաշոյ կերպով միասնական ամբողջություն գործնելով պետք է ձգտել բարձր արդյունքի հասնելու:

2. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՄԱՆ ՈՒ ԿԱՆԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանցագործության նախազգուշացման ու կանխման աշ-խատանքների հաջողությունը կախված է անհրաժեշտ միջո-ցառումների ճշգրիտ ու ժամանակին կատարելուց: Դա բարդ ու զովարին խնդիր է, սակայն տառնց դրա կենսագործման, եռաջարկված նպատակին հնարավոր չէ հասնել: Ահա թե ինչու անհրաժեշտ է գոնե համառոտ կերպով այդ հարցերը քննության առնել:

Միլիցիայի և քննչական օրգանների, դատախազության և դատարանի առաջնահերթ խնդիրն է զործել միասնաբար, ւժեքի ճիշտ համախմբում կատարել, օժանդակել մեկը մյու-սին՝ հանցագործության առաջացման պատճառներն ու կա-տարմանը նպաստող հանգամանքներն արմատախիլ անելու համար: Սակայն այդ օրգանները յուրաքանչյուրն ունի աշ-խատանքի իր առանձնահատկությունները և զանազան մի-ջոցառումների տարբեր հնարավորություններ: Միլիցիայի օրգաններն իրենց աշխատանքի բնույթի և ունեցած հնարա-վորություններով կարող են և պարտավոր են հանցագործու-թյան նախազգուշացման ու կանխման հարցով մշտապես դրադվել: Դրանք այն օրգաններն են, որոնք նախապատ-րաստվող հանցագործության վերաբերյալ ամենից շատ ու շուտ են տեղեկություն ստանում: Նրանք բազմաթիվ թեկնով կապված են մասունների հետ և լսում են նախապատրաստ-վող հանցագործությունների մասին: Քաղաքացիներն ու պե-տական մարմինները, կազմակերպություններն ու պաշտոնա-տար անձինք առաջինն են հայտնում միլիցիայի օրգաններին՝ սպառնացող և կատարված հանցագործության մասին:

Այս բոլորից հետևում է, որ Հանցագործության առաջացման պատճառների ու կատարմանը նպաստող հանգամանքների, նախապատրաստվող ու կատարված հանցագործությունների ժամանակին բացահայտելու և վերացնելու, նախազգուշացնելու և կանխելու գործում բացառիկ ծառայություն են մատուցում, ամենից առաջ, միլիցիայի օրդանները: Տանը և բակում, փողոցում և ճանապարհական այլ վայրում ձեռնոց առնող կամ արդեն սկսված հանցագործության կապակցությունը մարդիկ առաջին հերթին միլիցիայի օգնությանն են դիմում:

Մեծ է սովետական միլիցիայի մատուցած ծառայությունը և բարձր է գնահատվում այն: Մակայն սխալ կլիներ կարծել, որ միլիցիայի աշխատանքներն արդեն զբվել են իրենց պատշաճ բարձրության վրա: Նրանց աշխատանքներում դեռևս կան լուրջ սխալներ ու թերություններ: Քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ միլիցիայի օրդանները ժամանակին չեն իմանում նախապատրաստվող հանցագործությունների մտախն և չեն կարողանում դրանք կանխել: Կան նաև այնպիսի դեպքեր, երբ լուրջ աշանդումներ են ստանում, բայց կանխարկող միջոցառումներ չեն կիրառում: Մեզ հարկավոր է ձգտել նախազգուշացնելու և հանցագործությունը կանխելու օպերմային վիճակում, իսկ եթե այդ նախավոր չէ, ապա ձևավորման պրոցեսում: Կալ ու աշխատում այն շրջանի դատա-բնիչական օրդանները, որոնց սպասարկման տերիտորիայում հանցագործություն չի կատարվում կամ այն հասցվում է եվազատյան շափերի, սակայն ոչ երբք այն շերջանի դատա-բնիչական օրդանները, որտեղ շատ հանցագործություններ են կատարվում և մեծ թվով մարդիկ են դատական պատասխանատվության ենթարկվում: Պետք է միշտ հիշել ՄՄԿԿ Սրագրի պահանջն այն մասին, որ զինավորը հանցագործության նախազգուշացումն ու կանխումն է, ուստի և պաշարը ժամանակին պետք է ուղղել այդ նպատակը իրականացնելու համար: Բայց կան ոչ քիչ թվով աշխատողներ, որոնք այլ կերպ են մտածում: Վերը մենք բերված փոստերը հենց այդ մասին են վկայում: Նրանք ժամանակին մի-

ջոցներ չեն ձեռք առնում կամ բավարարվում են ձևական միջոցառումներով: Օրինակ, ստորագրություն են վերցնում, բայց չեն հետևում ընթացքին և հանցագործությունը կատարվելուց հետո միայն սկսով գործողությունների են դիմում: Միթե՞ այդ մասին չի վկայում վերը նշված Մ-ի գանգատների ընթացքը միլիցիայի, դատախազության, դատական օրգաններում:

Քննչական օրգանների հանցագործության վերացման ուղղությամբ արվող աշխատանքների քննազմառում բացառիկ կարևոր դեր են կատարում: Նրանք հանցագործների հետ վճռական զոտեմարտի մեջ են մտնում, մերկացնում և նրանց արգարագատության օրգանների առջև կանգնեցնում: Նրանց գործունեությունը, որը տեղի է ունենում օրենքով սահմանված ձևերով ու կարգով, սոցիալիստական արգարագատության անշեղ կենսագործումն ապահովելու համար խիստ կարևոր է: Քննչական օրգաններն են հաստեպերում, հասցաբում ապացույցները և իրական ձևակերպում տալիս, գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ պարզում, մերկացնում հանցագործին և վերջնական լուծում տալու նպատակով նյութերը դատարան ուղարկում: Այդ օրգանները պարտավոր են քննությունը կատարել բազմակողմանի, լրիվ ու օրյակալվ կերպով: Փաստարանի կողմից սոցիալիստական արդարադատության անշեղ կենսագործումն ապահովելու համար բարձր որակի քննչական նյութերը մեծ նշանակություն ունեն: Քննիչը հանցագործությունը բացելու և հանցագործին մերկացնելու զինավոր գործին է, դրա հետ միասին կարևոր ծառայություն է մատուցում դատարանին՝ արդարադատության կենսագործման քննազմառում: Նա ստեղծում է այն հիմքը, կոնկրետ քրեական գործը, որը քննության է առնվում դատարանում և վերջնական լուծում ստանում: Սոցիալիստական արդարադատության կենսագործումը տեղի է ունենում հենց դատական նիստում՝ կոնկրետ քրեական դրոճերը քննելու և լուծելու միջոցով: Այդ գործերը հետաքննության և նախաքննության օրգանների համառ ու քրեական աշխատանքի արդյունքն են: Բարդ ու զթվարին է քրե-

նիշի գործունեությունը: Այստեղ պահանջվում է հմտության և աշխատասիրության, նախաձեռնություն և ակտիվություն, կոնկրետ իրազրության մեջ ճիշտ կողմնորոշման կարողություն ու ընդունակություն: Քեև դատարանը զրկված չէ ապացույցներ հավաքելու իրավունքից, բայց փաստորեն դատական քննության ստուգման ու գնահատման առարկան կազմում են այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել նախաքննության ընթացքում:

Բնարկե, քննիչի գործունեությունը չի սահմանափակվում միայն կոնկրետ հանցագործությունից բացահայտելու և դրա սուբյեկտներին մեղակցելու գործողություններով: Նա կոչված է մեղավոր պայքար ծավալելու նաև հանցագործության առաջացման պատճառներն ու կատարմանը նպաստող հանգամանքները պարզելու և արմատախիլ անելու համար: Դա ոչ պակաս կարևորություն ունի, քան կոնկրետ հանցագործության բացելն ու հանցագործներին պատասխանատվություն են նկատվելը:

Ահա թե ինչ է ստված Հայկական ՍՄԷ Քր. Դատ. օր.-ի 55 հոդվածում՝ «Նետարձնություն կատարող անձը, քննիչը, դատախազը և դատարանը պարտավոր են պարզել այն հանգամանքները, որոնք նպաստել են հանցագործության կատարմանը և միջոցներ են ձեռք առել դրանց վերացման ուղղությամբ»: Արևելքը տառչ նշենք, որ հանցագործության առաջացման պատճառների կատարմանը նպաստող հանգամանքների և հանցագործության հետևանքի առաջացման գործունեների բացահայտումն ու դրանց վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռք առնելը ոչ թե դատա-քննչական օրգանների իրավունքն է, այլ պարտականությունը: Դա պետական պարտականություն է և այն պետ է իրականացվի անշղթոն:

Նշված հոդվածում խոսվում է հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների մասին: Սակայն օրենսգրքության ընդհանուր սկզբունքների ուսումնասիրությունից մենք զարիս ենք այն հետևությունը, որ օրենսդիրը բացի դրանից նկատի ունի նաև հանցագործության առաջացման պատճառները և հանցագործության հետևանքի առա-

ջացման բացասական գործոնները: Այդ մասին է վկայում նույնպես Հայկական ՍՄԷ Քր. Դատ. օր. 118 հոդվածը, որը չորս է ածում նաև «պատճառ», «պայմաններ» տերմինները: Սակայն այդ բոլորի հետ միասին պետք է նկատի ունենալ, որ ավելի հարցը պարզ ու հստակ ձևակերպում չի ստացել, բրի հետևանքով ոչ ճիշտ մեկնարարնության տեղիք է տալիս, ինչպես նաև աշխատողների որոշ մասին ապակողմնորոշման ենթարկում: Այդ հարցը մեր կողմից ուսումնասիրվել է հանրապետության ժողդատարանների մոտ մեկ կերտող մասում և մեզ բերել այն եզրակացության, որ իրոք գործնական աշխատողների զգալի մասը միակողմանի մտածում էլ ցուցաբերում՝ ավելի հարցը սխալ հասկանալու հետևանքով: Այն փաստը, որ քննչական օրգանների կողմից ներկայացված միջնորդագրերի մոտ 90 տոկոսը հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների վերաբերյալ է, ցույց է տալիս, որ մեր հետևությունը ճիշտ է և Քր. Դատ. օր. 55 հոդվածագրությունը պատշաճ վերախմբագրության անհրաժեշտություն ունի: Գործնական աշխատողների հետ ունեցած զրույցները ևս նույն հետևությունն են բերում: Նրանց մի մասի մոտ պարզ պատկերացում չկա հանցագործության առաջացման պատճառների, հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների և հանցագործության հետևանքի առաջացման բացասական գործոնների մասին: Նրանցից սմանք ակնհայտ կերպով շփոթում են այդպիսիները, որի հետևանքով էլ նրանց ուշադրությունից լրիպում են այդ բացասական գործոնները բացահայտելու և վերացնելու ուղղության միջոցառումների մշակման և կիրառման աշխատանքները: Բնորոշ է այն հանգամանքը, որ հանցագործության առաջացման պատճառները շուտափող միջնորդագրերը բացառություն են կազմում: Մեր ուսումնասիրած շրջաններից 1965 թ. միայն Ղափանի և Արտաշատի դատախազություններն էին այդ հարցի վերաբերյալ մեկական միջնորդագրեր ներկայացրել: Ղափանի շրջանային դատախազությունը ամ-

փոփել է 1964 թ. քննչական նյութերը և միջնորդագիր ներկայացրել շրջանի ղեկավար մարմիններին: Նա փորձել է ցույց տալ հանցագործության առաջացման մի թանի պատճառները և կատարմանը նպաստող հանգամանքները, միաժամանակ կարծիք է հայտնել աղբյուրները վերացնելու համար կիրառվելիք միջոցառումների վերորոշումը: Գա օգնում է քննչական ապարատին և շրջանի ղեկավար մարմիններին: Գրա հետ միասին պետք է նշել, որ միջնորդագիրը զերծ չէ լուրջ թերություններից, մի հանգամանք, որը բացասական ազդեցություն է թողնում միջնորդագրի որակի վրա: Մի շար լուրջ հարցեր մակերեսորեն են լուսաբանվել, կցկուտր են անգնելությունները սկզբնական սոցիալական խմբերի դասախոսական և աշխատանքները թերությունների վերաբերյալ, ցույց չեն տրված քննչական ապարատի այդ բնագավառի աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները:

Քննչական ապարատը ժանրաբեռնված լինելով կոնկրետ գործերով, հաճախ անեստում է հանցագործության առաջացման պատճառների բացահայտման և վերացման ուղղությամբ միջոցառումներ մշակելու անհրաժեշտությունը:

Սովետական դատարանը կենսագործելով սոցիալիստական արդարագաղտությունը, միաժամանակ հանցագործության առաջացման պատճառների և կատարմանը նպաստող հանգամանքների վերացման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում: Գատարանն իր աշխատանքները ճշտ ու հաշույ, բարձր մակարդակով կատարելու գնալով գաղափարական մեծ դեր է խաղում, հանցագործության նկատմամբ մասանների մեջ առելություն է սերմանում, սովետական մարդկանց մորիխացնում է պայծառ համար, իր բարոյական ներգործությամբ կանխում է հասարակության անկաշուն տարրերի կողմից հանցագործության կատարումը, իր որոշումներով նպաստում է բացասական գործոնների վերացմանը:

Սակայն ինչպես քննչական ապարատը, այնպես էլ դատարանն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների վրա՝

անտեսելով արարքի առաջացման պատճառների բացահայտումն ու վերացման ուղղությամբ կատարվելիք միջոցառումները: Գատարանների մասնավոր որոշումներում չեն շոշափվում կամ աննշան կերպով են նշվում հանցագործության առաջացման պատճառները, զրանով իսկ դատարանը ևս չենում է քննչական ապարատում տեղ գտած միակողմանիության ճանապարհով:

Հայկական ՍՍՀ Քր. Գատ. օր. 55 հոդվածը ոչ միայն հետաքննության, նախաքննության օրգաններին և դատարանին է պարտավորեցնում գործերի քննության ժամանակ բացահայտել արարքի առաջացման պատճառներն ու կատարմանը նպաստող հանգամանքները և զրանք վերացնելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելը այլև դատախազին: Սակայն դատախազի պարտականությունն ավելյալն է: Հայկական ՍՍՀ Քր. Գատ. օր. 16 և 35 հոդ. համաձայն դատախազը պարտավոր է ապահովել օրենքների անշեղ ու ժամանակին կատարումը, ձեռք առնելով մեծական միջոցներ՝ թերություններն ու սխալները վերացնելու համար: Տվյալ դեպքում դատախազը պարտավոր է միլիցիայում, քննչական օրգաններում և դատարանում սխալմատիկաբար ստեղծված հանցագործության առաջացման պատճառների և կատարմանը նպաստող հանգամանքների բացահայտման ու վերացման ուղղությամբ օրենքի պահանջների կատարման պիճակը և միջոցներ ձեռք առնել թերությունները վերացնելու համար: Ուսումնասիրության ժամանակ պարզվեց, որ այդ սպարեզում կատարվող աշխատանքների զրակն օրինակների գտնելը շատ է դժվար, այլ խոսքով, դատախազները ևս հաճախ անուշադրության են մատնում այդպես կարեւոր գործունեության նկատմամբ հսկողություն սահմանելու գործը:

3. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՄԱՆ ԵՎ ԿԱՆԽՄԱՆ ՀԱՏՈՒՎ ՄԻՋՈՑՆԵՐ

Այժմ քննության առնենք այն կոնկրետ միջոցները, որոնք կաղծում են հանցագործության առաջացման պատճառը:

ների և զրտ կատարմանը նպաստող հանգամանքների բացման ու վերացման գլխավոր գործոնները: Այդպիսիները բազմառեսակ ու բազմաթիվ են, ուտար մենք հարկադրված ենք դրանցից վերցնել առավել կարևորներն ու բնորոշները, այսինքն՝ այնպիսիները, որոնք վճարահան նշանակություն ունեն հանցագործության վերացման նպատակով մշտնջող պայքարը հաջող պսակելու համար:

ա) կատարված բոլոր հանցագործությունները պետք է անպայման բացառվեն

Ինչպես արդեն ընդգծվել է, հանցագործության լիակատար վերացման համար անհրաժեշտ է վճարահան պայքար ծավալել հանցագործության առաջացման պատճառներն արմատախիլ անելու գործում: Այդ բարդ ու դժվարին խնդրի կատարման համար կենսական կարևորություն ունեն ոչ միայն հանցագործության նախադրույթացումն ու կանխումը, այլև կատարված բոլոր հանցագործությունների անպայման բացումը: Հայկական ՍՍՀ Քր. Դատ. օր. 2-րդ հոդվածը սոցիալիստական քրեական դատավարության խնդիրները հետևյալ կերպ է ձևակերպել.

«Սովետական քրեական դատավարության խնդիրներն են՝ հանցագործությունների արագ ու լրիվ բացումը, հանցավորների մերկացումը և օրենքի ճիշտ կիրառման ապահովումն այն հաշվով, որպեսզի հանցագործություն կատարած յուրաքանչյուր օր կենթարկվի արդարացի պատիժ, և ոչ մի անմեղ մարդ քրեական պատասխանատվության չենթարկվի և չդատապարտվի»:

Այս օրենքում հարցը դրված է պարզ ու հստակ կերպով, այն է՝ ոչ մի հանցագործություն չպետք է մնա առանց բացվելու և ոչ մի հանցավոր՝ առանց արժանի պատասխանատվության: Այն փեպքում, երբ հանցագործությունը չի բացվում և հանցավորն անպատիժ է մնում, ապա զրտ վտանգն ամենից առաջ այն է, որ նա նոր հանցագործություն կատարելու հնարավորություն է ստանում: Ա. Գ.-ն ուժեղ անգամ

հանցագործություն կատարելուց հետո է միայն մերկացվում և դատական պատասխանատվության ենթարկվում: Պարզ է, որ էթն նա առաջին հանցագործությունը կատարելուց հետո ենթարկվելը դատական պատասխանատվության, ապա հետագա յոթ հանցագործությունները չէր կարող կատարել: Այդ արարքի վտանգավորությունը ավելի է մեծանում այն դեպքում, երբ հանցագործությունը կատարում է խումբը (շայկան) կամ կրկնահանցագործը՝ Ռեյդիվիստը և մնում անպատիժ:

Սակայն հանցագործությունը շրջացվելու և հանցագործն ստանց պատիժ մնալու վտանգավորությունը դրանով չի սպառվում: Բանն այն է, որ հանցավորի մտտ սխալ պատկերացում է ստեղծվում այն մասին, որ նա կարող է անպատիժ կերպով շարունակել հանցագործությունների կատարումը: Դա լուրջ վտանգավորություն է ներկայացնում նաև այն պատճառով, որ նա չի ուղղվում ու վերադաստիարակվում, այլ ավելի ու ավելի է զրլովում հանցագործության ճահիճը, հասարակության համար դանձում ակնհայտ խորթ տարր: Այստեղ խոսքը ոչ թե պատիժ խստության մասին է, այլ այն քանի, որ ոչ մի հանցագործ չմնա առանց պատիժ: «Վաղուց արդեն ասված է,— նշում է Վ. Բ. Անինը,— որ պատիժ նախազգուշական նշանակությունը պայմանավորվում է ոչ բնավ նրա դաժանությամբ, այլ նրա անխուսափելիությամբ: Կարևորն այն չէ, որ հանցագործության համար ծանր պատիժ նշանակվի, այլ այն, որ հանցագործության ոչ մի դեպք առանց մերկացվելու շանցնի»²: Այդ ղեկավար դրույթն այժմ էլ իր արդիականությունը լիովին պահպանում է: Գործող քրեական օրենսդրությունն առավել վտանգավոր հանցագործություն կատարելու համար խիստ պատժատեսակներ ու շտափեր է նախատեսում: Դրա հետ միասին սահմանում է, որ նվազ վտանգավոր հանցագործությունների համար պետք է հիմնականում կիրառել զատտարակշիշական բնույթի միջոցներ: Դատական պրակտիկան այժմ բնթանում է հենց այդ

² Վ. Բ. Անին, Երկեր, հատ. 4, էջ 512—513:

ուղիով: Դա ճիշտ ուղղութիւնն է, քանի որ նպաստում է նվազ վտանգավոր արարքների կատարողներին արագ կերպով ուղղելու և վերացատիրարակելու, նրանց աշխատանքային ճիշտ ուղիու վրա կանգնեցնելու գործին: «Պատիժը ոչ միայն մեղքի բաժանումն է կատարված հանցագործության համար,— ասված է Հայկական ՍՄՀ Քր. օր. 20 հոդ., այլև նպատակ ունի դատապարտվածներին ուղղել և վերացատիրարակել աշխատանքին սովորելու վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, սոցիալիստական համայնքության կանոնները հարգելու օրով, ինչպես նաև կանխելու նոր հանցագործությունները կատարումը ինչպես դատապարտվածների, այնպես էլ այլ անձանց կողմից»:

Այս սահմանումից պարզ երևում է, որ կատարված բոլոր հանցագործությունները լրացելու և վտանգավորությունն ավելի լայն իմաստ ունի, քան նշվեց վերը: Ոչ միայն չմեղացված հանցագործը նոր հանցագործություն կատարելու հնարավորություն է ստանում և կարծում, որ կարող է անպատիժ կերպով շարունակել իր հանցագործությունները, այլև նման դեպքերը բացասական ազդեցություն են ունենում հասարակության անկայուն անդամների վրա: Բանն այն է, որ սպանության, մարմնական վնասվածք պատճառելու և այլ վտանգավոր հանցագործության յուրաքանչյուր դեպք, իբրև կանոն, հասարակությանը հայտնի են դառնում: Մարդիկ դիտեն այդ մասին, սպասում են դրա հետևանքին՝ ո՞վ է կատարել այն և ի՞նչ պատիժ է արժանացել: Այստեղ աշարքի հանրային նշանակությունը ակնհայտորեն է դրսևորվում: Երբ բացվում է հանցագործությունը, մերկացվում է հանցագործը և արժանի պատիժ ստանում, սպա դատավճիռը դատարարակազման մեծ նշանակություն է ունենում ոչ միայն դատապարտյալի, այլև ուրիշների համար: Նման դեպքում պատական-քննչական օրգանների ինչպես հեղինակությունը, այնպես էլ նրանց ներգործությունը մասանների վրա ավելի ու ավելի է բարձրանում, իսկ այդ օրգանների կատարմամբ մարդկանց ունեցած վստահությունը մեծանում է: Շատ քաղաքացիներ այդ օրգաններին իրենց աջակցությունն են ա-

ռաջարկում՝ հանցագործությունները բացելու և հանցավորներին մերկացնելու, նախապատրաստվող հանցագործությունները կանխելու և հանցագործության առաջացման պատճառներն արմատախիլ անելու համար: Մեծանում է դատա-քննչական օրգանների և հասարակչություն համագործակցությունը հանցագործությունների դեմ կաղամկերպված ու արդյունավետ պայքար մղելու բնագավառում: Եվ ընդհակառակը, երբ հանցագործությունները չեն բացվում և հանցագործները մնում են անպատիժ, ապա դա շրջապատի վրա խիստ բացասական ազդեցություն է թողնում: Հասարակության անկայուն անդամների մոտ սխալ կարծիք է ստեղծվում, որ կարելի է լուրջ հանցագործություն կատարել և մնալ անպատիժ: Անվստահություն է ստեղծվում դատա-քննչական օրգանների նկատմամբ, թուլանում է լայն հասարակայնության կողմից նրանց ցույց տրվող օգնությունը:

Սպանությունների, մարմնական վնասվածքների և անձի զևմ ուղղված այլ խիստ վտանգավոր հանցագործությունների վերաբերյալ ղեկավարի ու գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ ոչ թիվ թվով հանցագործություններ չեն բացվել և հանցագործներն անպատիժ են մնացել: Մեր կարծիքով այդ գրույթները պետք է բացատրել մի շարք պատճառներով: Սիլիցիայի աշխատողների զգալի մասը նոր է, աշխատանքի փորձ չունի, որի հետևանքով աշխատողը արագ ու ճիշտ կողմնորոշում չի ստանում: Նրանցից շատերը քննության սկզբից մի հայանական վերտիս են ընտրում, անտեսելով մյուս վերտիսների հնարավորությունը, որի հետևանքով էլ զործերը հաճախ ձախողվում են, հանցագործությունը չեն կարողանում բացել և հանցագործներին մերկացնել: Բազմաթիվ գործերի նյութակերպ երևում է, որ հանցավաշարում կատարված հետազոտության, զննության, կազմած փաստաթղթերի որակը շատ ծանր է, որը հետևանք է կատարողների անփորձության և հմտության բացակայության: Այդ գրույթները հետևանք է նաև այն բանի, որ նման աշխատողին անհրաժեշտ օգնություն ցույց չեն տալիս քննիչներն ու դատախազը: Նրանք տեղապնություն և կողմնորոշ արձանագրություններ

որակի վրա բավարար ուշադրություն չեն դարձնում: Այդ բու-
լորի հետևանքով շատ հաճախ քննչական օրգանը կորցնում
է այն տվյալները, որոնց օգնությամբ նա պետք է մերկայ-
ներ հանցագործներին:

Խճարկն, նաև քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ միլիցիա-
յի աշխատողներն ու քննիչները ուշ են հասնում դեպքի վայ-
րը և հանցագործության հետքերը պահպանելու, ապացույց-
ները հավաքելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն
ստանում: Ուսումնասիրված նյութերի հիման վրա գալիս ենք
այն կորակացության, որ կատարված բոլոր հանցագործու-
թյունները լրացահայեցու պատճառներն ամենից առաջ մի-
լիցիայի, քննչական օրգանների և դատախազների աշխա-
տանքներում գոյություն ունեցող թերություններն են: Բանն
այն է, որ այդ օրգանները ժամանակին հաճախ նախազգու-
շական և կանխարկող անհրաժեշտ միջոցառումների չեն դի-
մում: Հայտնի է, օրինակ, որ անձի դեմ ուղղված հանցագոր-
ծությունների համար բնորոշ է անձին նախապես բնութա-
գրող վարքագիծը, որը վկայում է հանցագործության առա-
ջացման հնարավորությունների մասին և պահանջում ժամա-
նակին անհրաժեշտ ու վճռական միջոցներ ձեռք առնել
վերահաս վտանգը կանխելու համար: Մարզու վարքագծի
այդ աճազանգոջ նշաններն են հարբեցողությունը, հա-
տարակական կարգի խախտումը, ուրիշի հասցեին ապառնա-
լիքը, ֆիլիթանությունը, զենք ձեռք բերելը, պոռտաբույծ
կյանք վարելը, կայուն հանցագործ խմբի սանդղծումը, անցի-
զիվի հնարավորությունը և այլն: Նշված է համանման այլ
հանգամանքներն այնպիսին են, որոնց վերաբերյալ միլի-
ցիան և քննչական օրգանները միշտ էլ կարող են ժամանա-
կին տեղեկություն ստանալ և անհրաժեշտ միջոցներ ձեռք
ստանլ դրանք վերացնելու համար: Ե՞նթ այդ մասին նրանք
տեղեկություն չեն ստանում, գա նշանակում է, որ այդ օր-
գանները անգործության են մատնված, չգիտեն, թե ինչ է
կատարվում իրենց շուրջը:

Քննչական ապարատի գլխավոր թերությունն այն է, որ

հանցագործությունների բացահայտման հարցով շատ քիչ է
զբաղվում, սովորաբար բավարարվում է միլիցիայի օրգաննե-
րին հանձնարարություն տալով և հանցագործին հայտնաբե-
րելու համար հետախույզություն կատարելով: Այդ հարցում
քննիչի ակտիվ գործողությունը բացառություն է կազմում:
Քննիչները անբավարար օգնություն են ցույց տալիս միլի-
ցիայի աշխատողներին՝ այդ զմպարին խնդիրը լուծելու գոր-
ծում: Մարզապական կամ դանակահարություն հայտնաբերելը
և մերկացնելը հեշտ գործ չէ, այն պահանջում է մեծ եռանդ
ու նախաձեռնություն, համառ ու տևական քրտնաջան աշ-
խատանք: Մեր ուսումնասիրության ժամանակ եկանք այն
հետևություն, որ Երևան քաղաքում միլիցիայի օրգանների
ու դատախազության քննչական ապարատի համագործակ-
ցությունն այդ հարցում անհայտրեն անբավարար է: Այդ
վիճակը հետևանք է նաև այն բանի, որ դատախազական հը-
կողությունը տվյալ հարցի նկատմամբ վատ վիճակում է
գտնվում: Դատախազներից շատերը ոչ միայն չեն օգնում,
այլև չեն հսկում օրենքի պահանջների կատարմանն այդ
բնագավառում:

բ) Միջոցառումներ նետաֆենոլոյան և նախաֆենոլոյան էյաբերի հիման վրա

Հետաքննություն կատարող անձը և քննիչը պարտավոր
են բնությունը կատարել բազմակողմանի, լրիվ ու օրյակ-
տիվ, պարզել գործի համար նշանակություն ունեցող բոլոր
հանգամանքները, հավաքել և իրավաբանորեն ճիշտ ձևակեր-
պել ապացույցները: Քննության նյութերը պետք է պատաս-
խան տան տվյալ հանցագործության հետ կապված էական
բոլոր հարցերին: Այստեղ հատկապես ուշադրության արժա-
նի են հետևյալ հանգամանքները.

ա) Տվյալ ապառնության, մարմնական վնասվածքի և
այլ գործերով պարզել ոչ միայն կոնկրետ հանցագործության
դեպքը, բացահայտել և մերկացնել բոլոր հանցակիցներին,
այդ հանցագործության առաջացման պատճառը, կատար-

մանը նպաստող հանգամանքները, բացահայտել այն բոլոր
բացասական գործոնները, որոնք հանգեցրել են հանցագոր-
ծության ծագմանն ու նրա հեռեանքի առաջացմանը: Քննու-
թյունը չի կարելի լրիվ համարել, եթե այդ բոլոր հանգա-
մանքները պարզված չեն: Չի կարելի մոռանալ այն կարևոր
հանգամանքը, որ եթե հանցագործության առաջացման պատ-
ճառները չեն բացվում և վերացվում, ապա դրանք ուրիշ
հանցագործություններ են ծնում: Սակայն բավական չէ պար-
զել հանցագործության առաջացման պատճառները և կատար-
մանը նպաստող հանգամանքները: Դա ավելա խնդրի միայն
մի կողմն է ու սկիզբը, ուստի հարկավոր է այդպիսիները
վերացնելու ուղղությամբ վճռական միջոցներ ձևոք առնել:
Որինակ, պարզվում է, որ տվյալ անձի մոտ հակահասարա-
կական հայացքները գոյացել են դաստիարակչական աշխա-
տանքների թերութունների հետևանքով, պետք է զբաղվել
այդ հարցով: Բացի այդ, պետք է ի մի բերել եղած նյութերը
և այդ հիման վրա մշակել անհրաժեշտ միջոցառումներ: Ար-
տաշատի շրջանի դաստիարակչական նյութերն ամփոփել և որոշ
հետևություններ է հանգել պարզում դաստիարակչական
աշխատանքների թերությունների վերաբերյալ ու միջոցադ-
րի ներկայացրել շրջանի ղեկավար մարմիններին: Մի քանի
շրջաններում դաստիարակչեր խնամքով ի մի են բերել համա-
տես գործերով ձևոք բերված նյութերը և այդ հարցը քննու-
թյան առարկա դարձրել: Որոշ շրջաններում դասական
լինչական օրգանները հատուկ ուշադրություն են զարձնում
տեղափոխանների կողմից կատարվող հանցագործություննե-
րի պատճառները պարզելու և համապատասխան միջոցներ
ձևոք առնելու վրա: Դա մեծ շահով օգնում է ընդհանուր
գործին:

Այդ լավագույն փորձը ոչ բոլոր շրջաններում է օգտա-
դրվում: Հանցագործության առաջացման պատճառների
վերացման ուղղությամբ Նույնները չունենում քննության
նյութերի հիման վրա միջոցառումներ չեն մշակվում և իրա-
կան պայթյալ չի կազմակերպվում: Մարմնական վնասվածք-
ներ պատճառելու վերաբերյալ գործերի մոտ մեկ երրորդ

մասը 1961—1965 թթ. տեղի է ունեցել Ղալաշա գյուղում,
իսկ մարմնական վնասվածքներ պատճառելու առիթների
այնքան են աննշան լինում, որ շատ հաճախ անհավատալի
է թվում, բայց զրո պատճառների պարզումը վրիպել է քննու-
չական օրգանների ուշադրությունից: Նույնը պետք է ասել
մյուս սպանությունների վերաբերյալ, որոնց պատճառները ոչ
միայն աննշան են, այլև հանելուկային: Օրինակ, Ք. Ե. Ղ.-ի
կողմից Լ. Ս. Գ.-ին սպանելու դեպքը շատ ու շատ կասկա-
ծանքների տեխիք է տալիս, բայց գործի քննությունը կա-
պտվել է մտահերետրես, չի պարզվել սպանության իրական
պատճառը: Այդպիսի հանելուկային սպանության մի քանի
դեպքեր են տեղի ունեցել, բայց գործյալ քննչական օրգան-
ները խորամուխ չեն եղել պատճառները բացահայտելու
գործին: Այդ սպանություններն արտաքին նշաններով և հա-
կնելուկային բնույթով միմյանց շատ նման են, իսկ շարժա-
ռիթմներով՝ անհավատալի:

Բնական պայթյալ ծավալելու համար պետք է հաշվի
առնել տվյալ շրջանի, նույնիսկ առանձին գյուղերի առանձ-
նահատկությունները, կոնկրետ հանցագործությունների տա-
րածվածության աստիճանը և դրա պատճառները, կատար-
մանը նպաստող հանգամանքները, պայթյալի վիճակը և այդ
բոլորի հիման վրա միջոցառումներ մշակել նպատակին
հասնելու համար: Առանց նման կազմակերպված պայթյալի
յզվար կլինի դրական արդյունքի հասնելը: Եթե վերջին տա-
ք տարիներում նույնները չունենում անհայտ պատ-
ճառներով սպանություններ են կատարվել, ապա դա պետք է
բացատրել նաև նրանով, որ բնութային ժամանակ չեն բա-
ցահայտվել սպանության իրական պատճառներն ու այդպի-
սիները շարունակել են գործի ծնելով նոր հանցագործությու-
ններ: Բավական չէ կտրել ծառը, այլ պետք է արմատախիչ
սնել, հակառակ դեպքում նոր ճյուղեր կտա: Եվ ահա սպա-
նության համար պատժում են (այն էլ շատ ու շատ մեղմ
կերպով), իսկ պատճառը չեն բացահայտում և վերացման
ուղղությամբ միջոցներ չեն կիրառում, դա էլ նոր սպանու-

Քյուրենների համար նպաստավոր պայմաններ է ստեղծում: Բնորոշ է նաև այն հանգամանքը, որ ոչ միայն առանձին գործով, այլև համառոտ գործերի նյութերով ամփոփումներ չեն կատարվել և կոնկրետ միջնագառումներ չեն մշակվել, նույնիսկ միջնորդազբեր չեն ներկայացվել այդ շրջանում: Հանցագործության նախադրույթացման ու կանխման գործը վրիպել է դատաբնիչական օրգանների ռուտարությունից, իսկ դա նշանակում է, որ պաշտարն իր պատշաճ բարձրության վրա չի դրված:

բ) Հանցագործության դեմ պայքարի արդյունավետությունը պետք է ապահովել ոչ միայն կատարված ու նախապատրաստվող բոլոր հանցագործությունները բացահայտելու միջոցով, այլև հանցագործության բոլոր մասնակիցներին (հանցակիցներին) մերկացնելով և արժանի պատիժ տալով: Հանցագործության ոչ միայն կատարողին, այլև զրդողին, կազմակերպչին, օժանդակողին պետք է երևան հանել, մերձացնել և պատժել: Այն դեպքում, երբ հանցագործության աշխատանքները մնում է թաքցված, չի մերկացվում ու չի պատժվում, ապա նա ոչ միայն կարող է շարունակել իր հանցավոր արարքները, այլև այդ երևույթը բացասական ազդեցություն է թողնում դատավճառի գաղափարակազմի և նեղործության վրա: Չի կարելի մոտանալ, որ մի կոնկրետ դեպքում կարող է ավելի վտանգավոր լինել զրդիչը, մի դեպքում կազմակերպիչը, այլ պայմաններում կատարողը, որով դեպքերում նույնիսկ օժանդակողը: Հանցագործության կազմակերպիչներին ու զրդիչներին վտանգավորությունը միշտ էլ ավելաշատ է և անկասկած, բայց առանձին գործերով նրանց վտանգավորությունն ավելի է մեծանում ոչ միայն հանցագործության ընդլայնման հետևանքով (սպանություններ, մարմնական վնասվածքներ և այլն), այլև այն դեպքում, երբ նրանք անշարժ հասնեցնում հանցագործության ոլորտն և ներգրավում ևս այդ արարքը կատարում են կրկնահանցագործներն ու կանգնեցնում:

Հանցագործություն կատարողի, զրդիչի, կազմակերպիչ վտանգավորությունն ավելաշատ է և զրանց դեմ պետք է վերջ-

առկան պայքար ծավալել: Գրա հետ միասին անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցագործները ձգտում են շեղել քննությունը նաև հանցակիցների հարցում: Նրանք շատ լավ գիտեն, որ խմբակցությունը միշտ էլ բարձրացնում է հանցագործության վտանգավորության աստիճանը և պատասխանատվությունը: Ահա թե ինչու նրանք շատ հաճախ ձգտում են հանցագործներին թաքցնել և ցույց տալ, որ այն կատարել է նրանցից միայն մեկը: Հարկավոր է հաշվի առնել այդ հանգամանքը և քննության ժամանակ մեղակցելու բոլոր հանցակիցներին:

Ոչ բիշ դեպքեր են լինում, երբ օժանդակիչը արարքի ընդլայնման հետևանքով լուրջ վտանգավորություն է ներկայացնում: Օժանդակիչի հանցագործության ընդլայնման ու աստիճանը շատ կարևոր հանգամանքներ են, որոնց պարզաբանումը կարևոր նշանակություն կարող է ունենալ պայքարի համար: Չի կարելի անտեսել այն միաստը, որ մի շարք դեպքերում ատուց օժանդակիչի հանցագործության կատարումը կարող էր անհնարին լինել: Օրինակ, երևան քաղաքի ժողովարաններից մեկի քրեական գործի նյութերից երևում է, որ 2 -ն երկար ժամանակ միջոցներ է որոնում հ -ին սպանելու համար, սակայն սպանությունը կատարելու դեմք չի կարողանում ձեռք բերել, իսկ այլ միջոցներով սպանության կատարումը նրա համար անհնարին է եղել: Նա տատանվում է, և ապա մի օր Ռ -ն պատմում է այն մասին, որ ինքն արձանատի ունի և Հ -ի խնդրանքով նրան է տալիս, որով նա սպանում է հ -ին: Մարմնական վնասվածքներ պատճառելու, սպանություններ և մի շարք այլ հանցագործություններ կատարելու որոշ դեպքեր տեղի են ունեցել ինքնասպար ատրճանակների միջոցով: Առանձին մարդիկ գործարանում անհրաժեշտ ճշգրիտության բացակայությունից օգտվելով, ատրճանակներ են պատրաստում ու վաճառում: Տվյալ դեպքում թե ատրճանակ պատրաստողը և թե այդ գնորդ հանցագործություն են կատարում: Այդ ատրճանակ պատրաստողը կարող է և այն դեպքում անմիջական նպասակը շիտանալ, բայց որ ատրճանակ պատրաստելը, վաճառելը, պահելը, գնելը հանցավոր արարք:

է, չի կարող շիմանալ: Արարքի կատարման այս փուլում նշանակություն ունի միայն այն հանգամանքը, որ ատրճառ-նակ պատրաստվելի, գնվելի, վաճառվելի, կամ պահվելի է տասնեց պատշաճ թույլտվութիւն: Եթէ նա անօրինական կերպով ատրճառնակ է պատրաստել և տվել մշտսին, որն սպասնութիւն է կատարելի, ապա նա պատասխանատու է ոչ միայն ատրճառնակ պատրաստելու, այլև սպասնութիւնը օժանդակելու համար:

Ահա թե ինչու անհրաժեշտ է քննութիւն ժամանակ պարզել, թե ո՞րտեղից և ի՞նչ կարողով նա կարողացել է գնել Թեոք բերել: Այդ հարցը պարզելով միայն կարող են ոչ միայն պատասխանատվութիւն ենթարկել այդ օժանդակողին, այլև միջոցներ Թեոք ստնել հանցագործութիւնն առաջացման այդ աղբյուրը վերացնելու ուղղութիւնով: Փաշտ կարևոր հարց է և այն պարզելու ու արտաստիչ անելու համար ոչ թե՛ ջանքեր են պահանջվում: Խնդիրն այն է, որ հանցագործը սու-ճորատը թաքցնում է և չի ցանկանում այդ աղբյուրը ցույց տալ: Հենց այդ նպատակով էլ նա անորոշ հայտարարութիւն է անում «գտել եմ», «մի անձնոթ տղա է տվել»: Այդ կեղ-ծիրի մերկացումը հեշտ չէ, բայց առանց դրան չի կարելի հանցագործութիւնն նախազգուշացման ու կանխման աշխատանքներն իրենց պատշաճ բարձրութիւն վրա դնել:

Կինում են նաև այնպիսի դեպքեր, երբ հանցագործները մի մասը չի մերկացվում այս կամ այն անհասկանալի պատ-ճաններով, որը մեծ շահով վնասում է պաշարի արդուներ-վնասութիւն գործին, մարդկանց մեջ որոշ անվաստաութիւն է ստեղծվում բննական օրգանի նկատմամբ:

4. ՀԱՆՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏՈՒՄԸ ՆԱԽԱԶՂԳՈՒՇԱՏՆՈՂ ԵՎ ԿԱՆՈՒՄ ԱՅՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Նախապատրաստվող ու կատարված հանցագործութիւն-ների վերաբերյալ, ինչպես միլիցիայի օրգաններում ու բերն-չական ապարատում, այնպես էլ դատախազութիւնն ու դատա-

րանի անհետրա աշխատանքի բնթացքում ստացվում են գտնազան ահազանգումներ:

Այդ ահազանգումները կարելի է ստորաբաժանել հետև-յալ խմբերի.

1. Հասարակական կյանքում, աշխատանքում, կենցա-զում, ընտանիքում անձի ունեցած բացասական վարքագծին վերաբերող (նման ահազանգումներ հաճախ են ստացվում): Երբ ահազանգումն ստացող օրգանը վճռական միջոցներ է շեղ արձան, ապա կարողանում է այն ժամանակին կան-խել, հակառակ դեպքում հանցագործութիւնը տեղի է ունե-նում: Երբ ահազանգում է ստացվում այն մասին, որ տվյալ տնձր պորտաբույժ կյանք է վարում և նրա հարցը քնն-նութիւնն առարկա չի դարձվում, ապա նա աստիճանաբար հանցագործութիւնն յուրում է զլորվում: Երևան քաղաքի հա-ւարակական վայրերում, եուլինիսկ փողոցներում շատ հաճախ կարելի է տեսնել ավտոմեքներաներով զրտնող պորտաբույժ ու կասկածելի մարդկանց, որոնք կարծես յուրտեսակ ար-տնոյալ դրութիւնն մեջ են գտնվում: Հարց է ծագում, թե ինչո՞ւ նրանց հարցով միլիցիայի օրգանները լուրջ կերպով չեն զրազվում: Ինչպե՞ս է պատահում, որ նրանք չեն աշխատում, բայց թափառում են անասորաններում, ժամերով զրտնում են ավտոմեքներաներով: Նրանց հաշվառման ու վարքագծին հետևելու գործը վատ հիմքերի վրա է գրված: Փա է այն պատճառներից մեկը, որ ժամանակին նրանց հարցը քննու-թիւնն առարկա չի դարձվում: Նույնիսկ այդ տարրերի մի մասը Բրևան քաղաքում բնակվում է առանց գրանցման: Անտեսվում է օրներս այն պահանջը, որ 24 ժամից ավելի քաղաքում ապրելու դեպքում պետք է գրանցվել, իսկ այդ տարրերը տարիներով առանց գրանցման թրև են գալիս քա-ղաքում: Այդպիսի պայմանները նպաստավոր են հանցագոր-ծութիւններ կատարելու համար: Նրանք բնակվում են առանց գրանցման, նրանց ապրելակերպը, անաշխատ եկամտուի աղբյուրները չպարզելը, նրանց վարքագծին չհետևելը հան-ցագործութիւնն առաջացման համար նպաստավոր պայման-ներ են ստեղծում: Քրեական տարրերը համոզված են, որ

կարող են անպատիժ կերպով հանցագործություն կատարել: Ահա այդ կրկնահանցագործներից Ռ. -ի հայտարարությունը քննության ժամանակ. նա զղջում է իր հանցավոր արարքների համար և պատժելով, թե ինչպես է ընկել այդ շրջապատի մեջ, վերջում ասում է. «Եթե հանցագործը համոզված լինի, որ իր արարքը բացվելու է և նա դրա համար պետք է պատասխան տա, այդ հազիվ թե նա հանցագործություն կուսարի»: Հանցագործների մի զգալի մասը համոզված է, որ իրենց հանցագործությունները չեն բացվելու և նա դրանց համար պատասխան չի տալու:

Դա խիստ վտանգավոր համոզմունք է, որի դեմ պետք է պայքարել՝ կատարված բոլոր հանցագործությունները բացելու և մեղավորներին զատական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Այս հարցում կարևոր նշանակություն կունենա պայքարի ճիշտ և ճշգրտ կազմակերպումը: Օրինակ, պետք է հաշվառվան ենթարկվին պտրտույժ կլանք վաճառող բոլոր անձնավորությունները և պետք է պահանջվի, որ պետքի նրանք աշխատանքի անցնեն: Եթե նրանք համոզված լինեն, որ շաշխատելու դեպքում կենթարկվեն պատասխանատվության, ապա հանցագործություն չեն կատարի:

2. Ընդհանրապես, և մեր հանրապետության մեջ հատկապես, անցյալի խորթ մնացուկները կենցաղային հարաբերությունների բնագավառում և մասնավորապես ընտանեկան հարաբերություններում շատ վատ են զրկերվում: Այստեղ կարելի է տեսնել ոչ միայն բուրժուական, այլև ֆեոդալական և նահապետական սովորություններ ու ընտելություններ: Եվ հենց դրանք էլ կազմում են անձի դեմ ուղղված շատ ու շատ հանցագործությունների իրական պատճառը: Այստեղ ամենից շատ աչքի են ընկնում կնոջ ազատության և առողջության, կյանքի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործությունները: Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ իրոք անցյալի խորթ զաղապարներն ու բարոյական հայացքները դեռևս գոյություն ունեն շատ ընտանիքներում, և հաճախ էլ զրկերվում են իրրև կնոջ դեմ ուղղված հանցագործություններ: Սեռն ու հայածանքը, հայհոյանքն ու 256

ստորացումները երկար ժամանակ շարունակվում են: Այդ սովորությունը հայտնի է դառնում նրանց հարազատներին ու հարևաններին, աշխատանքի վալրի կոլեկտիվին ու պետական օրգաններին, սակայն ժամանակին վճռական միջոցների չեն ձեռնարկում, որի հետևանքով էլ այն շարունակվում է և հաճախ հանգեցնում հանցագործության՝ մարմնական վնասվածքի պատճառման, սպանության, խենսապանության:

3. Վճռականորեն կասեցնել հանցագործության կրկնությունը: Հանցագործության նախազգուշացման ու կանխման հասկացություն կարևոր կողմերից մեկը հանցանքի կրկնության, ռեցիդիվի վճռական կասեցումն է, այսինքն՝ որ ավել անձի կողմից նոր հանցագործության կատարումը կանխվի, նա կանգնի ճիշտ ուղու վրա և այլևս հանցավոր արարք չկատարի: Այստեղ արարքի սուբյեկտի տեսակետից նման տնտանց կարելի է ստորաբաժանել երեք խմբի. ա) այն անձանց, ովքեր դատարանի սահմանած պատիժն արգեն կրել են, բ) այն դատապարտյալներին, ովքեր պատիժը կրելուց պայմանական վաղապես ազատվել են և գ) նրանց, ովքեր աշխատավորների կոլեկտիվների երաշխավորությամբ հանձնրվել են վերադաստիարակման:

Գործող օրենսգրքության համաձայն սկստական իշխանության տեղական օրգանները պտրտավոր են կարճ ժամանակամիջոցում աշխատանքի տեղավորել այն անձանց, ովքեր պատիժը կրելուց հետո վերադարձել են կալանավալրներից: Այս միջոցատումը կենսական կարևորություն ունի նման մարդկանց վերադաստիարակելու և հանրօգուտ գործունեության մեջ ներգրավելու համար: Աշխատանքային դաստիարակությունն այն հիմնական միջոցներից մեկն է, որ նախազգուշացնում ու կանխում է հանցագործության կրկնությունը, բացառում է ռեցիդիվի հանրավորությունը: Նման մարդիկ կարող են նորից գործել հանցագործության ոլորտը, եթե նրանց չհաջողվի աշխատանքի անցնել և ապրել աշխիվ ու բրտաջան աշխատանքով:

Մեր պետության քրեական օրենսդրության այդքան 257

պարզ ու հստակ գրվածքը չեն հասկանում, կամ պարզապես անեւեսում են, առանձին ղեկավար աշխատողներ: Նրանք խուսափում են կուլանքից ազատվածներին աշխատանքի ընդունելուց և պանահան պատմականորեն վաճում են նրանց եղիկտիվից, հասարակական գործունեությունից, հանրագուշաբանությանից: Այդպիսի ղեկավարներն անեւեսում են կուսակցության հումանիտական այն ցուցումը, որ «Մտքային դժի պայմաններում աշխատանքային ուղուց շեղված յուրաքանչյուր մարդ կարող է վերադառնալ օգուտակար գործունեության»¹: Նման ղեկավար աշխատողները մոռանում են, որ իրենց սխալ ու վնասակար վերաբերմունքով վնասում են կուսակցության ծրագրային պահանջի կատարման գործին, այդպիսի մարդկանց հցում են շղպիւն վիճակի մեջ և հաճախ էլ նյութական ծանր պայմանների մեջ ընկնելով, նրանք կարող են նորից գործվել հանցավոր միջավայրը, կատարել նոր հանցագործություն: Զի կարիքի անտեսել այն ճշմարտությունը, որ պատիժ կրած մարդկանց վերադաստիարակելու և ուղղելու համար պահանջվում է մեծ աշխատանք ու ջանքերի գործադրում, և ոչ թե բացասական, վանողական վերաբերմունք: Նրանց պիտե՛լ իրենց զե՛տում է այնպիսի պրոբլեմային մեջ, որ նրանք ավելի նրբազգաց, դյուրագրգիռ են դառնում և ամեն մի ոչ ճիշտ վերաբերմունք նրանց համար վճռական եղանակություն կարող է ունենալ: Նրանք կասկածում են, որ իրենց նկատմամբ վստահություն չեն առնում և դա է ամենից ստակալին: Մարդը ձգտում է ապացուցել, որ ինքը վերադաստիարակվել է, բայց նրան չեն հավատում, խորթ են համարում: Նման ղեկավարները մոռանում են, որ դատապարտալուծներից շատ-շատերն են ուղղվել ու հասարակության համար պիտանի դարձել, որի մասին պերճախոս կերպով վկայում են պետական շքանշաններով նրանց պարգևատրումները: Պետք է հավատալ մարդկանց, վստահել, բայց միաժամանակ ստուգել: Այդ պահանջն ավելի մեծ շարժով վերաբերվում է այն մարդկանց, ովքեր դատապարտվել են և պատիժ կրել: Նրանց նկատմամբ ցուցաբերվող ան-

¹ ՍՄԳԿ XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 529:

տարբերությունը նպատակոր պայմաններ է օտեղծում նորից հանցագործության գիրկը նետվելու ճիշտ այնպես, ինչպես խորթ համարելու, անվստահություն օտեղծելու հետևանքով նրանք կարող են ընկնել հանցագործների ազդեցության տակ: Նրանց հեռ պետք է ամենի դատախարակական աշխատանքներ, հետևել նրանց վարքագծին, հաշիվ պահանջել նրանցից: Սակայն այդ բոլորը պետք է կատարել այնպես, որ նման անձնավորությունը չվիրավորվի, խորթ չզգա և համոզվի, որ այդ բոլորը կատարվում է բարեկամաբար, նրան օգնելու նպատակով: Նրան չի կարելի խորթ համարել, կուլիկտիվից վանել և դրանով իսկ անզուեղը դուրսի, սակայն պետք է պահանջելու լինել, խստապահանջ, որպեսզի նա կատարի սրված հանձնարարությունները նա պետք է զղու, որ նրան հավատառն են ու վստահում, բայց պահանջում են, որ նա դառնա ազնիվ ու բարեխիղճ աշխատող: Նման վերաբերմունքը կրաբծրացնի նրա պատասխանատվության զգացումը կուլիկտիվի հանդեպ և կօգնի ուղղվելուն: Դա շատ կարևոր է հանցագործության կրկնությունը կանխելու համար:

Վերջ շարագրվածները լիովին վերաբերվում են նաև Հայկական ՍՍՀ Քր. օր. 49 հոդ. հիման վրա պատժի մնացած մասը կրելուց վաղախուս ազատվողներին: Նրանց ժամանակին աշխատանքի տեղավորումը, նրանց հետ առավել դաստիարակական աշխատանքները, հասարակական գործունեության մեջ ներգրավումը և այլն բոտ էություն ունենալ չի տարբերվում այն անձանց նկատմամբ ունենալիք վերաբերմունքից, ովքեր ազատվում են կապաքից՝ պատիժը կրելուց հետո: Սակայն դրա հետ միասին պետք է նշել երկու կարևոր առանձնահատկություն: Առաջին դեպքում երբ դատապարտչալը պատիժը կրել է և ազատվել, իսկ երկրորդ դեպքում, երբ նա կրել է պատիժ միայն մի մասը և ազատվել վաղախուս: Առաջին դեպքում մենք գործ ունենք այնպիսի դատապարտչալի հետ, որը պատիժը լրիվ կրել է և չի ապացուցել, որ իրոք ուղղվել է, որի հետևանքով էլ նրան վաղախուս չեն ազատել: Այդ վերաբերվում է ոչ միայն ազատազրկման դա-

տապարտվածներին, այլև ուրիշ դատապարտվածներին: Պետության մարդասիրական վերաբերմունքից կարող են օգտուրվել բոլոր դատապարտյալները, եթե նրանք իրենց վարքագծով ապացուցում են, որ իրքը ուղղվել են և պատժի մեղացած մասը կրելու անհրաժեշտությունը վերստույն է: Ահա թե ինչ է ապված Հուլիական ՍՍՀ Քր. օր. 49 հոդվածում ուղջ մասին.

«Եթե ազատազրկման, ուղղիչ աշխատանքների, քարտի, արտաքսման կամ կարգապահական զուսմարտակ ուղարկվելու դատապարտվածն օրինակելի վարքով և աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունքով ապացուցել է իր ուղղված լինելը և փաստորեն կրել է նշանակված պատժի ու պակաս, բան կեար, դատարանը կարող է նրան պայմանական վաղաժամ ազատել պատժից կամ պատժի չկարող մասը փոխարինել աշխատի մեղմ պատժով: Ընդ որում դատապարտյալը կարող է ազատվել նաև լրացուցիչ պատժներից, որ նշանակվել են արտոքի, արտաքսման կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությունը զբաղվելու իրավունքից զրկելու ձևով»:

Նույն հոդվածի երկրորդ մասը սահմանում է, որ առավել վաղեգուվոր հանցագործություն կատարելու համար դատապարտվածին պայմանական վաղաժամ կարելի է ազատել երկու երրորդ մասը կրելուց հետո միայն: Միմիայն առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստների նկատմամբ պայմանական վաղաժամ ազատում չի կիրառվում:

Պայմանական վաղաժամ ազատելու վերաբերյալ դատական պրակտիկան ինչ էլ ցույց տալիս: Ամենից առաջ նշենք, որ պայմանական վաղաժամ ազատման ինստիտուտը մեր հանրապետության մեջ կիրառվում է ազատազրկման դատապարտվածների նկատմամբ. այլ դատապարտվածներին վերաբերյալ այդ օրենքի կիրառումը տեղի է ունենում բացառիկ դեպքերում: Դա բացատրվում է նրանով, որ ուղղիչ աշխատանքների, արտաքսման ու քարտի դատապարտվածները տվյալ օրենքի մասին չգիտեն և չեն էլ դիմում իրենց

պայմանական վաղաժամ ազատելու վերաբերյալ: Նրանցից շատ-շատերն այդպիսի խնդրանքի համար հիմքեր ունեն, բայց չեն դիմում, քանի որ չգիտեն իրենց այդ իրավունքի մասին:

Պայմանական վաղաժամ կալանքից ազատելու վերաբերյալ դատական պրակտիկան հիմնականում ճիշտ է, բայց լուրջ սխալներ ու թիրուխյուններ կան, որոնք վնասում են բնագնանոր գործին: Պայմանական վաղաժամ ազատման վերաբերյալ միջնորդագրերը ստանդարտ են, ըստ էության պատարան չեն տալիս օրենքի պահանջներին: Այդ միջնորդագրերում սովորաբար նշում են, որ ռեժիմը չի խախտել, վատ քայլեր չի կատարել, ցույց է տրվում միայն ձևական կողմը և հաճախ են մոռանում նշված օրենքի պարզ ու հրատարակյալ պահանջներ՝ օրինակելի վարվածքի և աշխատանքի: Եկամտամբ ազնիվ վերաբերմունք, որոնք ապացուցում են նրա ուղղված լինելը: Նման սխալի հետևանքով կալանքից ազատվում են տակավին չուղղված դատապարտյալները, որոնք նոր հանցագործություններ են կատարում: Կրկնահանցագործությունը կանխելու միջոցներից մեկն էլ այն է, որ Քր. օր. 49 հոդ. պահանջները ճիշտ կիրառվեն և թույլ չտրվի մեղմ սխալներ: Այդ մասին գործը բնեւում ժամանակ պետք է բարձրացնել պահանջկատությունը՝ նման միջնորդագրերի լուծման նկատմամբ: Կան նաև հակառակ ծայրահեղություններ, երբ դրույթյուն ունեն օրենքով նախատեսված հիմքեր, բայց ժողդատարանները խուսափում են դրական լուծում տալուց:

Ազատազրկման հետ չկապված դատապարտելու և դատապարտյալներին աշխատավորների կոլեկտիվների երաշխավորությունը նրանց վերադաստիարակմանը հանձնելու վերաբերյալ դատական պրակտիկան ցույց է տալիս, որ այդ ինստիտուտը ճիշտ է և իրեն արդարացնում է: Վերադաստիարակմանը հանձնվածների հիմնական մասն իրեն արդարացնում է, ուղղվում և դառնում ազնիվ աշխատող: Սակայն կոլեկտիվներ կան, որոնք լուրջ կերպով չեն զբաղվում

վերադաստիարակման հարցով, որի հետևանքով նրանց մի մասը նորից է հանցանք կատարում:

Կուլեկտիվների երաշխավորությանը դատապարտչաբնույթին իրենց վերադաստիարակմանը հանձնելու պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ կարևոր գործի գրվածքը աակավիճան՝ ըստ ժնշտ զարգացում ու կատարելագործում չի ստացել: Մենք եկել ենք այն հետևության, որ հանցավորների կուլեկտիվների երաշխավորությանը նրանց վերադաստիարակմանը հանձնելու իրավունք ունեցող օրգաններից դատարանի գործունեությունն է արտվել բարձր արդյունք ալիկ և այն իրեն արդարացնում է. դատապարտչաբնույթները զգացել են դատարանի ներգործության ուժը և նրա կուլեկտիվը գրադվում է նրանց հարցով, սպա նրանք իրք վերադաստիարակվում են: Այլ է դրությունը հետաքննության և նախաքննության օրգանների կողմից վերադաստիարակման հանձնվածների նկատմամբ: Երբ գործը կարճում է հետաքննության կատարող անձը կամ քննիչը, սպա հանցավորը չի զգում իր հանցանքի ծանրությունը և կրկին հանցագործություն է կատարում: Մի շարք շրջաններում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ ե՞ն ժողգատարանների կողմից կուլեկտիվների վերադաստիարակմանը հանձնված դատապարտչաբնույթների միայն 25—30 տոկոսն է կրկին հանցագործ, սպա հետաքննության ու նախաքննության օրգանների կողմից վերադաստիարակման հանձնվածների 50—60 տոկոսն է նորից հանցանք կատարել: Կուլեկտիվների վերադաստիարակմանը հանձնելու այժմյան պրակտիկան իրեն չի արդարացնում և վերստին ման կարիք ունի: Այդ օրգանների իրավունքից զրկել չի կարելի, սակայն որոշ սահմանափակում կարելի է մտցնել, օրինակ, լավ կիներ, էթն այն գործերով, որոնցով բրնական օրենսգրքի հոդվածը ազատագրվում է նախատեսում, երաշխավորությանը դատաիարակության հարցը թողնել լուծելու միայն դատարանին:

5. ՎՃՌԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Միամտություն կիներ կարծել, որ հանցագործությունը, դրա առաջացման պատճառների և նպատակի հանգամանքների կարող են վերացվել տարբերայնորեն և կարճ ժամանակամիջոցում: Նման հրաշքներ կյանքում չեն կատարվում: Նրա՝ հանցագործության վերացման կարևոր միջոցներից մեկն է այդ նպատակով տարվող պայքարը, այն էլ համառուն ու անկասկա, խիստ և հետևողական կազմակերպված պայքարը: Այստեղ մենք նկատի ունենք կուլեկտիվության ու պետության, հասարակական կազմակերպությունների և հասարակության ինչպես այն միջոցառումների ամբողջականությունը, որն ուղղված է բարոյական խորթ հայացքների ու ցաղափարների դեմ, այնպես էլ այն միջոցառումները, որոնք նվիրված են սովետական մարդկանց նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը, կամունիստական դաստիարակությանը և կամունիստական բարոյականության դեմ սկզբունքների արմատավորմանը: Բանվոր-ծառայողների աշխատավարձի և կուլտուրականների կեանքի բարձրացման, ապրելների գներ իրեցման ու աշխատավոր մասսաներին լայն սպառման առարկաներով ու սննդամթերքով լիովին ապահովելու, պետական ապարատի աշխատանքները բարելավելու և ժողունաստության ղեկավարման մեթոդների, մեքի կատարելագործման, ինչպես նաև կուլեկտիվության ու պետության կողմից վերջին ժամանակաշրջանում իրակուսացվող շատ ուրիշ միջոցառումները նպատակում են հանցագործության առաջացման պատճառներն ու նպատակը հանգամանքները վերացնելու գործին:

Այդ քնդհանուր միջոցառումներից բացի կենսական նշանակություն ունի հետաքննության և նախաքննության, դատաիարակության և դատարանի կողմից, հանցագործության և դրա առաջացման պատճառներն արմատախիչ սնելու համար անմիջականորեն մղվող պայքարը: Մեր երկրում կա-

ուվարման զլիավոր մեթոդը համոզմունքն է, կուսակցութեան ու պետութեան քաղաքականութեան սկզբունքի պարզարեւումը, զործող օրենքների անշեղ ու մամուռակին կատարման կարեւորությունը, և նրանց նշանակութեան բմբունումը: Մասաները պետութեան քաղաքականութեան մասին զապփար են կազմում ամենից առաջ օրենքի միջոցով, ինչպես նաև այդ օրենքների անխախտ կատարումով: Մենք մեր պատկերացումները քաղաքականութեան մասին,—ասում է Վ. Ի. Լենինը,—հասարակ բանվորների ու զուլգացիների ևս լինա ենք միանգամից, ղեկիտների ձեռով: Դրա հետևանքը եղավ այն հակառակն լիստահութեան նվաճումը, որ մենք ունենք և ունենք ժողովրդական մասաների մեջ: Աշխատավորությունը սովետական օրենքների լույսլույն ու նպատակը դիտակցելով, ապահովում է զրանց անշեղ ու ճշգրիտ կատարումը, որը կենսական կարևոր նշանակություն ունի մեր հասարակարգի առաջընթացի համար, բարձրացնում է մասաների եռանդը և հաղթահարում ճանապարհին հանդիպող արգելքները: Օրենքը մասաներին մորիլիզացնում է, պարզ ու հստակ դարձնում միջոցառումների լույսլույնը: Մարդկանց համոզելու, նրանց բարոյական հույզանքներն ու գաղափարները վերափոխելու, խորթ սովորություններն ու քնտելությունները, հոգեբանությունն ու վարքագիծը վերացնելու համար պահանջվում է ջանք ու եռանդ, համառ ու տեսական պայքար:

Այդ բոլորի հետ միասին պետք է ընդգծել, որ երկրի կառավարման մեջ համոզման մեթոդը զլիավորը լինելու հանգամանքը չի բացառում պետական հարկադրանքի կիրառման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը: Ամեն մի պետություն, վերջին հաշվով, հարկադրանք է, առանց որի պետության գոյությունն անմիաստ կդառնար: Սակայն շահագործող պետությունների մոտ առաջնական ճնշումը զուլգավորն է, իսկ համոզումը՝ դրա լրացումը, երկրորդականը: Դա բացատրվում է տեսաբանության կապիտալիստական սխ-

տեմով ու արտադրության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը, մարդու կողմից մարդու շահագործման հարաբերություններով, կապիտալիստական արտադրական հարաբերությունների բնույթով: Առանց այդ բնույթի անհրաժեշտ արտադրական հարաբերությունների բնույթը տրամադործող հակառակն է պայմանավորում: Աշխատավոր մասաների տիրապետության պայմաններում պետական հարկադրանքը ոչ միայն չի կարող կառավարման զլիավոր մեթոդը լինել, քանի որ դրա կարիքը բացակայում է, այլև այդ մեթոդի գործողության դրսևոր սեղմվում է, իսկ համոզման մեթոդը ալելի ու ալելի է ընդլայնում իր գործողության շրջանակը:

Այդ բոլորի հետ միասին պետական հարկադրանքի պահանջումն ու կիրառումը կենսական անհրաժեշտություն ունեն, երբ՝

ա) Արարքն իր բնույթով անխուսափելի է դարձնում պետական հարկադրանքի կիրառումը, տվյալ դեպքում պատժի կիրառումը: Օրինակ, մարդասպանություն կատարելու դեպքում պետության օրգանը՝ դատարանը չի կարող բավարարվել համոզումով, այլ պետք է հանցագործի նկատմամբ կիրառի օրենքով նախատեսված պատժատեսակն ու միջոցը: Ի՞նչպե՞ս, դատարանը նրան պատժելով, միտմանակ մեծ աշխատանք է կատարում թե՛ տվյալ դատապարտյալի և թե՛ հասարակության անկալուն անդամներին վերադասախարակելու ուղղությամբ: Այդ աղբյուրության տակ շատ մարդիկ են հրաժարվում սպանություն կատարելու մտազրույթունից: Դա նշանակում է, որ տվյալ դեպքում հանցագործության նախազգուշացման ու կանխման ուղղությամբ դատարանը կոնկրետ գործը լուծելու միջոցով ո՛չ միայն պատժում է հանցագործին, այլև դատախարակչական կարևոր աշխատանք է կատարում:

բ) Պետական հարկադրանքի կիրառումն անհրաժեշտ է դառնում նաև այն դեպքում, երբ համոզման մեթոդը տվյալ

⁴ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 358:

հարցը լուծելու գործում անբավարար է դուրս գալիս և չի սպասելովում խնդրի կատարումը: Այս զեպչում պետական հարկադրանքը նույնպես կարևոր դեր է խաղում հանցագործության նախազգուշացման ու կանխման գործում: Այսպես, պետությունն առնում է ամեն բան պորտաբույծ կյանք վարողին ուղղելու, նրան աշխատանքային գործունեության մեջ ներգրավելու, պորտաբույծ կյանքին վերջ տալու, որը խորհել է և վտանգավոր մեր հասարակության համար: Երբ հաջողվում է ալյուրիսի կյանք վարողին կանգնեցնել աշխատանքային ճիշտ ուղու վրա, ապա դրանով իսկ նախազգուշացվում ու կանխվում են նման սպրևյակիրոյի հետևանքով առաջացող շատ հանցագործությունները չեն տալիս, ապա նրա նկատմամբ կիրառվում է պետական հարկադրանք:

դ) Պետական կառավարման բնագավառում հարկադրանքի և համոզման մեթոդները կարող են հանդես գալ միասնաբար, լրացնել միմյանց և դրանով իսկ ապահովել խնդրի լուծումը: Մոլեխական օրենքը պահանջում է, որ մարդիկ զիտակեցնեն օրենքի անշիղ և ճշգրիտ կիրառման կարևորությունը և այն իրազգույնից ցիտակեցնեն: Եթև ամեն օրենքի խախտում կամ անտեսում է թույլ տալիս, ապա պետության համապատասխան օրգանը հարկադրում է պահպանել և կատարել օրենքի պահանջները: Օրինակ, պետությունը քաղաքում տրանսպորտի նրթնկողմնները կարող ու կանխենք է սահմանում: Հասկանալով դրա կարևորությունը տրանսպորտի նորմալ գործունեության և քաղաքացիների կյանքի ու առողջությունը պահպանելու համար, մարդը զիտակաբար կատարում է օրենքի պահանջները: Սակայն, եթև սովորաբար թույլ է տալիս օրենքի խախտում և մարդկային ռոճերի պատճառ դառնում, ապա նրան պատժում են: Պատարանի կողմից սահմանվող այնպիսի պատժները, ինչպիսիք են պայմանական դատապարտությունը, ուղղիչ աշխատանքները, հասարակական պարտավանքը և այլն պետական հարկադրանքի ու համոզման մեթոդների միասնական կիրառման վառ օրինակներ են: Ալյուրիսի միասնությունը կեն-

սական կարևորություն ունի հանցագործության նախազգուշացման ու կանխման գործն սպահովելու համար:

Ուշպես արդեն նշվել է, հանցագործության դեմ մղվող պալլարի հավազարծության մեջ են մտնում հանցագործության ստաշացման պատճառների և կատարմանը նպաստող հանգամանքների վերացումը, հանցագործության նախազգուշացումն ու կանխումը, կատարված բոլոր հանցագործությունների անպայման բացահայտումն ու հանցակիցների մեղհաբանումն և պատճախան ճիշտ պրակտիկայի իրականացումը: Այդ պաշարը պետք է լինի սեական ու կողմակիցովված, հետևողական ու արդյունավետ: Մեր այդ պնդումներն անհրաժեշտ է լրացնել հետևյալ դրույթներով:

ա) Հանցագործության դեմ մղվող պալլարի արդյունավետությունը կախված է նաև գործի քննության արագությունից: Երբ ալվալ գործով դատական պատասխանատվության են վարկման հարցը ձգձգվում է, ապա նրա ներգործությունը հասնի շափով նվազում է: Պատական պրակտիկան ցույց է տալիս, որ թևն գործերի հիմնական մասի նկատմամբ պահպանվում է գործերի քննության արագությունը, սակայն քիչ չեն նաև քննության ձգձգումները: Եղեզնածորի ժողգատարների 1963 թ. № 78 րեական գործի նյութերից երևում է, որ Ա. Մ.-ն ծնված 1927 թ., անցյալում դատված, 1963 թ. հուլիսի 31-ին հարբած վիճակում, անամերձ հոգսմամբ ջրելու ժամանակ կոլի է բռնվում Ն. Գ.-ի հետ և բաճով հարվածելով նրա պիտից, գրտում է գետին և մահամերձ դրություն մեջ թողնելով, հետևում: Այդ գործը թևն շատ պարզ էր իր հանցամանքերով, բայց քննությունը ավարտվել է երկու և կես ամիս հետո միայն: Մի այլ օրինակ. ձ. Գ.-ի և մյուսների վերաբերյալ գործի քննությունն այնքան է ձգձգվել, որ նրանք նորից են հանցանք կատարել:

բ) Պատարանի կողմից կիրառվող պատժի դատարանակալան նշանակությունը կարելի է ապահովել միայն այն դեպքում, եթև դատավճիռը հիմնավորված ու օրինական է, նշմարի ու արդարացի: Պատասխարաշալի նկատմամբ պատժատեսանակն ու շափն բնորվում է հաշվի առնելով ամբա-

ասնչալի անձնավորությունը՝ անցյալ գործունեությունն ու զբաղմունքը, առողջությունն ու հաստիքը, պատասխանատվությունը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքները: Գատարանի դահլիճում գտնվող քաղաքացիները լսում են զործի բնույթի ընթացքը, ապացույցները, իրենց համար համապատասխան հետևություններ են անում, այդ հիման վրա էլ գնահատում են դատավճար ճշտությունն ու արդարացիությունը: Երբ պատժատեսիլն ու շտրիկը, դրանց հետևությունները չեն համապատասխանում դատարանության տվյալներին, ապա այն բացասական ազդեցություն է թողնում, նաև՝ մասնում է դատարանի նկատմամբ անեցած վստահությունը և դրանով իսկ նվազում է դատարանի բարոյական ներգործությունը, դատախազական աշխատանքների նշանակությունը: Մարդկանց մեջ ոչ թե առեղծված է սերմանվում հանցագործության նկատմամբ, այլ տրտունջ դատավճարի և այն արձակող դատարանի վերաբերմամբ: Դա խիստ բացասական ազդեցություն է թողնում հանցագործության դեմ մղվող պայքարի վրա:

զ) Բացատրիկ կարևորություն ունի հանցագործության նախազգուշացման ու կանխման նպատակով կիրառվող դատավարական բնույթի միջոցառումը: Այստեղ ամենից առաջ նկատի ունենք հետաքննության և նախաքննության նյութերի ամփոփման և քնդհանրացման հիման վրա գննադան միջոցառումների մշակումը: Հատկապես կարևոր է համապատասխան մարտիներին ներկայացվող միջնորդադիրը, որի մեջ ջուլջու են տրվում բացահայտված թեթրությունները և այն միջոցառումները, որոնք հեղինակի կարծիքով անհրաժեշտ է կիրառել: Հետաքննություն կատարող անձի և քննիչի որոշումները՝ բացահայտված բացասական գործոնները վերացնելու միջոցառումների մասին, այդ նյութերի քննարկումը խորճողակցությունում և անհրաժեշտ միջոցառումների մշակումը և այն կենսական կարևորություն ունեն:

Բացատրիկ կարևորություն ունեն բացահայտված թեթրությունները վերացնելու մասին դատարանի որոշումները: Այդպիսի որոշում կարելի է կայացնել ինչպես հետաքննության

և նախաքննության ժամանակ բացահայտված, բայց վերացման վերաբերյալ միջոցառումներ մշակած շիհնելու դեպքում, այնպես էլ դատաքննության սրբոցեսում ի հայտ բերվող բացասական գործոնների վերաբերյալ: Տեղեցում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ այդ կարևոր հարցի վրա անբավարար ուշադրություն են դարձնում ոչ միայն ընդհանր օրգանները, այլև դատարանը: Մասնավոր որոշումների թիվը շատ քիչ է, որակը ցածր, այդպիսիները զրկավորապես վերաբերվում են արարքի կատարմանը նպաստող հանգամանքներին, իսկ պատճառների վերաբերյալ որոշումներ համարյա չկան, նրանց ընթացքի վերաբերյալ հաշվառում չկա: Փե ինչու՞ քննիչներն իրենց որոշման պատճենը չեն կցում զործին, զովոր է առել, բայց նման վիճակը դատարանին թլուրիմագրության մեջ է ձեռք, նա կարծում է, թե քննիչն արդեն միջոցառումներ է գտնո առել, սակայն այդ չի արվում ոչ մեկի և ոչ էլ մյուսի կողմից:

դ) Հանցագործության նախազգուշացման ու կանխման շտրում հատկապես պետք է նշել հասարակական կարգի պահպանման ժողովրդական գրուժիտներին, կոմերիտական շտարներին, թաղային կոմիտեներին, ընկերական դատարաններին և հասանման այլ ինքնագործ մարտիներին դերն ու նշանակությունը: Նրանք ամենից առաջ կանխում են զանցանքը հանցագործության վերանձելու ընթացքը, թույլ չեն տալիս, որ այն հանցագործության վերածվի: Դա է նրանց գործունեության զլխավոր բովանդակությունը: Դա նշանակում է խեղդել հանցագործությունը իր ձևավորման պրոցեսում, թույլ չտա, որ ծնունդ առնող իրավախախտումը զարգանա և զրանով իսկ կանխել հանցագործության հետեանքի առաջացումը ևս: Այստեղ երկակի բնույթ կրող գործունեություն է, և միաժամանակ երկու կարևոր հարց է լուծում. տվյալ զանցանք կատարող անձին ետ է կանգնեցնում հանցավոր արարքի կատարումից և զրանով իսկ նրան աղատում դատական պատասխանատվությունից: Եթե զանցանքը չկանցվի և այն վերածվի հանցագործության, ապա դրա սուրբյակտը կենթարկվի դատական պատասխանատվության՝

պատժի: Երբ հարբած մարդը ճաշարանում սկսում է իրեն վատ պահել և դրա հետագա զարգացումը կարող է լինել խուլիզանություն, հասարակական կարգի խախտում, դանա-կանչարություն և այլն, ապա դրամեթանի անդամը նրան կարգի է հրավիրում սկզբից և կանխում արարքը: Մյուս կող-մից նա կանխելով ավելա արարքը, դրանով իսկ ապահովում է հասարակական կարգը կամ այն քաղաքացու կյանքն ու առողջությունը, որի դեմ ուղղված էր ավելա արարքը: Բանն այն է, որ որքան բարձրանում է սովետական մարդկանց կրթական ու կուլտուրական մակարդակը, գիտակցությունը, մեղավորում են բարոյական հայացքները, այնքան ավելի ու ավելի է բարձրանում հասարակական-բարոյական-ընկերա-կան ներդրությունն նշանակությունը: Կան սովետի մար-դիկ, որոնց նկատմամբ ընկերական նկատողությունը շատ անզամ ավելի ուժեղ ազդեցություն է ունենում, քան մի այլ մարդու վրա դատական պատժը: Ահա թե ինչ է ստում ՍՄԿԿ Մրաչիերն այդ կապակցությամբ: «Աշխատավորների նշույթա-կան ապահովության, կուլտուրական մակարդակի և գիտակ-ցականության ամբ բարձր պայմաններն առողջում է, որպեսզի արմատախիչ արվի հանցագործությունը, վերջին հաշվով բնական պատժի միջոցները փոխարինվեն հասարակական ներդրությունից ու դատախարակության միջոցներով»:

Բացի զանցանքները կանխելուց, հասարակական կարգի պահպանման ժողովրդական դրամեթաններն ու կոմերիտական շտաբները շատ կարևոր դեր են կատարում նաև հանցագոր-ծությունների կանխելու, հանցավորներին մեղսացնելու և պատասխանատվության ենթարկելու բնագավառում: Նրանք ամենից առաջ օգնում են քաղաքացիներին, պաշտպանում նրանց հանցավոր ստանդարտներին: Միաժամանակ նրանք մեծ օգնություն են ցույց տալիս միլիցիայի, դատախազա-կան, դատական օրգաններին՝ հանցագործության վերաց-ման համար մղվող պայքարի գործն ապահովելու նպատա-կով:

Այդ դրամեթանների գործունեությունն ավելի արդյունա-վետ կլինի, եթե դեմ լինելու լուրջ սխալներից ու թերու-թյուններից: Նրանց ուժը հաճախ ճիշտ չի կազմակերպվում և անցյալում չի օգտագործվում: Նրանց մի մասը գործում է դեպից դեպ, մեկ հանգես է զալիս լավ աշխատանքով և մեկ էլ անգործության է մատնվում: Նրանց գործունեության բյուրաց աշխատ շատ է նեղ, նրանք չեն նրանում շնորհի բակե-րում, թեև դրա կարիքը մեծ է: Շատ դրամեթաններ իրենց իրավունքներն ու պարտականությունները լավ չեն պատկե-րացնում, որովհետև այդ ուղղությամբ անհրաժեշտ օրենսդրու-թյուն չի կազմակերպվում, դրական աշխատանքների փորձը չի մաս-սակականացվում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ թաղային կոմիտեների մի մասը հսկայական դեր է խաղում զանցանքները և հան-ցագործությունները կանխելու և նախազուգահեռում գոր-ծում: Շատ թաղային կոմիտեներ հալթաճարում են զմե-րությունները և կանխում ընտանիքներում, հարեանների մի-շև ծնունդ առնող վատ հարաբերությունները, դանցանքները, նույնիսկ հանցագործությունները:

Հանցագործության նախազուգահեռում ու կանխման գործում կարևոր դեր են կատարում ընկերական դատարան-ները: Նրանք ընտելանում են ստանում հակահասարակական արարքների, զանցանքների, նվազ վատնզավոր հանցագոր-ծությունների վերաբերյալ գործիք ու բարոյական ներդրու-թյուն ունենում ոչ միայն ավելա անձի, այլև ուրիշների վրա: Երբ ճիշտ են կազմակերպվում ընկերական դատարանների աշխատանքները, հաշտ է նախապատրաստվում նիստերը և այն վարվում է բարձր կուլտուրայով, ապա դրա ներդրու-թյունը բարձր է լինում: Անշղթի մեծածնում է ընկերական դատարանների դերն ու նշանակությունը հակահասարակա-կան արարքներն արմատախիչ անելու, իրավախախտում կա-տարողներին վերադատախարակելու և հանցագործությու-ններն ու զանցանքները կանխելու գործում: Դա պահանջում է վճռակահորեն ապահովել ընկերական դատարանների աշ-

5 ՍՄԿԿ XXII համագումարի նյութերը, Երևան, 1962, էջ 529:

խատանքների բարձր կազմակերպվածությունը և վարելու առիթնական:

Տեղերում կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ շատ ընկերակազմ գաղափարների անդրբռնության են մատնված, նրանց հարցով ոչ որ չի զբաղվում և աշխատանքները չեն բարելավվում: Նրանք հաճախ ասում են, թե գործը մենք ենք անում: Առկալից զլխավորը դա չէ: Բանն այն է, որ մի շարք շրջանների ու բաղադրների գաղափարությունները, գաղափարները, միջոցառումների բաժինները խուլու են ապագա բերական մասնի գործերը նրանց քննությունը հանձնելուց, այլ իրենք են բնթացք տալիս, սուրգանում կամ հանձնում գաղափարներ՝ մի քանի օրով կազմակերպելու համար, փոխանակ դրանք հանձնելու ընկերակազմ գաղափարներին՝ քննություն առնելու և մասսաների մեջ բացատրական աշխատանքներ կատարելու համար: Նրանք քաղաքի միջոցառումների բաժիններում բազմաթիվ գործեր ու նյութեր կան, որոնք համարակրոնի կարևոր է հանձնել ընկերակազմ գաղափարների քննությունը: Շրջափոխները և արժեքայինական կազմակերպությունները շատ բիշ են զբաղվում ընկերակազմ գաղափարների աշխատանքները կազմակերպելու հարցերով:

6. ԳԱՏԱԿԱԶԻ ԳԵՐԸ ԼԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՆԱԿԱԶԳՈՐԾՆԱՅՄԱՆ ՈՒ ԿԱՆԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գաղափարական գործունեության բովանդակությունը կազմում է սոցիալիստական օրինակակազմության խտիվ պահպանության ապահովումը: Սովետական պետության օրենքների ժամանակին ու ճշգրտ, անշեղ ու անխախտ կատարումը պետական բոլոր օրգանների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիների սրբազան պարտականությունն է: Պայքարն անօրինակակազմության և կամայականությունների կենսական անհրաժեշտություն է ներկայացնում: Գաղափարական ամենից առաջ հանդիսանում է հանցագործության, դրա առաջացման պատճառների և կատարմանը նպաստող

առողջ հանցամասնների վերացման համար մղվող պայքարի անմիջական կազմակերպիչը, հետաքննություն, նախաքննություն, գաղափարների պայքարը կորոզիանցող, պետական իշխանության բարձրագույն մարմնի անունից գործող, հակազուլություն իրականացնող պաշտոնատար անձեր: Դրա համար էլ նա օժտված է անհրաժեշտ լիազորություններ: Նա պարտավոր է ուսումնասիրել և ամփոփել հանցագործության դեմ մղվող պայքարի իրական վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալները, հետաքննություն և նախաքննության ձևերը բերած նյութերը, այդ բոլորի հիման վրա մշակել միջոցառումներ թերությունների վերացնելու և պայքարը նպատակասլաց դարձնելու համար: Մասնավորապես պարզել, թե ի՞նչ վիճակում է գտնվում հանցագործությունների հաշվառման զրվածքը և բացման փաստական գրությունը, այդ բընագավառում ինչպիսի՞ թերություններ գոյություն ունեն, որոնք են դրանց պատճառները և այդ բոլորի հիման վրա կրկնել միջոցառումներ մշակել: Հայկական ՍՍՀ Քր. Դատ. օր. 2-րդ հոդվածի պահանջը՝ կատարված բոլոր հանցագործություններն անպալման բացելու մասին ապահովելու համար: Նրան կատարված լուրջ հանցագործությունները չեն բաժանվում և դատապարտ միջոցներ ձեռք չի առնում այդ բնագավառում եղած թերությունները վերացնելու համար, ապա նա քննիչի հետ միասին պատասխանատու է: Գաղափար ոչ միայն պարտավոր է ստուգել, թե ի՞նչ վիճակում է կատարվում հանցագործությունների բացումը, այլ և պարզել, թե ինչ՞ է չեն բացվել բոլոր հանցագործությունները, որոնք են դրա պատճառները, ի՞նչ պետք է անել այդ հարցը կարգավորելու համար: Այդ միջոցառումները կարող են բազմապես անակ ու բազմաբովանդակ լինել: Օրինակ, ուսումնասիրության արդյունքները քննության առնել հետաքննության և նախաքննության օրգանների, գաղափարական ու գաղափարների արդյունքների խորհրդակցությունում, վեր հանել սխալներն ու թերությունները և կրկնելով ուժերով միջոցառումներ մշակել դրանք վերացնելու համար, գոյություն ունեցող վիճակի մասին միջնորդապի ներկայացնել համապատասխան

օրգաններին և համապատասխան միջոցառումներ ձեռք առնելու վերաբերյալ իր մտահոգացումները հայտնել:

Գատախազը ճիշտ ու հաջող գործելու համար պետք է առաջին հերթին պարզի իրական վիճակը՝ հանցագործությունների, դրանց առաջացման պատճառների, դանաղան բացասական գործոնների, պայքարի քնազավառում գոյություն ունեցող սխալների ու թերութիւնների ու սրանց պատճառների մասին և այդ բոլորի հիման վրա մշակի համապատասխան միջոցառումներ: Նա կարող է գրական արդյունքի հասնել միայն այն դեպքում, եթե իրեն համար լիովին պարզել է այդ բոլոր հարցերը, որից հետո միայն նա ի վիճակի կլինի մտահոգվել միջոցառումների հարցով:

Գատախազի մյուս սրբազան պարտականությունն է ապահովել հետաքննության և նախաքննության ընթացքում օրենքի պահանջների անշեղ կատարումը, մասնավորապես հանցագործության առաջացման պատճառները պարզելու ու դրանք վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռք առնելու վերաբերյալ: Եթե քննիչը չի կատարում օրենքի այդ պահանջը, իսկ հսկող զատախազն անտեսում կամ հանդուրժում է այդ, սպա նա ևս պատասխանատու է դրա համար: Կատարվի, որ օրենքի պահպանը դատում է նրա ոտնահարողը:

Գատախազը բոլոր հնարավորություններն ունի հետաքննության և նախաքննության պրոցեսում գործող օրենքների անշեղ կատարումը ապահովելու համար (Քր. Դատ. օր. 15, 209 հ.): Նա կարող է ներկա գտնվել քննչական գործողությունների կատարմանը, ծանոթանալ գործի նյութերին և գրավոր ցուցում տալ քննության վերաբերյալ, որը պարտադիր է (Քր. Դատ. օր. 210 հ.):

Գատախազի կարևորագույն պարտականություններից մեկն է հանցագործության նախազգուշացման ու կանխման հաջող գործունեության ապահովումը: Նա պարտավոր է ստուգել, թե միլիցիան և նախաքննության ապարատը ինչպես են կատարում հանցագործության նախազգուշացման ու կանխման պարտականությունները և այդ հիման վրա

անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել թերութիւնները վերացնելու և աշխատանքները բարելավելու համար:

Ցուրբաքանյութը ղեկավարում հաշոգրության հասնելու համար, պետք է պարզել ոչ միայն իրական վիճակը և գոյություն ունեցող թերութիւնները, այլև դրանց պատճառները: Այստեղ է, որ գատախազներից շատերը կարծես սրա կողքով են անցնում, անտեսում այդքան հրատապ հարցը: Այն փաստը, որ միլիցիայի օրգաններում ստացվող առանձին ահազանգումներ ժամանակին ընթացք չեն ստանում, որի հետևանքով հանցագործությունը տեղի է ունենում, վկայում է գատախազական հսկողության անբավարար վիճակի մասին: Գատախազը պարտավոր է վճռականորեն բարելավել այդ աշխատանքները և հատկապես ուշադրություն դարձնել կնոջը հալածելու վերաբերյալ ստացվող բողոքների ընթացքին, ժամանակին պաշտպանել նրան հալածանքներից ու տանջանքներից:

Գատախազը պարտավոր է հսկողության հետ միասին անհրաժեշտ օգնություն ցույց տալ ոչ միայն միլիցիայի օրգաններին ու քննչական ապարատին, դատարանին, այլև հասարակական ինքնազորած մարմիններին՝ հասարակական կարգի պահպանման ժողովրդական դրոժինաներին, կոմերիտական շտաբներին, քնկերական դատարաններին՝ նրանք վրա զրված պարտականությունները հաջողությամբ կատարելու համար:

ԲՈՎԱՆ ԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք

5

Գլուխ առաջին

Սպանության հասկացությունը: Հանցագործության ընդհանուր հասկանիչները

1. Ի՞նչ է սպանությունը	7
2. Հանցագործության օրյեկտը	11
3. Հանցագործության օրյեկտիվ կողմը	16
4. Հանցագործության սուբյեկտը	28
5. Հանցագործության սուբյեկտիվ կողմը	39

Գլուխ երկրորդ

Սանրացույցի հանգամաններում կատարված դիտավարյալ սպանություններ

1. Ընդհանուր հարցեր	39
2. Հանցագործության օրյեկտին վերաբերող ծանրացույցի հանգամանքներ	42
3. Սպանության հանցակազմի օրյեկտիվ կողմին վերաբերող ծանրացույցի հանգամանքներ	50
4. Կյանքի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտին վերաբերող ծանրացույցի հանգամանքներ	58
5. Հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող ծանրացույցի հանգամանքներ	65

Գլուխ երրորդ

Դիտավարյալ սպանության առանց ծանրացույցի հանգամանքների

81

Գլուխ չորրորդ

Մեղմացույցի հանգամաններում կատարված դիտավարյալ սպանություն

99

Գ լ ո խ Ի ի ն գ ե ռ ո ղ

Սենի ղեմ ուղղված հանցագործությունների առաջացման պատճառները 122

1. Հանցագործության պատճառների հասկացությունը 122

2. Սենի ղեմ ուղղված հանցագործությունների առաջացման պատճառները 138

3. Հակասությունները որպես հանցագործության պատճառներ

ա) Տեսնական-նյութական բնույթի հակասություններ 176

բ) Հողերը բնույթի հակասություններ 178

գ) Պետական ապարատի անկանոն գործունեությունը 188

4. Հանցագործության կատարման արտաքին շարժառիթները 206

5. Հանցագործության հետևանքի առաջացմանը նպաստող գործոնները 225

Գ լ ո խ Վ Ե Գ Ե Ր Ո Ղ

Հանցագործության նախազգուշացումն ու կանխումը 230

1. Հանցագործության նախազգուշացման ու կանխման հասկացությունը 230

2. Հանցագործության նախազգուշացման ու կանխման ընդհանուր միջոցառումները 237

3. Հանցագործության նախազգուշացման և կանխման հատուկ միջոցները 243

ա) Պատարված բոլոր հանցագործությունները պետք է անպայան բացահայտել 244

բ) Միջոցառումներ հետաքննության և նախաքննության նյութերի հիման վրա 249

4. Հանցագործության առաջումը նախազգուշացնող և կանխող այլ միջոցներ 254

5. Վճռական և հետևողական պայթուրի կազմակերպումը 263

6. Պատահազի դերը հանցագործության նախազգուշացման ու կանխման գործում 271

ԿԻՄ ԱՐՄԵՆԱԿԻ ԼԱՐՅԱՆ
ՍՈՒՐԵՆ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՄՅԱՆ
KIM ARMENAKOVICH LALAYAN
СУРЕН СЕРГЕЕВИЧ МАМЯН

ԳԻՏԱՎՈՐՅԱԿ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳՍ
ձեռնարկատուն Լ. Խոմուրճի հետազոտող

ՆԿԱՏՎԱԿՐ ՎՐԻՊԱՅՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պետք է լինի
67	3 Ն.	В. Ф. Киряченко	В. Ф. Киряченко
67	8 Ն.	1061	1961
67	15 Ն.	М. Д. Шаргородский	М. Д. Шаргородский
110	7 Ն.	сы учения о необходимости обороны в советском уголовном праве, М., 1950	рона и крайняя необходимость по советскому уголовному праву, М., 1950
17547	3 Ն.	չպետք է	չպետք է

ՎՅ 05318, հՆՆ 1176, Հրատ. 3208, Պատվեր 686, Տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության 22/VII 1969 թ., ստորագրված է տպագրության 29/II 1970 թ., տպագր. 17,5 մամ.+ 1 ենթգիր, պայմ. 14,24 մամ., հրատ. 12,15 մամ., քուլթ № 1, 84 × 108¹/₂ մմ. Գինը 37 կոպ.

Հայկական ՍՍՀ ԳՍ հրատարակչության էջմիածնի տպարան: